Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիա
Արևելագիտության ինստիտուտ

ԹՈՒՐՔԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՕՍՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուբեն Սաֆրաստյանի
ընդհանուր խմբագրությամբ

IV

A II / 92315

Երևան
Ասողիկ
2006

Национальная Академия Наук
Республики Армения
Институт востоковедения

ТУРКОЛОГИЧЕСКИЕ И ОСМАНИСТИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

**Под общей редакцией
Рубена Сафрастяна**

IV

Ереван
Асогик
2006

National Academy of Sciences
of the Republic of Armenia
Institute of Oriental Studies

TURKISH AND OTTOMAN STUDIES

Editor:
Ruben Safrastyan

IV

Yerevan
Asoghik
2006

ՀՏԴ 327: 941 (479.25)
ԳՄԴ 66.4+63.3 (2Թ)
Թ 988

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ.
Ռուբեն Սաֆրաստյան (նախագահ), Արսեն Ավագյան, Ազատ Բոզոյան, Սամվել Զուլալյան, Ալբերտ Խառատյան, Արման Կիրակոսյան, Աշոտ Մելքոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, Արտակ Շաքարյան (պատասխանատու քարտուղար)

*ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ «ՆԱՐ-ԱՐ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆԻ:*

Թ 988 Թուրքագիտական եվ օսմանագիտական հետազոտություններ.- Եր.: Ասողիկ, 2006. - 292 էջ

«Թուրքագիտական եվ օսմանագիտական հետազոտություններ» մատենաշարի IV հատորում ընդգրկված հոդվածներում լուսաբանվում են Օսմանյան կայսրության ու հանրապետական Թուրքիայի, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների պատմության ու պատմագիտության մի շարք գիտական հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ:
Նախատեսվում է հասարակագետների, դիվանագետների, ուսանողների համար: Օգտակար կլինի նաև Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականությամբ և Հայկական հարցի ու ցեղասպանության պատմությամբ հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակների համար:

Թ 0802000000 / 0136(01)2006 2006թ. ԳՄԴ 66.4+63.3 (2Թ)

ISBN 978-99941-65-59-9
© Հեղինակներ, 2006թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

OTTOMANICA

Ալեքսանդր Սաֆարյան
Զիյա Գյոքալփը՝ թուրք կանանց իրավունքների մասին 13
Ֆուաթ Դյունդար (Թուրքիա-Ֆրանսիա)
«Միություն և առաջադիմություն» կուսակցության ազգագրական ուսումնասիրությունները ..38
Սերգեյ Սուրոտուզալին (Ռուսաստան)
Ռուսական գրական միտքն ու 15-17-րդ դդ. Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ տեղեկատվության կենտրոնները ..58

TURCICA

Արտակ Շաքարյան
Մեսխեթցի թուրքեր. աշխարհաքաղաքական գործոն տարածաշրջանում 73
Վահրամ Տեր-Մաթևոսյան
Քեմալիզմի քննարկումները Թուրքիայում 1960-1980-ական թթ.. մարտահրավեր հանրապետական գաղափարախոսությա՞նը .85
Արթուր Ղումանյան
Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ .103
Լևոն Հովսեփյան
Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդն արդի բարեփոխումների համատեքստում .114
Անուշ Հովհաննիսյան
Ցեղասպանության ժխտումը և էթիկան (թուրքական ազգային պետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո) ...124
Ռեմ Ղազանչյան
Եվս մեկ անգամ Ռուսաստանի կողմից 1921թ. ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման մասին (մոսկովյան արխիվների նախկինում գաղտնի փաստաթղթերի լույսի ներքո) 130
Սահակ Ալանյան
1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի միջազգային-իրավական գնահատականի շուրջ ...147
Ռուբեն Կարապետյան
Նոր զարգացումներ թուրք-սիրիական հարաբերություններում 155
Անի Ավետիսյան
Օրհան Փամուկը և իր «Սև գիրքը» .166
Լևոն Ամիրխանյան
Ժամանակակից թուրքերենի դերբայների ուսումնասիրության պատմությունից 184

Ռուբեն Սաֆրաստյան
Հայերը և թուրքերը. պատմական առնչություններ Սելջուկյանների շրջանից մինչև 19-րդ դարի վերջերը ... 197
Լուսինե Սահակյան
Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները .207
Արման Կիրակոսյան
Ամերիկյան Կարմիր խաչի 1896 թ. հայկական առաքելությունը 229
Արմինե Հակոբյան
Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանի երկրորդ պատրիարքությունը (1908-1909թթ.) .240
Արսեն Ավագյան
1915թ. ցեղասպանության նախապատրաստական փուլից. Բեհաեդդին Շաքիրի այցն Արևելյան վիլայեթներ .245
Քրիստինե Մելքոնյան
Հայկական դատը և սփյուռքահայությունը 1944-1945թթ 252
Գնել Ղլեչյան
Օսմանյան պատմության հարցերը Ղուկաս Ինճիճյանի աշխատություններում .261
Ռուբեն Սաֆրաստյան
"Քուլելիի իրադարձության" աղբյուրագիտության հարցի. Ներգրավելով հայկական մամուլի հաղորդագրությունները ..270

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Ստեփանյան
Հազվագյուտ ու բացառիկ գիրք հայ նկարիչների մասին ...278
Արտակ Շաքարյան
Եվս մեկ ցնցող վկայություն հայերի ցեղասպանության մասին........283
Աշոտ Սողոմոնյան
Թուրք պատմաբան Էրդալ Իլթերի մասնագիտությունը թուրք-հայկական հարաբերությունների վերաբերյալ..............................287

СОДЕРЖАНИЕ

OTTOMANICA

Александр Сафарян
Зия Гёкальп о правах турецких женщин 13
Фуат Дюндар (Турция-Франция)
Этнографические исследования партии «Единение и прогресс» ...38
Сергей Муртузалиев (Россия)
Русская литературная мысль и центры информации XV-XVII веков по истории Османской империи ...58

TURCICA

Артак Шакарян
Турки-месхетинцы: геополитический фактор в регионе .73
Ваграм Тер-Матевосян
Дискуссии о кемализме в Турции между 1960 и 1980 годами: вызов республиканской идеологии?.....85
Артур Думанян
Основные периоды деятельности партии националистического движения («серые волки») в Турции .103
Левон Овсепян
Совет национальной безопасности Турции в контексте современных реформ .114
Ануш Оганесян
Отрицание геноцида и этика (в свете некоторых вопросов формирования турецкого национального государства) ...124
Рем Казанджян
Еще раз к вопросу о подписании Россией в 1921 году русско-турецкого договора (В свете бывших секретных документов московских архивов) .130
Саак Асланян
О международно-правовой оценке Московского и Карсского договоров 1921г ...147
Рубен Карапетян
Новые тенденции в турецко-сирийских отношениях 155
Ани Аветисян
Орхан Памук и его «Черная книга» .166
Левон Амирханян
Из истории изучения деепричастий современного турецкого языка ...184

ARMENO-TURCICA

Рубен Сафрастин
Армяне и турки: исторические контакты от эпохи Сельджукидов до конца 19-го века ...197
Лусине Свакян
Последствия политики насильственной исламизации амшенских армян в Османской империи ...207
Армен Киракосян
Армянская миссия Американского Красного Креста в 1896г ...229
Армине Акопян
Второе патриаршество архиепископа Маттеоса Измирляна (1908-1909гг.) 240
Арсен Авакян
Из подготовительного периода геноцида 1915 года: Визит Бехаэддина Шакира в восточные провинции 245
Кристине Мелконян
Армянский вопрос и армянская диаспора в 1944-1945гг ...252
Гнел Гвчян
Вопросы османской истории в работах Гукаса Инчичяна ...261
Рубен Сафрастин
Проблемы историографии «кулелийского инцидента»: привлекая сообщения армянской прессы ...270

РЕЦЕНЗИИ

Асмик Степанян
Уникальная и исключительная книга об армянских художниках 278
Арташ Шакарян
Еще одно шокирующее свидетельство о геноциде армян 283
Ашот Согомонян
Библиография турецкого историка Эрдала Илтера о турецко-армянских отношениях ...287

CONTENTS

OTTOMANICA

Alexander Safaryan
Ziya Gökalp on the Turkish women rights 13
Fuat Dündar (Turkey-France)
The "Union and Progress" party ethnographic studies ..38
Sergey Murtuzaliyev (Russia)
Russian literary thought and the 15-17th centuries centres of information on the history of the Ottoman Empire ..58

TURCICA

Artak Shakaryan
Meskhetian Turks: a geopolitical factor in the region ...73
Vahram Ter-Matevosyan
The Kemalist discourse in Turkey between 1960 and 1980: Challenging the Republican ideology?........85
Arthur Dumanyan
The main phases of activities of the National Action Party (Grey wolves) in Turkey in the 1960-70s ... 103
Levon Hovsepyan
Turkey's National Security Council in the context of the recent reforms ...114
Anush Hovhannisyan
Genocide denial and ethics (Examining in the light of some problems of formation of the Turkish nation-state) .124
Rem Khazandjian
Once more discussing the question of signing by Russia the Russian-Turkish treaty of 1921 (under the light of former secret documents from Moscow archives) ...130
Sahak Aslanyan
The international-legal assessment of the Moscow and Kars treaties of 1921 .147
Ruben Karapetyan
New developments in the Turkish-Syrian relations .155
Ani Avetisyan
Orhan Pamuk and his "Black book" 166
Levon Amirkhanyan
From the history of studying of the modern Turkish gerunds .184

ARMENO-TURCICA

Ruben Safrastyan
Armenians and Turks: contacts in history from Seldjukides times up to the end of the 19th century ...197
Lusine Sahakyan
The political repercussions of the forced Islamization of Hamshen Armenians in the Ottoman Empire .207
Arman Kirakosyan
1896 Armenian mission of the American Red Cross ..229
Armine Hakobyan
Matheus Archbishop Izmirlyan's second patriarchate (1908-1909) 240
Arsen Avagyan
From the preparation period of the 1915 Genocide: Behaeddin Şakir's visit to the Eastern vilayets .245
Kristine Melkonyan
The Armenian question and the Armenian diaspora in 1944-1945 252
Gnel Ghlechyan
The problems of the Ottoman History in the works of Ghukas Inchichyan .. 261
Ruben Safrastyan
The problems of historiography of the "Kuleli event": Incorporating Armenian press reports .270

BOOK REVIEWS

Hasmik Stepanyan
A unique and exceptional book about the Armenian painters .278
Artak Shakaryan
One more shocking testimony for the genocide of Armenians........................283
Ashot Soghomonyan
The bibliography of a Turkish historian Erdal İlter on the Turkish-Armenian relations 287

OTTOMANICA

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ

ԶԻՅԱ ԳՅՈՔԱԼՓԸ՝ ԹՈՒՐՔ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թուրք, արևմտյան ու նախկին խորհրդային Միության ուսումնասիրողներն արդեն տասնամյակներ շարունակ ընդգծում են մտածումների այն, թվում է, ակնհայտ ընդհանրությունը, որն առկա է թյուրքականության (Türkçülük) գաղափարախոս, գրող, հրապարակախոս ու սոցիոլոգ Զիյա Գյոքալփի (1876-1924) տեսական պրպտումների և Մուստաֆա Քեմալ - Աթաթուրքի հասարակական - քաղաքական ռեֆորմների մեջ ընդհանրապես[1] ու մասնավորապես կանանց իրավունքների հիմնախնդրում[2]: Ստորև կփորձենք ըստ հնարավորի համառոտակի ներկայացնել գյոքալփյան հայացքները «թուրքական ֆեմինիզմի» մասին[3] ու նորովի քննել նախ իթթիհաթական պարագլուխների, այնուհետև քեմալականների վարած քաղաքականության հետ դրանց առնչությունները:

Ակադ. Վ. Ա. Գորդլևսկու՝ խորհրդային համալսարանների համար դասագրքային դարձած ձեռնարկմամբ «Մուսուլմանական հասարակության մեջ «կանանց հարց», իհարկե, պրակտիկորեն գոյություն չուներ: Իսլամը կնոջը փաթաթել էր չարշաֆի մեջ ու փակել նրա ճանապարհը դեպի հասարակական կյանք: Սակայն դա եղել էր ոչ միանգամից: Անատոլիայում թրքուհին սկզբնապես (13-14-րդ դդ.) դեռ պահպանում էր ազատությունը: Եկվոր քոչվորների ու տեղացի քրիստոնյաների ավանդույթները դեռ չէին կոտրվել: Աստիճանաբար, սակայն, նրանք զիջում էին տեղը շարիաթի պահանջներին: Բայց և այնպես պատահում էր, որ ամուսնու մահից հետո երբեմն կնոջն էր անցնում կառավարումը, կանայք համախմբվում էին հասարակական - կրոնական խմբերում ու խմբակներում ... Շարիաթի կողմից պարտադրված անոմալիաներն արդեն այն ժամանակ ընդոստացնում էին առաջադեմ մարդկանց միտքը, և հազվադեպ պոեզիայում ծնվում - անցնում էին բողոքի կենարար փորձերը: Կանանց մարդկային իրավունքների համար պայքարում էր միջինասիական բանաստեղծ Նավոյին՝ արտահայտվելով աղջիկներին բռնի կնության տալու դեմ: Պաշտպանելով կնոջ սիրո և ընտրության իրավունքները՝ նա պատկերում էր կանացի բարձր կերպարներ, տեղեկացնում կանանց գրական խմբակների մասին հեքիաթային «Հայաստանում»: Այսուհանդերձ <u>սրանք 15-րդ դ. ուզբեկ հումանիստի երազներն էին</u>, (ընդգծումը մերն է - Ալ. Սաֆարյան) մինչդեռ մինչև սուլթան Մահմուդ 2-րդի բարեփոխումները օսմանյան հասարակությունը լռում էր կնոջ մասին. Նույ-

նիսկ անվայելուչ էր համարվում կնոջ մասին բացեիբաց խոսելը, կնոջ առողջության մասին հարցնելը»[4]:

Թուրք կանանց շարժման պատմության ուսումնասիրողները ավանդաբար Օսմանյան կայսրությունում կանանց իրավունքների հարցը բարձրացնելու երևույթը փորձում են կապել թանզիմաթի ու «Նոր օսմանների» գործունեության հետ. մասնավորապես նշվում է, որ առաջին կանանց կազմակերպությունները հիմնադրվել են՝ սկսած 1867թ.-ից, թեև ունեցել են բացառապես կուլտուր-լուսավորչական բնույթ, չեն առնչվել կանանց սոցիալ–տնտեսական իրավիճակին, ուստի և վերոհիշյալ կազմակերպությունների նշանակությունը չափազանց է գերագնահատել: Փաստ է, որ այս ժամանակաշրջանում կանանց շարժման պրակտիկ գործունեությունը կենտրոնացած էր գրեթե բացառապես մայրաքաղաքում, ընդգրկում էր ունևոր ու կրթված կանանց մի չափազանց նեղ շրջանակ, որն անջրպետված էր ժողովրդական զանգվածներից: Անշուշտ ճիշտ էր ճանաչված սոցիոլոգ ու պատմաբան Մյուհադդեռ Թաշչը-օղլուն, երբ պնդում էր, որ թանզիմաթի դարաշրջանում թուրք կնոջ վիճակը էականորեն չի փոխվել[5]:

Միաժամանակ ակնհայտ է, որ մինչև 1870-ական թթ. Օսմանյան կայսրությունում անգամ կանանց կրթության ոլորտում որևէ լուրջ քայլ չի ձեռնարկվել (խոսքը վերաբերում է մահմեդական կանանց կրթությանը, որովհետև հույն և հայ «միլլեթներում» գոնե նվիրյալ - մտավորականների հետևողական, երբեմն էլ գերմարդկային ջանքերի արդյունքում իրավիճակը համեմատաբար ավելի բարվոք էր թե՛ 19-րդ դարում, և թե՛ 20-րդ դարի սկզբին)[6]:

Թեև 1869թ. ընդունվում է ժողովրդական կրթության մասին օրենք, (որի համար հիմք էր ծառայել համապատասխան ֆրանսիական օրենսդրությունը), այնուհանդերձ ակնհայտ էր, որ երկրում չկային անհրաժեշտ մանկավարժական կադրեր, հատկապես՝ ուսուցչուհիներ, ուստի 1870թ. բացվում է իգական մանկավարժական ուսումնարանը, ուր «հաջողվեց» ներգրավել ընդամենը 30 ունկնդիր՝ նախատեսված 50-ի փոխարեն: Ուսումնարանի ծրագիրը նախատեսում էր թուրքերենի, արաբերենի, պարսկերենի, աստվածաբանության, թվաբանության, պատմության, աշխարհագրության, երաժշտության, նկարչության, ձեռագործի դասավանդում: Կին դասախոսների բացակայության պատճառով ուսման ժամանակաշրջանը փոփոխվում էր և չորս տարվա փոխարեն փաստացի սահմանափակվում երկու տարով: Հիմնադրումից տասնամյակներ անց միայն այս հաստատությունը կայուն կառուցվածք էր ձեռք բերելու, իսկ մինչև 1895թ., Օսման Էրգինի բնութագրմամբ, գտնվելու էր բարձիթողի վիճակում:[7]

«Իբրեթ» թերթի 1872թ. նոյեմբերի 12-ի (թիվ 56) համարում հրատարակված և «Ընտանիք» ("Aile") վերնագրված հոդվածում Զիյա Գյոքալփի ու Մուստաֆա Քեմալի «գաղափարական հայրը»՝ Նամըք Քեմալը անսահման զայրույթով քննադատում էր ծնողների կամքով ան-

չափահաս աղջիկներին կնության տալը, ամուսնացողների համաձայնությունը հաշվի չառնելը: Հոդվածագիրը բացականչում է. «Մինչև ե՞րբ մենք, մշտապես գտնվելով միևնույն հարկի տակ մեր հարազատների հետ, պետք է օտարված լինենք մեկս մյուսից, թույլ տանք, որ տղամարդիկ ծեծեն իրենց կանանց, ծնողները առաջին պատահած տղամարդուն կնության տան իրենց դուստրերին՝ ինչպես ստրկուհիների՝ հաշվի չնստելով նրանց ցանկության հետ...»[9]

Էռնեստ Ռենանը՝ 1883թ. մարտի 29-ի փարիզյան իր մեծ աղմուկ հանած ելույթում[10] պնդում էր, որ իսլամն իրենից ներկայացնում է ամեն աշխարհիկի ու հոգևորի խառնուրդ, դոգմատի տիրապետություն, այն ամենածանր շղթաները, որոնցով երբևէ զամվել է մարդկությունը. իսլամն ու առաջընթացն անհամատեղելի են: Ռենանի այս ելույթը բնականաբար չէր կարող բուռն հակազդեցության չհանդիպել մահմեդական Արևելքում ընդհանրապես, և Օսմանյան կայսրությունում՝ հատկապես: Ի պաշտպանություն իսլամի հանդես եկան բուռն կանանց էմանսիպացիայի որոշ կողմնակիցներ, ինչպես Ֆաթիմա Ալիյե Հանըմը, որը մերժում էր արևմտյան ֆեմինիստական շարժման նպատակները, անիմաստ էր համարում նմանատիպ շարժմանը մահմեդական կանանց մասնակցությունը, քանզի վերջիններս իրավունքները պաշտպանված էին կրոնական օրենքով: 1899թ. հրատարակվում է Կասիմ Ամինի «Կնոջ ազատագրումը», որտեղ կանանց հարցի համակարգված լուսաբանման յուրօրինակ փորձ էր կատարվում՝ հետևողականորեն շեշտադրելով այն գաղափարը, որ մահմեդական կնոջ անհավասարության պատճառը ամենևին էլ իսլամը չէ: Նույն 1899թ. լույս տեսած Սահմուդ Էսադի գրքույկին բնորոշ է մուսուլմանական ընտանեկան իրավունքի ջատագովությունը, այստեղ արդարացվում էր բազմակնությունը, իսկ քրիստոնեությանն էլ ծածուկ բազմամուսնությանը խրախուսելու մեղադրանք էր ներկայացվում: Հետաքրքիր է, որ ծավալված բանավեճը կանանց առաջին թերթի հիմնադրման փորձի համար, կարելի է ասել, ուրույն առիթ է հանդիսանում. ընդամենը մեկ շաբաթ գոյատևած այդ թերթում ջերմեռանդ կրոնամետ հրապարակումների կողքին կային նաև հոդվածներ, որոնք կոչ էին անում կանանց «չնստել տանը», «ձգտել ինտելեկտուալ կյանքի», «փողոցում չարշաֆ չհագնել»[11]:

Կանանց կրթության համակարգի ստեղծմանը նպատակաուղղված անգամ ամենաչնչին քայլերը հանդիպեցին կլերիկալ շրջանակների ակտիվ հակազդեցությանը. 1874-1875թթ. մայրաքաղաք Ստամբուլում կար ընդամենը քսանինը տարրական իգական դպրոց, 1877թ.՝ նաև ինը երկրորդ աստիճանի տարրական դպրոց, և անգամ այս համեստ վիճակագրությունը հետագա ուսումնասիրողների կողմից ներկայացվում է որպես ականավոր հաջողություն[12]:

Այսպիսով «կանանց էմանսիպացիայի» խնդրին առնչվող առանձին հարցադրումներ, հիրավի, առկա են 1870-ական թթ. թուրք հրա-

պարականտության մեջ ու դրամատուրգիայում, սակայն դժվար է համաձայնել ակնհայտորեն «ցանկալին որպես իրականություն ներկայացնելու» միտումով քննարկված այն կատեգորիկ ձևակերպման հետ, որ «Կանանց կրթության, իսլամի միջնադարյան դոգմաների լծից թուրք կնոջ ազատագրման համար պայքարը (ընդգծումը մերն է - Ա. Ս.) գրավում էր առաջադեմ թուրք հասարակայնության ուշադրությունը»[13]։ Հայտնի թուրք գրողներն ու հրապարակախոսները՝ Իբրահիմ Շինասին, Նամըք Քեմալը, Ահմեդ Միդհատը, Սամի-փաշա - Զադե Սեզային, իրոք, իրենց ստեղծագործություններում, ինչպես նաև «Թասվիր-ի էֆքյար», «Հյուրիեթ», «Իբրեթ» թերթերում տպագրված հոդվածներում անդրադարձել են կանանց իրավազուրկ լինելուն, ժամանակրապես հանդես եկել հարկադիր ամուսնության դեմ հարցադրումներով, այսուհանդերձ նրանք բնականաբար չէին կարող և չէին ցանկանում հակադրվել իսլամին։

Թանզիմաթը նպաստեց ընդամենը մի քանի մահմեդական կին գրողների ու հրապարակախոսների հանդես գալուն, նրանցից էր Լունդի Քաղին, որը տարագրության մեջ՝ Աթենքում, սկսեց հրատարակել «Ծերրուհի» հանդեսը, որտեղ փորձում էր պրոպագանդել ինչպես կնոջ ազատության, այնպես էլ սահմանադրության վերականգնման գաղափարներ։ Կին հրապարակախոսները սկսեցին տպագրվել «Հյուրրիյեթ», «Թերաքքը», «Իբրեթ» պարբերականներում՝ հանդես գալով բազմակնության, հարկադիր ամուսնության, կանանց վաճառքի դեմ[14]։

Թուրքական մամուլի պատմության խորհրդային հեղինակավոր հետազոտող Անատոլի Ժելտյակովը փաստում է, որ Օսմանյան կայսրությունում «կանանց էմանսիպացիայի համար շարժումը պարզորոշ ձևեր է ընդունել միայն 1908թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո, բայց նրա ուրվագծերը երևում են արդեն 19-րդ դ. վերջին քառորդի գրողների ստեղծագործության մեջ»[15]։

Թուրք գրականության ու մամուլի պատմության մեջ բացառիկ դեր խաղացած «Սերվեթ-ի ֆյունուն» հանդեսում հրատարակվում էին արձակագիր Ֆաթմա Ալիյեն (1862-1924) ու բանաստեղծուհի Նիգյար Հանըմը (1856-1918)։

Թուրք ժուռնալիստիկայում նույնպես կանայք սկսում են հանդես գալ այս ժամանակաշրջանում. 1883-1884 թթ. Արիֆե-հանըմը Ստամբուլում ձեռնարկում է «Շյուքյուֆեզար» ("Şükûfezar") կանանց հանդեսի հրատարակումը։ Այս հանդեսի «Ներածությունում» Արիֆե - հանըմը մասնավորապես գրում է, թե ինչպես են գիտական հայտնագործությունները փոփոխություն մտցնում հասարակական կյանքում ու փորձում էր համոզել կանանց, որ կյանքում հաջողության կարելի է հասնել գեթ գրագիտության, կրթության ու մշակույթին հաղորդակցվելու միջոցով. Նա նաև բարձրացնում էր կանանց ու տղամարդկանց՝ հասարակության զարգացմանը հավասար չափով ծառայելու

անհրաժեշտության խնդիրը: Այս հանդեսի հետ փաստորեն համագործակցում էին միմիայն վերնախավը ներկայացնող կանայք, իսկ պարբերականի հավատամքը արտահայտվում էր հետևյալ բառերում.«Մենք` տղամարդկանց հոգևական ծառաների առարկա հանդիսացողներս, ինչ է թե՛ մեր մազերը երկար են, իսկ խելքը` կարճ[16], մենք պարտավոր ենք հակառակն ապացուցել: Մենք պետք է անուր կանգնենք աշխատանքի ու կատարելության ուղու վրա ու տղամարդկանց արժանիքներին նախապատվություն չտանք կանանց արժանիքների հանդեպ »[17]:

1892թ. ժուռնալիստներ-ամուսիններ Իբնուլիաքքը Թահիրը ու Շաղլե-հանըմը սկսում են պատկերազարդ «Կանանց համար թերթի» ("Hanımlara mahsus gazete") հրատարակությունը: Հիշյալ շաբաթաթերթը նպատակ ուներ նպաստել կանանց կրթական մակարդակի բարձրացման գործին, տպագրել կանանց հեղինակած ստեղծագործություններ, պատմել կանանց առաջադիմության մասին: Թերթի մեծ մասը զբաղեցնում էին իգական դպրոցների համար նախատեսված ուսումնական նյութերը, մահմեդական կանանց մասին ակնարկները, տպագրվում էին նաև նորություններ, գրքերի անոնսներ, իսկ վերջին էջում տեղադրվում էին առավելապես ոչ-մահմեդական այն կանանց լուսանկարները, ովքեր ճանաչում էին ստացել հասարակական – քաղաքական կամ մշակութային կյանքում: Այս պարբերականի տպաքանակը երբեմն հասնում էր 2,5 հազար օրինակի: Թերթը գոյատևեց ընդհուպ մինչև 1908թ. (Նույն ժուռնալիստները միաժամանակ 1,5 հազար օրինակ տպաքանակով հրատարակել են նաև «Երեխաների համար թերթը» ("Çocuklara mahsus gazete"), որը նախատեսված էր դպրոցականներում սովորողների, դեռահասների համար)[18]:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում կանանց շարժման պատմության մեջ սովորաբար հիշատակվում են անվանի կին գրողներ Նազիհե Մուհեթթինի, Էմինե Սեմիյե Հանըմի, Սելմա Ռըզայի, Մյուֆիդե Ֆերիդի[19] ու հատկապես Հալիդե Էդիբի անունները:

Հալիդե Էդիբի անունը Զիյա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքներում» հիշատակվում է թյուրքականությանը բացահիկ ծառայություն մատուցած գրողների շարքում[20]:

Հալիդե Էդիբը (Ադըվարը) ծնվել է 1884թ. Ստամբուլում` Մեհմեդ Էդիբ Բեյի ընտանիքում: Ավարտել է Ակյուստարի Ամերիկյան իգական քոլեջը, ժամանակի հեղինակավոր թուրք մտավորականներից ստացել արաբերենի, Ղուրանի, թուրքական երաժշտության, մաթեմատիկայի, փիլիսոփայության ու գրականության մասնավոր դասեր: 1901թ. ամուսնացել է Սալիհ Զեքիի հետ: Կորաբանվել է Եգիպտոս, այնուհետև տեղափոխվել Անգլիա: 1909թ. սկսել է դասավանդել իգական մանկավարժական ուսումնարանում (Dârü'l- Muallimat): 1910թ. լույս է տեսնում այս վիպասանուհու «Սեիյե Թալիբ» վեպը, որին հատուկ

անդրադարձել է Վ. Ա. Գորդլևսկին արևելագետներին քաջածանոթ «Նոր օսմանական գրականության ակնարկներ» աշխատության եզրափակիչ մասում: Ապագա խորհրդային հռչակավոր թուրքագետը, անդրադառնալով «Ձեզրի աթբ» գրական խմբակի ժամանակաշրջանի թուրք գրողների ստեղծագործական հաջողություններին և անհաջողություններին, հորդորում էր «անտաղանդների բազմության մեջ» տարբերել այն գրողներին, որոնց ստեղծագործությունները թե՛ իրենց սյուժեներով և թե՛ մշակված ոճով «խոսում են գրականության մեջ շարժման մասին» և հատուկ վկայակոչում էր կին գրող Հալիդե Սալիհի (նույն ինքը՝ հետագայում Հալիդե Էդիբ Ադըվար) վեպի օրինակը, որտեղ պատմվում էր «սիրո հրավառքի համար պայքարող օսմանյան աղջկա պատմությունը».[21]

Ձիյա Գյոքալփի գաղափարական ազդեցությունն ակնհայտ է Հալիդե Էդիբի «Նոր Թուրանը» ("Yeni Turan") վեպ-ուտոպիայում, որը հատվածաբար տպագրվեց «Թանին» թերթում 1912թ.: Վեպի կենտրոնում կրկին կինն է, սակայն սիրային ինտրիգը չէ առանցքայինը. գլխավոր հերոսուհի Քայան հասարակական կյանքի ակտիվ մասնակից է, թուրանիզմի շարժման ղեկավարներ Օղուզն ու Քայան սիրում են իրար, նրանք տոգորված են անծայրածիր Թուրանի պետության ստեղծման իղձերով, բայց նրանց գաղափարական հակառակորդների՝ օսմանիզմի կողմնակիցների նենգապարտության արդյունքում Օղուզը զոհվում է: Թուրանականների գործը, այնուամենայնիվ, հաղթանակում է...[22] (Իր շատ ավելի ուշ գրած գրքերից մեկում, որը վերնագրված է «Արևմտյան, արևելյան և ամերիկյան ազդեցությունները Թուրքիայում», Հալիդե Էդիբ Ադըվարը ստիպված էր «հուշել» արևմուտքի հակառուսականության թույնով տոգորված շրջանակներին, որ պանթուրքիզմը «շատ վտանգավոր խաղ է»[23]):

Իր հուշերում Հալիդե Էդիբը շեշտել է, որ «Նոր Թուրանը» գրվել է «ոչ միայն օրվա գաղափարական միտումների, այլև Ձիյա Գյոքալփի առաքելական անկեղծ խստության ազդեցության տակ».[24]

1913թ. (բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո) Հալիդե Էդիբը հանդես է գալիս հրապարակային դասախոսությամբ, որի բովանդակությունը տպագրվել է «Թյուրք Յուրդու» հանդեսում՝ «Ազգերն աղետից հետո» ("Felaketten sonra milletler") վերնագրով. Այստեղ բալկանյան – սլավոնական ժողովուրդների նկատմամբ ատելության պաթոսը միախառնվում էր թուրք կանանց լուսավորելու, նրանց մեջ ազգային ոգի սերմանելու, թուրքական մշակույթը, տեխնիկան և առևտուրը զարգացնելու կոչերին: Թուրք ազգի աղետի պատճառը տգիտության, ծուլության, հետամնացության և ամեն ինչի (այդ թվում՝ հայրենիքի) նկատմամբ անտարբերության մեջ տեսնելով՝ հեղինակը հորդորում էր կարդալ թերթեր, գրքեր, խորամուխ լինել պատմության հարցերի մեջ: «Դա ձեր կրոնական և ազգային (ընդգծումը մերն է - Ա. Ս.) պարտքն է».

դիմում էր կին գրողն ու հրապարակախոսը թուրք կանանց:[25]

Արիադնա Տիրկովան վկայում էր իր համար ավելի քան Persona Grata թրքուհի - մտավորականի մասին. «Ամբողջ երիտասարդ Թուրքիան գիտի Հալիդե -Հանըմին, և ոչ միայն որպես շնորհաշատ վիպասանուհու, այլև որպես ջերմ ու գործունյա հայրենասեր-կնոջ, ում անունը հնչում է օսմանյան ժողովրդի արթնացումով... Մտավորական վերնախավերը, որոնց նա պատկանում է, ներծծված են Արևմուտքից հորդած նոր մտքերով ու զգացմունքներով, ձգտումներով ու պահանջներով՝ ծնված օտար, քրիստոնեական քաղաքակրթության կողմից: Օսմանյան կայսրության ըստ էության ոչ բազմազանակ, բայց դեռևս - քաղաքական իշխանության տիրապետող ժողովրդի լավագույն ներկայացուցիչների մեջ ընթանում է շատ բարդ ներքին պայքար: Արևմուտքը նրանք գնահատում ու հարգում են, բայց չեն ցանկանում հրաժարվել հարազատ Արևելքից, չեն ցանկանում կորչել եվրոպացիների ամբոխում: Այդ մշակութային գործիչների շրջանում ամենապատվավոր տեղերից մեկը պատկանում է Հալիդե- Հանըմին» :[26]

Անտիկ հասարակական - քաղաքական գործիչ Էմինե Սեմիյե Հանըմը, որ Հալիդե Էդիբի վկայությամբ կանանց միակ ներկայացուցիչն էր «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունում[27], իր հոդվածներից մեկում գրել է. «Իմ հոգում բռնակալության և ստրկության դեմ գիտակցված բողոքի առաջին սերմերը նետել է Ֆրանսիայի դասատու տիկին Վերանը (Verand)՝ Սերբսում ռեֆորմի ենթարկված ժանդարմերիայի պետի պաշտոն զբաղեցնող գեներալի կինը ... Նա ինձ ստիպեց հասկանալ, որ նաև թուրք կնոջ արթնանալու ժամն է, որ նա էլ պետք է բացի աչքերը... Ես սկսեցի իմ շուրջը համախմբել ծանոթ կանանց: Մենք կազմակերպում էինք գաղտնի հավաքույթներ, ուր ես փորձում էի համոզել ընկերուհիներիս, որ մենք նույնպես չենք կարող մի կողմ մնալ ընթացող պայքարից, որ մենք պարտավոր ենք համախմբվել և աշխատել հանուն հայրենիքի ազատագրության (աբդուլ-համիդյան «զուլումից» - Ա. Ա.)՝ մեր եղբայրների և ամուսինների հետ ձեռք ձեռքի տված: Դա երեք տարի առաջ էր: Այդ ժամանակից սկսվեց մեր, եթե կարելի է այդպես ասել, սիստեմատիկ ու ծրագրավորված մասնակցությունը ազատագրական պայքարում, որն ընթանում էր երիտթուրքական դրոշի ներքո... »[28]:

Կարելի է հիշել, թերևս, նաև այն փաստերը, երբ կանայք, օգտվելով հարեմների անձեռնմխելիությունից, օգնում էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեներին՝ թռուցիկներ և այլ քաղաքական գրականություն թաքցնելու գործում:[29]

1908թ. հուլիսի 23-ին (սահմանադրության վերականգնման օրը) թուրք կանանց՝ առանց ծածկոցի փողոց դուրս գալու փորձեր են ձեռնարկվում, ինչը կարծես թե համահունչ էր համընդհանուր հեղափոխական էյֆորիային: Ինչպես գրել է Հալիդե Էդիպը. «Թվում էր, թե մոռացվել են դարավոր ավանդույթները...Տղամարդիկ ու

կանայք քայլում էին միասին՝ ծիծաղելով ու լաց լինելով: Ծածկոցը հանելու պահանջով հարյուրավոր կանանց մասնակցությամբ միտինգներ էին անցնում կայսրության տարբեր, հատկապես մեծ քաղաքներում ի հայտ են գալիս կանանց ազգային ակումբներ, ուր կարդացվում էին հանրակրթական բնույթի դասախոսություններ: Ստամբուլում սկսեց հրատարակվել «Կին» ("Kadın") հանդեսը: 1910 -ական թթ. թուրքական մամուլում ծավալվում են սուր բանավեճեր «կանանց անսահման ազատություն տալու կողմնակիցների» ու հակառակորդների միջև, ընդ որում բանավիճող երկու կողմերն էլ, բնականաբար, իրենց տեսակետների հիմնավորումը տեսնում էին իսլամի դրույթներում, միաժամանակ կանանց«եմանսիպացիայի» կողմնակիցները պնդում էին, որ եթե կանայք չներգրավվեն հասարակական կյանքում, ապա թուրքերին չի հաջողվի իրագործել իրենց առջև ծառացող պատմական (ներառյալ՝ ռազմական) խնդիրները:

Կանանց կրթության և իրավահավասարության հիմնա-հարցերը լուսաբանվում էին տարբեր պարբերականներում, մասնավորապես «Թանին» ("Tanin") իթթիհաթական առավել ազդեցիկ թերթում:[30]

Արիադնա Տիրկոյան, ով ընդհանուր առմամբ անթաքույց հիացմունքով է արտահայտվում հիշյալ «Թանին» թերթի խմբագիր, երիտթուրքական պարագլուխ Հյուսեին – Ջահիդի մասին, մի քանի բառով ավելորդ չի համարել «անդրադառնալ» նաև վերջինիս կնոջը. «Փայլուն ու հաջողակ, խելոք, տաղանդավոր, յուրովի բարեսիրտ, Հուսեին-Ջահիդը ամեն երկրում էլ կարող էր զբաղեցնել առաջին տեղերից մեկը՝ շնորհիվ այն բնատուր հատկությունների, որոնցով պարգևել էր նրան բնությունը: Բայց նույն ճակատագիրը զրկել էր նրան՝ ստիպելով ծնվել 19-րդ դարի Թուրքիայում... Հյուսեին Ջահիդի կինը կրթություն չի ստացել, խոսում է միայն թուրքերեն, և շատ հեռու է այն բարդ հետաքրքրություններից ու ապրումներից, որոնցում եռում է իր ամուսինը: Խմբագրությունից դուրս նրա (իմա՝ Հյուսեին Ջահիդի -Ա. Ս.) տունը ապրում է թուրքական հին ժամանակներից եկած ամուր ավանդույթների համաձայն: Պատուհանների վրայի մանր վանդակաճաղերը խոսուն վկայում են այն մասին, թե ինչն է նրա կնոջն արտաքին ազդեցությունների համար անհասանելի դարձնում»:[31]

Ա. Տիրկոյան նաև պատմում է 1910-ական թթ. Օսմանյան կայսրությունում արդեն բավական լայն ճանաչում վայելող ու Զիյա Գյոքալփի գաղափարների ուժեղ ազդեցությունը կրած մեկ այլ գրողի՝ Ահմեդ Հիքմեթի (1870-1927)[32] ամուսնության մասին՝ անելով չափազանց կարևոր ու հավատացյալ–մահմեդականների համար անգամ ակնհայտորեն վիրավորական հետևություն այն մասին, որ այդ ամուսնության կիսակատար պատմությունը ամեն տեսակ հետազոտություններից ավելի պարզորոշ ցույց է տալիս իրեն, թե «որքան անհեթեթ է դասավորվում մուսուլմանական ընտանիքը նույնիսկ առավել լուսավորյալ շրջանակներում»:[33] Ծավալուն մեջբերմամբ ստորև ամբողջութ-

յամբ ներկայացնում ենք թուրք գրողի պատմածը Արիադնա Տիրկովային՝ առավելապես ժամանակաշրջանի սահմանյան և եվրոպական մշակութային համակարգերի անցողիկության ու թուրք «արևմտականների» փնտրտուքի պատկերը տալու, հետագա քեմալական ռեֆորմների «ելման դիրքերի» և մեկ ուրվագիծ հավելելու նպատակով. «- Ես մոտավորապես 25 տարեկան էի (պատմում է Ահմեդ Հիքմեթը-Ա. Ս.), երբ մայրս որոշեց, որ ժամանակն է ինձ ամուսնացնել: Միակ հարցը, որ նա տվեց, այս էր. «Ո՞ւմ ես ուզում. շիկահերի՞, թե՞ սևահերի»: Ես ի՞նչ իմանայի: Երևակայությունս եռում էր: Ես սիրում էի բոլոր կանանց՝ շիկահերներին ու սևահերներին, ու նույնիսկ կարմրահերներին: Մայրս գնաց որոնումների և ինձ համար հարսնացու գտավ: Դա առաջադեմ ընտանիք էր: Նրանք ապրում էին a' La franca, բայցևայնպես հարսանիքը բոլոր ավանդույթների համաձայն էր: Ես տեսել էի հարսնացուիս գեթ մեկ անգամ հեռվից՝ խանութում, որտեղ նա մոր հետ էր: Իհարկե, խելույն սիրահարվեցի ու գնեցի մի տիկնիկ, որն ինձ նրան նման թվաց: Բայց ես այնքան վատ զգացի, թե ում հետ եմ ամուսնանում, որ տիկնիկը բաց ծամեր ուներ, իսկ կինս, պարզվեց, շիկահեր էր: Ինքնըստինքյան պարզ է, որ մենք կնոջս հետ չունեինք մի խոսք փոխանակելու հնարավորություն: Երկու կողմից էլ կատարյալ անգիտություն էր: Եվ գիտեք, ի՞նչ է հետաքրքիր, - նա խորհրդավորեն նայեց ունկնդիրներին, - երբ մենք սովորում էինք Գալաթա - Սարայում, ունեինք ընկերական խմբակ, և նրանում բոլոր ընդգրկվածները երդվել էին ազատագրել իրենց կանանց: Իսկ երբ ամուսնացանք, բոլորի պես ապրեցինք: Ես ծանոթ չեմ ընկերներիս կանանց հետ, նրանց էլ չեմ ծանոթացնում կնոջս հետ:

- Ուրեմն, ինչ՞ պես, իսկական հարեմնի՞ք:

- Իսկական,- խոստովանեց Ահմեդ- Հիքմեթը և արդեն առանց ծիծաղի ավելացրեց,- թե՛ ինձ համար, որպես գրողի, դա սարսափելի է: Ինչպե՞ս ես կարող եմ գրել՝ չիմանալով կանանց: Մորս, զոքանչիս, քույրերիս ու կնոջս ես արդեն նկարագրել եմ, իսկ ուրիշ ոչ ոքի ես չգիտեմ: Այդ պատճառով էլ մեր բանաստեղծները նկարագրում են կամ սուրկուհիների, կամ էլ եվրոպացի կանանց, որոնց վրա էլ չարչաֆ են գցում: Ազգային գրականության համար դա պարզապես մահացու է: Դա զրկում է նրան գեղեցկությունից, բուրմունքից, ճշմարտացիությունից: Հետո ես բացեիբաց խոստովանում եմ, որ կանանց հասարակության բացակայությունն ինքնին ավելի աղքատ է դարձնում մեզ: Մնում է ինչ-որ ծանր անբավարարվածություն, դատարկություն, թախիծ: Դա ստվեր է նետում այն ամենի վրա, ինչ մենք գրում ենք, չորացնում է հենց պոեզիայի աղբյուրը»[34]:

1908թ. հեղափոխության արդյունքում կանանց շարժման որոշ չափով մասսայականացումը, ինչպես նաև կանանց կրթության՝ առաջադիմության կարևոր նախապայման հանդիսանալու մասին տարբեր պարբերականներում հրապարակումների թվի աճը բնականաբար պի-

տի առաջացներ հոգևորականության ու պահպանողական շրջանակների հակազդեցությունը: Հայտնի է, որ երիտթուրքական հեղափոխությանը հաջորդած վերելքը կարճատև էր[35]:

Երիտթուրքական կառավարման տարիներին պարբերական մամուլում հրատարակվում են նաև «թյուրքականության հայրերի» գեղարվեստական գործերը, որտեղ թուրք կանանց իրավունքների հիմնահարցը արծարծվում է ազգայնականության ծիրում: Հիշարժան է «Թյուրք Յուրդու» հանդեսում տպագրված Մեհմեդ Էմինի[36] հայտնի «Անատոլիա» ("Anadolu") բանաստեղծությունը, որտեղ հեղինակը փորձում է կարեկցանք հարուցել թուրք կնոջ ողբերգական վիճակի նկատմամբ: Բանաստեղծության բովանդակությունը հետևյալն է. բանաստեղծը մռայլ դաշտերով առաջ է ընթանում ու տեսնում տանջված, նիհար, ցնցոտիավոր մի կնոջ, որի ամուսինը զոհվել է պատերազմում, նրա ընտանիքը հող և անասուններ չունի, սնվում է խոտով: Թշվառ կնոջ այն հարց-բացականչությանը, թե ինչու՞ է Ստամբուլն այդքան դաժան և օտար իրենց նկատմամբ, միթե՞ գավառի բոլոր բնակիչներին վիճակված է նման «անասնական ճակատագիր», հեղինակը պատասխանում է. «Ո՛չ, ո՛չ, դու դրա համար չես ծնվել: Ծնվել ես, որ երջանիկ կին լինես ընտանեկան օջախում, լինես մայր, դաստիարակես երեխային: Դու մեր թանկագին ընկերն ես, քո ձայնը ողջունում է մեզ սխրանքի՝ հանուն հայրենիքի: Քո դեմքը հիշեցնում է մարդկանց գթության մասին, դու զարդարում ես մեր կյանքը: Բայց մենք մոռացության էինք մատնում քո բոլոր իրավունքները: Կնոջ վրա մենք նայում էինք որպես մի անասունի, արհամարհում էինք քեզ... Հայրենիքի բոլոր հոգսերն ընկած են քո փոքր ուսերին: Այդ բեռը ճնշում ու կործանում է քեզ... Դու քո գեղեցիկ երկրում այրվում ես, ինչպես դժոխքում... »[37]:

1912-1913 թթ. բալկանյան պատերազմների ընթացքում թուրք կանանց ակտիվացման մի քանի ուշագրավ դրվագներ է ներկայացնում ակադ. Վ. Գորդլևսկին. «Մի կողմ նետելով կրոնի կողմից պարտադրված դարավոր նախապաշարմունքները՝ կինը ներկայացավ մարտի դաշտ, ուր թրքուհիները՝ բուժքույրերը, թեթևացնում էին վիրավորների տառապանքները: Այնժամ կինը համոզվեց, որ իրեն ապօրինի են զրկում իրավունքներից: Կրթություն, պրակտիկ աշխատանք, իրավական դրություն՝ այս ամենը բուռն քննարկվում էր միտինգներում ու ժողովներում: Կանայք ամսագրեր էին հրատարակում, և այնտեղ, սարսափելի է, տպագրվում էին ազատության համար պայքարող կանանց դիմանկարներ: Ի հայտ եկան ընկերություններ՝ բարեգործական, որն օգնում էր աղքատ աղջիկ-սովորողներին, Կանանց Կարմիր Կիսալուսնի ընկերությունը, ի վերջո կանանց իրավունքների պաշտպանության ընկերությունը: Բեհիր Օսմանը, որը ծագում էր աչքի ընկնող ունևոր թուրք ընտանիքից, որպեսզի ճանապարհ բացի կանացի աշխատանքի համար, չնայած իր համար ստեղծվող բոլոր արգելքնե-

րի, աշխատանքի էր ընդունվել որպես հեռախոսավարուհի, Բեյքիս Ենգեթը դիմել էր Մեհմեդ Ձելալ-փաշային և ընդունվել օդաչուների դպրոց. Նրա դիմանկարը ցուցադրվել էր Ռազմական թանգարանում` որպես կնոջ արիության հիշեցում»[38]:

Պարզ է, որ իթթիհաթական պարագլուխները առնվազն համակարծիք չէին ոչ կրոնի դերի, ոչ էլ կանանց էմանսիպացիայի հարցում. Նաև ահռելի անդունդ կար անգամ «ամենաառաջադեմ» հորջորջվածների խոսքերի (գուցե և մտադրությունների) ու գործերի միջև:

Երիտթուրքական կառավարման տարիներին կանանց «էմանսիպացիայի» ուղղությամբ առանձին փորձեր ձեռնարկելու, գրքային տեսական ընկալումների ու դրանց` օսմանյան քաղաքական վերնախավի համար պրակտիկ - կողմնորոշիչ դերի մասին յուրահատուկ վկայություն է արձանագրված ճանաչված թուրք սոցիոլոգ, հրապարակախոս ու քաղաքական գործիչ Մեհմեդ Էմին Էրիշիրգիլի (1891-1965)` վեպ - ուսումնասիրությունում, որտեղ մանրամասնորեն պատմվում է իթթիհաթական պարագլուխների` Թալեաթի, Էնվերի, Նազըմի ու Ձիյա Գյոքալփի` կուսակցության կենտրոնական կոմիտեի շենքում (Ստամբուլի` այսպես կոչված «Pembe Konak»-ում) կայացած մի քննարկման մանրամասնությունների, «մութ ծալքերի» մասին:[39] Հիշյալ քննարկման ընթացքում Ձիյա Գյոքալփը հանդես է գալիս թուրք կանանց իրավունքների պաշտպանության սուր հարցադրումներով` պատրաստ լինելով օգտագործել առավելապես իր տեսակետների կրոնական փաստարկումները:[40] Նույն օրը թյուրքականության գաղափարախոսը իթթիհաթական պարագլուխների «դատին» է ներկայացնում կանանց` աշխատելու իրավունքի հիմնավորմանը նպատակաուղղված հետևյալ բանաստեղծությունը (Մեհմեդ Էմին Էրիշիրգիլի վկայության համաձայն բանաստեղծությունում արտացոլված գրքային դրույթները, ընդհանուր առմամբ, արժանացել են Թալեաթի և Էնվերի հավանությանը [41]). "Dersiniz, "bir genç kız yaşı dolunca / Mutlaka kendine bulur bir koca, /Kocası evine getirir ekmek,/ O halde kadına meslek ne gerek?/Kadının mesleği olmaktır karı, /O çıkmasın sakın bundan dışarı. / Ne lâzım erkek rakibi olmak, / Değil mi ikisi ezelden ortak ;/ İşçiye olunca rakip karısı / Kol artar, ücretin gider yarısı, / İkisi alırlar aynı ücreti / Ocağın eksilir, artmaz serveti". / Bu sözler hep doğru, fakat her kadın, / Bulur mu bir koca, bulsa da yarın / Bu adam ölmez mi? O halde nasıl, / Dersiniz, "kazanma, işte muttasıl!"/ Görürken ortada işte binlerce / Kocasız kadınlar, çeker işkence. / Dersiniz: "Değiller mesleğe muhtaç; / Ya koca bulmalı, ya kalmalı aç!" /Evvelce meloe idi, hep zengin evler /Kadınlar bulurdu sığınacak yer, /Yaşamak güçleşti, şimdi her erkek / Ancak karısına yedirir yemek. / Sanmayın, hepsi de bir yük taşıyor, / Birçoğu hodgâmdır, bekâr yaşıyor. / Çünkü var, binlerce sefih kocalar, / Ya muttasıl içer, ya kumar oynar, / Kimi de mahpusta alır soluğu, / Aç kalır evinde çoluk çocuğu. / Bunlar da olmasa,

kadın insandır./ İnsanın en büyük hakkı irfandır. /Kadın çalışmazsa fikri yükselmez, / Tabii o zaman size denk gelmez. // Kadın yükselmezse alçalır vatan/ Samimi olamaz onsuz bir irfan. // Kocalı kocasız birçok kadınlar /Açtırlar, dersiniz: "İşsiz kalsınlar!"/Derim ki: "O halde kadiniz mutlak. /Bunları umuma odalık yapmak!"[42] Ասում եք. «Մի երիտասարդ աղջիկ, հենց որ տարիքը լրանա, / Անպայման կգտնի իրեն որևէ ամուսին./ Նրա ամուսինը տուն կբերի հաց./Ուրեմն կնոջն ի՞նչ պետք է մասնագիտությունը:/Կնոջ արհեստը զբաղմունքը /ամուսնացած/ կին լինելն է, / Զգույշ. Նա սրա սահմաններից թող դուրս չգա./ Ի՞նչ կարիք կա, որ Նա մրցակից դառնա տղամարդուն,/ Երկուսն էլ միասին - մեկտեղ չե՞ն անհիշելի ժամանակներից./ Կինը ամուսնուն մրցակից դառնալուն պես/ Վարձատրության կեսը կգնա,/ Երկուսը /միասին/ կստանան միևնույն վարձը./ Օջախը կքանդի, կարողությունն-ունեցվածքը չի ավելանա»: / Բոլոր այս խոսքերը ճիշտ են, սակայն յուրաքանչյուր կին / կգտնի՞ մի ամուսին, / Եթե գտնի էլ, վատը/ Այս տղամարդը չի՞ մեռնի... Այդ դեպքում ինչպե՞ս եք / Ասում թե.«Մի՛ վաստակիր, խնդրի՛ր անընդհատ»:/ Ահա տեսնելով շուրջբոլորը հազարավոր ամուսին չունեցող, տառապանք քաշող կանանց՝ / Ասում եք. /«Նրանք/ մասնագիտության կարիք չունեն,/ Կա՛մ պիտի ամուսին ճարեն, կա՛մ պիտի մնան սոված»: / Նախկինում օրեան էին բոլորը հարուստ տները. / Կանայք գտնում էին օրեան,/ Սարերը դժվարացավ, հիմա ամեն տղամարդ / Հազիվ կերակրում է իր կնոջը: / Մի՛ կարծեք՝ բոլորն էլ նույն բեռն են քաշում./ Շատերն եսասեր են, անուրի են ապրում./ Քանզի կան հազարավոր վատնող-հիմարի գլուխ ամուսիններ. / Կան անդուլ-անդադար խմում են, կամ խաղում դումար (մոլեխաղ)/. Ոմանք էլ բանտում են շունչ քաշում./ Սոված են մնում տանը կինն ու երեխաները. /Այսպիսի բաներ էլ թե չլինեն, կինը մարդ է, /Մարդու անհրաժեշտ իրավունքը իրֆանն է (իմա՝ գիտելիքն ու լուսավորությունն է - Ա. Ս.): / Եթե կինը չաշխատի, ինտելեկտուալ առումով չի զարգանա./ Բնականաբար այնժամ ձեզ չի հավասարվի-նմանվի:// Եթե կինը չբարձրանա, անկում կապրի հայրենիքը, / Անկեղծ չի կարող լինել առանց նրա իրֆանը: // Ամուսնացած, առանց ամուսին բազմաթիվ կանայք / Սոված են. դուք ասում եք.«Թող անգործ մնան»: / Կասեմ.« Այդ դեպքում ձեր չար նպատակը անպայման / Սրանց համընդհանուր հարճ դարձնելն է»:

Խորհրդային գրականագետ Լեյլա Ալիևան, ընդգծելով, որ Զիյա Գյոքալփը «բուրժուական դիրքերից պաշտպանում էր թուրք կնոջ վիճակի որոշ բարելավման օգտին», մատնանշում է նաև թյուրքականության գաղափարախոս - բանաստեղծի հանրահայտ «Նոր կյանք» ("Yeni Hayat", 1918) ժողովածուի բանաստեղծություններից մեկում «սուրը ձեռքն առած կանանց՝ տղամարդկանց դեմ ապստամբության» գյոքալփյան «նախագուշակությունը»:[43]

Քեմալական շարժման և Թուրքիայի Հանրապետության

ստեղծման ու կայացման ժամանակաշրջանում ինչպես Զիյա Գյոքալփը, այնպես էլ մի շարք այլ տեսաբաններ ու պետական պաշտոնյաններ «թուրքական ֆեմինիզմի» հիմնավորումն ու համապատասխան հետագա պրակտիկ գործունեության ծավալումը տեսնելու էին թուրք ազգայնականության (Türkçülük, Milliyetçilik) ու ժողովրդականության (թուրք. Halkçılık ռուս. народничество, անգլ. populism) ծիրում:[44]

Զիյա Գյոքալփը «Թյուրքականության հիմունքների» առաջին մասի «Դեպի Արևելք» (Garba doğru) գլխում պնդում է, որ միջնադարյան Եվրոպայում ի հայտ եկած երկու կարևոր նորամուծություններից մեկն այն է, որ կանայք առանց կորցնելու իրենց մաքրությունը և առաքինությունը, մուտք էին գործում հասարակական կյանք արդեն այն ժամանակ, երբ մահմեդականները կանանոցի (harem), տան՝ տղամարդկանց համար առանձնացված մասի՝ «այրանոցի» (selâmlık), չարշաֆի (çarşaf), կանանց դեմքը ծածկող քողի (peçe) սովորույթները փոխ էին առնում «քրիստոնեական Բյուզանդիայից ու կրակապաշտ Իրանից»:[45]

«Թյուրքականության հիմունքները» աշխատության երկրորդ մասի՝ «Թյուրքականության ծրագրի» «Իրավական թյուրքականության» հարցերի լուսաբանմանը նվիրված հատվածում հեղինակը հատուկ կարևորում է ժամանակակից ընտանիքի (asrî aile) ստեղծման անհրաժեշտությունն ու գրում, որ ժամանակակից պետության մեջ անհետաձգելի են դառնում նաև տղամարդու ու կնոջ ամուսնական, ապահարզանի, ժառանգության, մասնագիտական, քաղաքական իրավունքների հավասարության հաստատումը և այս սկզբունքի կենսագործման համար նոր ընտանեկան օրենքի (aile kanunu) և ընտրական օրենքի (intihabat kanunu) ստեղծումը:[46]

Արդեն 1923թ. հունվարի 31-ին ելույթ ունենալով Իզմիրի բնակիչների առջև՝ Մուստաֆա Քեմալը նոր՝ ազգայնական Թուրքիայում կնոջ դերի բարձրացման հարցադրմամբ էր հանդես գալիս. «Kudreti fatıra insanları iki cins olarak yaratmıştır. Bunlar yekdiğerlerinin lâzım ve melzumudur... Bizim heyeti içtimaiyemizin ademi muvaffakiyetinin sebebi kadınlarımıza karşı gösterdiğimiz tekâsul kusurdan neşet etmektedir. İnsanlar dünyaya mukadder oldukları kadar yaşamak için gelmişlerdir. Yaşamak demek faaliyet demektir. Binaenaleyh bir heyeti içtimaiyenin bir uzvu faaliyette bulunurken diğer uzvu atalette olursa o heyeti içtimaiye meflûctur. Bir heyeti içtimaiyenin hayatta çalışması ve muvaffak olması için çalışmanın ve muvaffak olabilmenin mutevakkıf olduğu bütün esbab ve şeraiti tekabbül etmesi icabeder. Binaenaleyh bizim heyeti içtimaiyemiz için ilim ve fen lâzım ise bunları aynı derecede hem erkek ve hem de kadınlarımızın iktisap etmeleri lâzımdır. Malûmdur ki, her safhada olduğu gibi hayatı içtimaiyede dahi taksimi vezaif vardır. Bu umumî taksimi vezaif arasında kadınlar kendilerine ait olan vezaifi yapacakları gibi aynı zamanda heyeti içtimaiyenin refahı, saadeti için elzem

olan mesaii umumiyeye dahi dahil olacaklardır. Kadının vezaifi beytiyesi en ufak ve ehemmiyetsiz vazifesidir. / Kadının en büyük vazifesi analıktır. İlk terbiye verilen yerin ana kucağı olduğu düşünülürse bu vazifenin ehemmiyeti lâyıkiyle anlaşılır. Milletimiz kuvvetli bir millet olmaya azmetmiştir. Bugünün levazımından biri de kadınlarımızın her hususta yükselmelerini teminidir. Binaenaleyh kadınlarımız da âlim ve mutefennin olacaktır ve erkeklerin geçtikleri bütün derecati tahsilden geçeceklerdir. Sonra kadınlar hayatı içtimaiyede erkeklerle beraber yürüyerek birbirinin muin ve muzahiri olacaklardır[47] - Արարիչ ուժը մարդկանց ստեղծել է՝ որպես երկու սեռ: Սրանք մեկը մյուսին անհրաժեշտ են ... Մեր հասարակության անհաջողության պատճառը ի հայտ է գալիս մեր՝ կանանց նկատմամբ ցուցաբերած քամահրանքի ու զանցառության մեջ: Մարդիկ աշխարհ են եկել որպեսզի ապրեն՝ որքան կանխորոշված է (ճակատագրով): Ապրել՝ նշանակում է գործունեություն: Այս պատճառով երբ որևէ հասարակության մի մարմինը գործում է, իսկ մյուսը՝ անգործունյա, այդ հասարակությունը անդամալույծ է: / Որևէ հասարակություն իր կենսագործունեության ու հաջողակ լինելու համար անհրաժեշտ է, որ տեղավորվի այն պայմանների շրջանակում, որոնցից կախված է աշխատանքի ու հաջողության հնարավորությունը: Այդ պատճառով, եթե մեր հասարակության համար գիտությունն ու տեխնիկան անհրաժեշտություն են, ուրեմն պետք է, որ մեր տղամարդիկ ու կանայք հավասարապես տիրապետեն դրանց: Պարզ է, որ ինչպես և յուրաքանչյուր ոլորտում, հասարակական կյանքում էլ կա պարտականությունների բաժանում:/ Այս համընդհանուր պարտականությունների բաժանման մեջ կանայք իրենց բնորոշ պարտականությունների կատարմանը զուգընթաց միաժամանակ ներգրավվելու են նաև հասարակության բարօրության և երջանկության համար անհրաժեշտ ընդհանուր աշխատանքում: Կնոջ տնային պարտականությունները ամենաթեթև ու աննշան պարտականություններ են: Կնոջ ամենամեծ պարտականությունը մայրությունն է: Բավական է խորհել այն մասին, որ մոր գիրկը այն առաջին տեղն է, ուր տրվում է սկզբնական սկզբնական դաստիարակությունը, և պատշաճորեն կըմբռնենք այս պարտականության կարևորությունը: Մեր ազգը վճռել է դառնալ ուժեղ ազգ: Այսօրվա անհրաժեշտություններից մեկն էլ մեր կանանց համակողմանի բարձրացումն է: Այս պատճառով մեր կանայք էլ գիտնական ու տեխնիկայի մասնագետ են դառնալու և բարձրանալու են կրթական բոլոր այն աստիճաններին, որոնց տղամարդիկ են հասել: Հետո կանայք հասարակական կյանքում տղամարդկանց հետ համատեղ են քայլելու՝ օգնական ու նեցուկ են դառնալու միմյանց»:

1924 (1340) թ. մարտի 1-ին բացելով երկրորդ գումարման մեջլիսի առաջին նստաշրջանը՝ Մուստաֆա Քեմալը, բավական հանգամանորեն խոսելով իրավական բարեփոխումների հրամայական անհ-

րամեջտության մասին, մասնավորապես շեշտել է. «Hukuk-u medeniyede, hukuk-u ailede takip edeceğimiz yol ancak medeniyet yolu olacaktır. - Այն ուղին, որին մենք հետևելու ենք քաղաքացիական իրավունքի, ընտանեկան իրավունքի ոլորտներում, միայն քաղաքակրթության ուղին է լինելու»[48]:

Քեմալական ռեֆորմների ուսումնասիրողների համար թե՛ փաստական նյութի հարստության, թե՛ հեղինակային հետաքրքիր դիտարկումների առումով կարծում ենք, հետաքրքրություն են ներկայացնում Վ. Գորդլևսկու «Նոր Թուրքիայի գաղափարախոսությունը (մամուլի տեսություն)» աշխատության «Հարկադիր ամուսնություն. Ամուսնական իրավունքի վերանայումը» և «Կանանց շարժումը» մասերը:[49] Այստեղ Վ. Գորդլևսկին, ով պարբերաբար ու համգամանորեն անդրադարձել է Օսմանյան կայսրության վերջին և Թուրքիայի հանրապետության առաջին տարիներին կանանց իրավունքների հարցերի՝ թե՛ գեղարվեստական գրականության մեջ և թե՛ մամուլում արտացոլմանը, վերլուծելով 1920-ական թվականների անատոլիական պարբերականների հրապարակումները, մասնավորապես գրել է, որ «Մամուլը, ողողողվելով «վերևից եկող» հրահանգներով, ակտիվորեն պրոպագանդում էր այն այսպես կոչված «սասմբլեաների» ներմուծումը երկրում, որոնք պետք է վերացնեին սեռերի միջև գոյություն ունեցող դարավոր օտարացումը: Եվ ահա թղթակիցը Գալիպոլուից, գովերգելով թուրք օջախի կողմից կազմակերպվող «պարերեկոները» (բնագրում՝ «Танцульки» - Ա. Ս.), որտեղ ազատորեն հանդիպում են տղամարդիկ ու կանայք, ասում է. «Դրանք (այդ պարի երեկոները- Ա. Ս.) ի հայտ են բերում թուրք երիտասարդության լավ կուլտուրական ունակությունները»: Գրչի սուր ծայրն ուղղված էր «քեսեքքյուրի» դեմ, մենակեցության դեմ, սակայն Փոքր Ասիայի խուլ անկյուններում կինը համառորեն փակվում էր, և միայն բարձրագույն պաշտոնյաների կանայք էին հանդգնում հայտնվել փողոցներում ու հավաքներում առանց յաշմաքի (չադրայի տեսակ- Ա. Ս.)»[50]:

Արդեն Զիյա Գյոքալփի մահից հետո՝ 1926թ. օրենքով կանայք ստացան տղամարդկանց հավասար իրավունքներ (բացի ընտրական իրավունքից, որը ստացան ավելի ուշ):[51] Օրենքն արգելեց բազմակնությունը, չադրա կրելը, մինչև 18 տարեկան աղջիկների ամուսնությունը: 1927թ. օրենքով կանանց թույլատրվեց աշխատել պետական հաստատություններում: Ստամբուլում և Անկարայում բացվեցին նոր իգական ուսումնարաններ, 1928թ. բացվեցին երաժշտության և ֆիզդաստիարակության ուսուցչուհիներ պատրաստող կրթական հաստատություններ[52]:

Ինչպիսի՞ն էր թրքուհու դե-յուրե և դե-ֆակտո կարգավիճակը Գյոքալփի ժամանակաշրջանից երեք-չորս տասնամյակ անց...Լեհ ճանաչված ժուռնալիստ Ք. Պոզնանսկան, անդրադառնալով օսմանյան կայսրությունում կնոջ ստորացուցիչ վիճակին և այն հարցին, թե

«Աքսաքուրը ինչ է արել թուրք կնոջ համար», պնդում էր.«Կանանց իրավահավասարության բնագավառում Թուրքիան ավելի առաջ է անցել անգամ Շվեյցարիայից, որտեղ, օրինակ, այսօր էլ (հմմ՝ 1960-ական թթ.- Ա. Մ.) կինը զրկված է ընտրական իրավունքից: Թուրքիայում կինն ունի և՛ ընտրելու, և՛ ընտրվելու իրավունք: Թրքուհին արդեն շատ տարիներ մասնակցում է պառլամենտի նիստերին: Օրինակ, 1965-1967 թվականներին մեջլիսում կային վեց կանայք, իսկ սենատում՝ մեկը...Այսօրվա Թուրքիայում կինը կարող է ունենալ ցանկացած պրոֆեսիան, անգամ այնպիսիք, որոնք առաջ համարվում էին տղամարդկային: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում թրքուհին թռիչք կատարեց հարեմի կյանքից դեպի հասարակական կյանք. այժմ արդեն ոչ ոքի չի զարմացնի կին բժիշկը, կին փաստաբանը, ուսուցչուհին և անգամ կին դատավորը հանրապետության բարձրագույն դատարանում: Կան քաղաքական տարբեր հայացքների տեր բազմաթիվ տաղանդավոր կին ժուռնալիստներ: Նրանք, որպես կանոն, գիտեն մի քանի օտար լեզուներ և գրում են դիպուկ, մեծ գործիմացությամբ»:[53] Միաժամանակ անկարելի էր չփաստել, որ վերոգրյալը «ճիշտ է մտավորական կանանց մի շատ նեղ միջնախավի նկատմամբ միայն: Բայց պատահում է, որ թրքուհին, բարձր դիրք գրավելով ծառայության մեջ, ընտանեկան կյանքում առաջվա նման մնում է բարոյական ավանդույթների ստրուկ»:[54] Ջ. Պոզնանսկան չէր կարող չգրել նաև գավառներում գոյատևել շարունակող աղջիկների վաճառքի, բազմակնության ավանդույթների մասին,[55] չէր կարող չտեսնել, որ «Անատոլիայի գեղջկուհին այնքան էլ ծանոթ չէ այն իրավունքներին, որոնցով նրան օժտել է նոր քաղաքական օրենսգիրքը, քանի որ նա ամենից հաճախ անգրագետ է: Նրա համար կա միայն մեկ իշխանություն՝ տղամարդու իշխանությունը, որն իրեն շահագործում է որպես ձրի աշխատող ուժ: Սկզբում դա հայրն է, ապա ամուսինը, իսկ ամուսնու մահվան դեպքում՝ նրա եղբայրը, որին ըստ սովորության կնության են տալիս իրեն»:[56] Ընդհանուր առմամբ դժվար է չհամաձայնել Ջ. Պոզնանսկայի այն եզրակացությունը, որ հատկապես թուրքական գավառում «կյանքի օրենքները պաշտոնական օրենքներից ավելի ուժեղ դուրս եկան: Եվ դա հասկանալի է: Անհնար է ընդամենը մի քանի տասնամյակում կոտրել ավանդույթների ուժը և մտցնել կենցաղի նոր նորմեր»:[57]

20 -րդ դարի վերջի – 21-րդ դարի սկզբի թուրքական գավառի իրականության մեջ էլ, թեև ավելի հազվադեպ, բայց կարելի է հանդիպել օրենսդրությամբ վաղուց արգելված, բայց փաստացի գոյություն ունենալ բազմակնության և աղջիկների վաճառքի երևույթների...

Այսպիսով, «Թուրքական ֆեմինիզմի» հաստատումը անքակտելիորեն կապված էր ոչ թե մշակութային բազմակացութաձևության կամ աշխարհաքաղաքացիության մոդելներին, այլ թուրք ազգայնականության, իսկ կանանց իրավահավասարության հաստատմանը

Նպատակաուղղված քեմալական ռեֆորմների սրընթացությունը, թերևս, դժվար կանխատեսելի էր անգամ այդ ռեֆորմների տեսական ակունքներում կանգնած Զիյա Գյոքալփի համար. այսուհանդերձ ու բնականաբար, դեռ երկար տասնամյակներ Թուրքիայի Հանրապետությունում (հատկապես՝ թուրքական գավառում) պաշտոնական օրենսդրությունը դեռ ի զորու չէր լինելու դուրս մղել փաստացի գործող կրոնաավանդութային իրավունքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասն տե՛ս Տ. Ա. Betin, Atatürk İnkilabı ve Ziya Gökalp, Yahya Kemal, Halide Adıvar, İstanbul, 1951, s. 30, H. Adıvar, Atatürk Devrimi ve Yorumları, Ankara, 1978, s. 9, U. Heyd, Foundation of Turkish Nationalism. The Life and Teachings of Ziya Gökalp, London, 1950, p. 11, А.А. Алиев, Роль националистических идей Зии Гекалпа в формировании идейно-политической платформы кемалистов, "Вестник ЛГУ", 1982. N 20, стр 41-47. Տե՛ս նաև մեր նախորդ համեստ հրապարակումներում. Ալեքսանդր Սաֆարյան, «Օսմանյան մոդելի» քննադատությունը Զիյա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքները» աշխատությունում, «Իրան-Նամէ» Արևելագիտական հանդես, Համար 37, Երևան, 2001, էջ 1-6, Նույնի Զիյա Գյոքալփը՝ կրթության և դաստիարակության հիմնախնդրի մասին, «Արևելագիտական ժողովածու», համար 5-րդ (խմբագրությամբ՝ Գուրգեն Մելիքյանի), Երևան, 2004, էջ 288-309, Նույնի Զիյա Գյոքալփը՝ թուրքական տնտեսության զարգացման մասին, «Հայոց Մեծ եղեռն- 90: Հոդվածների ժողովածու» (պատասխանատու խմբագիր՝ պրոֆ. Արամ Սիմոնյան), Երևան, 2005, էջ 416 - 431, Alexander Safarian, Ziya Gökalp on National Education, " Iran and the Caucasus," Volume 8.2, Leiden- Boston, 2004, pp. 219-229.
2. Տե՛ս Ali Yaşar Sarıbay, 1976 Yılı Sosyoloji Konferansları, 14. kitap -"Ziya Gökalp ve Türk Devrimi", İstanbul 1976, s.89, Cavit Orhan Tütengil, Atatürk ve Ziya Gökalp Bağlantıları, "Türk Dili" (Aylık Dil ve Yazın Dergisi), Sayı 302, Kasım 1976, s. 583-584. Հմմտ. նաև Nuri Eren, Turkey Today and Tomorrow (An Experiment in Westernization), New York, London, 1963, p. 178.
3. Տե՛ս Ziya Gökalp, Türkçülüğün Esasları, Dördüncü Basılış, Varlık Yayınevi, Sayı 823, İstanbul 1961, (այսուհետ՝ T. E.), s. 111-115, 118.
4. В. А. Гордлевский, Женская доля, - Избранные сочинения, т. 3,М., 1962, стр. 16-17.
5. Տե՛ս А. Джафарова. Из истории женского движения в Турции.- в кн. Ближний и Средний Восток. История. Экономика (Сборник статей), М., 1967, стр. 30-37. Նշանավոր է, որ 1868 թ. հիմնադրված «Թերաքքի» («Առաջադիմություն») թերթի կիրակնօրյա թողարկումները, որոնք հրատարակվում էին «Մեքիր-ի շարքի» («Արևելյան շքերթ») վերնագրով, նվիրվում էին «կանանց հարցին»: Այս հավելվածների գլխավոր նպատակը «Թերաքքի» պարբերականի խմբագրությունը տեսնում էր նրանում, որպեսզի «մեր սիրելի կանայք» (sevgili hanımlarımız) ձեռք բերեն այն դաստիարակությունը, որը պահանջվում էր իրենց ամուսիններից, ինչը թույլ կտա ամուսիններին՝ հպարտանալ իրենց կանանցով: Հոդվածներից մեկում աղջիկներին դպրոց տանելու կոչը փաստարկվում էր նրանով, որ եթե աղջիկները կարդալ-գրել իմանան, ապա ապագայում ամուսինները չեն կարողանա անխղճորեն և անամոթաբար խաբել նրանց: Տե՛ս Selim Nüzhet, Türk Gazeteciliği, İstanbul, 1931, s. 49, А. Д. Желтяков, Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908гг.), М., 1972, стр. 147-148.
6. Գրականագետ-արևելագետ Արփիկ Մինասյանը, վերլուծելով աբդուլհա-

միդյան բռնակալության տարիներին արևմտահայ գրականության մեջ ֆեմինիզմի դրսևորումների ֆենոմենը, գրել է. «Թուրքիայում բռնություններն ու ազատ մտքի խեղդումն այն աստիճանի էին հասել, որ հնարավոր չէր ո՛չ ընտրական իրավունքի և ոչ էլ իրավահավասարության մասին խոսել: Այստեղ չբարձրացվեց նաև հասարակական կյանքին կնոջ մասնակցելու հարցը, և պատահական չէ, որ ֆեմինիզմը թուրք մտավորականության մեջ իր արտահայտությունը չգտավ, թուրք գրողների մոտ այն կրում էր սոսկ կենցաղային հնացած օրենքների դեմ բողոքի բնույթ: Մինչդեռ արևմտահայ իրականության մեջ ֆեմինիզմը բոլորովին այլ ձևով դրսևորվեց. չնայած գոյություն ունեցող խտրություններին ու հալածանքներին, հայ մտավորականության մի մասը հանդգնեց բարձրացնել կնոջ ազատության, իրավահավասարության և օրինական պահանջների հարցերը: Եվ ամենևին տարօրինակ չէ, որ այդ հարցերը հետագայում արծարծեց հատկապես կին մտավորականությունը»: Ա. Մ. Մինասյան, Սիպիլ (Զապել Ասատուր), Եր., 1980, էջ 75-76: Արևմտահայ «կնոջական» կամ ֆեմինիստական գրականության սկզբնավորման ու զարգացման գործում ուրույն դեր են խաղացել Սրբուհի Տյուսաբն ու Զապել Ասատուրը, «որոնք հիմնարկելը կատարած են մեր մեջ կնոջական գրականության մը չնչին, և միաբերու ներշնչած սա գաղափարը, թե կինն ալ իր ինքնակամության գիտակցությունը ունեցող էակ մըն է, թե ան ալ կարող է ու իրավունքներ ունի մասնակցելու մտավորական գործին, ինքզինքը հայտնելու, իր գաղափարները պարզելու, իր ներշնչումները հաղորդելու հասարակության, վերջապես ինք զինքը խառնելու ինչ բանի որ մտավորականի շրջանակը կ՛ընդգրկէ»: Եմուկե Արմեն, Մեր կին գրողները, «Մասիս» (շաբաթաթերթ), Կ. Պոլիս, 1905, թիվ 30, էջ 471-475: Նույնը «Մասիս», 1907, թիվ 11, էջ 201-204: Տե՛ս նաև Ա. Մ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 80: Արդեն երիտթուրքական կառավարման տարիներին Սիպիլի և Զապել Եսայանի գործերը թարգմանաբար հրատարակվել են նաև թուրքերեն և որոշակիորեն ծանոթ եղել գոնե թուրք գրական շրջանակներին: Դանիել Վարուժանի խմբագրությամբ Կ. Պոլսում 1914թ. տպագրված և արևմտահայ մշակույթի պատմության մեջ անմոռաց երևույթ դարձած «Նավասարդ» գրական և գեղարվեստական տարեգրքի «Հայ միտքը եւրոպայի մէջ» հրապարակումից մասնավորապես տեղեկանում ենք. «Մ. Արեւէն հրատարակեց թուրքերէն լեզուով ժողովածու մը, ուր հրատարակուած են Սիամանթօյէն, Իսահակեանէն, Զարդարեանէն, <u>Սիպիլէն,Զապէլ Եսայեանէն</u> (ընդգծումը մերն է - Ա. Մ.), Զոհրապէն, Տիգրան Կամսարականէն և Յրանդ Ասատուրէն հատուածներ, <u>մէկ քանի թուրք գրողներու գնահատանաց յառաջաբաններով</u>» (ընդգծումը մերն է - Ա. Մ.): Նույն տեղում, էջ 272: Արևմտահայ հրապարակախոսության մեջ կանանց էմանսիպացիայի ու հասարակական գործունեության խնդրի քննարկման մասին նաև տե՛ս Ա. Ա. Խառատյան, Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), Երևան, 1995, էջ 215-216, 288-290:

7. Մանրամասն տե՛ս A. Afetinan, Atatürk ve Türk Kadın Haklarının Kazanılması, Istanbul, 1964, s. 79, А. Д. Желтяков и Ю. А. Петросян, История просвещения в Турции, М., 1965, стр. 58-59, А. Джафарова, указ. соч., стр. 30-31:

8. Ф. Ш. Шабанов, Государственный строй и правовая система Турции в период Танзимата, Баку, 1967, стр. 168-169. А. Д. Новичев, История Турции, IV.

Новое Время, Часть третья (1853-1875), Ленинград, 1978, стр. 138. Նամըք Քեմալի մասին (և նրա ստեղծագործություններում «կանանց թեմայի» մասին) հսկայածավալ գրականությունից մասնավորապես տե՛ս Хайдулла Камилев, У истоков современной турецкой литературы (турецкие писатели – просветители второй половины XIX в.) М., 1967, стр. 61-88. – А. Д. Желтяков, Печать в общественно-политической и культурной жизни Турции, стр. 8,10, 74-81, 83, 85, 88, 94-98, 118-121, 123,124, 126-129... В.Стамбулов, Намык Кемаль, М., 1935. Ali Ekrem, Namık Kemal: İstanbul, 1930, S. Nüzhet Ergun: Namık Kemal, Hayatı ve Şiirleri, 1933. Z. Fahri Fındıkoğlu: Namık Kemal ve İdeolojisi, 1939. Abdülbaki Gölpınarlı: Namık Kemal'in Şiirleri 1942, Fevziye Abdullah Tansel, Hususi Mektuplarına Göre Namık Kemal ve Abdülhak Hâmit, 1949, Hikmet Dizdaroğlu: Namık Kemal, 1952, Kabaklı, Ahmet: Türk Edebiyatı, Cilt 2. İstanbul, 1966, s. 429-458. Ali Ertem, Namık Kemal'in Şiirleri, İstanbul, 1957. Mehmet Kaplan, Namık Kemal, İstanbul, 1948. Ahmet Hamdi Tanpınar, 19uncu Asır Türk Edebiyatı Tarihi, Dördüncü Baskı. İstanbul, 1976, s. 342- 444.

9. Ռենան (Renan), Ժոզեֆ Էռնեստ (1823-1892) - ֆրանսիական գրող, պատմաբան, բանասեր-արևելագետ, ֆրանսիական ակադեմիայի անդամ (1878) : Փորձել է քննադատաբար շարադրել համաշխարհային կրոնների պատմությունը՝ չխուսափելով ծայրահեղական բնորոշումներից և եզրահանգումներից: Տե՛ս Ромен Роллан, Слова Ренана подростку,- Собрание сочинений, т.14, М., 1958, стр. 476-483. Հմմտ. նաև Анатоль Франс, Эрнест Ренан – историк христианства,- Собрание сочинений, т. 8, М., 1960, стр. 72-76. Ալֆոնս Դոդեի բնութագրմամբ «Ռենանը կյանքի պերիպատետիկն է»: Альфонс Доде, Собрание сочинений в 7 томах, том VII, М.,1965, стр. 578.
10. Թարգմանաբար հրատարակվել է նաև ռուսերեն՝ առանձին գրքույկով՝ "Ислам и наука" վերնագրով:
11. Տե՛ս А. Джафарова, указ. соч., стр. 32-33:
12. Տե՛ս նույն տեղում, էջ 31:
13. Նույն տեղում: «Իսլամական ֆեմինիզմի» մասին տե՛ս նաև Margot Badran, Islam, Patriarchy and Feminism in the Middle East.- Trends in History. 4(1). 1985.p. 49-71, Laila Ahmad, Feminism and Feminism Movements in the Middle East, a Preliminary Exploration: Turkey, Egypt, Algeria, Peoples Democratic Republic of Yemen.- Women Studies International Forum, 1982, V, p.153-168, Minou Reeves, Female Warriors of Allah: Women and the Islamic Revolution. New York, 1989, p.64-65, Լիլիթ Սաֆրաստյան, Ֆեմինիզմի հետհեղափոխական իրանական մոդելը. փոխհամաձայնություն թե՞ դիմակայություն, -Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Երևան, 2005, էջ 501-502:
14. Տե՛ս А. Джафарова, указ. соч., стр. 31-32:
15. А. Д. Желтяков, указ. соч., стр. 233:
16. Թուրք. ասացվածք՝ Saçı uzun aklı kısa: Հմմտ. նաև В. А. Гордлевский, указ. соч., стр. 17: Վերլուծելով օսմանյան-թուրքական ասածները և ասացվածքները՝ Վ. Գորդլևսկին չի զլացել նկատել, որ «Նախկինում Մոնղոլիայում նա (հմմ՝ թյուրքը- Ա. Ս.) տարվում էր չինական արքայադուստրերով, այժմ (հմմ՝ պարսկական մշակութային հզոր ազդեցության տակ գտնվող օսմանյան իրականության պայմաններում - Ա. Ս.) նրան հրապուրում են

պարսկուհիներից, և նա հայտարարում է. «Ինչպես ուռենուց ցախ չի լինի, այնպես էլ թրքուհուց տիրուհի չի լինի»: Տե՛ս Из истории османской пословицы и поговорки, - Избранные сочинения. т. II, М., 1961, стр. 270.

17. Մեջբերումն ըստ Çapanoğlu M. S., Basın Tarihine dair Bilgiler ve Hatıralar, İstanbul, 1962, s. 31-32, ինչպես նաև А. Д. Желтяков, указ. соч., стр. 233:
18. Տե՛ս А. Д. Желтяков, указ. соч., стр. 233-234:
19. Տե՛ս նույն տեղում: «Թյուրքականության հիմունքների» առաջին մասի առաջին՝ «Թյուրքականության պատմությունը» գլխում Զիյա Գյոքալփը ընդգծում է Սյուֆիոդ Ֆերիդի՝ թե «իր արժեքավոր գրքերով, և թե՛ փարիզյան ելույթներով թուրք ազգայնականությանը ծառայելուն նպատակաուղղված ջանքերի կարևորությունը» (տե՛ս T E, s. 11):
20. Տե՛ս T E, s. 11:
21. В. А. Гордлевский, Очерки по новой османской литературе, М., 1912, стр. 146:
22. Տե՛ս Л. О. Алькаева, Очерки по истории турецкой литературы (1908-1939гг.), М., 1959, стр. 175-176:
23. Տե՛ս Halide Edip Adıvar, Türkiye'de Şark-Garp ve Amerikan Tesirleri, İstanbul, s.100, Э. Ю. Гасанова, Идеология буржуазного национализма в Турции, Баку, 1966, стр. 16-17.
24. Memoirs of Halide Edip, London, 1926, p. 322, Э. Ю. Гасанова, указ. соч., стр. 131-132.
25. "Türk Yurdu", c. IV, 1913, s. 529, Э. Ю. Гасанова, указ. соч., стр. 106. Այս մենագրության մեջ հեղինակը նաև ընդգծում է, որ պանթուրքիստական մոտիվները հատկապես վառ կերպով դրսևորվում են հենց «Զիյա Գյոքալփի, Խալիդե Էդիբի, Մեհմեդ Էմինի և ուրիշ թուրք գրողների ու բանաստեղծների ստեղծագործության մեջ» արդեն 1911-1912 թթ. իտալա-թուրքական (տրիպոլիտանական) և բալկանյան պատերազմների ժամանակաշրջանում: Տե՛ս նույն տեղում, էջ 96, 122-139:
26. Ариадна Тыркова, Старая Турция и младотурки. Год в Константинополе. Петроград, стр. 158: Երիտթուրքական կառավարման տարիներին Խալիդե Էդիբի գրական, մանկավարժական ու հասարակական գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 158-171: Խալիդե Էդիբի աշխարհայացքի վրա Զիյա Գյոքալփի ազդեցության մասին տե՛ս նաև В. А. Гордлевский, Избранные сочинения, т. 3, стр. 497. Հանրապետական Թուրքիայում ընտանեկան իրավունքի բարեփոխման գործընթացին «Թուրք օջախների» շարք համախմբված կանանց մասնակցության և Խալիդե Էդիբի դերի մասին տե՛ս նույն տեղում, էջ 504: Խալիդե Էդիբի մյուս վեպերը տե՛ս Heyulâ (1909), Râik'in Annesi (1909), Handan (1912), Son Eseri (1913), Mev'ut Hüküm (1917), Ateşten Gömlek (1922), Kalb Ağrısı (1924), Vurun Kahpeye (1923), Zeyno'nun Oğlu (1927), Sinekli Bakkal (1935), Yolpalas Cinayeti (1936), Tatarcık (1938), Sonsuz Panayır (1946), Döner Ayna (1953), Âkile Hanım Sokağı (1958), Kerim Ustanın Oğlu (1958), Sevda Sokağı Komedyası (1959), Hayat Parçaları (1963): Պատմվածքները տե՛ս Harap Mâbedler (1911), Dağa ve Çıkan Kurt (1922), Kubbede Kalan Hoş Sadâ (1974), Հուշագրությունները տե՛ս Mor Salkımlı Ev (1951), Türk'ün Ateşle İmtihanı (1962): Պիեսները տե՛ս Kenan Çobanları (1918), Maske ve Ruh (1937): Այլ գրքերից նաև տե՛ս İngiliz Edebiyatı Tarihi (եռահատոր, 1940-1949): Խալիդե Էդիբի մասին նաև տե՛ս

Գրիգոր, Եղզնատի հայաստանյանության վանքերագրական պատմություն. Նոր Յորք, 1980, էջ 13-14. Ռուբեն Սեւրոնյան, Հայոց ցեղասպանությունը և թուրք գրողները, «Հայոց Մեծ եղեռն-90» (հոդվածների ժողովածու), Երևան 2005, էջ 276-277:

27. Տե՛ս «Memoirs of Halide Edib», Vol. I. London, 1926, p. 258, ինչպես նաև А. Джафарова, указ. соч., стр. 35:

28. И. И. Белоборщько (И. Южанин). Старая и Новая Турция, М., 1908, стр. 58.

29. Տե՛ս А. Джафарова, указ. соч., стр. 36:

30. Տե՛ս նույն տեղում: Կանանց իրավունքների հարցը բարձրացրել է «Ֆանին» թերթի համարներում, թուրք դասական - բանաստեղծ Թեֆիք Ֆիքրեթը (1867-1915)՝ օգտագործելով նաև Գալաթասարայի Լիցեյի աշակերտների նախագիծը: Նրան աշակերտած թուրք գրողներն ու լրագրողները հետագայում բազմիցս ծեցբերել են Թեֆիք Ֆիքրեթի խոսքերը. «Այն ժողովուրդը, որը կրթություն չի տալիս իր աղջիկներին, ինքն իրեն դատապարտում է հոգևոր որբության»: (Տե՛ս Р. Фиш, Послесловие, в кн. – Эрдоганское Экрем Тасу, Алмаш, М., 1965, стр. 180): Կանանց իրավունքների մասին բազմաթիվ հոդվածներ են տպագրել նաև «Սերվեթ-ի ֆյունուն», «Թյուրք Յուրդու» և այլ պարբերականներ: Դին հրեիհարական Սովեդ Ոդզան «Սերվեթ-ի ֆյունունում» հրատարակված «Կինը» ("Kadın") հոդվածում խոսում էր ազգի եթիկայի –կուլտուրայի ու կնոջ հասարակական դիրքի միջև գոյություն ունեցող օրգանական կապի մասին: «Թյուրք Յուրդու» հանդեսում լույս տեսած մի հոդվածում Սեհմեդ Արդուլյան մահմեդական կանանց իրավահավասարության օգտին բերում է հետևյալ փաստարկումը. իրավահավասարությունը «թույլ կտա թուրք կանանց կատարել իրենց սրբազան պարտքը՝ մասնակցել պատերազմին որպես զոհության բույրեր»: Տե՛ս Э. Ю. Гасанова, указ. соч., стр. 106-109:

31. Ариадна Тыркова, указ. соч., стр. 117. Դրանեին Չահիդի մասին տե՛ս նաև Ալեքսանդր Սաֆարյան, Զիյա Գյոքալփը՝ թուրքական տնտեսության զարգացման մասին, «Հայոց Մեծ եղեռն -90 » (հոդվածների ժողովածու), էջ 423:

32. Վ. Գորդևսկին այս հեղինակի մասին գրում է. «Երբ նա երկիր է իջնում, կրկին վերլուծում է մտացված ծարդկանց նեղքին ապրումներն ու տրամադրությունները: Բնական է, որ նախևառաջ նա ձգտում է կնոջ ծանր ճակատագրի մասին (ընդգծումը մերն է - Ա. Ս.): Այսպես, «Խնամախոսուհին» ("Görücü") պատմվածում նկարագրում է այն աղջկա տառապանքը, որին գնում է ծեր կինը, որպեսզի պարզի, թե որքա՞ն է նա համապատասխանում փեսացուին»: В. А. Гордлевский, - Избранные сочинения, т. 2, М., 1961, стр. 431: «Թյուրքականության հիմունքները» աշխատության մեջ Զիյա Գյոքալփը առանձնացնում է նաև Սեմեդ Դիլմեր -քեյին պանթուրքիզմի գաղափարախոս - գրողների շարքում՝ մատնանշելով վերջինիս «Ոսկե հորդա» ("Altın ordu") հրապարակումը: Տե՛ս T. E., s.11: Դձնու. նաև Э. Ю. Гасанова, указ. соч., стр. 132-133: Սեմեդ Դիլմերի մասին մանրամասն տե՛ս Ahmet Kabaklı, Türk Edebiyatı . Cilt 2., İstanbul , 1966, s. 597-601:

33. Ариадна Тыркова, указ соч., стр. 177.

34. Ариадна Тыркова, указ. соч., стр. 177-178.

35. Տե՛ս А. Джафарова, указ. соч., стр. 37: Ֆրանսիական պատմաբան-արևե-

կացեր Գոլ ժանտիզոնը պնդում էր, որ 1908 թ. հեղափոխությունը հաջանգիկ էր Օսմանյան կայսրության իրավական ինստիտուտների համար. հանդիսանալով ավելի քաղաքական, քան սոցիալական՝ այդ հեղափոխությունը «ինչպես հայտնի է, սահմանափակվեց միջկուսակցական պայքարով», իսկ սահմանադրության հենքի վրա ստեղծված օրենքներն ներարկվում էին շարիաթի պահանջներին: Տե՛ս Paul Gentizon, Mustafa Kemal ou L'Orient en marche, Paris, 1929, p. 213, ինչպես նաև О. Г. Инджикян, Буржуазия Османской империи, Ереван 1977, стр. 248. Տե՛ս նաև Դ. Դ. Սաքատիրոսյան, Կիլիկիայի 1909 թ. ապրիլի հայկական կոտորածը և երիտասարդ թուրքերի պատասխանատվության հարցը.- Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, V (Թուրքիա), Եր., 1970, էջ 297-318: М.Р.Кочар, Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос в конце XIX –начале XX веков, Ереван, 1988, стр. 154-221. Հմմտ. В. И. Шпилькова, Младотурецкая революция 1908-1909гг., Москва, 1977, стр. 159-268. Г. З. Алиев, Турция в период правления младотурок (1908-1918гг.), стр. 95-202.

36. Yurdakul Mehmet Emin (1869-1944)- բանաստեղծ, «թյուրքականության հայրերից» մեկը, ում "Ben bir Türküm, dinim, cinsim uludur- Ես թյուրք եմ, հավատս, ցեղս մեծ են" տողով սկսվող բանաստեղծությունը (այսինքն՝ թուրք-հունական պատերազմի կապակցությամբ գրված, մշանավոր «Սերվեթի -Ֆյունուն» հանդեսում տպագրված և հետագայում թուրք գրականության դասագրքերում պարտադիր կերպով ընդգրկվող «Մարտի գնալիս» (Cenge Giderken) ոտանավորը Զիյա Գյոքալփը «Թյուրքականության հիմունքներում» համարում է «Թյուրքական կյանքում մի նոր հեղափոխության» սկիզբ ազդարարող գործերից մեկը: Տե՛ս TE, s.8: Մեհմեդ Էմին Յուրդաքուլի մասին տե՛ս A. Ferhan Oğuzkan, Mehmet Emin Yurdakul, 1953. Hilmi Yücebaş, Milli Şairimiz Mehmet Emin Yurdakul, 1947, Ahmet Kabaklı, Türk Edebiyatı, Cilt 3, İstanbul, 1966. Şemsettin Kutlu, Servetifünun Dönemi Türk Edebiyatı Antolojisi, İstanbul, 1972, s. 379-394. Modern Türkiye'de Siyasi Düşünce. Cilt 4. Milliyetçilik. İletişim Yayınları 848, İstanbul, 2002, s. 269, 350, 361, 411, 430, 590, 642, 803.

37. "Türk Yurdu", c. I-II, 1911-1912, s. 413, Э. Ю. Гасанова, указ. соч., стр. 99.

38. Տե՛ս В. А. Гордлевский, Избранные сочинения, т. 3, стр. 18.

39. Mehmet Emin Erişirgil, Ziya Gökalp: Bir Fikir Adamının Romanı, İkinci Basım, İstanbul 1984, s 136-145:

40. Տե՛ս նույն տեղում, էջ138-142:

41. Տե՛ս նույն տեղում, էջ143-144:

42. Տե՛ս նույն տեղում, էջ142-143: «Թյուրքականության հիմունքներում» Զիյա Գյոքալփը կանանց աշխատելու անհրաժեշտության հիմնահարցին անդրադառնում է նաև «Սեռային բարոյականություն» (Rebii Ahlak) ենթագլխում: Տե՛ս TE, s.114. Անշուշտ Զիյա Գյոքալփը, ով անգամ իր հետևորդների կողմից քննադատության է ենթարկվել ընդհանրապես անհատի իրավունքները և շահերը ոչ թե պարզապես ազգայինին ստորադասելու, այլ ֆանատիկորեն մերժելու, իրական ժողովրդավարական մեխանիզմները բացարձակապես խորթ լինելով ազգի ճակատագիրը «գերմարդ հանճարներին» (ինչպիսիք էին թյուրքականության գաղափարախոսի համար Թալեաթը և Էնվերը) վերապահելու համար, կնոջ իրավունք-

ների հարցը արծարծելու էր թուրքերի համազգային ներուժի ապավեն-
համակողմանի օգտագործման տեսանկյունից: Տե՛ս նաև Ա. Սաֆարյան.
Զիյա Գյոքալփը՝ կրթության և դաստիարակության հիմնահարցերի մասին, էջ 293-294, 308:

43. Տե՛ս Л. О. Алькаева, Очерки по истории турецкой литературы (1908-1939гг.). стр.30.
44. Մանրամասն տե՛ս TE, s. 115:
45. Տե՛ս TE, s. 40-41:
46. Տե՛ս TE, s. 118 :
47. Atatürk'ün Söylev ve Demeçleri. II (1906-1938), İkinci Baskı, Türk Tarih Kurumu Basımevi- Ankara 1959. s. 85-86. Դիտե՛ք նաև Nermin Abadan – Unat. Atatürk ve Kadın Sorunu, - "Türk Dili", Sayı: 302, Kasım 1976, s. 605-606.
48. Atatürk'ün Söylev ve Demeçleri, I (1919-1938), İkinci Baskı, Türk Tarih Kurumu Basımevi – Ankara 1961, s. 329. Պաշտոնապես արձանագրվել է, որ այս հայտարարությունը ընդմիջվել է պատգամավորների բուռն ծափահարություններով և «բրավո» բացականչություններով: (Տե՛ս նույն տեղում):
49. Տե՛ս Идеология Новой Турции (Обзор печати). В. А. Гордлевский, Собрание Сочинений т. 3., стр. 492-506. Աշխատությունն առաջին անգամ տպագրվել է հիշյալ հատորում՝ ըստ հեղինակի ձեռագիր օրինակի: Սամույի տեսության հիմքում Վ. Գորդլևսկուն հասու՝ 1923թ. և 1924թ. առաջին ամիսների, այսինքն Թուրքիայում հանրապետական կարգի հաստատման ժամանակաշրջանի անատոլիական ու ստամբուլյան թերթերի նյութերն են:
50. В. А. Гордлевский, указ. соч., стр. 480. 1920-ական թթ. երկրորդ կեսի կրթական բարեփոխումներին անդրադառնալիս Վ. Ա. Գորդլևսկին գրել է. «Նոր Թուրքիան մեծի նշանակություն է տալիս կանանց կրթությանը: Այնտեղ, ուր հաղթահարվում են հին նախապաշարմունքները, տղաները և աղջիկները սովորում են միասին: Կանանց կրթության ճամփին հոգ է տանում արդեն ոչ միայն կառավարությունը: Այսպես, թուրքական լուսավորության ընկերությունը Բուրսայում բացել է իգական լիցեյ, որտեղ աղջիկները սովորում են ծառագործ. հաշվի առնելով սովորողների մեծ հոսքը՝ բացվել են նաև երեկոյան դասընթացներ: Այժմ այդ ժամանակոր լիցեյը իրավունքներով հավասարեցված է պետականներին, այսինքն՝ ավարտողները համալսարան ընդունվելու իրավունք են ստանում: Կանանց միությունը Ստամբուլում կազմակերպել է լեզուների (ֆրանսերենի ու թուրքերենի) դասընթացներ. նա ցույց է տալիս նաև բժշկական օգնություն: Հաշվի առնելով կանանց հետամնացությունը՝ կառավարությունը 1928թ. Անկարայում բացվեց բարձրագույն մանկավարժական դպրոց՝ Իսմեթ Ինենյուի անվ. իգական ինստիտուտը: Սովորողներն այնտեղ հինգ տարվա ընթացքում ուսումնասիրում են համընդհանուր առարկաներ, իսկ հատուկ կուրսերում նախապատրաստվում են մանկավարժական աշխատանքը կատարելու համար... Պրակտիկ ձևով գլխավորելու համար նշանակված էր հրահանգիչ- բելգիացի... Պրակտիկ կողմը կանանց կրթության գործում գերակշռում է, արտասահման նույնպես ուղարկվում են աղջիկներ՝ պրակտիկ հմտություններ ձեռք բերելու համար... Կնոջ առջև բաց են բարձրագույն դպրոցի դռները: Կնոջ իրավունքներն ընդլայնվում են. Նա կարող է անցնել պետական ծառայության: Կինը կարող է լինել մունիցիպալիտետի անդամ. Նա նաև դատավոր է. Նա հիմա ընտրվում է նաև մեջ-

լիս»: В. А. Гордлевский, указ. соч., стр. 520-521. Վերլուծելով Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի հանրապետությունում կանանց կարգավիճակը և 1920-30-ական թթ. բարեփոխումները՝ Վ.Գորդլևսկին չէր թաքցնում իր զարմանքը և ոգևորությունը. «Իսկ կանայք գնում են՝ բոլորն ուրախ, բերետներով, գլխաշորերով, փոքրիկ աղջիկները նույնիսկ գլխարկներ հագած: Նրանք անբռնազբոսիկ կերպով զրուցում են, ծիծաղում: Եվ մայլորեն նրանց են նայում ծերունիները, նայում են, բայց ...լռում: Սա այնտեղ ինչ-որ զինվորական, ո՛չ, ոստիկան կնոջը թևանցուկ է արել, և նրանք գնում են, կարծես ոչինչ չի եղել, և ոչ-ոք չի կանգնեցնի նրանց՝ անպատկառներին՝ հին Թուրքիայի տեսանկյունից: Իսկ ահա Աբդուլ Համիդի ժամանակներում ոստիկանը փողոցներում պահպանում էր բարքերը և քաղաքըլ-ոստիկանական տեղամաս էր քարշ տալիս պարկեշտությունը խախտողներին. կնոջ տեղը ամուսնու ետևում էր՝ որպես աղախին կամ ստրկուհի»: В. А. Гордлевский, указ. соч., стр. 179:

51. Թուրքիայում կանայք ընտրական իրավունք առաջին անգամ ստացան 1930թ. մունիցիպալ ընտրություններում: Պառլամենտական ընտրություններում առաջին անգամ մասնակցեցին 1935 թ.: (1935-1957թթ. (այսինքն՝ Հինգերորդից Տասներորդ գումարման ԹԱՄԺ-ի 38 կին -պատգամավորների մասին մանրամասն տե՛ս Frederick W. Frey, The Turkish Political Elite, Massachusetts, 1965, pp. 154-155).
52. Տե՛ս Новейшая история Турции, М. 1968, стр. 91:
53. Ք. Պողոսանսկա, Հին և նոր Թուրքիան, Եր., 1985, էջ 136-137:
54. Նույն տեղում, էջ 138:
55. Տե՛ս նույն տեղում, էջ 139-143:
56. Նույն տեղում, էջ 143: Հատկանշական է, որ ըստ թուրքական պաշտոնական վիճակագրության, թրքուհիների մեջ անգրագետ էին 1927թ.՝ 92,2 տոկոսը (Տե՛ս նույն տեղում):
57. Տե՛ս նույն տեղում:

ՖՈՒԱԹ ԴՅՈՒՆԴԱՐ
(Թուրքիա-Ֆրանսիա)

«ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1913թ. Բաբըալիի հեղաշրջմամբ ամբողջ իշխանությունն իր ձեռքը վերցրած «Միություն և Առաջադիմություն» կազմակերպությունը հնգամյա կարճ ժամանակահատվածում Անատոլիայի թուրքացման գործում շատ կարևոր հաջողությունների է հասել: Առաջին համաշխարհային պատերազմի շիկացած միջավայրում, երբ հինգ ռազմաճակատներում պատերազմում էին երկու միլիոնից ավելի զինվոր, ի հեճուկ բազում արգելքների ու տանջանքների, ի կատար ածվեց բնակչության տեղաբաշխման քաղաքականությունը:

Բալկաններից հետո Անատոլիան էլ ձեռքից բաց թողնելը ժամանակի հարց էր: Իրապես դժվար ու դեռ անհնար էր թվում պատերազմի ժամանակ բազմազգ Անատոլիան միատարր դարձնելը: Արևմուտքում հույները, վեց վիլայեթներում (վիլայաթ-ի սիթթե) հայերը, Սիրիայից սկսած՝ արաբները, Թրակիայում ալբանացիներն ու բոսնիացիները, արևելքում քրդերի նշանակալի զանգվածները. այս ամենը թույլ էր տալիս հավատալ, որ Անատոլիային սպասվում է Մակեդոնիայի նման ճակատագիր: Տեղի ունեցած իրադարձություններից դասեր քաղելով՝ որոշում էր կայացվել Անատոլիայի տարբեր մասերում բնակվող ոչ մահմեդական զանգվածներն իրարից հեռացնել ու խառնել ոչ թուրք զանգվածների հետ՝ այդպիսով պահելով նրանց վերահսկողության տակ[1]: Սա պահանջում էր քաղաքական, մշակութային ու զինվորական միաժամանակյա աշխատանք:

Այն ժամանակ, երբ «Միություն և Առաջադիմություն»-ը իշխանության էր եկել կայսրության անկումը կասեցնելու խոստումներով, Բալկանները ամբողջությամբ ձեռքից գնացել էին, ինչը անձնակազմի մոտ ցնցող ազդեցություն էր թողել: Կազմակերպությունը, որը տեսավ, որ եվրոպական հողերում առաջընթաց ունենալն անիրական է, պետք է հայացքներն ուղղեին դեպի Անատոլիա, որի մասին մինչ այդ մոռացել էին, որին այդքան էլ լավ չէին ճանաչում:

1908-1914թթ. 3 մլն քմ տարածքից կորցված էր 1,1 մլն քմ մասը: Քանի որ դրանց մեծ մասը գտնվում էր Ռումելիում, ապա դա շատ լուրջ կորուստ էր կայսրության համար: Որովհետև Ռումելին հարյուրամյակներով համարվում էր «կայսրության սիրտը»: Ամենաառաջադեմ ու ամենից արդյունավետ նահանգները Ռումելիում էին: Այդ հողերի կորուստը երիտթուրքերի գաղափարախոսությանվրա էլ մեծ ազդեցություն թողեց. Նրանց քաղաքականության ծանրության կենտրոնը

սահեց դեպի Անատոլիա: Թուրքիզմի գաղափարի իշխանությունը եկավ Բալկանյան պատերազմներից հետո: Որովհետև տարածքների մեկ երրորդի կորուստից հետո մեկտեղ ազգ-պետության համար բնակչության հիմք ապահովվեց. բնակչությունն ավելի միատարր էր դառնում: 24 մլն բնակչությունից 5 մլն բնակչության պակասումը, որոնց մեծ մասը թուրք չէր, նշանակում էր ավելի հարմար ժողովրդագրական բաղադրություն[2]:

Ազգագրական ուսումնասիրություններ

Անատոլիան թուրքացնելու համար պետք էր նախ և առաջ դուրս հանել ոչ մահմեդականներին ու դրա հետ զուգահեռ պետք էր ասիմիլացնել ոչ թուրք մահմեդականներին: Ուստի կիրառված մեթոդներից հիմնականն էր բնակչության խառը տեղաբաշխման քաղաքականությունը:

Սակայն նախ և առաջ պետք էր իմանալ Անատոլիայի բնակչության ազգային տեղաբաշխվածությունը: Ո՞ր վայրերում ո՞ր ազգային խումբն է մեծամասնություն կազմում, իսկ ո՞րը՝ փոքրամասնություն. սա պետք էր իմանալ, որպեսզի խառնուրդն արվեր ըստ դրա: Որպես մի քայլ պետք է իրականացվեին բնակչության միգրացիաները, մյուս կողմից էլ նրանց բնակված վայրերում պետք է կիրառվեին «գիտական» մեխանիզմներ՝ նրանց հնարավորինս շուտ ասիմիլացնելու համար: Ըստ էության այսպիսի մեխանիզմների թիրախն ավելի շատ ոչ թե զանգվածներն էին, այլ անջատողական նկատումներ ունեցող մտավորականությունը:

Անատոլիայում բնակվող էթնիկ խմբերի վերաբերյալ գիտելիքները թե՛ որոշելու էին բնակչության աշխարհագրության պատկերը, թե՛ ապահովելու էին պաշտոնական գաղափարախոսության ի հայտ գալը:

«Միություն և Առաջադիմություն»-ը Անատոլիայում գտնվող ազգային համայնքների վերաբերյալ տեղեկությունների հոսքը կազմակերպեց երեք ուղիներով. պետական կառույցներ, օտար աղբյուրներ ու կազմակերպության անդամ հանդիսացող հետազոտողներ:

Պետական կառույցներից ստացվող տեղեկությունները

Պետական կառույցներից ամենից կարևորն էին Բնակչության գրանցամատյանների վարչությունն ու Միգրացիայի գլխավոր վարչությունը (ՄԳՎ): Այս կառույցներից ստացվող տեղեկատվությունը շատ արժեքավոր էր:

Բնակչության գրանցամատյանների վարչություն

Բնակչության գրանցամատյանների վարչությունը, համաձայն իր գործառույթների, պարտավոր էր տրամադրել վիճակագրական տեղեկություններ Անատոլիայում բնակվող բոլոր համայնքների վերաբերյալ: Թանզիմաթից հետո Բնակչության գրանցամատյանների վարչության կազմավորմամբ փորձ արվեց գրանցել Օսմանյան կայսրության բոլոր հպատակներին: Դրա շնորհիվ, նույնիսկ եթե համընդհանուր մարդահամար չարվեր, ապա հիմնվելով նախորդ մարդահամարի արդյունքների վրա ու հաշվարկելով նոր ծնունդները ու մահերը՝ հնարավոր էր լինում պարզել երկրի ազգային պատկերը: «Միություն և Առաջադիմություն» կ օգտվեց Բնակչության գրանցամատյանների վարչության հնարավորություններից: Բնակչության գրանցամատյանների վարչությունը երեք ամիսը մեկ կենտրոն էր ուղարկում ազգային բնակչության քանակը ու աշխարհագրական տեղաբաշխվածությունը, ինչը մեծ ուշադրությամբ վերլուծվում էր՝ վերածվելով ազգային համայնքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրի:

Եռամսյա հաշվարկների հետ մեկտեղ անհրաժեշտ էր Առաջին համաշխարհային պատերազմի թոհուբոհում իրականացվող տարաբնակեցման քաղաքականության արդյունքներին օր օրի հետևել: Այդ պատճառով երիտթուրքական ղեկավարությունը հաճախ ողջ երկրով մեկ կամ էլ շրջան առ շրջան հարկային պաշտոնյաներից պահանջում էր տրամադրել ազգային բնակչության աշխարհագրական տեղաբաշխվածության վերաբերյալ տվյալներ: Օրինակ, 1915թ. հուլիսի 20-ին Թալեաթ փաշան բոլոր վիլայեթներն ու սանջաքներն ուղարկում է ծածկագիր հեռագիր, որտեղ պահանջում է «հնարավորինս շուտ» ուղարկել քարտեզ, որտեղ ցույց կտրվի նույնիսկ գյուղերում առկա անշարժ գույքի տեղաբաշխումը, աղյուսակներ, որտեղ կերևա «բնակչությունն ըստ ազգության», ընդ որում «թե՛ ներկա, թե անցյալ իրավիճակը»[3]:

Միգրացիայի գլխավոր վարչություն

Բնակչության գրանցամատյանների վարչության հետ մեկտեղ ՄԳՎ-ն նույնպես ազգային հիմնախնդիրների հետ կապված աշխատանքներ էր տանում: Այս կառույցը թե զբաղվում էր տեղեկատվության կուտակմամբ, թե քաղաքականությունների իրականացմամբ:

Նախքան ՄԳՎ-ի աշխատանքներին անդրադառնալը՝ նախ համառոտ ներկայացնենք այս կառույցի պատմությունը: Այն բանից հետո, երբ Բալկաններից մահմեդականների գաղթը հասավ մեծ քանակների, 1913թ. մայիսի 13-ին ընդունվեց „Վերաբնակիչների տեղաբաշխման վերաբերյալ" օրենք, ինչից հետո 1914թ. կազմակերպվեց մի նոր՝ Միգրացիայի վարչություն[4]: Սակայն ավելի ուշ այս կառույցի գործունեությունը գնահատվեց անբավարար ու հիմք դրվեց Միգրացիայի

գլխավոր վարչության: Այս վարչության վերաբերյալ 1916թ. մարտի 8-ին խորհրդարանում ընդունված օրենքն ուղարկվեց սենատ: Միգրացիայի գլխավոր վարչության բաժանմունքները հետևյալներն էին. բնակության բաժին, տեխնիկական հանձնաժողով, ստուգող հանձնաժողով, ուղարկման բաժին, միգրացիայի բաժին, վիճակագրության ու կադրերի բաժին, հաշվապահական բաժին, փաստաթղթերի բաժին[5]: 1916թ. մարտի 14-ից սկսվում է կիրառվել ՄԳՎ-ի կազմակերպության կանոնադրությունը:

Ազգային խնդիրներով հետազոտությունները ու զեկույցները ավելի հաճախ պատրաստվում էին ՄԳՎ-ում: Այս կառույցը իր օրակարգում էր պահում քրդական, արաբական ցեղերի, բեդվինների ու թուրքմենական ցեղերի բնակեցման խնդիրները: Որովհետև այս ցեղերը վարում էին պետության հեղինակությունից հեռու, անկախ ու քոչվոր կյանք: Կարիք է զգացվում սրանց հողին կապել ու «կենսակերպը պահպանած այս տարրերն օգտագործել», և ՄԳՎ-ի կառույցում հիմնվում է միգրացիայի բաժինը: Համաձայն այս բաժնի մոտավոր հաշվարկների Անատոլիայում բնակվող թուրքմեն քոչվոր բնակչության թիվը մոտ մեկ միլիոն էր[6]:

ՄԳՎ-ն սերտորեն համագործակցում էր այլ պետական կառույցների հետ: Որովհետև վերաբնակեցման գործի ճիշտ ընթացքի համար Բնակչության գրանցամատյանների վարչության տրամադրության գտնվող՝ վերաբնակիչների քանակի ու աշխարհագրականա տեղաբաշխվածության վերաբերյալ տեղեկությունների կարիքը կար: Այսպիսով, վարչության աշխատանքները ավելի գիտական էին դառնում[7]:

«Միություն ու Առաջադիմության» կառավարությունը ցեղերի ու քոչվորների բնակեցման համար մտադիր էր համադրել օսմանյան պատմական փորձն ու արևմտյան գիտական տեսակետները: ՄԳՎ-ն բնակեցման գործում ցանկություն հայտնեց օգտվել արևմտյան փորձից, հրատարակեց գրքույկներ ու գրքեր և սկսեց ավելի պլանավորված ու գիտակցված իրականացնել բնակեցման գործը:

1918թ. մայիսի 30-ին ՄԳՎ-ի կողմից Ադանայի ու Քոնիայի վիլայեթներ ու Էսքիշեհիր, Քյութահիա, Մարաշ ու այլ սանջաքներ ուղարկված մի ծանուցագիր հեռագրով հրամայվում է ուսումնասիրել այստեղ բնակվող «թահթաջի, չեփնի անուն կրող յուրյուքների վիճակը, կենտրոնացման վայրերը, թվաքանակը, որտեղ են բնակվում ու որ ժամանակներից, ինչ գործով են զբաղված»[8]:

Կառավարությունը միգրացիայի և վերաբնակեցման գործերում ցանկանում էր նորամուծություններ անել: Նա ցանկանում էր իմանալ, թե այլ պետություններ այս հարցերի հետ կապված ինչ են արել ու ինչ իրավական կարգավորումներ ունեն: Այս պատճառով 1913թ. դեկտեմբերի 6-ին Բնակչության գրանցամատյանների վարչության պահանջով Բեռլինի, Հռոմի, Վիեննայի, Փարիզի դեսպանատներ ուղարկվեց մեկական նամակ՝ որպեսզի ուղարկվի վերաբնակեցումների արգելքի,

վերաբնակիչների կարգավիճակի, վերաբնակիչների իրավունքներին վերաբերող գործող օրենքների մեկական պատճեն[9]:

«Միություն ու Առաջադիմության» 1917թ. կոնգրեսի որոշումների շարքում տեղ գտած վերաբնակեցումների գործը վերակազմակերպելու վերաբերյալ նախագծերն սկսվեցին իրականացվել 1917թ. վերջերին: Անցյալից եկող գիտելիքի ու փորձի հետ մեկտեղ փորձ կատարվեց օգտվել նաև նման փորձ ունեցող ամերիկյան ու եվրոպական երկրների փորձից: Այս պատճառով ուսումնասիրվեցին Գվատեմալայի, Կանադայի, Բրիտանական կայսրության նման միգրանտների խնդիրներ ունեցող մի շարք երկրների օրենսդրությունները: 1917թ. Նախապատրաստվելիք „Միգրացիայի մասին" օրենքի նախագծի համար կատարվող նախնական աշխատանքների ընթացքում ի նկատի առնելով վերոհիշյալ երկրների՝ միգրանտ ընդունելու, նրանց իրավունքներ ու հնարավորություններ տալու, պատժելու ու իրավունքներից զրկելու և նման խնդիրներին ընդգրկող իրավական ակտերի օրինակները՝ փորձ կատարվեց ստեղծել 1913թ. „Միգրացիայի վերաբերյալ" օրենքի հետ համեմատ մի նոր շրջանակ[10]:

ՄԳԿ-ի հրապարակումները

Թուրքացման քաղաքականության ամենակարևոր սյուներից մեկն էր «բնակեցման» գործը: Այս պատճառով ազգային խնդիրների ուսումնասիրություններով զբաղվող ամենահիմնական ու կարևոր կառույցը ՄԳԿ-ն էր: Այս կառույցը բնակեցման գործը հաջողությամբ վարելու համար օգտվում էր ոչ միայն անցյալի փորձից, այլև օտարերկրյա աղբյուրներից ու տեղացի հետազոտողներից:

«Միություն ու Առաջադիմության» կառավարությունը ցեղերը բնակեցնել կարողանալու համար գիտական ու հիմնավոր մի հետազոտության կարիք էր զգում[11]: Ուստի այս խնդրի լուծման համար Զիյա Գյոքալփի նախագահությամբ մի հանձնաժողով է հիմնվում, իսկ կառավարությունը 1917թ. դեկտեմբերի 25-ին այս ուղղությամբ աշխատանքներ սկսելու համար որոշում է ընդունում[12]:

Ցեղերի բնակեցման ձևի ու «քաղաքակրթության» վերաբերյալ արվելիք գործերը հստակեցնելու համար հիմնված Գիտական հանձնաժողովը քաղաքացիական և զինվորական որոշ անդամների մասնակցությամբ սկսեց իր աշխատանքներն ու պատրաստեց ցեղերի ու վերաբնակիչների բնակեցման հետ կապված օրինագծերը: Դրանցից կարող ենք հիշատակել հետևյալները. «Ցեղերի բնակեցման մասին օրենքի վերաբերյալ հրահանգ», «Ցեղերի բնակեցման մասին օրենք» և «Ցեղերի ու վերաբնակիչների մասին օրենք»[13]:

ՄԳԿ-ն, օգտվելով «արևմտյան մոդելից», իր հրապարակած գրքերով ցույց տվեց, որ բնակեցման գործը «սկսվել էր ընթանալ ամբողջապես նորովի կերպով»[14]: Այդ հրապարակումների շարքում հատ-

կապես լույս է ընծայել *Վերաբնակիչների բնակեցումը*[15], *Թուրքմենական ցեղերը*[16], *Քրդերը*[17], *Թուրքիայում հունական ընդհանրությունը*[18], *Ազգերի լիգան և Թուրքիայում հայերն ու հույները*[19]:

Երբ 1918թ. վերջերին «Միություն ու առաջադիմության» իշխանությունն անկում չապրեր, գուցե հրապարակումների թիվը աճեր: Որովհետև այս վարչության հովանու ներքո ազգային հարցերի հետ կապված բազմաթիվ հետազոտություններ, զեկույցներ են պատրաստվել: Օրինակ, այդ ժամանակահատվածում ցեղերի վարչության պետ Ձեքերիյա Սերթելը նշում է, որ իր աշխատանքի երկու տարիների ընթացքում աշխատանքներ է կատարել ցեղերի, ալևիների ու կրոնական միաբանությունների վերաբերյալ, սակայն չգիտի, թե դրանք հրապարակվել են արդյոք, թե՞ ոչ[20]:

Օտարալեզու աղբյուրներ

Օտարալեզու աղբյուրներից էլ շատ աշխատանքներ են թարգմանվել թուրքերեն լեզվի ու օգտագործվել: Միայն այդ օտարալեզու աշխատանքների թարգմանության համար հատուկ մի կառույց է ստեղծվել:

«Գիտական հանձնաժողովը» պետության մոտ եղած տեղեկատվության հետ մեկտեղ պարտավոր էր նաև թարգմանել օտար լեզուներով հրապարակված աշխատությունները՝ կապված քրդերի, արաբների, թուրքմենների ինքնության ու բնակեցման հետ: Այս հետազոտական կառույցը հատուկ դրամ էր հատկացնում օտարալեզու համապատասխան գրականություն գնելու նպատակով: Գնվելիք գրքերի ցուցակը կազմվում էր նախապես[21]: Գրքերի թարգմանության համար վարձվում էին թարգմանիչներ, և նրանց վարձը տրվում էր գաղտնի ֆոնդերից[22]:

Իթթիհաթական հետազոտությունները

«Միություն և առաջադիմություն» կազմակերպության անդամներն ուղարկվել են Անատոլիա, որտեղ նրանք անցկացրել են այնտեղ բնակվող ազգային համայնքների սոցիալական, մշակութային ու քաղաքական նկարագրերի վերաբերյալ հետազոտություններ: Գործուղված անձինք Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անատոլիան թիզ առ թիզ ուսումնասիրելու էին ու ստացված տեղեկատվությունը զեկույցի տեսքով ներկայացնելու կենտրոն:

„Իթթիհաթի" ընդհանուր կենտրոնը քզլբաշներին ու բեքթաշիներին ուսումնասիրելու համար ուղարկում է Բահա Սաիդ բեյին, ալևիներին ուսումնասիրելու համար՝ բուրսացի Մեհմեթ Թահիրին (Օլգուն) ու Հասան Ֆեհմի հոջային, հայերին ուսումնասիրելու համար՝ Էսաթ

Ուրաս բեյին, ցեղերը, կրոնական միաբանություններն ու ալևիներին ուսումնասիրելու համար՝ Զեքերիյա Սերթելին, իսկ քրդերին ու թուրքմեններին ուսումնասիրելու համար՝ Հալիլ Արեծին[23]:

Այս հարցի վերաբերյալ էնվեր Բեհնան Շափոլյոն պատմում է.

«Միություն ու առաջադիմություն» կազմակերպության առաջնորդ լուսահոգի Թալաթ փաշան մեծ վեզիր լինելու առաջին օրերին հավաքում է կուսակցության ընդհանուր ժողովը: Այս ժողովի ժամանակ նա ասում է. «Մենք անցանք այս ազգի գլուխը: Սակայն Անատոլիան մեզ համար փակ տուփ է: Համոզված եմ, որ նախ պետք է բովանդակությանը ծանոթանանք, ապա ծառայենք այս ժողովրդի անհրաժեշտ գործերին»: Այդ առումով Զիյա Գյոքալփը ասում է. «Մենք արեցինք մի քաղաքական հեղաշրջում: Այժմ, օրինավոր կառավարումը մարմնավորեցինք ու պատոյանը փոխեցինք: Մինչդեռ ամենամեծ հեղաշրջումը ներքին հեղաշրջումն է: Մեր հասարակության կառուցվածքում, մշակույթի բնագավառում մեր առաջիկա հեղաշրջումները լինենք ամենից մեծն ու արդյունավետը: Սա էլ կլինի միայն ճանաչելով թուրք հասարակության ծնաբանական ու ֆիզիոլոգիական կառուցվածքը: Հիմնականում պետք է կենտրոնանալ Անատոլիայի կրոնական հավատալիքների, միաբանությունների, աղանդների ու թուրքմենական ցեղերի վրա: Այս ամենը ուսումնասիրելու համար եկեք ուղարկենք այս տուփը բացելու համար մեր գիտնական ընկերներին[24]:

«Միության ու առաջադիմության»-ը հետաքրքրող այս թեմայում իրենց ներդրումն են ունեցել Թյուրքական օջախներն ու Ազգային թուրքական ուսանողական միությունը: Օրինակ, 1917թ. օգոստոսի 6-19 Թյուրքական օջախներն ու Ազգային թուրքական ուսանողական միությունը համատեղ մի շրջայց էին կազմակերպել: Անկարայի, Էսքիշեհիրի, Քոնիայի, Աֆյոնքարահիսարի, Իզմիրի ու շրջակայքի ալևիների ու թուրքմենների կենցաղի հետ կապված նոթեր, լուսանկարներ են բերել, կոնֆերանսներ տվել[25]: Ժամանակաշրջանի միակ համալսարանն էլ է այս թեմայով զբաղվել: «Թյուրքական օջախներն ու Զիյա Գյոքալփի ներկայացրած Ստամբուլի Դարուլֆյունունի հասարակագիտական ինստիտուտների ալևի-բեքթաշի ու թուրք-քրդական հարցերով գիտական տեսանկյունից մի ազգային գիտակցություն են ընկալել: Ալևիականություն, որն ըստ էության ընդհանուր արմատից է ծագում, հետազոտության մեջ սոցիոլոգիան իր ամենանոր մեթոդներով կարևոր տեղ ունի»[26]:

Այսօրինակ կառույցների գործունեության հետ մեկտեղ պետք է հատուկ ուշադրություն դարձնել երկու հետազոտողների կատարած աշխատանքների վրա: «Միության ու առաջադիմության» ազգայնական տեսակետների ձևավորման վրա Բահա Սաիդն ու Հալիլ Արեծն ազգագրության վերաբերյալ իրենց կատարած աշխատանքներով առանձնահատուկ մեծ ազդեցություն են ունեցել: Այս հետազոտողների կյանքի ու գործունեության վերաբերյալ կաշխատենք ավելի շատ տե-

ղեկությունը տրամադրել:

Բացի Բահա Սաիդից ու Չարիլ Աղեմից շատ մարդիկ են զբաղվել ազգագրությամբ: Նրանցից մեկն էլ որոշ ժամանակ ցեղերի վարչության պետի պաշտոնը զբաղեցրած Զեքերիյա Սերթելն էր:

Այնիության ու ցեղերի վերաբերյալ հետազոտության նպատակով գործուղված Զեքերիյա Սերթելն իր հուշերում ասում է հետևյալը՝ լույս սփռելով մեր ուսումնասիրության վրա. «Այն ժամանակ հիմնվել էր Վերաբնակիչների ու ցեղերի ընդհանուր վարչությունը[27]: Գլխավոր տնօրենը Շյուքրյու Քայան էր: Ես էլ նշանակվեցի ցեղերի վարչության պետ: Շյուքրյու Քայան ինձ ասաց, որ ցեղերի վերաբերյալ նախ մի գիտական աշխատանք է պետք տանել: Երկրում ցեղերի քանակը որքա՞ն էր: Ի՞նչ սովորություններ ունեին: Նախ պետք էր դա իմանալ, հետո, ըստ դրա՝ նախաձեռնություններ հանդես գալ: Այդ կառույցում իմ աշխատած երկու տարվա ընթացքում երկու ծավալուն թղթապանակ եմ պատրաստել՝ մեկը ցեղերի, մյուսը՝ միաբանությունների մասին: Ցեղերի մեծ մասն այնտեղ էր: Այս տեսանկյունից պետք էր ուսումնասիրել ալևիներին ու միաբանությունները: Այսպիսով, երկու հետազոտություն կատարեցի: Սակայն չգիտեմ, թե հետո այդ աշխատանքներն ինչ եղան: Եթե դրանք տպագրված լինեին, ապա երկու արժեքավոր աշխատություն կստացվեր»[28]:

Բահա Սաիդ

Բահա Սաիդ բեյը «Միություն ու առաջադիմության» ազգագրագիտական գործունեման գնացած հետազոտողներից մեկն էր: Բահա Սաիդ բեյը զբաղվել է հատկապես Անատոլիայում ալևիականության ու բեքթաշիականության հարցերով: Բահա Սաիդ բեյը ծնվել է 1882թ. Չանաքքալեի Բիգա իլչեում՝ դաղստանցի վերաբնակչի ընտանիքում: 1906թ. ավարտել է զինվորական ակադեմիան որպես շտաբային կապիտան: Սակայն կարճ ժամանակահատված հետո վաղաժամկետ անցնում է թոշակի: Եգիպտոսում որոշ ժամանակ մնալուց հետո 1908թ. գալիս է Ստամբուլ ու զբաղվում առևտրով: Բահա Սաիդը «Միություն ու առաջադիմություն» կազմակերպությունից բացի մասնակցել է Նկարիչների օսմանյան միության, Թյուրքական օջախների, Ազգային թուրքական ուսանողական միության, Ազգային կոնգրեսի ու Ոստիկանական միության հիմնադրմանն ու կառավարմանը[29]:

Բահա Սաիդը որպես «Միություն ու առաջադիմություն» կազմակերպության անդամ 1914-1915թթ. «բեքթաշիությունը ուսումնասիրելու նպատակով անձամբ կառավարության կողմից ուղարկվել է Անատոլիա»[30]: Կան տեսակետներ, թե այդ շրջայցը երկարացվել է և հասցվել է մինչև Իրան[31]:

Հիլմի Զիյա Ուլքենը Բահա Սաիդի գործունեման հետ կապված

հետևյալն է գրում. «1914-1915թթ. այս խնդրով տարված Բահա Սաիդը բեքթաշիությունը ուսումնասիրելու նպատակով կառավարության կողմից ուղարկվել է Անատոլիա»[32]:

Բահա Սաիդը Անատոլիայի հետազոտության հետ կապված մինչև 1917թ. մի հոդվածում գրում է հետևյալը. «Թուրքիայում՝ Անատոլիայի հետազոտումը նշանակում է ճանաչել Թուրքիան: Եթե դա անենք, ապա մենք՝ թուրքերս, կճանաչենք ինքներս մեզ: Քանի որ Անատոլիայի ժողովրդի մեծ մասը թուրք են, մենք պետք է թուրք ազգի ու նրա կենցաղի մասին մեր խոսքն ասենք, բացի դրանից կառավարությունն էլ թուրքերն են ներկայացնում: Մեր Անատոլիան պետք է գյուղ առ գյուղ տեսնել, երկրի տոպոգրաֆիական քարտեզի նման ստեղծել նաև ազգագրական քարտեզը»[33]:

Մեզ դեռ հայտնի չէ, թե ինչ գնահատական է տվել կազմակերպությունը Բահա Սաիդի ստացած արդյունքներին: Սակայն այս հետազոտության ավարտից 10 տարի անց նրա արդյունքները լույս են տեսել «Յենի Յուրդու» ամսագրում հրապարակած հոդվածաշարի տեսքով: Կարելի է ասել, որ այս հոդվածների տեղեկությունների հիմքը կազմում են 1910-ական թթ. կատարած ուսումնասիրությունները: «Յենի Յուրդու» ամսագրում հրապարակված հոդվածներն ուսումնասիրվել են Նեժաթ Բիրդողանի կողմից ու հրատարակվել 1994թ. „Բերֆին" հրատարակչության կողմից[34]: Այս հոդվածները կրում էին նոր հանրապետության ոգևորությունը: Աթաթյուրքով հիացած Բահա Սաիդը այս հոդվածներում հատուկ ընդգծել է նոր հանրապետության նպատակները և «ուրճացրել է թրքության տարրերը»: Այս պատճառով «Թուրքիայում ալևիական խմբերը», «Սուֆի-ղզլբաշական ծիսահրապարակը», «Սուֆի-ղզլբաշական ծիսահրապարակի թուլությունները», «Անատոլիայի ալևիական խմբերը» ու «Բեքթաշիներ» հոդվածները և «Քրդեր» ու «Թուրքմեններ» գրքերը մեր կողմից չեն ուսումնասիրվել: Եթե մենք ունենայինք 1914թ. հետազոտությունների վերաբերյալ փաստաթղթեր, ապա պետք կլիներ կենտրոնանալ դրանց վրա, սակայն համոզված ենք, որ 1926թ. ոգևորության ներքո գրված տեքստերում բացակայում են 1910թ. կենտրոն ուղարկված զեկույցների մանրամասները, առաջարկներն ու զուտ մտքերը: Նեժաթ Բիրդողանի ուսումնասիրությունում երևում է, որ Անատոլիայում ապրող բոլոր ալևիները թուրքեր են ու նրանց արմատները հասնում են մինչև շամանականություն:

Այս հարցում Բահա Սաիդի կարծիքների պատմական կարևորությունը դոկտոր, պրոֆ. Սուլեյման Ուլուդաղը այսպես է գնահատում. «Ալևիները մինչև 20-րդ դար որևէ կերպ չեն հայտարարել, թե շարունակում են հին թյուրքական հավատալիքներն ու կապ ունեն շամանականության հետ: Այս հայտարարությունը ազգայնականության ու թուրքիզմի ազդեցության տակ առաջին անգամ կողմից է հրապարակ բերվել 1910թ. Բահա Սաիդի կողմից[35]»:

Դոկտոր, պրոֆ. Օրհան Թյուրքդողանը Սուլեյման Ուլուդաղի այս մտքին հավելում է. «Անկասկած, չի կարելի հերքել, որ նրա այդ կարծիքների ձևավորման մեջ մեծ դեր են ունեցել 1910թ. դաշտային աշխատանքները[36]»:

Բահա Սաիդն իր հետազոտությունները շարունակում է նաև Թուրքիայի Հանրապետության հիմնումից հետո: Նա իր հետազոտություններով շարունակում է աջակցել նոր հանրապետությանը, որը կայսրությունից ժառանգություն ստացած ազգային համայնքների խնդրին փորձում էր «լուծում» տալ ազգ-պետություն շրջանակներում: Բահա Սաիդն իրեն հատկապես նվիրել էր արևելյան վիլայեթներում ու լեռնային շրջաններում բնակվող ցեղերի ազգության, լեզվի, դավանանքի ու ավանդույթների ուսումնասիրության գործին: Նա տիրապետում էր հինգ լեզվի՝ ներառյալ ռուսերենը[37]:

Հաքիլ Ադեմ

Հաքիլ Ադեմը «Միություն ու առաջադիմության» առաջատար, սակայն ժողովրդի կողմից անհայտ տեսաբաններից էր: Թուրքական պաշտոնական գաղափարախոսության գաղտնի մնացած ճարտարապետներից էր: Հաքիլ Ադեմը, որի իրական անունն էր Նաջի Իսմայիլ (Փելիսթեր), ալբանացի էր: Ըստ իր պատմածի՝ սովորել է Գերմանիայում, ուր ստացել էր փիլիսոփայության դոկտորի աստիճան: Հաքիլ Ադեմը տիրապետում էր անգլերեն, ֆրանսերեն ու գերմաներեն լեզուներին: Նրա դոկտորական աշխատությունը՝ «Պանգերմանիզմ ու պանսլավիզմ», հրատարակվել է Ստամբուլում 1332 (ըստ հիջրայի - խմբ.):

«Միություն ու առաջադիմություն» կազմակերպության անդամ Հաքիլ Ադեմը 1908թ. հեղաշրջումից անմիջապես հետո Թալեաթ փաշայի կողմից նշանակվում է թարգմանիչ Անվտանգության կազմակերպությունում: Հաքիլ Ադեմը «Միություն ու առաջադիմություն» կազմակերպության իշխանության տապալումից հետո մեկնում է արտասահման: Հաքիլ Ադեմը, որի «կյանքը ընթանում էր «Միության ու առաջադիմության» վայրիվերումներին զուգահեռ», Բաբըալի հարձակումից հետո «Միության ու առաջադիմության» իշխանությունը վերագրավելուց անմիջապես հետո վերադառնում է հայրենիք ու նշանակվում է ՆԳՎ-ի Ցեղերի վարչության [ի նկատի ունի ցեղերի բնակեցման վարչությունը] թուրքմենական բաժնի աշխատակից[38]: Հաքիլ Ադեմը շարունակեց իր աշխատանքները մինչև 1918թ. վերջերը՝ հեռու մնալով Մուսթաֆա Քեմալ փաշայի առաջնորդած Ազգային պայքարից: Թուրքիայի Հանրապետության հիմնումից հետո նա վերջնականորեն վերադառնում է Թուրքիա: Սակայն դրանից հետո ոչ մի պետական պաշտոն չի ստանում ու իրեն նվիրում է հրատարակչական գործին: Հանրապետական-ժողովրդական կուսակցության ընդդիմադիրների շարքում անուն հանած տեսաբաններից մեկն էր[39]: Ադեմի՝ ազգության վերաբեր-

յալ աշխատանքների մասին Արիֆին Նեսիմին մեջ է հայտնում հետևյալ կարևոր տեղեկությունները. «Հաբիլ Ադեմը հետո աշխատել է Անվտանգության ծառայության ցեղերի վարչության թուրքմենների բաժնում: Օսմանյան պետության Անվտանգության ծառայությունը Անատոլիայի բոլոր ազգերի, մասնավորապես քրդերի ու թուրքմենների, նախկին ու արդի վիճակը ճշտելու ուղղությամբ Արևմուտքից ու հատկապես Գերմանիայից մասնագետներ էր բերել: Այս մասնագետների զեկույցները Հաբիլ Ադեմը գերմաներենից թարգմանել է թուրքերենի: Բացի այդ պետական անվտանգության կազմակերպության պատվերով Հաբիլ Ադեմը նաև թուրքերենի է թարգմանել շատ գրքեր»[40]:

Ինքն էլ 1931թ. հրապարակված իր մի հոդվածում այդ տարիների իր աշխատանքն այսպես է ներկայացնում. «Անցյալում Անվտանգության գլխավոր ծառայության պատվերով Իրանի, Ռուսաստանի, Արաբստանի ու արևելյան այլ երկրների ժողովուրդների, նրանց կյանքի ու պատմության մասին գրքեր եմ գրել: Ես թարգմանել եմ մի գերմանացի ճանապարհորդի «Հարավային Արաբստան» աշխատությունը: Համաձայն այդ գրքի նրա բնակչության արմատները թյուրքական են[41]»:

Հաբիլ Ադեմը, որը միայն մեկն է իթթիհաթականների հետախուզողների աշխատակազմից, 1916թ. չորս գիրք է թարգմանել կամ գրել: Համաձայն 1923թ. մի գնահատականի, 1913թ. սկսած նա գրել է 12 գիրք՝ դրանք ներկայացնելով որպես թարգմանություն[42]: Դրանք հասարակ գրքեր չեն. այդ օրերին կայսրության ներքին ու արտաքին քաղաքականության առջև ծառացած խնդիրների լուծմանն աջակցող գործեր են: Այս գրքերը մեկնաբանություններ են պարունակում օսմանյան մտքի մահմեդականությունից ազգ-պետությանը անցնելու վերաբերյալ: Նա 1915թ. հրատարակել է «Ճակատամարտից հետո. խաղաղության քաղաքականությունն ու թուրքիզմի քաղաքականությունը» վերտառությամբ գրքերը, 1916թ.՝ «Գործող Թուրքիա», «Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը ու արևելյան վիլայեթների խնդիրը», «Պանգերմանիզմ ու պանսլավիզմ», «Ինչպես են պարտված ազգերը վրիժառու լինում» գրքերը, իսկ 1918թ.՝ «Վերաբնակիչների բնակեցում (Ներկայացման միջազգային ավանդույթը)», «Թուրքմենական ցեղերը», «Քրդերը», ու հրատարակման տարեթիվն անհայտ «Լոնդոնի կոնֆերանսի խնդիրներից. Անատոլիան ապրելո՞ւ է, թե՞ ոչ» և «Ինչո՞ւ է պառակտվում Թուրքիան» գրքերը: Նրա հեղինակած երկու այլ գործերի վերնագրերը չենք կարողացել ճշտել: Հաբիլ Ադեմի՝ 1923թ. հետո կատարած աշխատանքներում առկա ծանոթագրություններում նշված այնպիսի աշխատություններ կան, որոնք տպավորիչ տեղեկություններ են պարունակում ազգագրության հարցում «Միության ու առաջադիմության» կատարած աշխատանքների մասին: Այս աշխատությունները ամենայն հավանականությամբ հետագայում չեն հրատարակվել:

Դրանք մնացել են մեկական թղթապանակի տեսքով՝ ազդեցիկ դեր ունենալով «Միության ու առաջադիմության» քաղաքականության որոշման մեջ: Այս աշխատանքներից ամենից կարևորներն են. «Թուրքիզմի խնդրի գիտական, հասարակական ու փիլիսոփայական մոտեցումները», «Քրդական ցեղերի բնակության ավանդույթները», «Հայաստանի պատմությունն ու հայերը», «Անատոլիայում ոչ սուննի համայնքները», «Հարավային Արաբստան», «Բեքթաշիական միաբանությունը», «Թուրքիայում հունական տնտեսական կազմակերպությունը»: Այս աշխատությունների մասին Հաքիլ Ադեմը մանրամասնորեն ասում է. «Բոլոր այս աշխատությունները գրված են կառավարության պատվերով, նրանց մի մասը գտնվում է լուծարված Ընդհանուր անվտանգությունում, մի մասը Ցեղերի ու վերաբնակների, մի մասն էլ Վիլայեթների բնակչության ու գործերի կառավարման վարչություններում: Ստամբուլի հրատարակիչներն ստանձնել են վերջիններիս բոլորի պատճենները կարճ ժամանակում հրատարակել»[43]:

«Միության ու առաջադիմության» և քեմալականների նախագծերը հասկանալու տեսակետից արժե ուսումնասիրել Հաքիլ Ադեմի գրքերը: 1923թ. շատ ավելի վաղ Հաքիլ Ադեմն իր «Անատոլիայում թուրքերն ազատ՞ են, թե՞ ոչ» գրքում առաջ է քաշում տեսակետ, որ Օսմանյան կայսրությունը պետք է Բալկաններից ու Արաբստանից հետ քաշվի, կառավարության կենտրոնը Ստամբուլից տեղափոխի Անատոլիայի կենտրոնը ու կարողանա Անատոլիայում հիմնել թուրքական պետություն: Եթե հավատանք Արիֆին Նեսիմիի տեղեկություններին, ապա «Միությունն ու առաջադիմությունն» այս գրքից անհանգստացել է ու պահանջել, որ Հաքիլ Ադեմը որոշ ժամանակով մեկնի արտասահման[44]:

Հաքիլ Ադեմի գրքերի մի մասում նրա անունը՝ որպես թարգմանիչ, գրված չէ: Սակայն տարիներ հետո թե իր հոդվածները, թե այլոց հուշերը հիմք ընդունելով՝ կարող ենք եզրակացնել, որ վերոհիշյալ աշխատանքներն իրեն են պատկանում: Արիֆին Նեսիմին նշում է, որ Հաքիլ Ադեմը «իր գրած ու հրատարակած այս գրքերում հիմնականում իրեն նշում է որպես «թարգմանիչ Հաքիլ Ադեմ»: Իսկ հեղինակի անունը հորինում էր՝ դնելով մի պրոֆեսորի անուն: Օրինակ, հեղինակ՝ Յոն Մուլ, պրոֆ. Լիքահ»: Լիքահ անունը Հաքիլ անվան հակառակ ընթերցանությունն է[45]: Ինքը նույնպես նշում է, որ իր գրած գրքերն ստորագրում է որպես թարգմանիչ: Ադեմը 1926թ. գրած մի գրքում[46] նշում է, որ տարիներ է, ինչ իր անվամբ ոչ մի գիրք չի հրատարակել, սակայն որպես իր կարծիքները ներկայացնելու ուղի ընտրել է օտարների անուններով գիրք ստորագրելը և ընդգծում. « իմ աշխատությունները հորինված մի եվրոպացու անվան տակ էի հրատարակում: Ընդհանուր առմամբ տասներկու գիրք եմ հեղինակել»[47]:

Այս բոլոր աշխատությունների և դրանից բացի նաև որպես թարգմանչի ստորագրություն չկրող գրքերի Հաքիլ Ադեմի գրչին պատ-

կանելը մանրամասն ուսումնասիրության կարիք ունի: Որովհետև տարբեր թվականներով գրքերից 4-ը 1916թ., 3-ը 1918թ. գրվել ու հրատարակվելը հետաքրքիր է: Սալմիանանիծ անունով մի հետազոտող պնդում է, որ Ֆրիցի «Քրդեր» գրքում արծարծվող տեսակետները ավելի վաղ նշվել են «Հասարակություն» ամսագրում Մ. Ձերբիրի բեյի (Սերբեյ) կողմից[48]: Հալիլ Ադեմի տասնյակ հետազոտություններ ու գրքեր իրեն վերագրելուն կարծում եմ, որ պետք է կասկածանքով մոտենալ: Քննարկումը բացելու համար ներկայացնում եմ հետևյալ թեզը. Հալիլ Ադեմի ստորագրությամբ հրատարակված թարգմանություններից բացի իրեն վերագրվող աշխատություններն ու զեկույցները կարող են հենված լինել ազգային հարցերով հետազոտություններ կատարող հանձնաժողովի հետազոտությունների ու թարգմանությունների վրա ու այդ հետևանքով հնարավոր է, որ գրքերի վրա նշված չլինի թարգմանչի անունը:

Իթթիհաթական հրատարակումների երկու օրինակ

Քրդեր. պատմության ու հասարակության ուսումնասիրում

1918թ. որպես ՄԳԿ-ի համար 3 հրապարակում լույս տեսած աշխատությունն արժե ուսումնասիրել, քանզի ոչ միայն արտահայտում է «Միություն ու առաջադիմություն» կազմակերպության տեսակետը քրդերի վերաբերյալ, այլև հանդիսանում է այսօրվա պաշտոնական գաղափարախոսության հիմքը: Գրքի շապիկի վրա նշված է, որ գիրքը գրվել է Բեռլինի Արևելյան Սեմինարիայում դր. Ֆրիցի կողմից: Թարգմանչի անունը նշված չէ: Քիչ առաջ ասվեց, որ հեղինակը իրականում Հալիլ Ադեմն է: Այստեղ ցանկանում եմ բերել մի մեջբերում գրքից, որ կօժանդակի այդ թեզին: 44 էջում որոշ ցեղեր հիշատակելիս, ի տարբերություն տարբեր հեղինակների, նշվում է, որ նրանք չեն բնակվում Բիթլիսի կողմերը. «Թե Բիթլիսի քաղաքապետարանի հիմնարկություններում, թե մոտ քաղաքների հիմնարկներում արված ուսումնասիրությունների արդյունքում այդ անուններին չեն հանդիպել»: Հնարավոր չէր, որ դր.Ֆրիցը այց կատարեր Բիթլիս 1910-ական թթ. երբ հրատարակվել է գիրքը: Բացի այդ, եթե արվել է դաշտային հետազոտություն, ապա պետք էր նաև խոսել գերմանացի հեղինակի հետազոտական մեթոդների մասին: Մինչդեռ դրա մասին չի խոսվում գրքի ոչ մի մասում: Բացի այդ, հնարավոր էլ չէր, որ օտարերկրացի գիտնականը ուսումնասիրություն կատարեր պաշտոնական հիմնարկություններում:

Գիրքը բաղկացած է հինգ մասից. քրդերի ծագումը, քրդական ցեղերը, իրանական քրդերը, այսօրվա քրդական ցեղերը, քրդերի պատմությունը և քրդերի ցեղային կառուցվածքը:

Առաջին մասում քրդերի ազգային ավանդապատումների, կրոնի, լեզվի, գրականության ու պատմության տեսանկյունից փորձ է արված պատասխան գտնել քրդերի արմատների վերաբերյալ: Նախ և ա-

ռաջ փորձ է արվել փաստել քրդերի վրացի, արաբ կամ պարսիկ լինելու պնդումների անհիմն լինելը:

The 1961 constitution, which was to cure all the ills of the state, faced a deadlock relatively soon. It proved that Turkish society failed to disseminate the principles of multiparty political culture. Although in 1969 eight parties were represented in the National Assembly neither sides could gain a majority in order to form one party government. Thereby the legislative process became paralyzed, and dissatisfied groups took their demands to the streets. Political violence and disorder spread, and law and order became ineffective rapidly.

On March 12th, 1971, the commanders of the three armed forces signed an ultimatum, which marked the beginning of the second military intervention carried out through *pronunciamento* or *memorandum*. The 1971 intervention resembled to the 1960 takeover in terms of its given preference to the RPP. As before, this time again the perceived aim was the preservation of the laicism, the legacy of Atatürk as well as speeding up the reforms decreed by the 1961 constitution. It is plain that the generals did not see a fundamental need to throw out the existing system, but rather they agreed on a certain "fine tuning" that would promote more efficient and decisive government.

As a compromise, the leading parties promised to enact a series of constitutional amendments designed to strengthen the hand of the government in dealing with violent dissident groups.[37] In 1971 constitutional amendments were added to the 1961 constitution involving specific limitations on civil rights and freedoms enjoyed by the press and associations; personal freedom was not to jeopardize the "integrity of the state and nation, public order, national security ".[38] Those restrictions placed on individual and associative freedoms were applied to suppress organized political-ethnic or political-religious movements, i.e. social and cultural corporate groups. In 1973 parliamentary elections were held and the army nominally announced about its withdraw from the civilian affairs.

Both the insurmountable social unrest and the ideological divisions led to ethno-political and ethno-religious polarization with unprecedented socio-political and ideological repercussions. The main parties were the RPP, the Justice Party (*Adalet Partısı*; henceforth JP), the National Salvation Party (*Milli Selamet Partısı*; henceforth NSP) and the National Action Party (*Milli Hareket Partısı*; henceforth NAP). Strive for incorporating diverse identities, cultural and social cleavages led to over-politicization of the society. This trend in turn led to dangerous over-ideologization of the social sectors between the Left and Right. Left-wing ideology became a container for ethno-religious (Kurdish-

Alevi) identities, meanwhile right-wing ideology incorporated nationalist forces.

The 1970s marked the most complicated and ambiguous era in the Turkish history. The victories of the RPP in the 1973 and 1977 elections did not give a majority in Parliament. From 1973 to 1980, therefore, Turkey had unstable coalition governments that failed to address the growing structural problems of the country. After the 1973 elections the RPP chose NSP as its partner to form a government. That venture came as a total surprise for the politicians and for the society, as the party which claimed to have eradicated the influence of Islam in the political life of Turkey established an alliance with a party which openly vindicated the idea of enhancement the role of Islam in political affairs of the country. Even nowadays many scholars in the field express their astonishment about this "anti-historical coalition", as a few of them coined it. Suna Kili equates this move as "*political heresy since the decision to form such an alliance was contrary to the very essence of a political institution that had been the vanguard in a radical reform movement carried out to modernize the country*".[39]

In reality, this move appears odd only on the surface and scholars downgraded the fact that the RPP of 1973 was not the RPP they used to acknowledge. Karpat is right who urges observers to not forget that that time the RPP and the NSP had a lot in common on social and economic matters, both were against capitalism and struggling for social justice, they opposed West meanwhile defended modernization, they favoured friendly relations with the third world countries.[40] Moreover, on one occasion Ecevit was defended by Erbakan on accusations that the he was a Communist.

This coalition had a short life and broke out in November 1974 right after Cyprus invasion in July-August 1974, when Ecevit felt secure enough to go for an early election in order to form a one-party government. But alas, Ecevit failed to gain the support of the parliament. In March 1975, Erbakan joined the first "National front" (*Milli Cephe*) government with the JP and the NAP, which lasted until June 1977.

The RPP obtained 41,4 per cent at the parliamentary elections of 1977, but again failed to form a government, since the JP, the NSP and the NAP again obtained more votes than the RPP alone. Thus, the second "National Front" government was formed. It needs to be mentioned that the fact the RPP gained 41, 4 per cent votes in the elections made Ecevit to think that key to his future success was adopting a genuine leftist policy. Consequently, he moved further

to the left and became utterly merciless in attacking his political enemies. He established also his firm control over the party by neutralizing easily the challenges to his stewardship.

One of the surprises of the 1977 elections was the success of the radical right National Action Party in the elections. Headed by the former NUC member Alparslan Türkeş, the party succeeded to be transformed into highly disciplined, hierarchal, nationalist group. The NAP's philosophy, based on Türkeş's nine principles (*Dokuz ışık*), rejected socialism and capitalism, vindicated the radical interpretation of the Kemalist national-laicism concurrently incorporating Islamic overtones. The masthead of *Devlet* of Nationalist Action Party, cited a saying of Atatürk, 'O Turk, turn unto yourself'. Türkeş, when accused of being a Nazi and a fascist, retorted that his was the only correct interpretation of Atatürkism.[41]

By the end of the 1970s, the RPP became more outspoken defender of the workers and the peasants, in any account the RPP's new theory of "people's sector" remained a vague idea, as the party did not have a chance to produce a tangible, effective example of its new commitment to the "people's sector".[42] The Second Front lasted only a few months (21 July 1977- 5 January 1978), as in January 1978 Ecevit managed to form a government. Meanwhile, after 1973 the economic stagnation was getting from bad to worse, the widespread disorder, political violence, armed struggles between the leftist and rightist openly manifested the existing public discontent. In the autumn of 1979, the RPP suffered a total defeat in the partial elections, and then Demirel established a minority government which, in January of 1980, introduced the economic stabilization program, which was, in fact, the most far-reaching economic reform program ever applied in Turkey. He failed, however, to impose political stability.

In the midst of this national calamity, the army generals again started to talk about a possible intervention already in 1977, though it was a common believe that the major parties would not let Turkey go any further towards the brink. However, not everyone was inclined to praise that solution, for instance K. Karpat believed that there was only one alternative to halt the army intervention and that was a need for an emergence of a total mobilizing ideology or force. For this, he assumed, Erbakan's pro-Islamic party, as a carrier of commonly accepted ideological concepts, was an ideal candidate for reconciling the conflicting parties.[43] Yavuz further defends this position: "*Islam proved to be socially embedded in various forms of social life and was more conductive to mass mobilization than either nationalism or socialism, because of its flexible*

network system, norms and symbolic values"[44].

While discussing the phenomenon of socio-political assertion or re-assertion of new identities the issue of the Shiite Alevi population needs to be touched, since their factor has been always discussed by the Turkish scholars but the connection between the emergence of Alevi identity and its repercussions on revising Kemalism has been downplayed. While the majority of the Turkish population belongs to the Hanefi School of Sunni Islam, approximately 15-20% of the Muslim population is Shiite Alevi (approximately 13 million of 70 million) principally of the Bektaşi School. The Alevi population was generally strongly supportive of the Kemalist revolution and particularly of its laicisation reforms. Representing a religious minority, the Alevis viewed Kemalism as a positive shift away from Ottoman Empire based upon religious and thus Sunni rule. But since the 1970s, the Alevi's separate religious identity has been voiced more strongly with the growth of political Islam in Turkish politics. Some scholars (Camuroglu, Doğan) argue that during the 1970s the Alevi identity had been assimilated by mainstream laic Turkish nationalism and was on the wane.[45] The communal massacres against Alevis in five major cities (Tokat, Çankiri, Çorum, Sivaş and Kahramanmaraş) between 1977 and 1980 came to challenge this perception and further deepened the connection between party affiliation and ethnoreligious identity. This communal conflict ended with 106 deaths (mostly Alevis), 176 injured, 210 homes destroyed and 70 stores ruined.[46]

Concluding remarks

Analytically speaking the 1960-70s marked the beginning of an era for Kemalism which could have been labelled as the period of maximization of Kemalism. The role of the republican discourse became an important factor in the daily politics. It also marked a beginning of an era when politicians, and not only, all across the political spectrum scurry to represent themselves as Atatürk's preferred descendants, especially during election campaigns. Atatürk's image and pithy maxims were everywhere at these times, as the politicians try to exploit the internalized hegemonic cult of the hero for their electoral purposes. As Tarla and Davison rightly stress: "*exalting Atatürk's ego was a way of exalting oneself subjectively, but it was effectively a self-abnegation because Atatürk, as all know, had no equal. In this persisting power relation, no independent role emerged, no autonomous personality development occurred, and hence, no political exchange between equal citizens took place. Under Kemalism, Turkish political life seemed permanently committed to apolitical, infantalist relations of hierarchical subordination*".[47]

They did so precisely to capitalize on the authority-power relationship. In their pursuit of such power, however, they simultaneously perpetuate, often unwittingly, the embedded infantilism of the ideal charismatic relation, subordinating their wills to his.

One can state relatively safely that in the 1970s there was general will to revise the Kemalist vision of Turkey. It was taken for granted that the ideological construct of the Kemalist state was too narrow to incorporate newly emerging social forces. Some observers argue that Kemalist thought ceased to be regarded as a source for all public policies. The new state elites used Atatürkist thought as a technique, not as a political manifesto. Kemalist thought started to serve, however, as a justification for rejecting radical ideologies of both the left and the right.

In 1975, Frey wrote: ' *one might argue that part of the current malaise in Turkish political culture is due to the fact that the Kemalist paradigm is exhausted, that this is obscurity recognized, and that no successor has been accepted. When paradigms are exhausted and new ones are lacking, one tends to find the phenomena of the absurd. There is thrashing about, disquiet, resistance to previous authority, extremism, and so on In short, contemporary Turkey seems to have outgrown but not replaced the Kemalist paradigm and hence confronts its own version of the "politics of absurd"*'.[48]

Mardin pointed out that "*the Kemalist ideology which would have reshaped world views from candidates to elite was eroded*";[49] Karpat wrote: ' *much of Kemalism, born from the demands of a rising national state, has become outdated by economic and social pressures though still the predominant political ideology*'.[50] Tachau observed: '*the legitimating formula came under considerable strain. Of the main tenets two remained unchallenged (republicanism and nationalism), two became somewhat controversial (populism and laicism) and two became the subject of heated debate and fundamental disagreement (statism and reformism)*.[51] Another argument that Heper and Karpat are aptly prone to reiterate is that in the 1960s and afterwards Kemalism became a cover for other ideas or ideologies, each and every group, including radicals, interpreted Kemalism to suit their purposes.[52]

Meanwhile, the staunchly Kemalist scholars, like Suna Kili, openly advocated the need for the reassertion of the principles of the Atatürk's revolution. She wrote: "*Through the kindling of religious, sectarian and ethnic division and the encouragement of ethnic consciousness, the issues of unity and*

authority, key concerns of the Atatürk revolution, once again acquired contemporary significance".[35] The phenomenon of waving the banner of "Kemalism" initiated by republican pashas (the Ottoman term for a general) in the context of the 1960 military intervention became widely acclaimed among the various forces emerging out of the new political and social realities. As we have seen the army gained the ultimate right along with the RPP to utilize the image and deeds of Atatürk, his ideas and visions for creating a harmless and homogenous society. Thus the army set a precedent of utilizing Atatürk's ideological provisions for its own legitimacy sake. As we will see in the forthcoming chapters, the term has become ubiquitous in the successive constitutions and constitutional amendments that the military had sponsored after overthrowing various civilian governments since 1960.

In addition, the political history of Turkey after 1971 is the history of the final collapse of the old coalition with the military emerging as the supreme arbiter above political parties and social groups. The 1971 intervention aired the division of opinion between the RPP and the military on social issues, Atatürk, nationalism, laicism and revolutionism. The Kemalist scholars regard the break of the breach between the RPP and the military as detrimental and accuse solely Ecevit for it. They claim, as we saw before as well, that on the eve of the third military intervention of 1980, Kemalism as a state philosophy had no longer a formal and organized representation.

REFERENCES

1 Şevket Süreyya Aydemir, İkinci adam, Üçüncü ve Son Cilt (1950-1964), II Baskı, İstanbul, Remzi Kitabevi, 1975, ss. 460-461.
2 Throughout the article, the words "army" and "the military" are used to refer to all four armed services (the army, navy, air force and gendarmerie) and in few cases the Office of the General Staff.
3 Samuel Hantington, Political order in changing societies, New Heaven, 1968, p. 221.
4 Jacob Landau, Radical politics in Turkey, Social, economic and political studies of the Middle East, no. 14 Leiden : Brill, 1974, p. 7.
5 Orhan Erkanlı, Anılar, Sorular, Sorumlular, Baha Matbaası, İstanbul, 1972, 1972, p. 5
6 Constitution was promulgated as law number 334 of July 9, 1961 in the Official Gazette number 10859 of July 20, 1961.
7 Constitution of the Turkish Republic 1961, p. 3.
8 Heper Metin, State and society in Turkish political experience, 1988, p. 7, in *State, democracy and the military*, Walter de Gruyter, Berlin, New York.
9 See Kili Suna, Turkish Constitutional Developments, Turkish constitutional

developments and assembly debates on the Constitutions of 1924 and 1961, Istanbul, Robert College Research Centre, 1971, pp. 71-72.

10 Hakan Yavuz, Islamic political identity in Turkey, Oxford, Oxford University Press, 2003, p. 63.

11 See Andrew Mango, Turkey: Emergence of a Modern Problem in *Aspects of modern Turkey, ed. By William Hale, Bowker, London & New York*, 1976, p. 10.

12 See Landau, Radical politics in Turkey, p. 13.

13 Kemal Karpat, Social change and politics in Turkey: A structural-historical analysis, Leiden, 1973, p. 363.

14 Kemal Karpat, Studies on Turkish politics and society, Brill, Leiden – Boston, 2004, p. 293.

15 Eren Nuri, Turkey today and tomorrow, New York, 1963, p. 68-69

16 See *Atatürkçülük Nedir?*, Istanbul, 1963.

17 See Constitution of 1961.

18 See Karpat, Social change and politics in Turkey, p. 333.

19 Ibid, p. 339.

20 Hotham David, The Turks, London, John Murray, 1972, p. 51.

21 "Yön", 1962.22.8.

22 İlhan Selçuk, 1966.11.11, "*Atatürkçü antiimperyalist cephe kurulamadıkça*", Yön.

23 See Landau, Radical politics in Turkey, pp. 66-76.

24 Ibid, p. 56.

25 Ibid, p. 107.

26 Steinback Udo, "Between Marxism and Islamic fundamentalism Towards an End of Westernization" (in German), paper presented to the Conference on Crisis in Turkey, Brussels, September 24-26, 1980,.

27 Ahmad Feroz, The Turkish experiment in Democracy 1950-1975, C. Hurst & Company, London, 1977, p. 375.

28 Ibid, p. 378.

29 Ibid, p. 177.

30 See Detler Khalid, "The Kemalist Attitude towards Muslim Unity", Islam and the Modern Age, 1975, p. 11.

31 Ibid.

32 Ibid, p. 382.

33 Vilfredo Pareto, The mind and society: A treatise on general sociology, New York, Dover, 1963, pp. 1423-24.

34 Karpat, Studies on Turkish politics and society, p. 320.

35 Ibid, p. 320.

36 *Ak Günlere*: Cumhuriyet Halk Partisi 1973 Seçim Bildirgesi, Ankara, CHP, 1973, s. 217.

37 Heper Metin and Tachau Frank, The state politics and the military in Turkey, *Comparative Politics, v.16, no.1*, 1983, p. 23

38 See Geoffrey Lewis, Political change in Turkey since 1960, in *Aspects of Modern Turkey*, ed. by W. Hale, 1977, p. 106; Nyrop, et al., Area handbook, 1973, p. 198.

39 Suna Kili, The Atatürk Revolution: A paradigm of modernization, Türk İş Bankası, Kültür Yayınları, 2003, p. 401.

40 Karpat, Studies on Turkish politics and society, p. 323.

41 Ibid, p. 210.
42 Kili, The Atatürk Revolution, p. 399-400.
43 See Karpat Kemal, Turkish democracy at impasse: Ideology, party politics and the third military intervention, International Journal of Turkish studies, v. 2/1, 1981, p. 2-3.
44 See Hakan Yavuz, Political Islam and the Welfare (Refah) Party in Turkey, Comparative Politics, v.30/1, 1997, p. 65.
45 See İzzettin Doğan, Alevi-Islam İnancı, Kültürü ile İlgili Görüş ve Düşünceler, İstanbul, Cem, 2000; Reha Çamuroğlu, Alevi Revivalism in Turkey, in Olsson and Ozdalga, Alevi Identity, pp. 79-84.
46 See Yavuz, Islamic political identity in Turkey, p. 68.
47 See Taha Parla and Andrew Davison, Corporatist ideology in Kemalist Turkey: Progress or Order?, 2004, pp. 185-186.
48 See Frey Frederick, Patterns of elite politics in Turkey, in Political elites in the Middle East, ed. By George Lenczowski, Washington, D.C.: American enterprise Institute for public Policy research, 1975, p. 70.
49 See Şerif Mardin, Youth and violence in Turkey, European Journal of Sociology, v. 19, 1978, p. 246-47.
50 See Kemal Karpat, 1968, Introduction to Political and Social though in Turkey, in *Political and social thought in the Contemporary Middle East*, New York, Praeger, p. 298.
51 Franck Tachau, Turkey: The politics of authority, Democracy and Development, New York, Praeger, 1984, p. 54.
52 Metin Heper, The state tradition in Turkey, Beverley, North Humberside : Eothen Press, 1985, p. 110; Karpat, Political and social thought in the contemporary Middle East, London : Pall Mall Press, 1968, p.347.
53 Suna Kili, The Atatürk Revolution, p. 402.

ԱՐԹՈՒՐ ԴՈՒՄԱՆՅԱՆ

ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ («ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐ») ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1960-70-ԱԿԱՆ ԹԹ.

Ժամանակակից Թուրքիայի քաղաքական կյանքում իր ուրույն տեղն ունի Ազգայնական շարժում կուսակցությունը (*Milliyetçi Hareket Partisi*)[1]: Հասարակության լայն շրջանակներին «գորշ գայլեր» անվամբ հայտնի ԱՇԿ-ի քաղաքական և գաղափարական հայեցակարգը ներկայացնում է թուրքական ազգայնականության առավել ծայրահեղական՝ պանթյուրքիստական ուղղությունը: Սակայն, վերջին չորս տասնամյակների ընթացքում պանթյուրքիստական գաղափարախոսություն սերմանող ԱՇԿ-ի գործունեությունը մեզանում անհրաժեշտ ուշադրության չի արժանացել[2]:

Սույն հոդվածով փորձ է կատարվում վերլուծել ԱՇԿ-ի գործունեության հիմնական ուղղությունները 1960-70-ական թթ. և առանձնացնել նրա գործունեության կարևորագույն փուլերը, ինչը հնարավորություն կտա ավելի հստակ պատկերացում կազմել «գորշ գայլերի» գործելակերպի և նպատակադրվածության վերաբերյալ:

«Գորշ գայլերի» կուսակցության կազմավորումը (1965-74 թթ.)

1960թ. մայիսի 27-ին հանրապետական Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ բանակն ուղղակիորեն միջամտեց քաղաքական կյանքին. սպայակազմի մի խումբ անդամներ կազմակերպեցին և իրականացրեցին ռազմական հեղաշրջում: Երկրում ամբողջ իշխանությունն անցավ նորաստեղծ Ազգային միասնության կոմիտեի (ԱՄԿ, *Milli Birlik Komitesi*) ձեռքը: ԱՄԿ-ի գործունեության արդեն առաջին ամիսներին լուրջ հակասություններ առաջացան նրա անդամների միջև՝ կապված երկիրը ղեկավարելու հետագա ընթացքի հետ: ԱՄԿ-ն ներսում բաժանվեց երկու թևի՝ պահպանողականների և արմատականների: Պահպանողականների խումբը, որի կազմում էին գտնվում ԱՄԿ-ի անդամ գեներալները՝ Ջ. Գյուրսելի գլխավորությամբ, փորձում էր շուտափույթ նոր ընտրություններ կազմակերպել և իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին: Իսկ ԱՄԿ-ի արմատական տրամադրված անդամները գտնում էին, որ միայն Դեմոկրատական կուսակցությանը իշխանությունից զրկելով զինվորականության առաքելությունը չի ավարտվում և նրանք պետք է իշխանության ղեկը պահեն իրենց ձեռքում՝ երկրում արմատական բարեփոխումներ իրականացնելու համար: Պահպանողականները այդ պայքարում հաղթանակ տարան, և նոյեմբերի 13-ին արմատականների խմբի բոլոր 14 անդամները, երկրում ռազմական դիկտատուրա սահմանելու փորձ-

րի համար, հեռացվեցին ԱՄԿ-ից և զինված ուժերից[3]: «14-ի խմբում» իր պանթյուրքիստական հայացքներով աչքի էր ընկնում գնդապետ Ալփարսլան Թյուրքեշը[4]:

1965թ. Ա. Թյուրքեշը, արմատականների խմբի որոշ անդամների հետ միասին մտավ Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցություն (*Cumhuriyetçi Köylü Millet Partisi*) և շուտով դարձավ կուսակցության նախագահ՝ ամբողջովին վերափոխելով կուսակցության քաղաքական և գաղափարական ուղղությունները[5]: 1969թ. այն վերանվանվեց Ազգայնական շարժում կուսակցության (հետայսու՝ ԱՇԿ):

ԱՇԿ-ի գաղափարախոսության հիմքում դրված էր Թյուրքեշի 9-ը սկզբունքները՝ «9 լույսը» (*Dokuz Işık*)՝ ազգայնականություն (*milliyetçilik*), գաղափարապաշտություն (*ülkücülük*), բարոյականություն (*ahlakçılık*), սոցիալականություն (*toplumculuk*), գիտություն (*ilimcilik*), ազատություն (*hürriyetçilik*), գյուղացիություն (*köycülük*), զարգացում և ժողովրդականություն (*gelişmecilik ve halkçılık*), արդյունաբերություն և տեխնիկա (*endüstricilik ve teknikçilik*): Սակայն, եթե հաշվի առնենք ԱՇԿ-ի դավանած հիմնական գաղափարական ուղղությունը, կարելի է նշել, որ այն ներկայացնում է թուրքական ազգայնականության առավել ծայրահեղական՝ պանթյուրքիստական ուղղությունը: Ա. Թյուրքեշը իր «Հիմնական տեսակետներ» (*Temel Görüşler*) աշխատության մեջ նշում է, որ իրենց գլխավոր նպատակն է նախ հզորացնել Թուրքիան, իսկ հետագայում արդեն հզոր Թուրքիայի դրոշի տակ միավորել ամբողջ թյուրքական աշխարհը[6]: Պետք է նշել, որ տվյալ ժամանակաշրջանում թյուրքեշականների կողմից այդ ծրագրերի իրականացման որպես գլխավոր խոչընդոտ դիտվում էր կոմունիզմը:

1960-ական թթ. վերջերին Թյուրքեշի աջակցության տակ սկսեցին գործել «գաղափարապաշտների» (*ülkücüler*) կազմակերպությունները[7], որոնք, չմտնելով ԱՇԿ-ի կուսակցական համակարգի մեջ, սկսեցին ղեկավարվել և վերահսկվել վերջինիս կողմից[8]: «Գաղափարապաշտների» կազմակերպությունները մեծամասամբ բաղկացած էին երիտասարդներից և հիմնականում զբաղված էին պանթյուրքիստական գաղափարախոսության քարոզչությամբ ու տարածմամբ: «Գաղափարապաշտների» մեկնաբանությամբ «գաղափարապաշտ» լինել նշանակում է «ամեն ինչ զոհաբերել հանուն գաղափարի՝ կատարելով ոչ թե այն, ինչ տրամաբանությունն է հուշում, այլ այն՝ ինչ ղեկավարն է հրամայում», իսկ գլխավոր գաղափարը՝ Մեծ Թուրան պետության գաղափարն էր[9]: 1970-ականների ներգրավվելով ներքաղաքական պայքարի մեջ, «գաղափարապաշտների» կազմակերպությունները վերածվել էին հզոր մի բանակի, որոնք 1970-ական թթ. իրենց կազմում ունեին ավելի քան 100 հազար անդամ[10]:

Մանրամասն հյուսված ստորաբաժանակարգային ցանցը, որի մեջ մտնում էին թե՛ ԱՇԿ-ն, թե՛ «գաղափարապաշտների» կազմակերպությունները և թե՛ ԱՇԿ-ի վերահսկողության տակ գտնվող զինված գրոհային ջոկատները, անվանում են «գորշ գայլերի» (*bozkurtlar*) հասարակական-քաղաքական շարժում[11], իսկ Թյուրքեշի պանթյուրքիստական գաղափարախոսության բոլոր համակիրներն իրենց «գորշ գայլեր» են կոչում: «Գորշ գայլ», ինչպես նաև բաշբուղ (başbuğ բառացիորեն՝ առաջնորդ, այսպես էին անվանում Թյուրքեշին) եզրերը լայն գործածության մեջ դրեց Թյուրքեշը: Այդ եզրերն օգտագործվում էին նաև էնվերի կողմից[12]:

«Գորշ գայլերի» կազմավորմանը և հզորացմանը նպաստեցին արևմտյան երկրների գաղտնի ծառայությունները: Կան տեղեկություններ, որ 1960-ական թթ. ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) կողմից ՆԱՏՕ-ի անդամ երկրներում ստեղծվեցին «կոնտրգերիլյաների» (*Counter Guerrilla*-հակապարտիզանական) գաղտնի կազմակերպությունները, որոնց գլխավոր նպատակն էր «հակապարտիզանական» պայքար մղել ձախակողմյան շարժումների դեմ և «ամեն գնով» խոչընդոտել դրանց զարգացմանը[13]: Թուրքիայում «կոնտրգերիլյաների» գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվեց Հատուկ պատերազմի բաժինը (այսուհետև՝ ՀՊԲ, *Özel Harp Dairesi*), որը գաղտնի կառույց էր և գործում էր սկզբում ՄԻԹ-ի (*Milli İstihbarat Teşkilatı* - Ազգային հետախուզական կազմակերպություն), իսկ հետագայում՝ Գլխավոր շտաբի ենթակայության տակ[14]: Ընդհանուր թշնամու գործոնը՝ ի դեմս ձախակողմյան շարժումների, անխուսափելի էր դարձնում «գորշ գայլերի» և ՀՊԲ-ի համագործակցությունը: ՀՊԲ-ն «գորշ գայլերին» դիտում էր որպես միջոց՝ ձախակողմյան շարժումների դեմ պայքարելու համար՝ օգտագործելով նրանց այսպես կոչված «սև աշխատանք» կատարելու համար:

1960-ականների վերջին ՀՊԲ-ի օժանդակությամբ ստեղծվեցին «գորշ գայլերի» «կոմանդոսների» ճամբարները, որոնք կարևորագույն դեր խաղացին «գորշ գայլերի» հզորացման գործընթացում: Այդ ճամբարներում պատրաստություն էին անցնում «գորշ գայլերի» գրոհայինները՝ «կոմանդոսները», որտեղ նրանց վարժեցնում էին թե՛ ֆիզիկապես, թե՛ գաղափարապես և թե՛ հոգեպես: Հատուկ ուշադրություն էր դարձվում հատկապես «կոմանդոսների» գաղափարական պատրաստությանը՝ նրանցում մանրամասն սերմանելով պանթյուրքիստական գաղափարախոսություն: 1970-ական թթ. վերջերին Թուրքիայում 28 այդպիսի ճամբար կար[15]:

Այդպիսով, մինչև 1973թ. խորհրդարանական ընտրությունները վերջնականապես ձևավորվեցին «գորշ գայլերի» գաղափարախոսության և քաղաքական ուղղությունները: 1973թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում ԱՇԿ-ն ստացավ քվեների 3,38 % (3 պատ-

գամավորական մանդատ), ինչը կարծես չնչին արդյունք էր և ԱՇԿ-ն - պնդում է որ լուրջ ազդեցություն չունենար քաղաքական կյանքի հետագա ընթացքի վրա: Սակայն Ալփարսլան Թյուրքեշի ծրագրերն այլ էին :

Հզորացման ժամանակաշրջան

1974թ. ամռանը Կիպրոսում Թուրքիայի ռազմական գործողությունները, որի արդյունքում Կիպրոսի հյուսիսային հատվածն անցավ Թուրքիայի ազդեցության տակ, նոր հնարավորություններ առաջացրեցին իշխող կոալիցիայի դաշնակիցներ ժողովրդա-հանրապետական կուսակցության (հետայսու ԺՀԿ, *Cumhuriyet Halk Partisi*) նախագահ Բ. Էջևիթի և Ազգային փրկություն կուսակցության (այսուհետև՝ ԱՓԿ, *Milli Selamet Partisi*) նախագահ Ն. Էրբաքանի միջև. վերջինս գտնում էր, որ հարկավոր է ամբողջ կղզին գրավել, իսկ Էջևիթը դեմ էր նման գործողություններին՝ նշելով, որ այն միջազգային հանրության աչքն հնարավոր չի լինի հիմնավորել[16]: Էջևիթը, օգտվելով այն հանգամանքից, որ Կիպրոսի դեպքերը նպաստել էին ԺՀԿ-ի վարկանիշի կտրուկ աճին, փորձեց ձերբազատվել անցանկալի գործընկերոջից և հրաժարական տվեց՝ վաղաժամկետ ընտրություններ կազմակերպելու ակնկալիքով, որտեղ ԺՀԿ-ի բացարձակ հաղթանակը անխուսափելի էր թվում: Ձախակողմյան կուսակցության նմանօրինակ ծրագրերը անհանգստացրեցին, ոչ միայն աջ ուղղվածության կուսակցություններին, այլև լուրջ մտահոգություններ առաջացրեցին Թուրքիայի արևմտյան դաշնակիցների և Թուրքիայի արևմտականացման գլխավոր ջատագովի՝ թուրքական բանակի մոտ: Վերջիններիս «խրախուսմամբ» Ս. Դեմիրելին հաջողվեց իր շուրջը համախմբել խորհրդարանական որոշ ուժերի և ստանալ ձայների անհրաժեշտ քանակ՝ ԹԱՄԺ-ում մեծամասնություն ձևավորելու համար: Հակակոմունիստական ալիքի վրա ձևավորված Ազգայնական ճակատ (այսուհետև՝ ԱՃ, *Milliyetçi Cephe*) կոալիցիայում իր ուրույն տեղը չէր կարող չունենալ Թուրքիայում հակակոմունիստական պայքարի առաջամարտիկը՝ Ազգայնական շարժում կուսակցությունը:

«Գորշ գայլերի» ճակատագիրը կտրուկ փոխվեց 1970-ական թթ. կեսերից, երբ ԱՇԿ-ն 1975թ. «Ազգայնական ճակատ» իշխող կոալիցիայի մաս կազմեց, և Թյուրքեշը դարձավ փոխվարչապետ: Գտնվելով իշխանական կոալիցիայում՝ Ա. Թյուրքեշը առավելագույնս օգտագործեց իշխանական լծակներն իր կուսակցության հզորացման համար: Բաշբուղն ամեն կերպ աջակցում էր իր կուսակիցների՝ պետական մարմիններ ներթափանցմանը, որի արդյունքում 1970-ական թթ. կեսերից «գորշ գայլերը» հայտնվեցին պետական գրեթե բոլոր կառույցներում: Թյուրքեշը հատկապես խթանում էր «գորշ գայլերի» ուժային կառույցներ ներխուժման գործընթացը. «գորշ գայլերը» մեծ թվով ներթափանցեցին ոստիկանական համակարգ, բանակ և ՄԻԹ: Արդեն

1970-ական թթ. կեսերից ՄԻԹ-ի մի քանի վարչություններ Թյուրքեշի վերահսկողության տակ էին գտնվում[17]:

Այս ժամանակահատվածում վերջնականապես ձևավորվեցին «գորշ գայլերի» գրոհային ջոկատները: Նրանք ապահովվեցին զինամթերքով, որի զգալի մասն ստացվում էր Կիպրոսի հյուսիսային հատվածից[18]:

«Գորշ գայլերը», բավարար չհամարելով կոմունիստների դեմ (բոլոր ձախակողմյան շարժումները «գորշ գայլերի» կողմից որպես կոմունիստական էին դիտվում) կառավարության կողմից կազմակերպվող միջոցառումները, պայքարը դուրս բերեցին փողոց՝ փորձելով ահաբեկչական ու սադրիչ գործողություններով պայքարել ձախակողմյան շարժումների հզորացման դեմ:

1970-ական թթ. ահաբեկչությունը «գորշ գայլերի» գործունեության բաղկացուցիչ մասը դարձավ: Ահաբեկչական գործողության մասին որոշումն ընդունում էր ԴՊԲ-ն և ԱՇԿ-ի ղեկավար կազմը: Նախապատրաստվող ահաբեկչական գործողության հրահանգը բանավոր կերպով ստացվում էր ԱՇԿ-ի երիտասարդական բաժանմունքի կողմից, զենքը նախօրոք տրամադրում էին տեղական կազմակերպությունների ղեկավարները[19]: Իսկ ահաբեկիչների կորիզը կազմում էին «կոմանդոսները»:

Գտնվելով իշխանության հովանու ներքո՝ ահաբեկիչ «գորշ գայլերին» հաճախ հաջողվում էր խուսյ տալ քրեական պատասխանատվությունից, և այդ անպատժելիության մթնոլորտում էլ ավելի էր նպաստում ահաբեկչության ալիքի ընդլայնմանը[20]:

1975-77 թթ. «գորշ գայլերի» կազմակերպած ամենազանգվածային ահաբեկչական գործողությունը տեղի ունեցավ 1977թ. մայիսի 1-ին: Աշխատավորության մայիսմեկյան օրվա կապակցությամբ ձախակողմյան շարժումների կողմից Թաքսիմի հրապարակում կազմակերպված ցույցի ժամանակ «գորշ գայլերը» կազմակերպեցին ահաբեկչական ու սադրիչ գործողություններ, որի արդյունքում զոհվեց 34, վիրավորվեց 100-ից ավելի մարդ: Հատկանշական են տեղեկություններն այն մասին, որ ըստ էջևիթի՝ Թաքսիմի արյունոտ դեպքերի ետևում կանգնած էր Հատուկ պատերազմի բաժինը[21]:

1977թ. ԱՇԿ-ի կողմից ստեղծվեց ՄԻՍԿ-ը (*Milliyetçi İşçi Sendikaları Konfederasyonu*-Ազգայնական աշխատավորական արհմիությունների համադաշնություն)՝ որպես հակակշիռ ԴԻՍԿ-ի (*Devrimci İşçi Sendikaları Konfederasyonu*-Հեղափոխական աշխատավորական արհմիությունների համադաշնություն), որը խոշորագույն ձախակողմյան՝ արհմիությունների համադաշնություն էր: 1970-ական թթ. վերջերին ՄԻՍԿ-ն իր կազմում ուներ մոտ 65 հազար աշխատավորներ[22]:

1977թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում ԱՇԿ-ն ստացավ 16 պատգամավորական մանդատ: ԱՇԿ-ի նման հաջողու-

յունը (նախկին 3-ի փոխարեն 16 պատգամավորական մանդատ) հաստատելու է գալիս վերը նշված մեր այն պնդումը, որ ԱՃ կոալիցիայից առավելապես օգտվեց հատկապես Թյուրքեշի կուսակցությունը: Այդ հաջողությունն ԱՇԿ-ին հնարավորություն տվեց Ազգայնական ճակատի երկրորդ կառավարությունում (21 հուլիս 1977-05 հունվար 1978 թթ.) ավելի ամրապնդել իր դիրքերը: Սակայն ԱՃ-ի երկրորդ կառավարությունը գոյատևեց ընդամենը մի քանի ամիս:

1977թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արդարություն կուսակցության մի քանի անդամներ անցան ընդդիմադիր դաշտ, ինչը խախտեց ԹԱՄԺ-ում ուժերի հաստատված հարաբերակցությունը և 1977թ. դեկտեմբերին հանրապետական Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ ԹԱՄԺ-ն անվստահություն հայտնեց կառավարությանը, և Ազգայնական ճակատ կոալիցիոն կառավարությունը դադարեցրեց իր գործունեությունը: 1978 թ. հունվարի 5-ին ձևավորվեց Էջևիթի երրորդ կառավարությունը (05.01.1978 - 24.10.1979 թթ.), որից հետո «գորշ գայլերը» նոր մարտավարության անցան:

Պայքար հանուն իշխանության

Այս ժամանակաշրջանում «գորշ գայլերը» սկսեցին անմիջականորեն պայքարել իշխանությունը զավթելու համար: Դեռ 1977թ. հունիսի սկզբին ռազմական հեղաշրջում նախապատրաստելու համար բանակից հեռացվեցին ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Նամըք Քեմալ Էրսունը և ծայրահեղ աջ ուղղվածության մոտ 200 սպաներ: Էրսունի ձախողված հեղաշրջման նախաձեռնողն էր Ա. Թյուրքեշը[23]: Դավադրության տապալումը սակայն չընկճեց Թյուրքեշի՝ իշխանությունը զավթելու նկրտումները, ավելին 1978թ. սկսած Թյուրքեշը այդ գործընթացի մեջ ներգրավեց «կոմանդոսներին»՝ ներքաշելով այդ պայքարի մեջ իր վերահսկողության տակ գտնվող զրոհային ջոկատները:

1978թ. հունվարին Էջևիթի կառավարության կազմավորումից հետո «գորշ գայլերը» նոր մարտավարության անցան. եթե մինչ այդ «գորշ գայլերի» ահաբեկչական գործողությունները ուղղված էին ձախերի դեմ և նպատակ ունեին պառակտել ու թուլացնել ձախ շարժումը, ապա 1978թ. սկսած դրանք ձեռք բերեցին նոր որակական դրսևորումներ: «Գորշ գայլերը» ամեն կերպ փորձում էին իրենց ահաբեկչական ու սադրիչ գործողություններով այդ պայքարը դարձնել ավելի զանգվածային՝ նպատակ հետապնդելով ապակայունացնել երկրի ներքին դրությունը, ինչը թուլացնում էր Էջևիթի իշխանությունը՝ ևս մեկ անգամ ընդգծելով կառավարության սնանկությունը, և բերրի հող էր նախապատրաստում իշխանությունը զավթելու համար:

Վերը նշվածի վառ օրինակն է, որ միայն 1978թ. հունվար ամսին, այսինքն ԱՃ կոալիցիայի գործունեության դադարումից հետո առաջին ամսվա ընթացքում, ահաբեկիչների զոհ դարձավ 14, վիրավորվեց

75 մարդ[24], ինչն ահաբեկչության աննախադեպ աճ էր նախորդ ամիսների համեմատ:

1978թ. մարտի 16-ին «գորշ գայլերը» Ստամբուլի համալսարանի դիմաց կազմակերպեցին պայթյուն, որի հետևանքով զոհվեց 7, վիրավորվեց 41 ուսանող: Պայթյունն իրականացրած Չուքլուֆ Իսոքը, խոստովանել է, որ ահաբեկչության հրամանը բաշբուղն էր տվել, իսկ գործողությունը կազմակերպելու գործում նրան օգնել էին ոստիկանության որոշ աշխատակիցներ[25]: Դեպքից կարճ ժամանակ անց Իսոքը, զղջալով իր արարքի համար, փորձում է հանձնվել իրավապահ մարմիններին, ինչի համար և սպանվում է իր «գաղափարապաշտ ընկերների» կողմից[26]: Սույն օրինակը հստակ ցույց է տալիս, որ շատ երիտասարդներ, չգիտակցելով հնարավոր հետևանքները, մտնում էին այդ ահաբեկչական կազմակերպության մեջ և այլևս չէին կարողանում դուրս գալ այնտեղից. «գորշ գայլերի» համար հետադարձ ճանապարհ չկար: Այդ են վկայում նաև Թյուրքեշի հայտնի խոսքերը. «Խփեք, սպանեք բոլոր նրանց, ովքեր պայքարել են մեր նպատակի համար և հիմա երես են թեքում»[27]:

«Գորշ գայլերի» ահաբեկչությունն ուղղված էր հասարակության բոլոր շերտերի դեմ: Քննարկվող ժամանակահատվածում «գորշ գայլերը» պատասխանատու են դասախոսների (Օրհան Յավուզ, Ցումիթ Քաթանջըօղլու), հասարակական և քաղաքական գործիչների (ԴԻՍԿ-ի նախկին ղեկավար Քեմալ Թյուրքլեր), հարյուրավոր ուսանողների, լրագրողների («Միլլիյեթ» թերթի գլխավոր խմբագիր Աբդի Իփեքչի)[28] և բազմաթիվ այլ անմեղ մարդկանց սպանության համար:

Քահրամանմարաշում «գորշ գայլերի» կազմակերպած սադրիչ գործողությունների արդյունքում տեղի ունեցավ Թուրքիայի հանրապետական պատմության մեջ ամենազանգվածային բախումը երկրի սուննի և ալևի բնակչության միջև: 1978թ. դեկտեմբերին Քահրամանմարաշ քաղաքում գտնվող կինոթատրոններից մեկում «Արևը ե՞րբ է ծագելու» (*Güneş ne zaman doğacak?*) հակակոմունիստական ֆիլմի ցուցադրման ժամանակ «գորշ գայլերը» իրականացրեցին պայթյուն և դրանում մեղադրեցին ալևիներին, որոնք ավանդաբար սատարում են ձախերին: Հաջորդ մի քանի օրերին «գորշ գայլերը» կազմակերպեցին ևս մի քանի սադրիչ գործողություններ, որոնց արդյունքում բախումներ սկսվեցին ալևի և սուննի բնակչության միջև՝ դառնալով մոտ 100 մարդու մահվան պատճառ[29]:

Քահրամանմարաշի դեպքերից հետո երկրի 13 շրջաններում ռազմական դրություն մտցվեց, ինչը Քահրամանմարաշի հեղինակների գլխավոր նպատակն էր հանդիսանում: Արդեն 1978թ. սկսած Թյուրքեշն սկսել էր բացեիբաց խոսել բանակի ղեկավարության վրա իր ազդեցության տարածման մասին[30], իսկ ռազմական դրության իրավիճակում բանակը ակտիվ ներքաշվում էր քաղաքականության մեջ և ավելի դյուրին էր դառնում այս կամ այն քաղաքական հոսանքների տա-

րածումը նրա մեջ:

1970-ական թթ. վերջերին թուրքական բանակում մեծ թվով «գորշ գայլեր» հայտնվեցին: Թյուրքեշչականները հաճախ դիմում էին զինվորականներին. «մենք ձեզ նման ազգայնականներ ենք, իսկ հակառակ կողմում կոմունիստներն են»[31]:

ԱՇԿ-ի նախկին փոխնախագահ Ռըզա Մյուֆթյուօղլուն իր՝ 2000 թ.-ին հրատարակված «Մահակների զինվորները» (*Coplarin Askerleri*) գրքում նշում է, որ 1980թ. ռազմական հեղաշրջումից առաջ բանակում մի քանի խմբավորում կար, որոնցից մեկը գտնվում էր Ա. Թյուրքեշի ազդեցության ներքո[32]: Թյուրքեշը այդ խմբավորման միջոցով, որը ղեկավարում էր գեներալ Սուատ Իլհանը, ռազմական հեղաշրջում էր նախապատրաստում՝ երկրում ֆաշիստական դիկտատուրա հաստատելու նպատակով[33]: Եթե ավելացնենք նաև այն հանգամանքը, որ ըստ որոշ տվյալների «գորշ գայլերը» 1970-ական թթ. վերջին կարճ ժամանակահատվածում կարող էին մոբիլիզացնել մոտ 200 հազար զինված համակիրների[34], կարելի է եզրակացնել, որ իրավիճակի նմանօրինակ զարգացման պարագայում Թյուրքեշը իրական հնարավորություն կունենար իշխանությունը զավթելու համար: Սակայն զինվորականության հերթական միջամտությունը Թուրքիայի քաղաքական անցուդարձին խառնեցին Թյուրքեշի բոլոր խաղաթղթերը՝ ի չիք դարձնելով իշխանությունը զավթելու նրա մտադրությունը:

* * *

Այսպիսով, վերլուծելով «գորշ գայլերի» գործունեության հիմնական փուլերը 1960-70-ական թթ., կարելի է եզրակացնել, որ քննարկվող ժամանակահատվածում «գորշ գայլերը» իշխանությունը զավթելու նպատակաուղղված քաղաքականություն էին իրականացնում՝ երկրում ռազմական դիկտատուրա սահմանելու և իրենց պանթյուրքիստական քաղաքականությունը տարածելու նկրտումներով: Սակայն 1980թ. զինվորական հեղաշրջումը հերթական անգամ տապալեց Թյուրքեշի՝ իշխանությունը զավթելու դավադիր ծրագրերը:

1980թ. սեպտեմբերի 12-ին թուրքական բանակի ղեկավարությունը՝ Գլխավոր սպայակույտի պետ, գեներալ Ք. Էվրենի գլխավորությամբ երկրում ռազմական հեղաշրջում իրականացրեց: Թեև 1980թ. Ք. Էվրենի ռազմական հեղաշրջումը մեծ հարված հասցրեց «գորշ գայլերի» շարժմանը, այնուամենայնիվ այն վերջնական և մահացու չէր: Հեղաշրջման հեղինակները ամենևին էլ չէին ցանկանում ամբողջովին ջախջախել «գորշ գայլերի» շարժումը (ինչպես դա տեղի ունեցավ ձախակողմյան ծայրահեղական շարժումների դեպքում) և երբ «գորշ գայլերը» դադարեցին վտանգ ներկայացնել զինվորականների իշխանության համար, սկսեցին նորից օգտագործվել այդ նույն զինվորականության կողմից: Մասնավորապես «գորշ գայլերը» թուրքական պե-

տության կողմից ակտիվորեն օգտագործվում էին Քրդական աշխատավորական կուսակցության (*PKK*) և ԱՍԱԼԱ-ի դեմ պայքարում՝ «սև աշխատանք» կատարելու համար: Իսկ խորհրդային միության փլուզումը դեռ նոր հորիզոններ պիտի բացեր պանթյուրքիստ «գորշ գայլերի» գործունեության համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թեև Թուրքիայի խորհրդարանական վերջին ընտրությունների (2002 թ.) արդյունքում ԱՇԿ-ն, ստանալով ընտրողների ձայների 8,34 %, չկարողացավ հաղթահարել 10 %-ոց ընտրաշեմը և տեղ չունեցավ խորհրդարանում, այնուամենայնիվ ԱՇԿ-ն շարունակում է մնալ երկրի առաջատար և ազդեցիկ կուսակցությունների շարքում: 2004 թ. գարնանը կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ԱՇԿ-ն գրավեց երրորդ տեղը՝ զիջելով միայն ԱԶԿ-ին և ԺՀԿ-ին: Թուրքիայի ներքաղաքական գործընթացների մասին առավել մանրամասն տե՛ս Ճաքարյան Արտակ, Թուրքական խորհրդարանական ընտրությունների և կուսակցական համակարգի որոշ առանձնահատկությունների շուրջ. Համառոտ դիտարկում. – Տարածաշրջան, Երևան, 3 (7) 2006 թ., էջ 13-40:
2. Թերևս այս մասին կարող եք տեսնել՝ Р. Сафрастян. Возвращение "серых волков": Консервативная партия в политической жизни Турции (1983-1985 гг.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XXIII, Երևան 2004, էջ 254-276: Ավագյան Արսեն, Թուրք ազգայնականների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ., Հայկական Բանակ, 3 (49), 2006 թ., էջ 48-57:
3. Walter F. Weiker, The Turkish Revolution 1960-1961, Aspects of Military Politics, Washington, Brookings Institution, 1963, pp. 131-136.
4. Թյուրքեշը ազգայնականությամբ աչքի էր ընկել դեռ 1944 թ., երբ պանթյուրքիստական հայացքներ տարածելու համար դատական պատասխանատվության էր ենթարկվել: Տե՛ս http://www.ulkuocaklari.org.tr/basbug/basbug_hayati.htm.
5. ԱՇԿ-ի որոշ անդամներ հետագայում, չընդունելով կուսակցության չափազանց ազգայնականացումը, լքեցին կուսակցությունը: Տե՛ս Numan Esin, Devrim ve Demokrasi, Bir 27 Mayısçının Anıları, İstanbul, Doğan Kitapçılık, 2005, s. 243-253.
6. Alparslan Türkeş, Temel Görüşler, İstanbul 1975, s. 362-363.
7. Գաղափարապաշտների կազմակերպություններից էին ülkücü ocakları, ülkücü gençlik derneği այլն: Պատմագիտական գրականության մեջ մենք հաճախ հանդիպում ենք այդ կազմակերպությունների միասնական ուսումնասիրության: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ կազմակերպությունները ղեկավարվում էին մեկ կենտրոնից և զուրկ էին նախաձեռնողական գործունեությունից, մենք ևս հակված ենք այն ներկայացնելու միասնական ձևով, ինչը հնարավորություն կտա չկրկնել:
8. Սոնյա Բրամ & Մեհմեթ Ուլգեր, Գորշ գայլեր, Ահաբեկչություն թուրք ծայրահեղ աջակողմյանների մասին, Զանգակ-97, Երևան 2003, էջ 82:

9. Р. Сафрастян, Նշվ. աշխ., էջ 254-276:
10. Jacob M. Landau, The Nationalist Action Party in Turkey. Journal of Contemporary History, Vol. 17, No. 4. (Oct., 1982), pp. 587-606.
11. Р. Сафрастян, Նշվ. աշխ., էջ 254-276:
12. Hugh Poulton, Top Hat, Grey Wolf and Crescent, Turkish nationalism and the Turkish Republic, New York, New York University Press, 1997, p. 146.
13. M. A. Birand, H. Bilâ, R. Akar, 12 Eylül: Türkiye'nin Miladı, İstanbul, Doğan Kitapçılık, 1999,s. 49.
14. Ömer Kadri Karafakıoğlu, 12[th] September 1980 Military Intervention within Framework of Civilian-Military Relation, İstanbul 2004, p.19.
15. Аксененко А. Г., Борьба политических партий Турции за влияние на молодежь 1920-1980, М. 1986, стр. 78.
16. Ömer Kadri Karafakıoğlu, Նշվ. աշխ., p. 17.
17. Ertuğrul Alatlı, Müdahale 12 Mart 1971-12 Eylül 1980, İstanbul, Alfa Yayın., 2004, s. 165-167.
18. Soner Yalçın & Doğan Yurdakul, Gladio'nun Türk Tetikcisi, Ankara, Öteki Yay., 1998, s. 33.
19. Киреев Н. Г., Борьба с террором в Турции, Исламизм и экстремизм на Ближнем Востоке (сборник статей), М., 2001, Стр. 72-110.
20. Դումանյան Ա., Աջակողմյան ծայրահեղականների ակտիվացումը Թուրքիայում 1980 թ. ռազմական հեղաշրջման նախօրեին. – Մերձավոր Արևելք հ. 2, Երևան, 2005 թ., էջ 86:
21. M. A. Birand, Նշվ. աշխ., s 70-71.
22. Jacob M. Landau, Նշվ. աշխ., pp. 587-608.
23. Soner Yalçın & Doğan Yurdakul, "Bay-Pipo – Bir Mit Görevlisi'nin Sıradışı Yaşamı, Hiram Abas", Doğan Kitapçılık AŞ., İstanbul, 2000, s. 289-291.
24. Ertuğrul Alatlı, Նշվ. աշխ., s.258.
25. A. Dışbudak, Bombacı Kardeşimdi, - Milliyet, 2 Nisan 1996; Murat İnceoğlu,Yeniyüzyıl, 2 nisan 1996.
26. N. Alkan & E. Akkurt, Bombayı Kardeşim Attı, - Sabah, 2 Nisan 1996.
27. Սոնյա Բրաւմ & Դոգան Մեհմեր, Նշվ. աշխ., էջ 246.
28. 1979 թ. փետրվարի 1-ին Մեհմեթ Ալի Աղջայի կողմից սպանվեց Աբդի Իփեքչին: «Գորշ գայլ» Մեհմեթ Ալի Աղջան հասարակության լայն շրջանակներին հայտնի դարձավ Հռոմի Պապ Հովհաննես Պողոս Երկրորդի դեմ կատարած մահափորձից հետո: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Jeffrey M. Bale, The Ultranationalist Right in Turkey and the Attempted Assassination of Pope John Paul II. – The Turkish Studies Association Bulletin (Vol. 15, April 1991), no. 1, Indiana.
29. M. Ali Birand, 12 Eylül Saat: 04:00, İstanbul, Karacan Yay., 1984, s. 68.
30. Soner Yalçın & Doğan Yurdakul, Gladio'nun Türk Tetikcisi, Ankara, Öteki Yay 1998, s. 77-79.
31. M. Ali Birand, Նշվ. աշխ., s. 46.
32. Rıza Müftüoğlu, Copların Askerleri, Ankara, Ocak Yay., 2000, s. 18.
33. 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո ԱՇԿ-ի դեմ ընթացող դատական գործընթացում հաստատվեցին տեղեկությունները այն մասին, որ Թյուրքեշը 1970-ական թթ. վերջերին ռազմական հեղաշրջում էր նախապատ-

բանակում՝ երկրում ֆաշիստական դիկտատուրա հաստատելու նպատակով: Տե՛ս Турция между Европой и Азией, итоги европеизации на исходе XX века, М. 2001, стр 51.

34. Р. Сафрастян, նշվ. աշխ., էջ 254-276:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՐԴԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության շրջանակներում ընթացող բարեփոխումների տեսանկյունից առավել «զգայուն» են ընթանում երկրի զինվորական ու անվտանգության ոլորտին առնչվող բարեփոխումները, որոնք նպատակ ունեն սահմանափակել զինվորականության դերը հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում և հաստատել ժողովրդավարական վերահսկողություն անվտանգության ոլորտի նկատմամբ: Եվրամիությանը Թուրքիայի լիիրավ անդամակցության ճանապարհին թուրքական կառավարությունը սահմանադրական և օրենսդրական բարեփոխումների անցկացմանն ուղղված մի շարք քայլեր ձեռնարկեց, որոնք վերաբերում են քաղաքական համակարգի տարբեր ոլորտներին՝ մարդու իրավունքները, խոսքի ազատությունը, փոքրամասնությունների իրավունքներին առնչվող խնդիրները և այլն: Այս առումով առավել խնդրահարույց է հատկապես երկրի անվտանգության մարմինների նկատմամբ վերահսկողություն սահմանելու և 1960-ական թթ. արմատավորված քաղաքական իշխանություն-զինվորականություն կարծր հարաբերություններում բարեփոխումների ու դրանք կյանքի կոչելու ընթացքը[1]: Թուրքիայի անվտանգության համակարգի բարեփոխումներում առավել կարևոր և էական տեղաշարժեր են գրանցվել հատկապես այդ երկրի քաղաքական-զինվորական ոլորտի ամենաազդեցիկ մարմնի՝ Ազգային անվտանգության խորհրդի (այսուհետ ԹԱԱԽ, թուրք. Milli Güvenlik Kurulu) օրենսդրական ու կառուցվածքային բարեփոխումների տեսանկյունից, ուստի աշխատանքում կներկայացվեն այդ կարևոր հիմնախնդրին առնչվող զարգացումները: Ակնհայտ է, որ ԹԱԱԽ-ի միջոցով քաղաքական համակարգում արտոնյալ ազդեցության լծակներ ունեցող զինվորականության դերը չէր համապատասխանում «ժողովրդավարությունը երաշխավորող կառույցների կայունության» և «օրենքի գերակայության» Կոպենհագենյան չափանիշներին[2]: Ուստի հենց զինվորականության ու անվտանգության համակարգում կատարվելիք բարեփոխումները դրվեցին որպես առաջնային նախապայման Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության ճանապարհին:

Այն բանից հետո, երբ երկրի զինվորական վերնախավը 1960թ. հեղաշրջման ճանապարհով իր ձեռքը վերցրեց ողջ իշխանությունը, որպես հաջորդ քայլ ստեղծվեց արդեն օրինական, Սահմանադրությամբ ամրագրված ներկայիս ԹԱԱԽ-ը, որի միջոցով էլ հետագայում իրականացվում էր զինվորականության իշխանությունը երկրում[3]: Դա էլ դարձավ գործնական այն մեխանիզմը, որով զինվորական վերնախա-

վը, հատկապես ԶՈՒ գլխավոր շտաբի պետը, «ամրագրեցին իրենց առաջատար և անվիճարկելի դերը» քաղաքական համակարգում: 1961թ. ընդունված Սահմանադրությունը հիմք դրեց այսպես կոչված «երկգլխանի քաղաքական համակարգին. որպես գործադիր մարմին ԹԱԱԽ-ի հետ գոյակցող Նախարարների խորհուրդ և քաղաքացիական արդարադատության հետ կողք կողքի անկախորեն գործող ռազմական արդարադատություն», ինչն էլ մշտապես վնաս հասցրեց երկրի քաղաքական կառավարմանը[4]: 1960թ. իրադարձություններից հետո արմատավորվեց զինվորականության՝ երկրի անխախտական ու անվտանգ պահապանի դերը թե քաղաքական ավանդույթում, թե հասարակական ընկալման համատեքստում: Եվ որպես դրա հիմնավորում զինվորական վերնախավը առաջադրեց քաղաքական իշխանության նկատմամբ իր անվստահությունը՝ երկրի առջև ծառացած խնդիրները լուծելու և անվտանգությանը սպառնացող մարտահրավերներին դիմակայելու անկարողությունից ելնելով[5], ինչն էլ հետագայում ԹԱԱԽ-ի որոշումներով ու գործուն միջամտությամբ հանգեցրեց մի շարք հեղաշրջումների ու իշխանափոխությունների: Երկրի քաղաքական գործընթացներում զինվորականության, այդ թվում ԹԱԱԽ-ի, դերի կողմնակիցները զինվորականությանը դիտում էին որպես «քաղաքական չափավորության ամրոց և քաղաքական կայունության կայուն ձեռք»[6]: Հետագայում, ինչպես նկատել է դանիացի հետազոտող Բերտիլ Կնուդսենը, 1971թ. իշխանափոխության իրադարձությունները էլ ավելի ուժ հաղորդեցին ԹԱԱԽ-ին՝ որպես «թուրքական քաղաքականության նկատմամբ կոշտ հսկողության միջոց»[7]:

ԹԱԱԽ-ի լիազորությունների ընդլայնումն ու կառուցվածքային փոփոխություններն էլ ավելի նշանակալից եղան 1980թ. սեպտեմբերյան ռազմական հեղաշրջումից հետո, երբ փաստորեն, այդ մարմինն իր ձեռքը վերցրեց երկրի ողջ կառավարումը: Նախքան իշխանությունը քաղաքական գործիչներին հանձնելը, զինվորական վերնախավն անմիջապես ձեռնամուխ եղավ սահմանադրական ու օրենսդրական փոփոխությունների իրականացմանը: 1982թ. ընդունված թուրքական նոր Սահմանադրության 118-րդ հոդվածին համապատասխան, ԹԱԱԽ-ի մասին նոր օրենք ընդունվեց, որով վերակազմավորվեց այդ կառույցը՝ ստանալով ավելի լայն լիազորություններ: Նախ խորհրդում ավելացվեց ուժային, զինվորական անդամների թիվը, ինչը բնականաբար մեծացրեց զինվորականության ազդեցությունն ու վերահսկողությունը որոշումների ընդունման նկատմամբ: ԹԱԱԽ-ի մասին 1983թ. օրենքը նախատեսում էր Նախարարների խորհրդի օրակարգում անվտանգության խորհրդի որոշումների «առաջնահերթորեն ուշադրության առնելու» դրույթը,[8] ինչն էլ հետագայում վերածվեց անվերապահորեն դրանց հետևելու ավանդույթի: Նույն այդ օրենքով ստեղծվեց ԶՈՒ գլխավոր շտաբի պետի վերահսկողության տակ գտնվող լայն լիազորություններով օժտված և անձնակազմային հնարավորություններ ու-

նեցող քաղաքացիություն[9]:

Այսպիսով, ազգային պաշտպանության, անվտանգության ապահովման նպատակով ստեղծված ԹԱԱԽ-ն, ունենալով լայն լիազորություններ, տարիների ընթացքում դարձավ որպես քաղաքական վարչակազմի և ընդհանրապես պետական-քաղաքական գործընթացների նկատմամբ զինվորական վերահսկողության վերադաս մարմին:

Թուրքական կառավարությունը, 2002թ. նոյեմբերին կայացած ընտրություններում ԹԱՄԺ-ում մեծամասնություն կազմած Արդարություն և զարգացում կուսակցության գլխավորությամբ, ձեռնամուխ եղավ զինվորական-քաղաքական հարաբերությունները և անվտանգության մարմինները ԵՄ կողմից առաջադրված չափանիշներին մոտեցնելու գործընթացի իրականացմանը: Անվտանգության ոլորտի ժողովրդավարացումը ենթադրում է զինվորականության դերի սահմանափակում երկրի հասարակական-քաղաքական գործընթացներում, և դա էր պատճառը, որ այդ բարեփոխումների նկատմամբ որոշակի անվստահություն և նույնիսկ անհանդուրժողականություն էր նկատվում: Բարեփոխումների այդ գործընթացը մեկնաբանվում էր նույնիսկ դժվարամատչելի, քանի որ դրանք նախաձեռնվել են իսլամական արմատներ ունեցող և զինվորական վերնախավի կողմից վստահություն չվայելող քաղաքական ուժի՝ ԱԶԿ-ի կողմից[10]: Սակայն պետք է նկատել, որ կառավարությունը և հատկապես իշխող կուսակցությունն առանց զինվորական վերնախավի հետ համաձայնության չէր կարող ձեռնարկել բարեփոխումների բուն գործընթացը: Ուստի իր հոդվածում ճիշտ է նկատում թուրք հետազոտող Էրսել Այդինլին, ըստ որի Անկարան չէր համաձայնվի գնալ բարեփոխումների առանց զինվորականության համաձայնության և աջակցության, քանի որ հենց զինվորականությունը ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը դիտում են որպես երկրի «արդիականացման» վերջնակետ[11]: Մեկ այլ թուրք հետազոտող՝ Ումեր Չաղափթայը, որպես իշխանությունների ու զինվորականության միջև համաձայնության ապացույց նշում է ԹԱԱԽ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում մեկ տարի ժամկետով բարձրաստիճան զինվորականի նշանակումը, չնայած, որ արդեն գործում էր քաղաքացիական անձ նշանակելու նոր բարեփոխված կարգը[12]: Այս առումով առավել բնութագրիչ է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի այն հիմնավորումները ԵՄ ներկայացուցիչներին, թե Թուրքիայի արդիականացման գործընթացը առաջ է տանում հենց երկրի զինվորականությունը[13]:

Թուրքիայի անվտանգության համակարգի ժողովրդավարացման առումով կարևոր ազդակ հանդիսացավ 1999թ. Հելսինկյան գագաթաժողովը, ինչին հաջորդեցին որոշ բարեփոխումներ այդ ոլորտում: Առաջին հիմնական փոփոխությունը կատարվեց Սահմանադրության 118-րդ հոդվածում, որով ԹԱԱԽ-ն դարձավ սահմանադրական հաստատություն: 2001թ. հոկտեմբերին կատարված այդ փոփո-

խություններով խորհրդի անդամների մեծ մասը ներկայացնում են կառավարության, այլ ոչ թե զինվորականության հատվածը: Խորհրդի ներկայացրած որոշումները կրում են խորհրդատվական բնույթ, և նախկինի նման չեն ենթադրում նախարարների խորհուրդ վերցնել դրանք «առաջնահերթ քննարկման»[14]: Որոշակի այդ բարեփոխումներով հանդերձ, այնուամենայնիվ ԹԱԱԽ-ի կառուցվածքային, կադրային առանձնահատկությունները ու գործունեության կարգի, պարտավորությունների ու լիազորությունների շրջանակը չէին համապատասխանում ԵՄ առաջադրած չափանիշներին, ուստի թուրքական խորհրդարանի ընդունած «բարեփոխումների 7-րդ փաթեթը» եկավ լրացնելու այդ բացը: 2003թ. հուլիսին Թուրքիայի Ազգային Մեծ ժողովը (այսուհետ՝ ԹԱՄԺ) ընդունեց եվրամիության անդամակցության ճանապարհին նախապայման համարվող այսպես կոչված «բարեփոխումների 7-րդ փաթեթը», որը ԹԱԱԽ-ի բարեփոխումների միջոցով պետք է սահմանափակի զինվորականության դերը երկրի քաղաքական կյանքում, ինչն էլ որոշ հեղինակների թույլ տվեց դա բնորոշել որպես «թավշյա հեղափոխություն»[15]: Որոշ վերլուծաբաններ էլ նույնիսկ դա գնահատեցին որպես իշխող Արդարություն և զարգացում կուսակցության փոքր հաղթանակ զինվորականության դեմ պայքարում[16]: Այդ բարեփոխումները էական նշանակություն ունեցան հատկապես խորհրդի պարտավորությունների ու լիազորությունների սահմանափակման, ինչպես նաև կառուցվածքային-կազմակերպչական վերափոխումների առումով:

Առաջին քայլը 2003թ. օգոստոսին Սահմանադրությանը համապատասխանեցնելու նպատակով Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի ու խորհրդի գլխավոր քարտուղարության մասին օրենքում կատարված փոփոխություններն էին: Այդ փոփոխություններով զգալիորեն նվազեցվեց ԹԱԱԽ-ի լիազորությունները ու ազդեցության շրջանակները: Ըստ բարեփոխված օրենքի՝ ԹԱԱԽ-ի գլխավոր քարտուղարին պաշտոնում նշանակում է վարչապետը, ինչը ենթադրում է նաև այդ պաշտոնում ոչ զինվորականի նշանակում: Ի տարբերություն նախկին ամսեկան մեկ անգամ նիստ գումարելու, այսուհետ խորհրդի նիստերը գումարվելու են 2 ամիսը մեկ անգամ[17]:

ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության առաջընթացի վերաբերյալ 2003թ. կանոնավոր զեկույցում ընդգծվում էր, որ ընթացող բարեփոխումները արմատական փոփոխություններ են ի հայտ բերում ԹԱԱԽ-ի լիազորությունների, պարտավորությունների ու գործունեության կազմակերպչական առումով, մասնավորապես խորհրդի մասին օրենքում կատարված փոփոխությունները զգալիորեն նվազեցնում են խորհրդի գլխավոր քարտուղարի լայն գործադիր ու վերահսկողական իշխանությունը: Հատկապես գլխավոր քարտուղարն այսուհետ չի կարող երկրի նախագահի կամ վարչապետի անունից հետևել խորհրդի

հանձնարարականների իրականացմանը[18]: Գլխավոր քարտուղարի լիազորությունների սահմանափակման առումով կարևոր քայլ էր հատկապես քարտուղարության պարտականություններն ու աշխատանքային սկզբունքներն ամրագրող «գաղտնի կարգի» վերացումը, ինչը նախկինում հնարավորություն էր տալիս խորհրդի գլխավոր քարտուղարությանը գործել որպես «ինքնավար գործադիր իշխանություն»: Նախկինի փոխարեն, կառավարության նոր ընդունած կարգի համաձայն, խստացվեցին քարտուղարության և շտաբի միջև գործող կապերն ու լիազորությունների շրջանակը: Բացի այդ վերացվեցին միջանկյալ ծառայություն իրականացնող մի քանի ստորաբաժանումներ և դրանց թիվը 11-ի փոխարեն հասցվեց 6-ի: Վերացված ստորաբաժանումների շարքում էր Հասարակության հետ կապերի նախագահությունը, որը պատասխանատու էր հոգեբանական գործողությունների իրականացման համար[19]:

Կատարված բարեփոխումներով նվազեցվեց նաև ԹԱԱԽ-ի ազդեցությունը հասարակական-քաղաքացիական տարբեր հաստատությունների նկատմամբ՝ սահմանափակելով խորհրդի միջամտությունը այդ ծառայությունների գործերում: Վերացվեցին կինոյի, վիդեոյի և երաժշտության վերահսկողության վարչությունում խորհրդի ներկայացուցչությունները, չնայած այն ներկայացված էր Հեռուստատեսության և ռադիոյի բարձրագույն վարչությունում և Բարձրագույն կրթության հանձնաժողովում[20]: 2003թ. եվրահանձնաժողովի սուր քննադատությունից հետո 2004թ. հանվեցին այդ հաստատություններում գտնվող խորհրդի ներկայացուցիչները[21]:

ԹԱԱԽ-ի և ընդհանրապես քաղաքական զինվորական հարաբերություններում ժողովրդավարական չափանիշների արմատավորման առումով զգալի առաջընթաց էր 2004թ. խորհրդի գլխավոր քարտուղարի պաշտոնում ոչ թե զինվորականի, այլ քաղաքացիական պաշտոնյայի նշանակումը[22]: Խորհրդի գլխավոր քարտուղարին իր պաշտոնում վարչապետի ներկայացրած թեկնածուների ցուցակից հաստատում է երկրի նախագահը, և այդ պաշտոնում վարչապետը կարող է առաջադրել քաղաքացիական անձի, ինչը թույլ կտա ոչ զինվորական վերահսկողություն իրականացնել քարտուղարության և ԹԱԱԽ-ի օրակարգի նկատմամբ[23]: Բացի այդ քարտուղարությունում աշխատող զինվորականների թիվը զգալիորեն կրճատվեց՝ հասցվելով 15-ի (294 աշխատողներից միայն 15-ն են զինվորական)[24]: Նախկինում որպես զինվորական մարմին՝ գլխավոր քարտուղարության մշտական աշխատակազմը բաղկացած էր շուրջ 350 գործող կամ թոշակառու զինվորականներից և ղեկավարվում էր ԶՈՒ գլխավոր շտաբի պետի կողմից նշանակված զինվորականի կողմից: Չնայած առանձին բանակային հրամանատարները հաշվի են առնվում ԹԱԱԽ-ի կողմից, այնուամենայնիվ որպես զինվորական՝ խորհրդի մշտական անդամ է մնում ԶՈՒ գլխավոր շտաբի պետը[25]: ԹԱԱԽ-ի ապառազմականացման և ժողովր-

ղավարացման ճանապարհին առաջընթաց քայլ համարվեց նաև խորհրդի գլխավոր քարտուղարի 2 գլխավոր խորհրդականների պաշտոնում դիվանագետների նշանակումը, ինչպես նաև այն, որ 2005թ. չվերականգնվեց քարտուղարությունում աշխատող, արդեն պաշտոնավարման ժամկետները լրացած 20 զինվորականների պայմանագրերը[26]:

Այժմ ԹԱԱԽ գլխավոր քարտուղարությունը կարող է միջոցներ ծախսել միայն վարչապետի նախաձեռնությամբ: Այն համակարգելու է խորհրդի աշխատանքը և իրականացնելու խորհրդի և դատական համակարգի առաջադրած խնդիրները: Բացի այդ, վարչապետի օգնականը իրավունք է ստանում հետևել խորհրդի որոշումների իրականացմանը[27]: ԹԱԱԽ և գլխավոր քարտուղարության մասին օրենքի 4-րդ հոդվածում 2003թ. օգոստոսին կատարված փոփոխություններով՝ վարչապետը կարող է իր օգնականին հանձնարարել, որպեսզի նա նախարարների խորհրդին ներկայացնի ԹԱԱԽ-ի խորհրդակցական որոշումներն ու տեսակետները, ինչպես նաև համակարգի և հետևի հավանության արժանացած որոշումների կատարման ընթացքին նախարարների խորհրդի կողմից[28]: Զինվորական գերակշռությամբ գործադիր իշխանություն իրականացնող այդ մարմինը ստացավ ավելի շատ խորհրդակցական կառույցի բնույթ, որը պետք է խորհրդատվական որոշումներով օժանդակություն ցույց տա նախարարների խորհրդին ու վարչապետի աշխատակազմին: Ինչպես նշել է ԹԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնը ստանձնած առաջին քաղաքացիական պաշտոնյան, կադրային դիվանագետ Յիղիթ Ալփողանն իր ասուլիսում՝ «խորհրդի գործառույթները հանձնվել են, և այն այժմ այն ոչ թե գործադիր, այլ խորհրդակցական մարմին է»: Ըստ նրա՝ արդեն Թուրքիայում հաստատված է զինվորականության և քաղաքական իշխանության կարգավիճակը, ինչով էլ երկիրը հավասարվում է մնում ԵՄ չափանիշներին և, եթե չլինեին բարեփոխումները, ԵՄ անդամության ճանապարհին առաջընթաց չէր գրանցվի[29]:

Կատարված բարեփոխումների համատեքստում՝ առավել ակնհայտ էր 2005 թ. հոկտեմբերի 24-ին Թուրքիայի ազգային անվտանգության հայեցակարգի (թուրք. Milli Güvenlik Siyaset Belgesi) մշակման գործընթացում քաղաքական իշխանությունների ներգրավվածությունը և դրա հաստատման ընթացքում կառավարական մասի դերը: Իշխող Արդարություն և զարգացում կուսակցության գլխավորությամբ կազմված կառավարությունն ակնհայտ կերպով ցուցադրում էր փաստաթղթի մշակման գործում իր առանձնաշնորհը՝ դրանով իսկ ընդգծելով ոչ թե զինվորականների, այլ քաղաքացիական իշխանությունների առաջնությունը, ինչը նույնպես համապատասխանում է երկրի քաղաքական կյանքում զինվորականության դերի կրճատման ԵՄ պահանջներին[30]: Նախկինում անվտանգության հայեցակարգի մշակման ու հաստատման ողջ ընթացակարգը եղել է բացառապես ԹԱԱԽ-

ի գլխավորությամբ զինվորական վերնախավի առանձնաշնորհը:

Կատարված այս բարեփոխումները դրականորեն գնահատվելով ԵՄ կողմից, այնուամենայնիվ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության առաջընթացի վերաբերյալ ինչպես 2003թ., այնպես էլ 2004թ. կանոնավոր զեկույցներում ընդգծվում էր, որ «դեռևս երկրի զինվորականությունը պահպանում և գործադրում է իր ազդեցությունը տարբեր ոչ պաշտոնական մեխանիզմների միջոցով. տարբեր դեպքերի առնչությամբ ԹԱԱԽ զինվորական անդամները պաշտոնական հայտարարություններում, հրապարակային ելույթներում, լրատվամիջոցներում արտահայտում են իրենց տեսակետները սոցիալ-քաղաքական և արտաքին քաղաքականության խնդիրների վերաբերյալ»[31]:

2004թ. զեկույցում նաև նշվում էր, որ օրենսդրական և ինստիտուցիոնալ ոլորտի բարեփոխումներից բացի, քաղաքական իշխանությունները պետք է իրականում գործադրեն իրենց վերահսկողական գործառույթները հատկապես ազգային անվտանգության ռազմավարության ձևակերպման ու իրականացման, մասնավորապես հարևան երկրների հետ հարաբերությունների պլանում, ինչպես նաև ռազմական բյուջեի վերահսկման առնչությամբ[32]:

Չնայած ԹԱԱԽ-ի հետ կապված օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին, Թուրքիայի զինվորական վերնախավը շարունակում է պահպանել իր առաջատար դերը երկրի ներքին և արտաքին քաղաքական գործընթացներում: ԵՄ-ն, կատարված բարեփոխումները դրականորեն գնահատելով, ինչևէ, առավել էական է համարում դրանց գործնականում կատարելու և քաղաք-քաղաքականության հարաբերությունները կարգավորելու և ժողովրդավարացնելու հնարավորությունը:

Թուրքիայի ներքին և արտաքին, տարածաշրջանային հիմնախնդիրների վերաբերյալ դիրքորոշումներն ու քաղաքական ուղեգծի հստակեցումը ավանդաբար եղել են ոչ թե քաղաքական իշխանությունների, այլ զինվորական վերնախավի իրավասության ներքո, և մի շարք հիմնախնդիրների առկայությունը, որոնք զինվորականությունը դիտում է որպես Թուրքիային սպառնացող մարտահրավերներ, ուղղակի հնարավորություն չեն տա նրանց քաղաքականության առաջնային գծից հեռանալ ետնաբեմ: Բացի այդ, ԱԶԿ իսլամամետ կուսակցության իշխանության գալուց հետո քաղաքական իշխանությունների ու զինվորական վերնախավի միջև ձևավորվեցին վստահություն չվայելող լարված հարաբերություններ, ինչի վկայությունը կարող է լինել զինվորականության կողմից Էրդողանի կառավարությանը երկրում հետադիմականության աճի մեղադրանքով մի քանի անգամ զգուշացումներն ու զգոնության կոչերը: Հատկապես առավել կտրուկ և սուր բնույթ էին կրում Թուրքիայի ԶՈՒ գլխավոր շտաբի նորանշանակ պետ Յաշար Բյույուքանըթի Թուրքիայում գլուխ բարձրացնող հետադիմականության և ամեն գնով դրան խոչընդոտելու անհրաժեշտության մա-

սին արված կոշտ հայտարարություններն ու զգուշացումները[33]: Երկրի քաղաքական գործընթացներում զինվորականության միջամտության առնչությամբ ԵՄ ներկայացուցիչների արված հայտարարություններից հետո, Թուրքիայի բարձրաստիճան զինվորականները, և հատկապես ԶՈՒ գլխավոր շտաբի պետը առավել կտրուկ հակազդեցին՝ ընդգծելով, որ իրենք հակված են Թուրքիայի ԵՄ անդամակցության ջանքերի պաշտպանմանը, սակայն, հաստատելով, որ բանակն իրավունք ունի իր խոսքն ասել ազգային անվտանգության և երկրի աշխարհիկ կարգերի պահպանության առնչությամբ[34]:

Այսպիսով, բարեփոխումների առումով առավել էական և խնդրահարույց է դառնում դրանք իրականում գործնական ոլորտում կիրառելու խնդիրը, ինչը նման զարգացումների պայմաններում այնքան էլ իրատեսական չի կարող լինել, եթե նկատի առնենք նաև արտաքին և տարածաշրջանային հիմնախնդիրների առկայությունը, որոնց նկատմամբ զինվորականությունն ունի ավելի կոշտ դիրքորոշում, քան քաղաքական իշխանությունները: Ուստի անվտանգության ոլորտի բարեփոխումները դեռ երկար ընթացք կունենան, ինչն էլ ներքին և արտաքին նոր զարգացումների կարող է տանել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Barak Salmoni, Turkey's Summer 2003 Legislative Reforms: EU Avalanche, Civil-Military Revolution, or Islamist Assertion?, Strategic Insight, Vol.3, issue 9 (Sept.2003),www.ccc.nps.navy.mil.
2. Bertil Videt Knudsen, The role of the military in Turkish politics, Copenhagen Un.,Jan. 2005, www.videt.dk/milidsty.pdf, p. 12.
3. Удо Штайнбах, История Турции, Москва, 2006 г., стр.181.
4. Bertil V. Knudsen, Նշվ.աշխ., էջ 7:
5. Mehmet Ali Birand, Shirts of Steel, An Anatomy of the Turkish Armed Forces, London-New York, 1991, p. 79
6. Barak Salmoni, Նշվ.աշխ.:
7. Bertil V. Knudsen, Նշվ.աշխ., էջ 8:
8. ԹԱԱԽ պաշտոնական կայք. www.mgk.gov.tr.
9. Almanak Turkiye 2005, Güvenlik Sektoru ve Demokratik Gözetim, Tesev Güvenlik Sektoru Calişmaları Dizisi Özel Yayın- 2006, www.tesev.org.tr, p. 33.
10. Bertil V. Knudsen, Նշվ.աշխ., էջ 12:
11. Ersel Aydinli, Nihat Ali Özcan, Dogan Akyaz, The Turkish Military's March Toward Europe, *Foreign Affairs*, January/February 2006, www.foreignaffairs.org/20060101faessay85108/ersel-aydinli-nihat-ali-ozcan-dogan-akyaz/the-turkish-military-s-march-toward-europe.html.
12. Soner Cagaptay, European Union Reforms Diminish the Role of the Turkish Military: Ankara Knocking on Brussels' Door, The Washington Institute of Near East Policy, PolicyWatch#781, August 12, 2003, www.ciaonet.org/pbei/winep/policy_2003/2003_781.html.
13. www.hri.org/news/turkey/trkpr/2003/03-06-06.trkpr.html#07.
14. Türkiye Cumhuriyeti Anayasası, Yasa Kitapları Dizisi:1, İstanbul, 2003, s. 78.
15. Recent reforms in the National Security Council, www.wikipedia.org.
16. Justus Leicht, Turkey: Reform limits some military powers; www.wsws.org/articles/2003/aug2003/turk-a19.shtml.
17. Almanak Türkiye 2005, Նշվ.աշխ. էջ 33-34:
18. 2003 regular report on Turkey,s progress toward EU accession, www.ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2003/rr_tk_final_en.pdf.
19. Almanak Turkiye 2005, Նշվ.աշխ. էջ 34:
20. 2003 regular report on Turkey,s progress toward EU accession.
21. Bertil V. Knudsen, Նշվ.աշխ., էջ 13.
22. Turkey puts civilian over its National Security Council, reduce role, www.worldtribune.com, Dec. 3, 2004.
23. Barak Salmoni, Նշվ. աշխ.
24. Turkey puts civilian over its National Security Council, Նշվ. աշխ.:
25. Barak Salmoni, Նշվ. աշխ.:
26. Almanak Turkiye 2005, Նշվ.աշխ. էջ 43:
27. Justus Leicht, Նշվ. աշխ.:

28. ԹԱԱԽ և զինվոր քաղաքացիության մասին օրենքը տես՝ www.mgk.gov.tr.
29. Turkey puts civilian over its National Security Council, նշվ. աշխ.։
30. А.Гурьев, Новая концепция национальной безопасности Турции; www.noravank.am, 2005-11-17.
31. 2003 regular report on Turkey,s progress toward EU accession, 2004 regular report on Turkey,s progress toward EU accession; Commission of the European Communities Brussels, 06.10.2004, p.23, www.foreigntrade.gov.tr.
32. 2004 regular report on Turkey,s progress toward EU accession, p.23.
33. Anadolu Ajansi, 02.10.2006, www.aa.com.tr.
34. Turkish army rejects EU criticism of political meddling, www.turkishpress.com, 02.10.2006.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՒՄԸ ԵՎ ԷԹԻԿԱՆ
(թուրքական ազգային պետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո)

Ուրացումը դարձել է ցեղասպանությունների բնորոշ հատկանիշներից մեկը: 20-րդ դ. 70-80-ական թթ. սկսած այն դառնում է գիտնականների հատուկ ուսումնասիրության առարկա և ցեղասպանագիտության ենթաճյուղերից մեկը: Այս առումով առանձնակի տեղ է զբաղեցնում հայոց ցեղասպանության ուրացումը, որը հանդես է գալիս որպես Թուրքիայի պաշտոնական քաղաքականություն[1]: Շատ մասնագետներ անվանում են Թուրքիայի հայոց ցեղասպանության ժխտումը բյուրոկրատացված, ինստիտուցիոնալ ուրացում, որը դարձել է այդ երկրի քաղաքական «իսթեբլիշմենթ»-ի և արտաքին քաղաքականության կարևոր գծերից մեկը[2]: Ավելին, 2000թ. աշնանը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստում որոշում ընդունվեց այն մասին, որ Հայոց ցեղասպանության հետ կապված խնդիրը այսուհետ համարվում է ազգային անվտանգության խնդիր[3]: Թուրք լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդի բնորոշմամբ «հայկական ցունամիին» հակազդելու փորձերը առավել ակտիվացան 2005թ., Հայոց ցեղասպանության հիշատակի 90-ամյա տարելիցի և, հատկապես, Թուրքիա-Եվրամիություն փոխհարաբերությունների հետ կապված[4]:

Քանի որ տասնամյակներ շարունակ այդ ժխտման գործընթացի սլաքը հիմնականում ուղղված է եղել դեպի արտաքին աշխարհ, շատ հետազոտողներ փորձել են բացատրել այն որպես Թուրքիայի իր «մոդեռնիզացված իմիջը» պահպանելուն ուղղված ջանքեր: Թուրքիայի ներսում բացակայել է նման թեմաների շուրջ ազատ քննարկման ավանդույթը: Բայց այնուամենայնիվ, վերջին տասնամյակում այդ «ավանդույթը» խախտվեց, և հիմա արդեն նշված գործընթացի սլաքներից մեկը պետք է ուղղված լինի դեպի երկրի ներսը: Ի դեմս մի շարք պատմաբանների, գրողների, լրագրողների (Թաներ Աքչամ, Օրհան Փամուկ, Բասքըն Օրան, Հրանտ Դինք և այլոք) թուրք պաշտոնական տեսակետը այս հարցում լուրջ ընդդիմախոսներ է ձեռք բերել: Սակայն ուրացումը և ժխտողականությունը շարունակում են մնալ գերիշխող պաշտոնական և հասարակական տեսակետ: Թե՛ օտարազգի և թե՛ որոշ թուրք հետազոտողներ (Իվ Թերնոն, Թաներ Աքչամ) թուրքական այդ «ուրացման սինդրոմի» բացատրությունը փնտրում և գտնում են ավելի խորքային երևույթներում, քան պարզ ցանկությունը՝ պահպանել իր «իմիջը»: Ինչպես արդարացիորեն նշում են նրանք՝ դրա հիմքերը թաքնված են թուրք ազգային ինքնության և Թուրքիայի հանրապետության ստեղծման յուրահատկությունների մեջ[5]:

Ըստ նրանց, Թուրքիայի հանրապետության հիմնադիրը՝ Քեմալ Աթաթուրքը փորձում էր ներկայացնել իր երկիրը, որպես նոր, անցյալից ձերբազատված, մի երկիր, որ կարծես զրոյից է սկիզբ առնում: Թուրք ինքնության քեմալական մեկնաբանության մեջ անտեսվում էր այն փաստը, որ պատմությունը հարատևություն է, այն չի կարելի սկսել նոր, մաքուր էջից: Համաձայն այդ մեկնաբանության, թուրք ինքնության հիմնասյուներից մեկը նրա՝ «հակաիմպերիալիստական» պայքարում հաղթանակած հանրապետության ստեղծումն է: Թաներ Աքչամի կարծիքով, իրականում այդ պետությունը ստեղծվել է ոչ թե որպես իմպերիալիստ ուժերի դեմ հաղթանակի արդյունք, այլ որպես կայսրության հայ և հույն հպատակների ոչնչացման արդյունք[6]: Նա բերում է հետևյալ փաստարկները.

1. Թուրք ազգային քեմալական շարժումը կազմակերպվել էր Իթթիհաթ վե Թերաքի կուսակցության կողմից, որը ծրագրել և իրականացրել էր Հայոց ցեղասպանությունը: Իթթիհաթը պահեստային ծրագիր ուներ, Առաջին աշխարհամարտում պարտվելու դեպքում կազմակերպել երկարատև դիմադրություն: Այդ ծրագիրը գործի դրվեց 1918թ. զինադադարից հետո: Ազգային շարժման մեջ կարևոր դեր էին խաղում «Իրավունքների պաշտպանության կոմիտեները» և «Օկուպացիային դիմադրելու» կազմակերպությունները: Անատոլիայում ազգային շարժման մեջ ներգրավված ուժերը կազմակերպվել էին Թալաաթի և կամ նրա և էնվերի հետ կապված (Karakol) ոստիկանական ջոկատներից[7]: Առաջին հինգ դիմադրող կազմակերպություններից 1918թ. հոկտեմբերի 30-ից մինչև տարվա վերջ երեքը հայերի դեմ էին պայքարում և երկուսը՝ հույների:

Իթթիհաթի տեղական կառույցը հիմնական էլեմենտներն էին այդ կազմավորումներում: «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության» կազմակերպության անդամ չէին կարող դառնալ, օրինակ, ընդդիմադիր Իթիլաֆ («Ազատության և համաձայնության») կուսակցության անդամները[8]: Karakol-ի հիմնական նպատակներից էր օգնել Անատոլիա փախչել այն իթթիհաթականներին, որոնք ներգրավված էին ցեղասպանության գործընթացին և փնտրվում էին բրիտանացիների կողմից՝ նրանց դատելու նպատակով: Այս անմիջական կապը ցեղասպանության իրագործողների և ազգային շարժման հիմնադիրների միջև չէր կարող հետևանք չթողնել նորակառույց հանրապետության քաղաքական կյանքում:

2. Նոր՝ ունևոր խավի ի հայտ գալը, որի հարստությունը հիմնվել է ցեղասպանված հայերի գույքի յուրացման և հափշտակման վրա: Այդ խավի նորահարուստները բաղկացուցիչ մաս կազմեցին ազգային շարժման և հետագայում՝ Թուրքիայի հանրապետության տնտեսական հիմքը դրեցին[9]:

Նրանցից շատերը Մուստաֆա Քեմալի անմիջական մերձավորներից էին: Դրանց թվից էին Թոփալ Օսմանը, որը Ազգային Մեծ ժողո-

վի և անձամբ Քեմալի թիկնազորի պետն էր, Ալի Չենանին, որը Մալթայի բանտարկյալներից էր, հետագայում դարձավ Անտառի նախարար[10]։

Զարմանալի չէ, որ սեպտեմբերի 22, 1922թ. կառավարությունը չեղյալ համարեց 1920թ. հունվարի 8-ի որոշումը Ստամբուլի խորհրդարանի լքված գույքի վերադարձի մասին օրենքը[11]։ Անկարայի կառավարությունը գիտակցում էր, որ պետք է հաշվի նստի նրանց հետ, ով օգնեց իրեն իշխանության գալ։

3. Թուրքիայի հանրապետության քաղաքական էլիտան հիմնականում բաղկացած էր անձանցից, որոնք անմիջական կազմակերպիչներ և մասնակիցներ էին Հայոց ցեղասպանության և նրանցից շատերը բանտարկված կամ դատավարությունների ժամանակ պատժի էին դատապարտվել, ուստի ազգային շարժումը հարկը նրանց համար պատասխանատվությունից խուսափելու փորձ էր։ Ավելին, հանցագործներից շատերը բարձր պաշտոնների արժանացան հանրապետական Թուրքիայում։ «Փախստականների վերաբնակեցման գրասենյակի» նախագահ Շյուքրու Քայան դարձավ Հանրապետական-ժողովրդական կուսակցության քարտուղար (CHP), Արիֆ Ֆեվզին, որը փնտրվում էր ժամանակին որպես կասկածյալ N 2743 հայերի ջարդերին մասնակից լինելու համար, դարձավ Լրատվության նախարար, Այնթապի իթթիհադի պատգամավոր Ալի Չենանին (կասկածյալ N 2805), որը հարստություն էր կուտակել յուրացնելով հայերի գույքը, դարձավ Անտառի նախարար։ Այս ցուցակը կարելի էր շարունակել։ Փաստորեն, Մուսթաֆա Քեմալը «ազատագրական» պայքար է մղել հանցագործների հետ և դրանով հովանավորել նրանց պատժելի անցյալը[12]։

Թուրքիայի Մեծ Ազգային ժողովի (TBMM) 1920թ. հոկտեմբերի 17-ի նիստի ժամանակ, նախկին իթթիհադական Հասան Ֆեհմի-Բեյը, որն այժմ քեմալական էր դարձել, հայտարարել էր. «Մենք պետք է մաքրենք մեր արևելյան վիլայեթները հայերից, այլապես չենք կարողանա ստեղծել մեր ազգային պետությունը։ Մենք գիտակցում ենք, որ համաշխարհային հասարակական կարծիքը մեզ պիտակելու է մարդասպան։ Սակայն ինչո՞ւ ենք մենք դատապարտում մեզ մարդասպան կոչվելու։ Այդպես լինում է, երբ կա մի բան, որն ավելի թանկ արժե, քան մեր պատիվն ու կյանքը – հայրենիքի ապագան»[13]։ Այս առումով մեջբերենք մեկ այլ գործչի խոսքերը. Թալաաթ-փաշան պատասխանել է թուրք գրող Հալիդե Էդիպի կշտամբանքներին հայերին ջարդելու վերաբերյալ. «Ես համոզված եմ, որ երբ ազգը անում է որևէ բան իր սեփական շահի համար և հաջողում է, աշխարհը հրճվում է նրանով և քաղաքական է համարում այդ»[14]։ Շարունակելով զուգահեռները հիշեցնենք, որ Associated Press-ի թղթակից Լոխները գրում էր մի առիթով, որ Հիտլերը հրճվանքով էր խոսում Չինգիս-խանի մասին. «Մարդասպա՞ն... Նա գիտակցաբար և անխղճորեն ուղարկում էր կանանց և երեխաների մահվան։ Բայց աշխարհը հիշում է նրան որպես մեծ պետութ-

յան հիմնադիրը: Աշխարհը հավատում է հաջողակներին»[15]:

Այսպիսով, ցեղասպանության ուրացումը Թուրքիայի Հանրապետությունում, որի կայացումը նման ճանապարհով է տեղի ունեցել, խորքային հիմքեր ունի: Փաստորեն այն հերոսները, որոնք «փրկել են թուրք ազգը» և ստեղծել են երկիր ոչնչից, պարզապես հանդես են գալիս որպես մարդասպաններ և կողոպտիչներ: Ազգային նարցիսիզմը, որը բնորոշ է թուրք ազգայնականությանը (ինքնահիահարվածություն), լուրջ վտանգվում է, հարվածում է թուրք ազգի ինքնապատկերացմանը, երբ խոսքը գնում է ցեղասպանության մասին[16]:

Ցեղասպանության ուրացման խթանիչ է հանդիսանում նաև անպատժելիությունը: Ինչպես նշում է Վ.Դադրյանը, Լոզանի կոնֆերանսը, փաստորեն, օրինականացրեց այդ անպատժելիությունը և հիմք հանդիսացավ այդ հարցում Թուրքիայի հետագա մերժման գործելակերպի համար[17]: Վերջին տասնամյակում, երբ միջազգային հանրությունը կրկին Թուրքիայի առջև դրեց Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, առաջ եկավ ուրացման նոր մարտավարություն, որը բնորոշվում է «այո, բայց ... » կարգախոսով[18]:

Այս, «այո, բայց...»-ի մարտավարությունն է որդեգրել այսօրվա Թուրքիան իր արտաքին և ներքին քաղաքականության մեջ: Չնայած որոշ բացառությունների ժամանակակից թուրք հասարակական կարծիքում առկա են հետևյալ հոսանքները.

Ազգայնամոլների համար Հայկական հարցը, եթե այն գոյություն է ունեցել, պահանջում էր միայն ու միայն արմատական լուծում առանց միջոցների մեջ խտրություն դնելու, քանի որ ազգի անկախությունը հնարավոր կլիներ ապահովել բացառապես ազգային տարածքի անբաժանելիության պայմաններում: Արմատական լուծում առնելով, նրանք հասկանում և, հետևաբար, արդարացնում են հայերի զանգվածային տեղահանությունն ու բնաջնջումը: Այդ հիբշային որոշումը նրանց կարծիքով, անխուսափելի էր ազգային պետության ստեղծման դարաշրջանում:

Իսլամականների տեսանկյունից ազգայնամոլները Արևմուտքին իրենց հավատարմությամբ ընկել են նրա թակարդը: Այն Արևմուտքի, որը քրիստոնյա է, ուստի և՝ համերաշխ հայերի հետ: Այլ կերպ ասած, Հայկական հարցը նրանց տեսանկյունից ընդամենը մի դրվագ է այն անվերջանալի «սրբազան պատերազմի», որը մղում են խաչն ու կիսալուսինը: Իսկ այդ պատերազմում, «ջիհադում», բոլոր միջոցներն ընդունելի են:

Ձախակողմյանները իրենց նախնիների գործելակերպում փորձում են գտնել դասակարգային պայքար՝ պրոլետարացված թուրք ժողովուրդը ընդդեմ բուրժուականացած հայ ժողովրդի[19]:

Վերը շարադրվածի լույսի ներքո ներկայումս կարևորվում է հետևյալ հարցը. համապատասխանում է արդյոք Թուրքիան եվրոպական արժեքներին՝ նաև էթիկական, բարոյական առումով: Թուրքիայի

հասարակական կարծիքով, Եվրոպան իրավունք չունի բարոյականության դասեր տալ, քանի որ նրա անցյալը նույնպես անաղարտ չէ: Սակայն եվրոպական արժեքների համակարգը անհրաժեշտ է հենց այն պատճառով, որ նա իր մեջ ուժ է գտնում ընդունել անցյալի իր սխալները: Այս, սեփական անցյալը ճանաչելու գործում, մեծ դեր կարող են խաղալ պատմաբանները: Եվ ինչպիսին է թուրք պատմագրության սեփական պատմությունը ճանաչելու փորձը, մեզ հայտնի է: Հայտնի են նաև նրանց ջանքերը՝ ուղղված օտարազգի գիտական լոբբիի ստեղծելուն (B.Lewis, St. Shaw, H. Laury, J. Mc.-Carthy), որոնց գործունեությունը անհամատեղելի է գիտական էթիկայի կանոնների հետ: Նման գիտնականների ուրացման հարցին ներգրավվելու դրդապատճառները ուսումնասիրվում են ցեղասպանագետ պատմաբանների և հոգեբանների կողմից[20]: «Գիտական» փաթեթավորումով մատուցված ժխտումը (ուրացումը) առանձնապես վտանգավոր է (երբեմն նրանց «թրքե Այխմաններ» են անվանում): Ինչ էլ լինի դրդապատճառը՝ գաղափարախոսությունը, մոլեռանդությունը, մտավոր տգիտությունը, ռացիոնալիզմը, պաշտոնամոլությունը, իշխանատենչությունը, թե դրամապաշտությունը՝ ժխտման ջատագովը դառնում է հանցակից, «ճշմարտության սպանող»: Ցեղասպանագիտության մեջ ուրացումը, ժխտումը դիտվում է որպես կարևոր էթիկական խնդիր (նաև գիտական էթիկայի), քանզի մարդկության դեմ ուղղված ոճիրը ժխտելով, ժխտվում է նաև մարդկությունը իբրև բարոյական իմաստով: Այս լույսի ներքո նույնպես պետք է դիտել Թուրքիայի ջանքերը՝ անդամակցել մարդկության վեհ բարոյական նորմերը որդեգրած եվրոպական ժողովուրդների ընտանիքին: Ցեղասպանության ժխտումը կոլեկտիվ մեղք է առաջացնում, քանզի Իվ. Թերնոնի խոսքերով՝ ազգը շարունակում է կրել Կաինի խարանը իր ճակատին[21]:

Ավելին, նման քաղաքականությունը, ամրապնդվում է հասարակության ենթագիտակցության մեջ, մնալով չդատապարտված, դառնում մտածելակերպ և վարվելակերպ, էթիկական նորմ՝ հետագայում, պատեհ առիթներին նույն կերպ դրսևորվելու համար[22]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Charny Israel W., The Psychology of Denial of Known Genocides, in Charny, ed., Genocide 2:22, 1991; Adalian Rouben, Revisionism and Denial, in "Genocide in Our Time...", Ann Arbor, 1992; Smith Roger W., Genocide and Denial: The Armenian Case and its Implications, "Armenian Review", 42:1, 1989; Huttenbach, The Psychology and Politics of Genocide Denial: a Comparison of Four Case Studies, in "Problems of Genocide", Zoryan Inst, Toronto, Canada, 1997.
2. Huttenbach, op. cit, p. 167.

3. Տե՛ս Սաֆրաստյան Ռուբեն, Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Երևան, 2003, էջ 41
4. Տե՛ս Civil Society: Turkish Scholars seek to Engage Armenian Counterparts in Historical Debate, http://www.eurasianet.org/departments/civilsociety/artiles/eav020105prs.html
5. Ternon Yves, After Genocide: How to Repair the Irreparable? A Comparison of Four Genocides, in "Problems of Genocide", 1997, pp. 336-348; Akçam Taner, The Genocide of the Armenians and the Silence of the Turks, in "Problems of Genocide", 1997, pp. 349-375.
6. Akçam Taner, op. cit., pp. 362-371.
7. Akçam Taner, op. cit., p. 367.
8. Tuncay Mete, Türkiye Cumhuriyetinde Tek Parti Yönetiminin Kurulması, 1923 1931, Ankara, 191, s. 36.
9. Edip Halide, Memoirs of Halide Edip, London – New York, 1926, p. 386. Հալիդե Էդիպը գրում էր, որ տնտեսական շահը մեծ դեր էր խաղում քեմալականներին միացել էին շատերը, ովքեր հարստացել էին հայերի գույքը կողոպտելով, նրանց համար զենքը ձեռքին հափշտակվածը պաշտպանելը միակ ելքն էր: Տե՛ս նաև Melson Robert, Revolution and Genocide, Chicago, 1992, pp. 168-169.
10. Dadrian Vahakn N., The History of the Armenian Genocide, Oxford, USA, 1995, pp. 368-370.
11. Dadrian Vahakn N., op. cit, p. 370.
12. Akçam Taner, op. cit., p. 370.
13. Bayur, Y.H., Türk Inkilâbı Tarihi, c.II, IV, Ankara, 1952, ss. 654-655.
14. Edip Halide, op. cit. p. 387.
15. Documents on British Foreign Policy, 1919-35, third series, vol. 7, London, 1954, N 314.
16. Akçam Taner, op. cit., pp. 370-371.
17. Dadrian Vahakn N., op. cit, pp. 386-387.
18. Lipstadt Deborah E., Deniers, Relativists, and Pseudo-Scholarship, in Smith Roger W., Professional Ethics and the Denial of Armenian Genocide, "Holocaust and Genocide Studies", vol. 9, N1, 1995, pp.1-22.
19. Ավելի մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Անուշ, Բոզոյան Մուրադ, Մեղադրում է թուրք ժառանգորդականը, «Հայաստան», 5 սեպտեմբերի, 1990.
20. Տե՛ս Հովհաննիսյան Անուշ, «Լոուրիի գործը» մանրամասները, «Հայություն», 5-15 մարտ, 1995; Smith Roger W., op.cit; Arméniens, "Le Monde", 27 november, 1993.
21. Ternon Yves, op.cit, p. 347.
22. Akçam Taner, Siyasi Kültürümüzde Zulüm ve Işkence, Istanbul, 1992.

ЕЩЕ РАЗ К ВОПРОСУ О ПОДПИСАНИИ РОССИЕЙ В 1921 ГОДУ РУССКО-ТУРЕЦКОГО ДОГОВОРА

В свете бывших секретных документов московских архивов

Подписанный в Москве в марте 1921 года Русско-турецкий договор (известен также как Московский договор 1921г.), особенно в части армяно-турецкой границы, по сей день как у нас, так и за рубежом вызывает различные, порой взаимоисключающие оценки.

Изучение на протяжении нескольких десятилетий материалов московских архивов, в том числе секретных документов того времени, особенно внутренней переписки руководителей советского государства, выявило целый ряд новых фактов, без знания и учета которых невозможно, на наш взгляд, представить действительную картину тех дней и дать правильную оценку как всему Договору, так и, в частности, причинам, приведшим РСФСР к установлению в отсутствие на переговорах Армении армяно-турецкой границы, как она сегодня есть[1].

Меж тем, уже в первом же своем послании руководству кемалистской Турции – ответе наркома иностранных дел РСФСР Г.В.Чичерина от 2 июня 1920г. на обращение ее главы Кемаля-паши (Ататюрка) к В.И.Ленину от 24/26 апреля, советское правительство "с удовлетворением" указывало на решение "предоставить Турецкой Армении... высказаться самим о своей собственной судьбе" на "свободном референдуме" "при участии беженцев и эмигрантов, вынужденных в свое время оставить свою родину по причинам, от них не зависящим, и по их возвращении на родину"[2]. Более того, именно по причине отказа Турции передать Армении часть территории Турецкой Армении, русско-турецкий договор не был заключен в 1920г. "У нас расхождение по двум пунктам, - писал Г.В.Чичерин российскому послу в Турции Ш.З.Элиаве, - мы не принимаем определения турецких границ по Национальному пакту [Турции], который почти воспроизводит Брест-Литовские границы, и мы требуем принципиального признания независимости хотя бы части турецкой Армении, достаточной для проживания армянского населения, происходящего из Турецкой Армении"[3]. То же подтверждают и турецкие источники того времени: "Чичерин открыто заявил..., что для реализации (подписания – Р.К.) договора турки должны, <u>как непременное условие</u>, отдать Муш, Ван и Битлис (удерживаемые Турцией армянские области Восточной Анатолии

– Р.К.) армянам"[4]. При этом обращает на себя внимание тот факт, что Россия требовала, чтобы "союзная" Турция передала эти территории буржуазной Армении – союзнице Антанты, что определенно говорило о том, что даже после признания независимости Армении (тифлисское соглашение от 10 августа 1920 г.) РСФСР, как правопреемница бывшей Российской империи, считала себя ответственной за судьбы народов последней, в том числе и Армении, - будь то в целях создания единого политического поля или перспектив советизации, безотносительно.

Этот процесс был временно приостановлен наступлением турецких войск на Армению (28 сентября – 2 декабря 1920г.), действующих, кстати, под вымышленным предлогом установления сухопутной связи с Россией и Советской власти в Армении, что, однако, было негативно воспринято российским руководством. По крайней мере еще 17 сентября кемалистам было предложено "воздержаться от таких действий"[5]. 5 октября, т.е. в первые же дни войны, российским представителям в Закавказье было указано, что "Армения за последнее время все больше и больше превращается в орудие наступательной политики Антанты, но мы не можем позволить ее раздавить"[6], а в ноябре правительству Армении были предложены вооруженная помощь и посредничество, от которых оно отказалось, уповая на Запад и по другим причинам.

2 декабря 1920г., передав власть армянским коммунистам, старое правительство Армении тайно заключило в Александрополе, когда необходимости в этом не было, кабальный для Армении договор с Турцией, согласно которому оккупированные турками территории буржуазной (так называемой "Русской", а теперь уже – Советской) Армении объявлялись "уступленными Турции", как "имеющие неоспоримую историческую, этническую и юридическую связь с Турцией", которая, к тому же, получала "право принимать военные меры на территории Республики Армении", по своему "желанию производить инспекцию и расследование" на ее территории и т.д.[7]

Поэтому естественно, что буквально с первых же дней установления в Армении Советской власти (29 ноября – 2 декабря 1920г.) перед Россией должен был встать, в первую очередь, вопрос о возврате оккупированных Турцией территорий и аннулировании кабального Александропольского договора, в связи с чем для советской стороны встал в качестве неотложной задачи срочный созыв новой советско-турецкой конференции. "Советизация Армении совершенно меняет положение. Понимают ли это турки?" – вопрошал Г.В.Чичерин в телеграмме Г.К.Орджоникидзе от 4 декабря 1920г.[8] Еще раньше, 1 декабря, И.В. Сталин сообщал Г.К.Орджоникидзе для передачи главе российской посреднической миссии П.Г.Мдивани: "Мы решили

согласиться на заключение договора, комиссию шлем, ноту Чичерина получишь. Нужно удержать турок от движения на Батум, кемалисты должны признать независимость Армении, пока доверять им нельзя, они большие хитрецы. Таково решение Политбюро"[9]. "Советизация Армении выдвигает снова вопрос об инструкциях тов. Мдивани, – писал Чичерин 3 декабря в Политбюро ЦК РКП(б), - ... Мдивани должен обуздывать турок и умерять их требования по отношению к Армении. Он должен также удерживать их от наступления на Грузию... Мы могли бы пообещать туркам возобновления нашей помощи, если они удалятся из Армении. (...) При нынешнем положении, когда можно ожидать в довольно близком будущем советизации Грузии, а дальнейшая [просоветская] ориентация Турции под большим вопросом (! – Р.К.), необходимо считаться и с этими соображениями"[10]. Днем позже предложение Чичерина было заслушано на заседании Политбюро, в работе которого принимали участие Ленин, Троцкий, Сталин, Каменев и Серебряков (фамилии перечислены в соответствии с протоколом) и было принято решение "поручить т. Чичерину выработать точный текст директив для т. Мдивани по соглашению с т. Сталиным", и далее (что особо интересно!) - "Если соглашение не будет достигнуто к 8-ми часам вечера, должны быть представлены оба контрпроекта на утверждение"[11], из чего следует, что на заседании от 3 декабря не было единого мнения.

К сожалению, по заведенному в те годы порядку, в протоколах заседаний высших партийных и государственных органов РСФСР не фиксировались выступления участников и результаты голосований: ограничивались лишь записями "слушали" - "постановили", а то обстоятельство, что на одном из заседаний Политбюро был рассмотрен "Проект т. Зиновьева, Бухарина и Троцкого против содержания некоторых шифровок т. Чичерина" и постановлено "Разъяснить т. Чичерину, что о прениях, которые происходят внутри Политбюро ЦК, Оргбюро и Пленума ЦК, в особенности о голосовании и заявлениях отдельных членов ЦК, ни в коем случае нельзя сообщать никому, даже членам коллегии", - данное обстоятельство дает нам основание полагать, что вряд ли когда-либо можно будет узнать всю правду о рассмотрении предложения Чичерина на том заседании. Поэтому единственным документом, проливающим свет на вопрос о позиции российского руководства в тот период на рассматриваемый вопрос, следует считать директивы Чичерина Мдивани от 5 декабря 1920г.: "Советизация Армении заставляет в значительной мере изменить позицию. Укажите туркам, что... устранены мотивы их наступления, наоборот, желательно в их же интересах (! – Р.К.) оказать поддержку Советской власти в Армении соблюдением умеренной и дружественной политической линии по

отношению к ней. Надо поэтому настаивать, чтобы турки не только не продвигались далее по территории Армении, но даже отодвинули войска до Арпачая, отделяющего Карсскую область от остальной Армении. Не возражаем против пребывания турок в Карсской области временно (!– Р.К.), впредь до разрешения территориальных вопросов с Арменией. Надо настаивать на смягчении условий мира (имеется в виду Александропольский договор – Р.К.), в частности, на отказе турок от контрибуций. Продолжаем настаивать на передаче турецко-армянского разграничения будущей смешанной комиссии с нашим участием. (...) В случае исполнения турками вышеозначенных условий, наше командование на Кавказе будет продолжать выдавать оружие (приостановленное в период турецкого наступления на Армению – Р.К.), также им будет постепенно выдаваться золото из числа полутора миллионов, взятых Бекиром Сами (комиссар иностранных дел правительства ВНС Турции, глава кемалистской правительственной делегации на переговорах с Россией летом 1920г. – Р.К.) и задержанных в дороге [советскими органами]. Все это будет сделано теперь же, не дожидаясь заключения нами договора с Турцией"[13]. В тот же день в письме к Орджоникидзе Чичерин разъяснял позицию российского правительства на данном этапе в Армянском вопросе: "Посланные Вам шифровки и инструкции для передачи тов. Мдивани исходят из радикально изменившегося положения в результате советизации Армении. Вы знаете, что мы к этой советизации относились сдержанно, ввиду целого ряда возникающих в связи с нею затруднений и ввиду трудности для нас выполнить все то, что из этой советизации вытекает (имеется ввиду экономический фактор – Р.К.). Теперь приходится делать выводы из свершившегося факта, и наша политика должна этот факт учесть (! – Р.К.). ... тов. Мдивани придется указать туркам на это изменившееся положение и на то, что ... тем самым устранены и мотивы, выставлявшиеся турками для их наступления на Армению. Надо особенно подчеркивать в сношениях с турками, что в их же интересах (! – Р.К.) поддерживать в Армении Советскую власть. ... Надо напирать поэтому на необходимости для турок умеренной и дружественной политики по отношению к Советской Армении. Надо настаивать, чтобы турки не только не занимали новых армянских областей, но чтобы они отвели свои войска на линию Арпачая в той его части, где Арпачай отделяет Карсскую область от остальной Армении. Последняя сохранит таким образом железную дорогу, что чрезвычайно существенно. Оккупацию турками Карсской области приходится рассматривать как временную, до разрешения вопроса об армяно-турецких границах. Превратится ли эта оккупация вслед за тем в окончательное владение или оно совершенно

прекратится, будет зависеть от решения, которое будет принято по вопросу о границе, и впредь до принятия этого решения мы не возражаем против пребывания турок в Карсской области. Что касается самого разграничения, мы настаиваем самым решительным образом на том, чтобы оно было произведено в смешанной комиссии при нашем участии", и далее - "Если турки будут считаться с нашими настояниями и отступят за Арпачай, смягчат условия мира, будут вести дружественную политику по отношению к Советской Армении и не будут двигаться вглубь Грузии, ... мы будем продолжать выдавать им оружие. Итак, прежде всего, надо потребовать их отступления за Арпачай. Если они это сделают и если в других отношениях они будут считаться (! – Р.К.) с нашими настояниями, то в этом случае можно будет немедленно возобновить выдачу им оружия". То же относительно золота: "Если турки будут исполнять наши настояния, то это золото будет постепенно им выдаваться, конечно, не сразу, чтобы не терять этого средства давления на них (! – Р.К.)". И в заключение - "Все вышеозначенное относится к нынешнему моменту, но, кроме того, нам предстоит серьезное дело - заключение договора с турками. (...) Положение теперь изменилось (имеется в виду советизация Армении - Р.К.), и мы, может быть, пойдем несколько дальше (! – Р.К.) "[13].

Из приведенных документов, таким образом, следует, что по состоянию на декабрь 1920г., когда правительство РСФСР предложило созвать II советско-турецкую конференцию для решения территориальных вопросов, оно не намеревалось жертвовать армянскими землями – делать Турции территориальные уступки ни во имя "дружбы и братства", ни во имя "мировой революции", о которой, кстати, в высших эшелонах власти к тому времени, в отличие от среднего звена истеблишмента, уже не вспоминали, ввиду ее несбыточности [14]. Что же касается позиции российского правительства в вопросе временного оставления в руках турок оккупированной ими Карсской области, то данное обстоятельство, как явствует из ответа Чичерина Ленину от 14 декабря 1920г., было обусловлено малочисленностью и слабостью российских войск на Кавказе: "Вы знаете, - писал Чичерин, - что выдачу туркам оружия мы связывали с ... требованием об отступлении турок за Арпачай. Мы могли бы сделать больше только в том случае, если бы было признано возможным послать в Армению больше войск"[15]. С другой стороны, в Москве опасались, и не без оснований, что в случае чрезмерных требований сорвется конференция, и даже больше - "если мы (т.е. РСФСР – Р.К.) оттолкнем турок, они бросятся в объятия Антанты и в политику ... компенсаций на Кавказе по образцу турецкой политики 1918 года"[16], что неминуемо привело бы к резкому ухудшению положения

закавказских советских республик вкупе с Россией. "Мирное соглашение с турками ... одно только избавляет нас от вечных войн на Кавказе" [17].

В этих сложных условиях все же удалось, тем не менее, добиться согласия Турции сесть за стол переговоров, и 9 декабря правительство РСФСР известило турецкую сторону, что пригласило на конференцию в качестве равноправных участников также Армянскую и Азербайджанскую ССР (в последнем случае имелось в виду, что "свои мусульмане лучше сумеют влиять умиряющим образом"[18]). Одновременно было сообщено, что "мир между Арменией и Турцией должен быть миром, основанным на самоопределении народов"[19]. Кроме того, намеревались вновь поднять вопрос о передаче армянам "необходимой части Турецкой Армении" [20] и отказаться от признания программного документа Турции – Национального обета (пакта), и Чичерин на экземпляре проекта согласованных в августе 1920г. статей будущего русско-турецкого договора зачеркнул абзац с упоминанием о Национальном обете и напротив на полях написал: "Отвергаем"[21].

Турки в свою очередь, выставили условием, что вопрос об Александропольском договоре может быть "предметом возможных толков в Москве" только (!) "при минимальном участии армян"[22] и что возвращение Армении каких-либо частей "турецких восточных провинций", под которыми подразумевались отошедшие к Турции по Александропольскому договору оккупированные ею армянские территории, "ни в коем случае не могут быть ни рассматриваемыми, ни принятыми ангорским национальным правительством", и даже более – что "всякие требования и притязания сверх определенных и установленных границ, указанных в этом договоре, могут послужить только возобновлению (! – Р.К.) прежних распрей" [23].

Однако на этом перипетии с открытием II конференции, которого с таким нетерпением ждали в Москве ("Если турки для переговоров с нами [едут] в Москву, пусть едут скорее"[24]), не кончились, и турецкая делегация приехала только 18 февраля 1921г., причем, в самое неподходящее для России время. "Неожиданный даже для центральных ведомств взрыв продовольственной и топливной катастрофы, вызвавший целый ряд рабочих восстаний в крупных центрах, - сообщал в те дни своему руководству находящийся в Москве глава армянской советской делегации, нарком иностранных дел АрмССР А.А.Бекзадян, - почти одновременно с этим взрыв восстания в Кронштадте, тщательно подготовленного из заграницы и призванного, по-видимому, быть началом общего переворота; лихорадочная подготовка к X съезду партии, которому ставилась задача, в связи с переживаемым кризисом во всех областях государственной жизни"[25]. Почти аналогичное свидетельствует

также известный московский проф. Ю.В.Готье в своем девнике от 24 февраля: "Отмечаются беспорядки в Москве. Это первые рабочие беспорядки при советской власти. Говорят, что было трое убитых и что красноармейцы отказались стрелять"[26]. Тревожные вести о готовящихся против России акциях поступали также из-за границы, поэтому в Москве опасались, что против РСФСР начнется "война в гораздо больших размерах, чем некоторые это думают"[27]. Причем российское руководство не исключало участие в этой войне на стороне Антанты кемалистской Турции в блоке с меньшевистской Грузией[28].

В довершение бед в феврале того же года на части территории Армении временно пала советская власть, и председатель взявшего власть в свои руки "Комитета спасения родины" С.Врацян - последний премьер-министр предшествующей буржуазной республики - официально известил мир, что прибывшая на конференцию делегация Армянской ССР лишается прав на ведение от имени Армении переговоров с турками. Последние, воспользовавшись этим, заявили, что не сядут за стол переговоров с делегацией АрмССР и даже более того - категорически потребовали вывести из состава российской (!) делегации заместителя ее главы, замнаркома иностранных дел РСФСР армянина Л.М. Карахана[29].

Желая во что бы то ни стало добиться аннулирования кабального александропольского соглашения и подписать договор с Турцией, дабы оградить себя и закавказские советские республики от посягательств извне, правительство РСФСР было вынуждено принять столь унизительный для него турецкий ультиматум. (По этой причине конференция из четырехсторонней превратилась в двухстороннюю – русско-турецкую, - т.к. РСФСР предложила Азербайджану так же не участвовать в ее работе, а в составе российской делегации Карахан был заменен Джалалэддином Коркмасовым, видным дагестанским государственным деятелем, членом ВЦИК).

Однако и после официального открытия конференции (26 февраля 1921г.) ее работа почти на 2 недели – до 10 марта – была прервана из-за обструкционистской позиции турок. Правительство РСФСР, согласно документам того времени, даже "сначала не знало, приехала ли делегация Турции заключать... союз или устраивать разрыв и готовить материалы против" самой России[30]: как свидетельствует Чичерин в письме к П.Г.Мдивани от 4 марта, по приезде в Москву турецкая делегация "начала с неприкосновенности Национального пакта и Александропольского договора", что было расценено российским руководством как "непомерные притязания" и требование "передать Турции Батум и всю Армению, частью явно, частью прикрыто", и было "совершенно неприемлемо" для него[31].

Впрочем, такой оборот дел предусматривался турецкой стороной еще до прибытия в Москву. Так, согласно записям беседы от 23 января 1921г. представителя итальянской миссии в Ангоре Бодреро с членом турецкой делегации на предстоящих переговорах в Москве, послом Турции в РСФСР Али Фуадом (Джебесойем), на вопрос итальянца, как туркам видится решение о взаимоотношениях с Советской Арменией, турецкий посол признался, что "это решение зависит от того, будет ли нами достигнуто соглашение с Антантой или оно вынудит нас искать соглашение с Москвой", а на вопрос, что будет, если соглашение с Антантой не будет достигнуто, Али Фуад ответил: "Вступим в соглашение с Россией. Ей мы уступим часть Армении (имеется в виду часть оккупированных турками территорий – Р.К.) взамен компенсаций – Аджарии, Ахалциха и Карсской области"[32].

Таким образом, любое несогласие с турками и отклонение их предложений на переговорах в Москве грозило, согласно письму Чичерина секретарю ЦК РКП(б) Н.Н. Крестинскому от 1 марта, "крайне вредными последствиями" - "разрывом русско-турецкой конференции и немедленным отъездом турок ... из-за [непринятия Россией] Национального пакта и Александропольского договора"[33]. "Отношения к Турции достигли серьезного момента", "дошли до серьезного кризиса", - констатировалось в том же документе.

Положение еще более усугублялось вследствие параллельного ведения турками переговоров одновременно с большевиками в Москве и Антантой в Лондоне, где турки, кстати, добивались признания Западом Александропольского договора. "Каков бы ни был исход нынешней конференции [в Москве], - писал в те дни Чичерин Крестинскому, - нам несомненно предстоит пройти через крайне трудный период в наших отношениях с Турцией"[34].

Поэтому скорейшее подписание договора с Турцией было в тот период жизненно необходимым – из двух зол наименьшим – для советского общества в условиях его международной изолированности и настоятельно требовало принятия неотложных мер. "Ввиду ведущихся в Лондоне переговоров, - сообщал Г.В.Чичерин в ЦК РКП(б) 9 марта 1921г., еще до возобновления 10 марта работы конференции, - ... нам следует скорее с турками кончить, ... приняв их последние предложения"[35]. На то же он обращает внимание Ленина в письме от 10 марта: "При вырабатываемом теперь договоре с Турцией нам во что бы то ни стало необходимо кончить немедленно"[36]. То же и в письме наркому юстиции Д.И.Курскому от того же числа: "Договор с Турцией по обстоятельствам момента (!– Р.К.) приходится вырабатывать с лихорадочной быстротой (! – Р.К.). Нет времени долго обсуждать и передавать из инстанции в

инстанцию тексты статей. Надо во что бы то ни стало кончить немедленно и предстать перед политическим миром с готовым подписанным текстом"[37].

В этих условиях и вследствие этих обстоятельств, коль скоро нельзя было не признать, в частности, Национальный обет (пакт), от чего, отчасти, зависело подписание договора с турками, для РСФСР возникла необходимость в установлении территориальных рамок действия (юрисдикции) этого пакта, с целью ограждения советских республик от распространения его на них, что было невозможно в условиях неопределенности восточных границ Турции. Поэтому в выработанных российской стороной "Дополнениях и поправках к прошлогоднему проекту статей договора", направленных Чичериным 10 марта 1921г. в ЦК РКП(б), указывалось, что "в первой статье абзац, касающийся Национального пакта"[38], должен быть заменен признанием принципов Национального пакта Турции с оговоркой о границе"[39]. В силу этого было признано необходимым, во избежание худшего, согласиться на "непременные условия" турок - "чтобы граница шла по Арпачаю и по Араксу"[40], в соответствии с чем большая часть захваченной турками в ходе турецко-армянской войны 1920г. и удерживаемая ими ко времени московских переговоров территории отходила к Турции. Более того, по свидетельству Чичерина, турки "даже на Московскую границу согласились лишь с большим трудом"[41].

В числе турецких условий было также требование, чтобы Нахичевань был "автономной областью под протекторатом Азербайджана" и чтобы последний "не передавал этот протекторат другому лицу", под которым подразумевалась Армения[42]. Как пояснял Чичерин в письме в ЦК РКП(б) от 10 марта 1921г., данная статья договора была "непременным условием соглашения с Турцией и была поэтому мною принята"[43], тогда как советской стороной планировалось (письмо Чичерина Мдивани от 4 марта), что "Нахичевань [должна] будет непосредственно зависеть от России"[44].

То же было и относительно так называемой "уступки Турции Карса и Ардагана", что было, по признанию Г.В.Чичерина в письме представителю НКИД РСФСР в Германии В.Л.Коппу от 20 марта 1921 г., "довольно тяжелой жертвой, ибо эти крепости составляют сильную оборонительную систему, служащую в то же время базисом для наступления" на советские республики. "Уступка Карса и Ардагана является поэтому очень серьезной, - продолжал в том же письме Чичерин, - Она оказалась, однако, неизбежной, и без этого наступил бы разрыв, и как раз в нынешний решающий момент, когда Антанта усиленно зазывает к себе кемалистов, это могло бы оказаться роковым поворотным пунктом.

На это пришлось пойти", и далее – "Проведение границы по Арпачаю и Араксу является также тяжелой жертвой"[45].

Турция, кроме того, потребовала также, чтобы их блокгаузы находились на расстоянии не более 4-8 верст до границы (предложение РСФСР - 20 верст) и чтобы в преамбуле договора к словам "о дружбе" было добавлено "и братстве"[46].

Только после удовлетворения всех этих требований, в частности, о границе, турецкая делегация согласилась на возобновление (10 марта) работы конференции. "После почти двух недель ожесточенных дебатов ..., – сообщал Чичерин Леграну, - когда мы условились об основном, то есть главным образом о границе, мы могли открыть политическую комиссию"[47], т.е. заседание Политической комиссии, которая должна была окончательно выработать проект договора. Почти то же писал Чичерин В.И.Ленину 10 марта: "При таких случаях, как заключение договора с турками ... каждое слово, каждая запятая являются результатом долгой борьбы"[48].

Из всего сказанного, таким образом, следует, что вопрос о "дарении" армянских территорий Турции не мог стоять и не стоял на конференции и, тем более, не входил в планы правительства РСФСР, о чем свидетельствует также российская нота Турции от 8 февраля 1921г. (за 10 дней до прибытия турецкой делегации в Москву !), в которой говорилось, что "под территорией Великого Национального Собрания Турции подразумевается то пространство, на которое должна распространяться его власть на основании принципа о самоопределении народов"[49]. Более того, даже после того, как все статьи договора были согласованы между сторонами и он был готов к подписанию, - турки категорически отказывались подписывать его пока Россия не даст письменных обязательств, что будет в течение ряда лет помогать Турции оружием и деньгами по 10 млн. руб. золотом ежегодно (письмо Чичерина Ленину от 17 марта 1921г.)[50], что еще раз свидетельствует о неравноправном характере договора и подтверждает высказанную нами выше мысль. (Кстати, согласно тому же источнику, договор был подписан не 16 марта 1921г., как значится под ним, а 18 марта, т.е. задним числом, чтобы Англия не могла уличить РСФСР в нарушении требования п. "А" Торгового соглашения между ними от 16 марта того же года).

Впрочем, это не первый случай, когда РСФСР, будучи изолированной в международном плане, вынуждена была идти на территориальные уступки, дабы "сорвать интриги... империалистов Антанты, больше всего стремящихся не допустить мира"[51], как это было, например, при подписании договора с Польшей. "Во всех наших договорах, - разъяснял политику РСФСР Чичерин в письме Б.В.Леграну

от 8 июля 1921г., - не только в Брестском, но и во всех последних наших договорах, мы по отношению к отдельным местностям нарушали этот принцип (самоопределения наций – Р.К.). Мы отдали Эстонии чисто русский кусочек, мы отдали Финляндии Печенгу, где население этого упорно не хотело, мы не спрашивали Латгалию при передаче ее Латвии, мы отдали чисто белорусские местности Польше. Все это связано с тем, что при нынешнем общем положении, при борьбе Советской Республики с капиталистическим окружением, верховным принципом является самосохранение Советской Республики... Ради этого верховного принципа приходится идти на договоры с буржуазными государствами, в которых наши принципы не осуществляются"[52].

Я уж не говорю о том, что еще в начале марта 1921г., когда шли активные неофициальные переговоры РСФСР с турецкой делегацией и Москва во всю старалась уговорить турок сесть за стол переговоров, в высших советских руководящих кругах не исключали перспективу "наступления как на Карс, так и в направлении Ольты и Эрзерума" российских войск в случае, "если Карс и плато перейдут к туркам"[53], и что турецкие руководящие работники сами признавались, что во время переговоров с РСФСР в феврале-марте 1921г. они, "благодаря некоторым кризисным моментам, которые нам (т.е. им – Р.К.) удалось создать, и в результате нашего нажима [на российский истеблишмент], а также противодействия их предложениям, представители Комиссариата иностранных дел [РСФСР] не смогли на переговорах в Москве эффективно проводить свою линию"[54].

И под конец, о роли Сталина в принятии на II московских российско-турецких переговорах 1921 г. указанных выше решений по пограничным вопросам. Обычно, говоря об этом, как правило, ссылаются на записку Сталина Ленину от 12 февраля 1921 г.: "Я вчера только узнал, что Чичерин действительно послал когда-то дурацкое (и провокационное) требование об очищении Вана, Муша и Битлиса (турецкие провинции с громадным преобладанием турок[55]) в пользу Армении. Это армянско-империалистическое требование[56] не может быть нашим требованием. Нужно запретить Чичерину посылку нот туркам под диктовку националистическо-настроенных армян"[57].

Если даже на минуту допустить (хотя подобное в данном случае исключается), что Сталину ничего не было известно о том, что в августе 1920 г., во время первых российско-турецких переговоров в Москве, "Чичерин открыто заявил..., что для реализации (т.е. подписания – Р.К.) договора турки должны, как непременное условие, отдать (Армении, тогда еще буржуазной – Р.К.) Муш, Ван и Битлис"[58], то в первой половине ноября того же года он, безусловно, уже знал об этом требовании

Чичерина на основании ряда писем и телеграмм последнего лично ему. "Будущая... принадлежность занятых турками сейчас областей будет решена позднее... смешанной комиссией с нашим участием, которая вообще должна произвести разграничение между армянами и турками, равным образом и в Турецкой Армении, - писал Чичерин Сталину 9 ноября"[59]. Спустя день та же мысль была повторена Чичериным в телеграмме Сталину от 11 ноября: "В наших условиях посредничества надо предлагать временное занятие турками тех местностей, которые они заняли, окончательное же установление государственной границы между Турцией и Арменией должно быть поручено той же смешанной комиссии с нашим участием, которая должна будет определить территорию Турецкой Армении"[60]. Еще через день, 13 ноября, еще в одной телеграмме Сталину Чичерин предлагал "настаивать на двух пунктах: .... второй – окончательное определение границ между Турцией и Арменией, как в бывшей Русской, так и Турецкой Армении, посредством смешанной комиссии при нашем участии"[61]. Через неделю – еще одно напоминание об этом в письме Чичерина Сталину от 19 ноября: "Вы уже знаете, что наши условия выдачи им (туркам – Р.К.) оружия – это употребление его на Западном фронте... обязательство передать армяно-турецкое разграничение, также и в Турецкой Армении, будущей смешанной комиссии с нашим участием"[62]. И за все это время ни разу не было отрицательной реакции Сталина! Более того, в отданных на основе этих директив главе российской посреднической миссии П.Г.Мдивани распоряжений Сталин и Орджоникидзе, со своей стороны, также указывали на необходимость образовать "смешанную комиссию с нашим большинством по вопросу об отводе турецких войск"[63], о чем Сталин 15 ноября сообщал Ленину и Чичерину: "Я посоветовал Мдивани ... ограничиться пока образованием смешанной комиссии с нашим участием"[64].

И уж, конечно, "арменофобством " или "туркофильством" даже отдаленно не назовешь категорическое распоряжение Сталина (в его телеграмме Орджоникидзе от 9 апреля 1921 г.): "Первое. Александрополь должен быть очищен (от турок – Р.К.) не мытьем, так катанием (т.е. во что бы то ни стало, любой ценой – Р.К.), желиговщину Карабекира надо убить в корне"[65].

Из сказанного, таким образом, следует, что приведенная выше записка Сталина Ленину от 12 февраля 1921 г. была реакцией не вообще на требование советской стороны о передаче армянам части территории Турецкой Армении (т.е. не была следствием так называемой "арменофобии"), а была вызвана конкретно теми условиями, когда подобное требование могло быть причиной срыва II советско-турецкой

конференции. Тем более, что записка была написана на телеграмме Г.К.Орджоникидзе В.И.Ленину, Л.Д.Троцкому, И.В.Сталину и Г.В.Чичерину от 9 февраля (была получена в Москве 11-го), в которой, в частности, говорилось: "Положение в Турции по имевшимся сведениям таково: требование Чичерина Муша – Вана – Битлиса сразу усилило сторонников Антанты, и Мустафа Кемаль стал искать пути сближения с Константинополем - Антантой", и далее – "Вне всякого сомнения требования Муша, Вана и Битлиса будут использовывать для демонстрации нашего отношения к туркам", а потому "все подобного характера требования должны быть сняты и должен быть заключен договор, который носил бы чисто агитационный характер, чтобы наши противники были лишены возможности провоцировать (! – Р.К.)"[66].

Что же касается участия Сталина в переговорном процессе в дни II Московской русско-турецкой конференции, то, как свидетельствуют многочисленные документы того времени, оно носило не более как кратковременный и эпизодический характер. Так, известно, что в первой декаде марта 1921 г. турки через представителя Азербайджана в Москве Б.Шахтахтинского, который в ноябре 1920 г. входил в состав возглавляемой П.Г.Мдивани российской посреднической миссии, просили Сталина "уделить им три часа времени, чтобы они имели возможность обсудить ... все пункты соглашения", на что Сталин письменно ответил 8 марта Шахшахтинскому: "К сожалению, у меня нет сегодня времени. Позвоните в пять часов сегодня, когда я смогу, может быть, назначить время свидания"[67]. Известно также, что 9 марта Ленин намеревался предложить Сталину "поговорить начистоту с турецкой делегацией, чтобы выяснить дело и довести до конца сегодня же"[68]. И все. В то время как буквально все документы того периода неоспоримо свидетельствуют о том, что в 1921 г., как и в 1920-м, переговоры с турецкой делегацией от начала до конца вел Г.В.Чичерин.

Правда, наряду с этим существует также ряд воспоминаний турецких деятелей. Опубликованные уже после смерти Сталина, они, вопреки имеющимся документам, пытаются "доказать", будто на московских переговорах 1921г. отошедшие к Турции армянские территории были предоставлены последней Сталиным, т.е. имеют целью оправдать нахождение этих территорий в составе Турции. Тогда как в 1945 г. на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех Союзных держав именно И.В.Сталин, говоря о "районе Карса, который находился до войны в составе Армении", поднял вопрос "о восстановлении границы, которая существовала до первой мировой войны", одновременно заявив, что "мы считаем, что граница в районе Карса и Ардагана неправильна, и мы заявили Турции, что, если она хочет

заключить с нами союз нужно исправить эту границу, если же она не хочет исправлять границу, то отпадает вопрос о союзе", а член советской делегации В.М.Молотов, в свою очередь, заявил на той же конференции, что "в 1921 г. турки воспользовались слабостью Советского государства отняли (! – Р.К.) у него часть Советской Армении", и далее в протоколе констатируется: "Молотов говорит, что территория, о которой идет речь, не принадлежит туркам. Они поступили несправедливо, отняв ее у Советского Союза"[20] – и все это ни разу не было опровергнуто тогда турецкой стороной ссылкой либо намеком на "подарок" Сталина или кого-либо другого.

Таковы некоторые итоги наших многолетних архивных изысканий, проливающих свет на затрагиваемую проблему.

ПРИМЕЧАНИЯ

1. По данной теме см. Также наши статьи К вопросу об оценке московского русско-турецкого договора 1921г., Страны и народы Ближнего и Среднего Востока, том XX, Ереван, 2001г., стр. 106-124, Советско-кемалистские отношения в 1920г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов, Страны и народы Ближнего и Среднего Востока, том XXI, Ереван, 2002г., стр. 98-123, а также нашу статью "Об А. Сивчко и его статье" в газете "Голос Армении" (Ереван) от 26 октября 2006г.
2. Российский государственный архив социально-политической истории (далее - **РГАСПИ**), ф.64, оп.1, д.21, лл.258-258^{a}. Стилистически несколько отличный вариант см. : Документы внешней политики СССР. Т.II. М. , 1958, с.554-555.
3. Архив внешней политики Российской Федерации МИД РФ (далее – **АВП РФ**), ф.04, оп.39, п.232, д.53001, л.7.
4. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.53001, л.3. Подчеркнуто мною. Цит. по: Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Сост. и отв. ред. проф. Ю.Г.Барсегов. Т.2, ч.1. М., 2003, с.195-196, док. № 856.
5. АВП РФ, ф.04, оп.51, п.321^{a}, д.54875, л.28 .
6. РГАСПИ, ф.64, оп.1, д.21, л.284. Подчеркнуто мною.
7. Национальный архив Армении (далее - **НАА**), ф.200, оп.1, д.602, л. л.438-440; Ключников Ю.В. и Сабанин А.В. – Международная политика новейшего времени в договорах , нотах и декларациях. Ч.III, вып.II. М., 1929, с.71-73, док. № 26.
8. РГАСПИ, ф.85, оп.14, д.49, л.3 .
9. РГАСПИ, ф.558, оп.1, д.3316, л.1. Согласно депеши Г.К.Орджоникидзе Б.В.Леграну от 2 декабря 1920г., телеграмма была подписана также В.И.Лениным (там же, ф.85, оп.15, д.21, лл.1-2).
10. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.53001, л.6.
11. РГАСПИ, ф.17, оп.3, д.126, л.1.

12. РГАСПИ, ф.64, оп.1, д.21, л.278.
13. РГАСПИ, ф.85, оп.3с, д.13, лл.1-3. Подчеркнуто мною. Цит. по: Геноцид армян ... с.303-304, док. № 983.
14. Ленин В.И. – Полн.собр.соч. Т.42, с.314.
15. РГАСПИ, ф.5, оп.1, д.2055, л.33.
16. Там же л.35. Письмо Чичерина Ленину от 23 декабря 1920г.
17. Ленин В.И. – Полн.собр.соч. Т.43, с.151.
18. РГАСПИ, ф.85, оп.14, д.49, лл.18-25. Цит. по: Геноцид армян ... с.322-323, док.№1013. См. также: РГАСПИ, ф.85, оп.14, д.52, л.10; Документы внешней политики СССР. Т.III. М., 1959, с.371-372, док. № 210.
19. Документы внешней политики СССР... с.392. Подчеркнуто мною.
20. АВП РФ, ф.0148, оп.4, п.4, д.23, л.78 ; РГАСПИ, ф.5, оп.2, д.314, л.68. См. также: Документы внешней политики СССР... с.397-398 ; РГАСПИ, ф.85, оп.15, д.25, лл.2-6.
21. РГАСПИ, ф.159, оп.1, д.23, лл.3,4 .
22. АВП РФ, ф.0148, оп.4, п.4, д.31, лл.6-8 ; РГАСПИ, ф.85, оп.14, д.50, л.6 ; оп.15, д.25, лл.2-6 ; Документы внешней политики СССР... с. 397-398.
23. Аветисян Г.А. , Даниелян Э.Л. , Мелконян А.А. – История Армении . Ереван, 1999, с.217. То же : г."Новое время" , Ереван , 2001, 21 мая.
24. РГАСПИ, ф.85, оп.14, д.49, лл.10-11. Телеграмма Г.В.Чичерина Г.К.Орджоникидзе от 8 декабря 1920г.
25. НАА. ф.114, оп.2, д.68, лл.25-26. Подчеркнуто мною.
26. Цит. по : "Независимая газета", М., 1996, 24 февраля. Подчеркнуто мною.
27. Ленин В.И. – Полн.собр.соч. Т.42, с.355.
28. РГАСПИ, ф.5, оп.1, д.2436, л.48. (Документ полностью опубликован в : "Большевистское руководство . Переписка. 1912-1927. Сборник документов". Сост. А.В.Квашонкин, О.В.Хлевнюк, Л.П.Кошелева, Л.А.Роговая, М. :РОССПЭН. 1996. с.177, док.№118) .
29. См. : Геноцид армян ... с.423, док.№1111.
30. РГАСПИ, ф.5, оп.1, д.2117, л.1.
31. Там же. См. также: РГАСПИ, ф.5, оп.2, д.315, л.20.
32. Цит. по : Геноцид армян ... с.359, док.№1052
33. РГАСПИ, ф.5, оп.1, д.2117, лл.1-2 ; РГАСПИ, ф.5, оп.2, д.315, лл.20-21.
34. РГАСПИ, ф.5, оп.2, д.315, л.20.
35. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.53001, л.28.
36. РГАСПИ, ф.5, оп.1, д.2056, лл.6-7; АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.53001, лл.29-30.
37. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.53001, л.33. Подчеркнуто мною.
38. Текст данного абзаца гласил: "Под Турцией, согласно настоящего договора, понимаются те территории, которые входят в то Национальное Турецкое соглашение (имеется в виду Национальный обет (пакт) – Р.К.), которое выработано и оглашено в турецкой Палате Депутатов в Константинополе и сообщено прессе и всем государствам в феврале 1920г." (РГАСПИ, ф.159, оп.1, д.23, лл.3-4). Документ предоставлен нам С.А.Аяпуряном, которому выражаем нашу искреннюю благодарность .
39. РГАСПИ, ф.5, оп.2 д.315, л.30. Подчеркнуто мною.

40. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.53001, л.28.
41. РГАСПИ, ф.5, оп.2 д.315. л.50. Установленные Московским договором 1921 г. границы разумеется, не могли удовлетворить ни армян, ни даже грузин, от которых отымалась обширная южная часть Батумской области. Однако, совокупность указанных выше обстоятельств настоятельно требовали тогда признания советской стороной их незыблемости. "Убедительно просим Центральный Комитет категорически настоять, чтобы Кавказские Советские республики не обратились к Турции с требованием изменения установленной в Москве границы", – писал Г.В.Чичерин секретарю ЦК РКП(б) В.М.Молотову 29 мая 1921 г. по поводу требований грузинского руководства изменить границу (там же). Та же мысль высказывалась и в шифровке Чичерина от 31 мая того же года находящемуся в Тифлисе полномочному представителю РСФСР в Турции С.П.Нацаренусу: "Если вдруг кавказцы потребуют себе всю южную часть Батумской области, турки подумают, что мы нарушаем договор и намерены идти на них дальше. Последствия этого могут быть самые неприятные. Турки перестанут смотреть на Московский договор как на нечто твердое и увидят в нем бумажку, могущую ежеминутно быть разорванной. Результатом может быть полная перемена ориентации туркпра (турецкого правительства – Р.К.)" (РГАСПИ, ф. 5, оп. 1, д. 2117, л. 15).
42. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.52998, лл.39-40. (Документ предоставлен нам С.А.Азнаурьяном, которому выражаем нашу искреннюю благодарность); НАА. ф.113. оп.3, д.21, л.60.
43. РГАСПИ, ф.5, оп.2, д.315,л.24.
44. РГАСПИ, ф.5, оп.1, д.2117, л.1.
45. РГАСПИ, ф.85, оп. С/Турция, д.25, лл. 40-43 (Цит. по: Геноцид армян ... с.469-470, док. № 1150). Подчеркнуто мною...
46. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.53001, л.28.
47. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.53001, л.65. Подчеркнуто мною. Документ впервые был опубликован в г. "Голос Армении" (Ереван), 2001, 15 марта.
48. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.53001, л.29; РГАСПИ, ф.5, оп.1, д.2056, л.6. Подчеркнуто мною.
49. Документы внешней политики   с.513. док.№290.
50. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.53001, л.44. (Документ впервые был опубликован в 1999г. в ж."Вестник общественных наук" Национальной Академии наук РА (№1. с.183-187. Публикация Р.В.Казанджяна) ; в 2003г. был повторно опубликован проф.Ю.Г.Барсегoвым в сб. док. "Геноцид армян ... " , т.2 ч.1, с.465-466, док.№1143) .
51. Ленин В.И. – Полн.собр.соч. Т.42, с.355.
52. АВП РФ, ф.04, оп.51, п.321*, д.54877, лл.21-23.
53. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.52987, л.21. Документ предоставлен нам докт. ист. наук А.Г.Авакяном, которому выражаем нашу искреннюю благодарность.
54. Цит. по : Геноцид армян ... с.393, док.№1082.
55. Имеется в виду факт нахождения упомянутых территорий в составе Турции и их национальный состав на момент написания записки.

56. По всей вероятности Сталин имел в виду требование буржуазной Армении в рамках Севрского договора.
57. РГАСПИ, ф.558, оп.1, д.5214, л.1 об.
58. АВП РФ, ф.04, оп.39, п.232, д.52001, л.3 (Цит. по: Геноцид армян... с. 195, док. № 856). Подчеркнуто мною. См. также: РГАСПИ, ф. 64, оп. 1, д.21, л.126.
59. АВП РФ, ф.04, оп.51, п.321ª, д.54870, лл.4-7 (Цит. по: Геноцид армян... с.228-231, док. № 892). Подчеркнуто мною.
60. АВП РФ, ф.0148, оп.4, п.4, д.23, л.78. Подчеркнуто мною.
61. АВП РФ, ф.04, оп.51, п.321ª, д.54873, л.5 (Цит. по: Геноцид армян... с.234, док. № 899). Подчеркнуто мною.
62. АВП РФ, ф.04, оп.51, п.321ª, д.54870, лл.2-3 (Цит. по: Геноцид армян... с.242, док. № 908). Подчеркнуто мною.
63. РГАСПИ, ф.558, оп.1, д.5579, л.2.
64. РГАСПИ, ф.558, оп.1, д.5582, лл.1-3.
65. РГАСПИ, ф.558, оп.1, д.2076, л.1; ф.85, оп.18, д.84, лл.1-3. Желиговский – польский генерал, войска которого, под руководством начальства, творили бесчинства на оккупированных советских территориях.
66. РГАСПИ, ф.558, оп.1, д.5214, лл.1, 1 об. В те дни аналогичные сообщения поступали также от торгпреда РСФСР в Англии Л.Б.Красина, руководителя совинформбюро в Трапезунде (Турция) Г.Астахова и др. (см. Хейфец А.Н. – Советская дипломатия и народы Востока. 1921-1927. М., 1968, с. 87, 89).
67. РГАСПИ, ф.558, оп.1, д.3529, лл.1, 1 об.
68. РГАСПИ, ф.2, оп.1, д.17433, л.1: Ленин В.И. – Полн.собр.соч., т.52,с.92.
69. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941-1945 гг. T.VI. Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании. М., 1980, с.40-41, 158-159 и др. / МИД СССР.

1921Թ. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՇՈՒՐՋ

Առաջին համաշխարհային պատերազմը ավարտվեց Վերսալի հաշտության պայմանագրով, որը Սեն-Ժերմենի, Նեյի, Տրիանոնի և Սևրի պայմանագրերի հետ միասին պատմության մեջ մտել է Վերսալյան համակարգ անվանումով:

Խորհրդային Ռուսաստանը հրավիրված չէր Փարիզի խորհրդաժողովին և խորհրդային իշխանության գոյության համար նպաստավոր միջազգային պայմաններ ապահովելու նպատակով, իր հերթին, 1918 - 1921թ.թ. ձեռնամուխ եղավ մի շարք պետությունների հետ պայմանագրերի կնքմանը:

Եթե Ռուսաստանի կնքած պայմանագրերի շարքը, ընդհանուր առմամբ, հիմնվում է պայմանադիր պետությունների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը հարգելու վրա, ապա նույնը չի կարելի ասել 1921թ. մարտին Մոսկվայում, Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված չարաբաստիկ պայմանագրի մասին:Մոսկվայի և նրա հիման վրա կնքված Կարսի պայմանագրերի համաձայն ամբողջ Արևմտյան Հայաստանը և Արևելյան Հայաստանի մի մասը,որը մինչև 1918թ. եղել է Ռուսաստանի կազմում (մոտավորապես 23,6 հազ. կմ^2) անցան Թուրքիային, իսկ Նախիջևանի նկատմամբ սահմանվեց Ադրբեջանի պրոտեկտորատը:

Ինչպես հայտնի է ՌՍՖՍՀ-ն սկզբնական շրջանում չընդունեց Անդրկովկասում ստեղծված անկախ հանրապետություններին և ձգտում էր այդ հանրապետությունները խորհրդայնացնել և շաղկապել Ռուսաստանի հետ: Սակայն 1921թ., երբ կնքվեց պայմանագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև Անդրկովկասյան հանրապետությունները արդեն խորհրդային էին և այն տարածքային զիջումները, որ կատարվեցին Թուրքիային, առաջին հայացքից դժվար է հասկանալ այդ երկու պետությունների ավանդական սխոյանության ֆոնի վրա: Ճշմարտությունը վերհանելու համար կանգ առնենք այն խիստ բարդ իրավիճակի վրա, որ ստեղծվել էր 1920թ. վերջին և 1921թ. սկզբներին Ռուսաստանում:

Դեռևս 1920թ. նոյեմբերի 21-ին ՌԿ(բ)Կ Մոսկվայի նահանգական կոնֆերանսում ունեցած իր ելույթում Վ. Լենինը նշում էր, որ. « ...Կովկասում ներկայումս հյուսվում են շատ բարդ պայմաններ, որոնք վերին աստիճանի դժվար է ըմբռնել, ըստ որում մեր վզին կարող է պատերազմ փաթաթվել նույն իսկ օրավուր»: Իսկ 1921թ. փետրվարի 28-ին բանվորների և գյուղացիների դեպուտատների Մոսկվայի խորհրդի պլենումի նիստում Լենինը նշում էր, որ Կովկասում «մենք մեծ պատե-

րագծի սահմանագծին ենք գտնվում»:

Այս պայմաններում Ռուսաստանին ոչ միայն անհրաժեշտ էր չեզոքացնել Թուրքիային, որի հետ պատերազմը անցանկալի էր, այլև դաշնակից էր պետք Անտանտի դեմ ուղղված պայքարում: Քանի որ Լոնդոնում այդ ժամանակ բանակցություններ էին վարվում Թուրքիայի և Անտանտի պետությունների միջև, ապա Ռուսաստանի համար մտավախություն կար, որ Թուրքիան կանցնի Անտանտի կողմը և դրա հետևանքով Անդրկովկասի հարավում կստեղծվի օջախ՝ ուղղված Ռուսաստանի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների դեմ:

Բոլշևիկները միանգամայն սթափ մոտեցում էին ցուցաբերում քեմալական շարժմանը: «...Անատոլիական Թուրքիան "հեղափոխական" է կոչվում այն չափով, որ չափով այն իր ազգային անկախության համար մղած պայքարում գրավել է հեղափոխական դիրքեր համաշխարհային իմպերիալիզմի նկատմամբ»:

Այս պայմաններում ստորագրվեցին Մոսկվայի, իսկ դրանից 7 ամիս հետո Կարսի պայմանագրերը: Որոշ հանգամանքների հաշվառմամբ՝ այդ պայմանագրերը հարկավոր է քննության առնել առանց իրարից բաժանելու:

Այդ հանգամանքներից է այն, որ.

1. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը վերաբերում են միևնույն հարցին:
2. Մոսկվայի պայմանագրում (հ. 15) Ռուսաստանը պարտավորվում էր Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ ձեռնարկել քայլեր, որպեսզի վերջիններս հետագայում Թուրքիայի հետ բանակցություններում ընդունեն այն հոդվածները, որոնք անմիջականորեն վերաբերում են իրենց:
3. մինչև Կարսի խորհրդաժողովի գումարումը Ռուսաստանը և Թուրքիան արդեն վավերացրել էին Մոսկվայի պայմանագիրը և 1921թ. սեպտեմբերի 22-ին, առանց սպասելու Կարսի պայմանագրի կնքմանը, որ պարզվի, թե Մոսկվայի պայմանագրի որ դրույթներն են անընդունելի Անդրկովկասի հանրապետությունների համար, Կարսում փոխանակեցին վավերագրերը:

Բացի այդ, Կարսի պայմանագիրը որպես առանձին միջազգային փաստաթուղթ չի ընդունվում նաև հայ պատմագրության մեջ: Այսպես, Բ. Բորյանը նշում է, որ Կարսի պայմանագիրը «քաղաքական տեսակետից չի հանդիսանում միջազգային-իրավական նորմերի ինքնուրույն փաստաթուղթ, այլ կրկնում և ամրագրում է 1921թ. մարտի 16-ի պայմանագիրը»:Կարսի պայմանագիրը որպես միջազգային-իրավական ակտ չի դիտում նաև ակադեմիկոս Գ. Գալոյանը: Մոսկվայի և Կարսի պայմանգրերը ետպատերազմյան շրջանի միջազգային իրավունքով գնահատելու գայթակղությունը մեծ է, քանի որ ժամանակակից միջազգային իրավունքը ավելի առաջադիմական է, քան այն ժամանակ-

կա իրավունքը, ուստի ավելի շատ նորմեր է ընձեռում այդ պայմանագրերը անվավեր ճանաչելու համար: Սակայն մեթոդոլոգիական տեսանկյունից ավելի ճիշտ կլինի պայմանագրերի գնահատումը ըստ դարաշրջանի միջազգային իրավունքի: Ինչպես նշվում է «Միջազգային իրավունքի դասընթացում». «Սահմանները որոշող պայմանագրի վավերականությունը գնահատելիս՝ հարկավոր է առաջնորդվել այն ժամանակաշրջանի միջազգային իրավունքով, երբ այդ պայմանագիրը կնքվել է: Չի կարելի պահանջել, որ պետությունը XVդ. ղեկավարվի, ասենք, XXդ. իրավունքով: Հետևաբար, պետությունների փոխհարաբերությունները, ընդհանրապես, և տարածքային հարցերը, մասնավորապես, XV դարում պետք է գնահատել այդ ժամանակաշրջանի իրավունքով: Այդպես, տարածքի ձեռք բերման իրավաչափությունը XV դարում պետք է գնահատվի այն ժամանակ գոյություն ունեցած կանոններով:

Սրա հետ կապված հարկավոր է նշել, որ 1970թ. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին ՄԱԿ-ի հռչակագիրը հաստատելով տարածքի պատկանելիության փոփոխության արգելումը ուժի սպառնալիքով կամ նրա կիրառությամբ, այնուամենայնիվ, վերապահություն է անում, որ դա չպետք է մեկնաբանվի որպես անցյալի համաձայնագրերը, որոնք կնքվել են մինչև ՄԱԿ-ի կանոնադրության ընդունումը, իրավաբանական ուժից զրկող, եթե այդ պայմանագրերը միջազգային իրավունքի համաձայն ուժի մեջ են: Տարածքային վեճերի լուծման պրակտիկայում բազմիցս նշվել է համապատասխան ժամանակաշրջանի միջազգային իրավունքը հաշվի առնելու անհրաժեշտությունը (օրինակ, Պալմաս կղզու մասին վեճով արբիտրաժային որոշումը)»:

Մոսկվայի պայմանագրով խախտվում էր ՀԽՍՀ տարածքային ամբողջականությունը, նրա սուվերենությունը: ՀԽՍՀ-ն չէր մասնակցում Մոսկվայի պայմանագրին, հետևաբար խախտվում էր նաև սուվերեն հավասարության սկզբունքը:

Նախահեղափոխական ռուս իրավաբան Ա.Ն.Ստոյանովը գրում էր. «միջազգային պայմանագրերը անվավեր են, եթե հակասում են միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքին (այսինքն՝ սուվերենության, իրավահավասարության և այլն) »:

Վ. Դանևսկին և Ֆ. Մարտենսը գրում էին, որ միջազգային պայմանագրերը, որոնք սահմանափակում կամ ոչնչացնում են պետությունների հիմնական իրավունքները՝ անօրինական են և հակասում են միջազգային իրավունքին:

Մոսկովյան պայմանագրի անվավերությունը կայանում էր նաև նրանում, որ միջազգային պայմանագրային պրակտիկայում աննախադեպ ձևով անտեսվում էր pacta tertiis nec nocent nec prosunt (պայմանագրերը չեն վնասում և չեն բարենպաստում երրորդ անձանց) սկզբունքը: Միջին դարերում այդ սկզբունքը ուներ հետևյալ աֆորիզմի ձևը. «Գործը, որը կատարվել է այլոց միջև չպետք է վնասի նրան

չմասնակցող անձին» (res interalios acta alteri nocere non debet):

Հայ ճանաչված միջազգայնագետ Յու. Բարսեղովը, իր "Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է" աշխատության մեջ, խոսելով տարածքային վեճերի մասին, հպանցիկ նշում է, որ. "...Տարածքային վեճի առարկա կարող է լինել միջազգային պայմանագրի իրավական ուժը, որը դիտվում է որպես տարածքային տիրապետման իրավահիմք: Օրինակ, այն դեպքում, երբ պետությունը յուրացրել է մյուս պետության տարածքը ոչ թե կամավոր զիջման հիման վրա, այլ երկրորդ կամ երրորդ պետությունների համաձայնությամբ, որոնք տնօրինում էին օտար տարածքը ի խախտումն միջազգային իրավունքի "nemo dat quad non habet" (ոչ ոք չի կարող տալ այն, ինչ չունի) կամ "nemo plus juris transferre potest quam ipse habet" (ոչ ոք չի կարող ավելի շատ իրավունք տալ, քան ինքն ունի) :

Ի միջի այլոց, նշենք, որ նման համաձայնություններ տեղ էին գտել նաև ԽՍՀՄ պրակտիկայում: Դա 1921թ. մարտին Մոսկվայում ստորագրված խորհրդա-թուրքական պայմանագիրն է և ԽՍՀՄ-ի և Ֆաշիստական Գերմանիայի միջև 1939թ. չհարձակման մասին պայմանագրի վերաբերյալ գաղտնի արձանագրությունը":

Այդ հանգամանքը նշում է նաև Հ. Թորիկյանը. "...Դաշնագիր մը կրնաց պարտավորություններ դնել միայն ստորագիր կողմերուն և ոչ թե երրորդի մը վրայ: Հայաստանի հանրապետությունը կողմ չէր այս դաշնագրին պարագային և, հետևաբար, հայկական հողամասերու վերաբերող դաշնագրի տրամադրությունները չեն կրնար, իրավական պարտավորություններ դառնալ Հայաստանի համար":

Սա միջազգային պայմանագրային իրավունքի կարևորագույն սկզբունք է: Ինչպես նշում է Մարտենսը. «Ընդհանուր կանոնի համաձայն, պայմանագիրը պարտավորեցնում է միայն կոնտրագենտներին»:

Այդ մասին նշում է նաև Ֆ. Լիստը. «Պայմանագիրը լիազորում է և պարտավորեցնում է պայմանագրի մեջ մտնող կողմերին: Հետևաբար, պայմանագիրը չի լիազորում և պարտավորեցնում երրորդ պետություններին»:

Հետագայում այդ սովորութային նորմը տեղ գտավ 1969թ. մայիսի 23-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածում: «Պայմանագիրը երրորդ պետության համար պարտավորություններ ու իրավունքներ չի ստեղծում առանց նրա համաձայնությանը դրան»:

Հետևաբար, այդ պայմանագրերը (1921թ. Մոսկվայի և Կարսի) ab initio (սկզբից) օրինական ուժ չունեն, քանի որ նրանց բովանդակությունը հակասում է միջազգային իրավունքին:

Պատմագրության մեջ փորձեր են եղել Հայաստանի Մոսկովյան կոնֆերանսին չմասնակցելու պատասխանատվությունը բարդել հենց

Հայաստանի վրա: Ցավոք, դա ընդունված էր անգամ հայ պատմագրության մեջ: Հայկական պատվիրակության մասնակցության ձախողումը բացատրվում էր դաշնակցության 1921թ. փետրվարյան ապստամբությամբ: Սակայն անտեսվում էր թուրքական կողմի մեղավորությունը: Ինչպես արդարացիորեն նշում է Է. Զոհրաբյանը իր «Հայ-թուրքական հարաբերությունների պատմությունից (1920թ. նոյեմբեր - 1921թ. փետրվար)» հոդվածում. «Սովետական Հայաստանի պատվիրակությանը վիճակված չէր մասնակցել կոնֆերանսին: Մոսկվա ժամանած քեմալական պատվիրակությունը հրաժարվեց հայ պատվիրակների հետ կլոր սեղանի շուրջ բանակցելուց: Մարտի 12-ի նիստի արձանագրությունները ցույց են տալիս, որ թուրքերը իրենց այդ վարքագիծը բացատրել են հայ պատվիրակների հետ բանակցություններ վարելու "լիազորությունների " բացակայությամբ, որը միմիայն պատրվակ էր:...Հայ պատվիրակների հետ բանակցություններից հրաժարվելու պատճառը...սեպարատ պայմանագիր կնքելու ցանկությունն էր: Այդ բանն ապացուցվեց նաև հետագայում, երբ, չնայած Մոսկվայում ձեռք բերված համաձայնությանը, տունդարձի ճանապարհին թուրքական պատվիրակները Թիֆլիսում նորից հրաժարվեցին միացյալ կոնֆերանսից, և Ադրբեջանի հետ առանձին բանակցություններ սկսելու փորձ կատարեցին»:

1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի կնքումից հետո անցել է ավելի քան 80 տարի, սակայն ՀՀ-ը պաշտոնապես չի արտահայտել իր վերաբերմունքը այդ պայմանագրերի նկատմամբ: Թեև հանուն ճշմարտության պետք է ասել, որ առանձին գործողություններ եղել են: Այսպես, դեռևս 1921թ. Հայաստանի կառավարությունը բողոք ներկայացրեց Ռուսաստանի կառավարությանը, որ առանց իր մասնակցության լուծվել էր Խորհրդային Հայաստանի տարածքների հարցը: Այդ կապակցությամբ Չիչերինը հետևյալ պատասխանն է հղել Մոսկվայում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին. «Հարգելի ընկեր, ստացել եմ ընկ. Բեկզադյանի ստորագրությամբ ռուս-թուրքական կոնֆերանսում Ռուսաստանի պատվիրակության դեմ մեղադրանքներով լի դիմումը: Դիմումը ելնում է նրանից, որ իբր թե մեր կողմից ոչ մի ջանք չի գործադրվել Կարսը պաշտպանելու համար: Ընկ. Բեկզադյանը գործն այնպես է ներկայացնում, կարծես թե բանակցություններն սկսվել են մեր քաղաքական հանձնաժողովի առաջին նիստով:

Նա տարօրինակ կերպով շրջանցում է, որ քաղաքական հանձնաժողովի նիստը մեր և թուրքերի միջև սկսվել է իսկական բանակցություններից երկու շաբաթ անց: Բանակցությունների առավել լարված շրջանը տեղի է ունեցել բոլորովին էլ ոչ հանձնաժողովի նիստերում, այլ մասամբ անդրկուլիսյան բանակցություններում՝ ազդեցիկ ընկերների աջակցությամբ: Քաղաքական հանձնաժողովի նիստերը բացվում էին այն ժամանակ, երբ հարցերն արդեն որոշված էին լինում:

Այդ պատճառով էլ պայմանագրային սահմանը ոչ թե ուժով չարդարացվող նվեր է թուրքերին, այլ՝ ամենադաժան երկարատև պայքարի արդյունք»:

Սակայն, չնայած այդ բողոքին ՀԽՍՀ իշխանությունները, անելով միայն աննշան ուղղումներ, ստորագրեցին նույն բովանդակությունը ունեցող Կարսի պայմանագիրը:

Այնուհետև, 1945թ. Պոտսդամի կոնֆերանսում ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մոլոտովը բարձրացրեց հայկական տարածքները ԽՍՀՄ-ին վերադարձնելու հարցը: Նա մասնավորապես նշեց, որ. «1921թ. թուրքերը օգտվեցին Սովետական պետության թուլությունից և խլեցին նրանից Սովետական Հայաստանի մի մասը: Հայերը Խորհրդային Միությունում իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառով էլ Սովետական կառավարությունը բարձրացրել է Խորհրդային Միությանը օրինականորեն պատկանող տարածքների վերադարձման հարցը»:

1989թ. ՀԽՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը ելույթ ունենալով ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների առաջին համագումարում նշեց, որ. «երբ արտաքին գործերի մինիստր Մոլոտովը իր ժամանակին (1953թ.-Ս.Ս.) հայ ժողովրդի անունից հայտարարեց, որ նա հրաժարվում է Կարսի մարզի և այն տարածքների նկատմամբ պահանջներից, որտեղ տեղի էր ունեցել 1915թ. ցեղասպանությունը, ապա նա ճշմարտությունը չի ասել: Նա անհիմնորեն ոտնահարում էր Խորհրդային Միության ժողովուրդներից մեկի զգացմունքներն ուշահերը: Հայ ժողովուրդը խաղաղության կողմնակից է: Ոչ մեկը չի առաջարկում այս հարցում ուժ կիրառել, սակայն մենք հույս ունենք, որ այս հարցը հետագայում կգտնի իր խաղաղ լուծումը»:

1990-1991թթ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդում հատուկ հանձնաժողով ստեղծվեց Հր. Սիմոնյանի գլխավորությամբ, որը պետք է ուսումնասիրեր Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վավերականության հարցը: Սակայն հանձնաժողովի գործունեությունը հետագա շարունակություն չունեցավ, քանի որ այն ժամանակ դա Հայաստանին կկանգնեցներ մեծ բարդությունների առաջ:

Այժմ անհրաժեշտ է, որ Հայաստանի երրորդ հանրապետությունը հատուկ արտահայտի իր դիրքորոշումը խնդրո առարկա պայմանագրերի մասին: Դա անհրաժեշտ է այն պատճառով, որ միջազգային իրավունքի արևմտյան դոկտրինը մինչև օրս էլ որպես տարածքի ձեռքբերման կամ պահպանման իրավահիմք ընդունում է վաղեմության ժամկետը:

Այդ ժամկետը դադարում է գործելուց, երբ տուժող կողմը ինչ-որ ձևով արտահայտում է իր դժգոհությունը (պետական իշխանության բարձրագույն մարմինների ընդունած հայտարարություններում, նոտաների ձևով, ժողովրդական ապստամբությունների և այլն): Հակառակ դեպքում հաշվվում են, թե տուժող կողմը լռելյայն ընդունել է կա-

տարված տարածքային փոփոխությունները:

Դա ամրագրված է նաև "Միջազգային պայմանագրերի մասին" Վիեննայի կոնվենցիայի 45-րդ հոդվածում: Այնտեղ նշվում է, որ «Պետությունը այլևս իրավունք չունի վկայակոչելու պայմանագրի անվավերության կամ ընդհատման, նրանից դուրս գալու կամ նրա գործողությունը դադարեցնելու հիմքը 46-50-րդ հոդվածների կամ 60-րդ և 62-րդ հոդվածների հիման վրա, եթե, այն բանից հետո երբ նրան հայտնի են դարձել հետևյալ փաստերը՝ ա) նա որոշակիորեն համաձայնել է, որ պայմանագիրը՝ նայած դեպքին, վավերական է, պահպանում է ուժը կամ մնում է գործողության մեջ, կամ բ) նա պետք է իր վարքագծի բերումով համարվի լռելյայն համաձայնվող այն բանին, որ պայմանագիրը՝ նայած դեպքին, վավերական է, պահպանում է ուժը կամ մնում է գործողության մեջ»:

Կարծում ենք՝ եկել է ժամանակը չեղյալ հայտարարելու այդ չարաբաստիկ պայմանագրերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նոր ի հայտ եկած արխիվային նյութերի համաձայն այդ պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին, այլ 2 օր անց՝ մարտի 18-ին և թվագրված է հետին թվով (մանրամասն տես *Р. Казанджян*. "К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921г.", - "Вестник общественных наук" НАН РА, Ереван, 1999, N1, с. 183-187.):
2. *Վ. Ի. Լենին*, ԵԼԺ, հ 42, էջ 29
3. Նույն տեղում, էջ 439-440
4. *Жизнь национальностей*, 22 марта 1921г.
5. *Б. Борьян*, "Армения, международная дипломатия и СССР " ч. II, 1929, М-Л, с. 300-301:
6. Տես *Գ. Գալոյան*, " Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թ.թ." Ե, 1999, էջ 484:
7. *Курс международного права*. Т2, М, Наука, 1989, с. 98-99:
8. *А. Н. Стоянов*. "Очерки истории и догматики международного права ", Харьков, 1875, с. 494:
9. *В. Н. Даневский*, "Пособие к изучению истории и системы международного права", вып. 1, Харьков, 1892, с 219; *Ф. Мартенс*, "Современное международное право цивилизованных народов", Т 1, изд. 4-е, СПб, 1898, с. 394-396;
10. *Յու. Բարսեղով*, "Ցեղասպանման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է", Հայաստան, Ե, 1990, էջ124
11. *Շ. Թորիկյան*, "Հայկական հարցը և միջազգային օրենքը", Բեյրութ, 1976, էջ106-107
12. *Ф. Мартенс*. Указ. соч., Т1, СПб, 1898, с. 411;
13. *Ф. Лист*. Международное право в систематическом изложении, Юрьев (Дерпт), 1902, с.179;

14. *Действующее международное право*, Т1, М, 1996,с. 354;
15. Տես "*Լրաբեր*" հասարակական գիտությունների, 1971, N10 (346), էջ 20:
16. Գ. *Գալոյան* նշվ. աշխ., Ե, 1999, էջ 456-457
17. *Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941-1945гг.*, Т VI, Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав - СССР, США и Великобритании (17 июля - 2 августа 1945г.). Сборник документов, М. , 1980, с. 40-41;
18. *Первый съезд народных депутатов СССР*, стенографический отчет, Т II, 25 мая - 9 июня 1989г., с. 332-333, М. 1989
19. *Ю. Барсегов*, Территория в международном праве, М, 1958, Юр. лит., с.107-109:
20. *Действующее международное право*, Т.1, М, 1996, с. 258:

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մերձավոր Արևելքն իր հարուստ նավթային պաշարներով և ռազմավարական կարևոր դիրքով հատուկ տեղ է զբաղեցնում միջազգային հարաբերությունների համակարգում: Այն մշտապես հանդիսացել է գերտերությունների անզիջում պայքարի առարկա և նրանց հակամարտ շահերի բախման կիզակետ:

Այդ տարածաշրջանի դերն էլ ավելի մեծացավ սառը պատերազմի սկզբնական շրջանում, երբ Վաշինգտոնն ակտիվորեն ազդեցության ոլորտներ և դաշնակիցներ էր փնտրում Մերձավոր Արևելքում՝ Խորհրդային Միության դեմ «համընդհանուր պաշտպանական համակարգ» ստեղծելու նպատակով: Այդ նպատակին էր ծառայում Թուրքիայի և Հունաստանի ընդգրկումը ՆԱՏՕ-ի մեջ և Իրանի չեզոքացումը, ինչպես նաև ամերիկյան օժանդակությունը չափավոր արաբական երկրներին: 1955թ. սկսած Եգիպտոսում Խորհրդային Միության դիրքերի ամրապնդման հետևանքով ամերիկյան քաղաքականությունը տարածաշրջանում էլ ավելի ակտիվացավ, ուժեղացնելով երկու գերտերությունների միջև առճակատումն ու անմիջական բախման հնարավորությունը:

Փաստորեն, սառը պատերազմի «խաղի կանոնները» եվրոպական մայրցամաքից տեղափոխվեցին Մերձավոր և Միջին Արևելք, այսուհետ այնտեղ տեղի ունեցող նշանակալից զարգացումները ենթարկելով գերտերությունների գլոբալ դիմակայության տրամաբանությանը:

ԽՍՀՄ և ԱՄՆ-ի միջև ընթացող պայքարը հիմնականում կենտրոնանալով արաբա-իսրայելյան հակամարտության շուրջը, ձևավորեց երկու հակադիր ճամբարներ, որոնցից առաջինն ընդգրկում էր ԽՍՀՄ և «ծայրահեղ ազգայնական» վարչակարգեր ունեցող Եգիպտոսը, Սիրիան և 1958թ. հետո նաև Իրաքը, իսկ երկրորդը՝ ԱՄՆ, Իսրայելը և «չափավորական» արաբական թագավորությունները՝ Հորդանանը, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և այլն:

Այդ քաղաքականության ենթատեքստում Միացյալ Նահանգները ակտիվորեն ներքաշեցին «մեծ խաղի մեջ» ԽՍՀՄ-ի և Արաբական աշխարհի անմիջական հարևան՝ Թուրքիային:

Այս առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում Թուրքիայի հարաբերությունների բնույթը Սիրիայի հետ, որն իրավամբ համարվում է Իսրայելին դիմակայող առաջնային «ճակատային պետությունը»: Հատկապես 1979թ. հետո, երբ Եգիպտոսը ստորագրելով Իս-

րայելի հետ Քեմփ-Դևիդի համաձայնագիրը, դուրս եկավ «ճակատային գծից», իր տեղը զիջելով Սիրիային, որն էլ իր վրա վերցրեց արաբա-իսրայելյան հակամարտության արաբական ճամբարի ղեկավարությունը, ստանձնելով գործնականում պատերազմելու և խաղաղություն հաստատելու որոշման մենաշնորհը: Սիրիայի և Թուրքիայի միջև հարաբերությունները մշտապես հատկանշվել են փոփոխականությամբ՝ նորմալ դիվանագիտականից մինչև քաղաքական ու ռազմական տեսանկյունից ծայրաստիճան լարված, իրենց վրա կրելով ինչպես անցյալից ժառանգված հիմնախնդիրների, այնպես էլ ընթացիկ գլոբալ և տարածաշրջանային գործընթացների ազդեցությունը:

Այն հանգամանքը, որ «սառը պատերազմի» տարիներին Թուրքիան և Սիրիան գտնվում էին միանգամայն տարբեր բևեռներում առավել բարդացնում էր նրանց ոչ միայն երկկողմ հարաբերությունների բնականոն ընթացքը, այլև մի շարք լուրջ հակասություններ առաջացնում տարածաշրջանում նրանց կողմից տարվող քաղաքական ուղեգծերի միջև: Եթե Սիրիան հանդիսանում էր Մոսկվայի դաշնակիցը տարածաշրջանում, ապա, Թուրքիային վերապահված էր առաջնային դերակատարություն Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների դիրքերի ամրապնդման գործում:

Սակայն պետք է նշել, որ Թուրքիան, պաշտպանելով հանդերձ Արևմուտքի շահերը Մերձավոր Արևելքում, 70-ականներից և առավել ակտիվորեն 80-ականներից սկսած փորձում էր ամրագրել իր ետևից «տարածաշրջանային ուժի» կարգավիճակը և որդեգրել էր արտաքին քաղաքական հետևյալ սկզբունքները.

-սերտ հարաբերությունների հաստատում և պահպանում բոլոր մահմեդական երկրների հետ անկախ նրանց քաղաքական օրիենտացիայի;

-չմիջամտում տարածաշրջանի երկրների միջև առկա հակամարտություններին;

-աջակցություն տարածաշրջանային հիմնախնդիրների խաղաղ կարգավորմանը առանց արտաքին միջամտության;

-Պաղեստինի ժողովրդի «արդար դատի» պաշտպանություն[1]:

Կարող ենք հաստատել, որ չնայած Մերձավոր Արևելքում ընթացող սառը պատերազմին, Թուրքիան, ելնելով իրատեսական հաշվարկներից (նավթի անխափան ներհոսքի ապահովում, շուկաների ընդլայնում, իսլամական շարժման մեջ իր դիրքերի ամրապնդում և այլն.), այնուամենայնիվ փորձում էր պահպանել որոշակի ինքնուրույնություն հատկապես արաբական երկրների նկատմամբ իր տարածաշրջանային քաղաքականության մշակման և իրականացման գործում: Մ. Գորբաչովի «վերակառուցումը» և կոմունիզմի փլուզումը Արևելյան Եվրոպայում ուղղակիորեն ազդեցին Սիրիայի արտաքին քաղաքական ուղեգծի վրա: Դամասկոսը գիտակցելով աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխման վտանգը, սկսեց փոխզիջումային

քայլեր ձեռնարկել Սիրիայի հանդեպ Արևմուտքի դիրքորոշումը մեղմացնելու ուղղությամբ:

Գլոբալ և տարածաշրջանային փոփոխությունները, ի տարբերություն Թուրքիայի, ծանր հետևանքներ ունեցան Դամասկոսի համար: Եթե Սիրիային ցուցաբերվող խորհրդային ռազմական, քաղաքական և դիվանագիտական աջակցությունը նվազեց, ապա Թուրքիայի ռազմավարական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ ու նրա դիրքերը տարածաշրջանում էլ ավելի ամրապնդվեցին: 1990-ականների սկզբին ռազմավարական տեսակետից Անկարայի դիրքերն ավելի ամուր էին, քան Սիրիայինը:

1991թ. Պարսից ծոցի ճգնաժամը չափազանց շահութաբեր եղավ թե Սիրիայի և թե Թուրքիայի համար ոչ միայն տնտեսական[2], այլև միջազգային դիրքերի բարելավման տեսանկյունից: Վաշինգտոնի կողմից ղեկավարվող հակասադդամական կոալիցիային Սիրիայի մասնակցությունը վերջ դրեց վերջինիս մեկուսացմանը արաբական աշխարհում և միջազգային ասպարեզում: Պարսից Ծոցի պատերազմը միևնույն ժամանակ հստակեցրեց Ասադի համար այն հանգամանքը, որ արաբա-իսրայելյան հակամարտությունը անհնարին է լուծել ուժի միջոցով: Խորհրդային Միության համագործակցությունը ԱՄՆ-ի հետ ճգնաժամի օրերին, մեկ անգամ ևս ապացուցեց, որ սառը պատերազմի խաղի կանոնները փոխվել են, արձանագրելով ԱՄՆ-ի առաջատար դիվանագիտական դերը:

ԽՍՀՄ-ի փլուզումը և սառը պատերազմի ավարտը բացարձակապես նոր իրավիճակ և ուժերի դասավորում ստեղծեցին Մերձավոր Արևելքում, ծանր կացության մեջ դնելով որոշ արաբական երկրներին, այդ թվում նաև Սիրիային: Ստեղծված պայմաններում Ասադը քաջ գիտակցում էր, որ իր քաղաքական կենսունակությունը և երկրի անվտանգության ապահովումը մեծապես կախված կլինի ԱՄՆ-ի հետ իր հետագա հարաբերություններից: Տարածաշրջանում իր դիրքերն ամրապնդելու համար Սիրիայի համար հրատապ էր դառնում նաև Թուրքիայի հետ հարաբերությունների ողջ համակարգի վերանայումը:

Սառը պատերազմի ավարտն իր հերթին որոշակի փոփոխությունների հանգեցրեց նաև տարածաշրջանում Թուրքիայի կողմից վարվող քաղաքականության մեջ, մասնավորապես անվտանգության վերաբերող հարցերում: Խորհրդային վտանգի անհետացումը և իրաք-քուվեյթյան ճգնաժամը ստիպեց Թուրքիային նորովի ձևակերպել իր ազգային անվտանգության շահերը Մերձավոր Արևելքում: Թուրքիան ստանձնեց ՆԱՏՕ-ի առաջատար պետության կարգավիճակը տարածաշրջանում, իր ակտիվ քաղաքականության ոլորտում ընդգրկելով Անդրկովկասն ու Կենտրոնական Ասիան:

Աշխարհաքաղաքական զարգացումները տարածաշրջանում բարենպաստ պայմաններ ստեղծեցին նաև Թուրքիայի և Սիրիայի միջև հարաբերությունների բարելավման ու առկա հիմնախնդիրների

աստիճանաբար կարգավորման համար: Հոդվածի սկզբում մենք նշել ենք, որ թուրք-սիրիական հարաբերություններում առկա են անցյալից մնացած հիմնախնդիրներ: Նրանցից ամենազգայունն է հանդիսանում 1939թ. ֆրանս-թուրքական համաձայնագրի հիման վրա հյուսիսային Սիրիայի ծովափնյա *Ալեքսանդրետի սանջակի*[4] Թուրքիային կցումը: Մինչ օրս Սիրիան չի ճանաչել ֆրանսիացիների կողմից հարցի նման միակողմանի ու կամայական «լուծումը»: Այսպիսով, Ալեքսանդրետի սանջակի խնդիրը Սիրիայի և Թուրքիայի միջև հարաբերություններում ծառայեց այն «քարդուլթը», որից կողմերին այսպես էլ չհաջողվեց ձերբազատվել:

Տարիներ շարունակ երկկողմ հարաբերություններում *քրդական և ջրային խնդիրների* հետ մեկտեղ առկա են եղել սահմանազատման, ահաբեկչության աջակցության, թմրադեղերի և զենքի մաքսանենգության հարցերի հետ կապված հակասություններ: Թուրքիան շարունակ մեղադրում էր Սիրիային հակաթուրք քրդական անջատողական խմբավորումներին աջակցելու մեջ[5]: Եվ ինչպես Թուրքիայի նախկին նախագահ Թուրգութ Օզալն էր արտահայտվում. «Սիրիայում ապրում է մեկ միլիոն քուրդ: Չնայած դրան սիրիացիները պաշտպանում են /օգտագործում են/ նրանց: Մեզ մոտ (Թուրքիայում-Ռ.Կ) բնակվում է 10 մլն. քուրդ: Ավելի լավ է մենք նրանց պաշտպանենք, քան սիրիական իշխանությունները: Մենք չպետք է թույլատրենք նրանց օգտագործել քրդերին»[6]: Թեև կառավարական մակարդակի վրա Սիրիան մշտապես հանդես էր գալիս Մերձավոր Արևելքի քաղաքական քարտեզի վերաձևման դեմ, անթույլատրելի համարելով ցանկացած տեղ անկախ քրդական պետության ստեղծումը, այնուամենայնիվ բավական բարյացակամ էր իր երկրի տարածքում քրդական խմբավորումների գործունեության նկատմամբ: Միակ առաջխաղացումը որ հաջողվեց Անկարային արձանագրել այդ ուղղությամբ, դա 1994թ. փետրվարին Ստամբուլում կայացած Իրանի, Թուրքիայի և Սիրիայի արտգործնախարարների հանդիպման արդյունքում ընդունված Ստամբուլյան հայտարարությունն էր, ուր կողմերը դեմ արտահայտվելով քրդական պետության ստեղծմանը, պաշտպանեցին Իրաքի տարածքային ամբողջականությունը, խիստ քննադատության ենթարկեցին «ահաբեկչական» գործողությունները ուղղված նրանցից յուրաքանչյուրի դեմ և պայմանավորվեցին համապատասխան միջոցներ ձեռնարկել նման գործողությունները չթույլատրելու ուղղությամբ[7]: Վերջին տաս տարիների ընթացքում Թուրքիան փորձում էր համոզել հարևան Սիրիային, որպեսզի վերջինս ձեռնպահ մնա «Քուրդիստանի Բանվորական Կուսակցությանը» (PKK) օժանդակելուց: Եվ վերջապես, 1998թ. Սիրիայի և Թուրքիայի միջև հարաբերությունների սաստիկ լարվածության արդյունքում, Դամասկոսը ստիպված եղավ վտարել PKK-ի առաջնորդ Աբդուլլա Օջալանին, որը կարճ ժամանակ ապաստան գտնելով Ռուսաստանում, Իտալիայում և Հունաստանում մեկնեց Նայ-

րոբի (Քենիա), ուր էլ «ձերբակալվեց» 1999թ. փետրվարին թուրքական, ամերիկյան և իսրայելյան հատուկ ծառայությունների կողմից[8]:

Երկու երկրների հարաբերություններում մեկ այլ ոչ պակաս կարևոր խնդիր է հանդիսանում ջրային հարցը, որը հաճախակի է կապվում քրդական խնդրի հետ: Սիրիայի գյուղատնտեսության զարգացման համար չափազանց կարևոր նշանակություն ունի Թուրքիայից հոսող Եփրատ գետի օգտագործումը, որը կազմում է Սիրիայի ջրային պաշարների շուրջ 80 տոկոսը: Եփրատ գետի ձախ վտակները՝ Բալիխը և Խաբուրը նույնպես սկիզբ են առնում Թուրքիայում: 1973թ. Սիրիան ավարտեց Ալ-Ռակկա քաղաքի հյուսիսում Եփրատի վերին հոսանքում Տաբաղա ջրամբարտակի կառուցումը, որի ստեղծած արհեստական «լիճը» (80կմ. երկարությամբ և 8կմ. լայնքով) կոչվեց երկրի առաջնորդ Ասադի անունով՝ «Բուհայրաթ ալ-Ասադ»:

1990-ականներին Թուրքիան նախաձեռնեց հսկայածավալ Հարավ-Արևելյան Անատոլիական Նախագիծը (Güney Doğu Anadolu Projesi, GAP), որը նախատեսում է բազմաթիվ ջրամբարտակների կառուցում Եփրատ և Տիգրիս գետերի վրա, նպատակ ունենալով խթանել երկրի, հիմնականում քրդական բնակչություն ունեցող, հարավ-արևելյան շրջանի գյուղատնտեսությունը և տնտեսական ակտիվությունը: Դամասկոսը և Բաղդադը լրջորեն անհանգստացած են նշված նախագծի իրականացումից, վախենալով որ գետերի ջրերն իրենց երկրներ հոսելու փոխարեն կարող են նպատակաուղղվել Թուրքիայի այդ շրջանի կարիքների բավարարմանը: Այնուամենայնիվ պետք է նշել, որ չնայած 1987թ. երկու երկրների միջև ստորագրված համաձայնագրով Թուրքիան Սիրիային Եփրատի ջրերից վայրկյանը 500 խմ. փոխարենը բաց է թողնում շուրջ 700 խմ[9]: Ինչ վերաբերվում է երկու երկրների միջև 1,347 կմ երկարություն ունեցող սահմանի ճշգրտման խնդրին, ապա որևէ լուրջ առաջխաղացում այդ ուղղությամբ չարձանագրվեց: Սահմանի որոշ հատվածների անվերահսկողությունն իր հերթին հարմար պայմաններ է ստեղծում է անհատների կամ տարբեր զինյալ խմբավորումների կողմից թմրանյութերի եվ զենքի մաքսանենգության համար:

Թուրք-սիրիական հարաբերություններում, որոնք որոշակիորեն սառեցվել էին 1998թ. քրդական խնդրի պատճառով, հիրավի պատմական զարգացումներ տեղի ունեցան 2000թ. հունիսից հետո՝ Սիրիայի երկարամյա ղեկավար Հաֆեզ Ասադի մահից հետո: Վերջինիս որդու՝ Բաշար Ասադի օրոք երկկողմ հարաբերությունները նոր թափ և որակ ստացան գրեթե բոլոր բնագավառներում: Հետաքրքրական է, որ տարբեր զանգվածային լրատվական միջոցներում երկու երկրների մերձեցման որպես հիմնական դրդապատճառ բազմիցս նշվել է Թուրքիայի նախագահ Ահմեդ Սեզերի ներկայությունը Հաֆեզ Ասադի թաղման արարողությանը: Նրանք անգամ նշում էին, որ սիրիական ղեկավարությունը «մեծապես շոյված էր թուրքական կողմի նման բարձր ներկայության հանգամանքից»[10]:

Սակայն արդեն իսկ 2000թ. մարտի 6-ին Դամասկոսում տեղի էին ունեցել եռօրյա խորհրդատվություններ (փոխնախարարների մակարդակով) երկու երկրների ԱԳՆ-ների միջև երկկողմ հարաբերությունների ողջ համալիրին վերաբերող հարցերի շուրջ: Դիվանագիտական աղբյուրների համաձայն, Դամասկոսում Սիրիայի ԱԳ փոխնախարար Սուլեյման Հադդադի և նրա թուրք գործընկեր Օգուր Զիյալի միջև կայացած բանակցությունների ընթացքում չի հաջողվել համաձայնություն ձեռք բերել «Սկզբունքների մասին հռչակագրի» (Declaration of principles) վերջնական տեքստի վերաբերյալ: Համաձայն Բեյրութում լույս տեսնող «Ալ-Ղաբաս» օրաթերթին, երկու կողմերի միջև անհամաձայնությունը ծագել է միմյանց տարածքային ամբողջականությունը վերահաստատող նախադասության շուրջ: Թուրքական կողմը, ըստ օրաթերթի, փորձում էր ամրագրել հռչակագրի տեքստում այն միտքը, որ կողմերի միջև Ալեքսանդրետի խնդիրը այլևս հակասության առարկա չէ: Իսկ սիրիական պատվիրակությունը շարունակում էր պնդել, որ հռչակագիրը պետք է զուտ վերահաստատի կողմերի փոխադարձ հարգանքը տարածքների վրա նրանց ունեցած ինքնիշխանության նկատմամբ[11]:

Կողմերը համաձայնության եկան խորհրդատվությունների հաջորդ փուլը իրականացնել Անկարայում մեկ ամիս հետո՝ կարգավորելու սահմանային և ջրային խնդիրները: Սակայն հանդիպման բուն նպատակն էր նախապատրաստել Հռչակագրի տեքստը 2000թ. ապրիլին Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմի Սիրիա կատարելիք այցի ընթացքում այն ստորագրելու համար: Չնայած որ այդ պաշտոնական այցելությունը այդպես էլ տեղի չունեցավ[12], այնուամենայնիվ 2000-2001թթ. ընթացքում տեղի ունեցան բարձրաստիճան բազմաթիվ այցեր և հանդիպումներ, որոնք հիմք տվեցին խոսելու թուրք-սիրիական իրական reapprochement-ի մասին:

2000թ. մայիսի 8-9-ը Սիրիայում տեղի ունեցավ 1998թ. հետո առաջին թուրք-սիրիական միջկառավարական տնտեսական հանձնաժողովի նիստը, որը քննարկեց երկկողմ ոչ միայն առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը, այլև տեխնիկայի, գիտության ու կրթության վերաբերող հարցերի լայն շրջանակ: Թուրքական 250 հոգանոց պատվիրակությունը, որի կազմում էին պետական բարձրաստիճան պաշտոնյաներ և գործարարներ, ղեկավարում էր պետնախարար Ռեջեփ Օնալը, իսկ սիրիական կողմից՝ էկոնոմիկայի նախարար Մուհամմեդ Ալ-Իմադին: Թուրքական պատվիրակությունը հանդիպեց Սիրիայի վարչապետ Մուհամմադ Մուստաֆա Միրոյի հետ, որի ընթացքում նշվեց համատեղ ներդրումային ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը և համատեղ ձեռնարկություններ ստեղծելու սիրիական կողմի անթաքույց շահագրգռվածությունը: Ռ.Օնալը հանդիպեց նաև Սիրիայի նավթի և ֆինանսների նախարարների հետ:

2000թ. ընթացքում երկկողմ հարաբերություններում իրական

առաջընթաց արձանագրվեց նաև անվտանգության բնագավառում: Հոկտեմբերի 28-ին կայացավ Սիրիայի Ներքին գործերի նախարար Մուհամմադ Հարբայի այցելությունը Թուրքիա: Իր գործընկերոջ հետ սիրիացի նախարարը քննարկեց անվտանգության բնագավառում համագործակցության մանրամասները, սահմանազատման, մաքսանենգության, Սիրիայում թուրքական սեփականության և Թուրքիայում սիրիական սեփականության հետ կապված հարցեր: Այցի արդյունքում ստորագրվեց Հուշագիր: Պատվիրակությունների հանդիպումից անմիջապես հետո տրված մամուլի ասուլիսում Թուրքիայի Ներքին գործերի նախարար Տանտանը հայտարարեց, որ Սիրիան և Թուրքիան երկու հարևան երկրներ են և պատմության ընթացքում պահպանել են «եղբայրական հարաբերություններ», ավելացնելով, որ կողմերը համաձայնության են եկել սերտացնել համագործակցությունը տեղեկատվության, թմրադեղերի տարածման դեմ պայքարի փորձի փոխանակման, ինչպես նաև ահաբեկչության, կազմակերպված հանցագործության, մարդկանց անօրինական տեղափոխման, գողության դեմ պայքարի բնագավառներում:

Թուրքիայի և Սիրիայի միջև հարաբերությունների սերտացման գործում կարևոր նշանակություն ունեցավ 2000թ.նոյեմբերին Սիրիայի փոխվարչապետ Աբդուլ Հալիմ Խադդամի այցը Անկարա[13]: Սիրիայի փոխվարչապետը Թուրքիայի նախագահին հանձնեց Բաշար Ասադի նամակը, ուր նշվում էր Սիրիայի պատրաստակամությունը այսուհետև սերտացնելու համագործակցությունը Թուրքիայի հետ տարածաշրջանային խնդիրները համատեղ կարգավորելու նպատակով: Թուրքական կողմը բարձր մակարդակով ընդունելություն էր կազմակերպել Խադդամի համար և շարունակաբար ընդգծում էր հարևան երկրի հետ խաղաղության և բնականոն հարաբերություններ հաստատելու իր անկեղծ ձգտումը: Նույն ամսին Դոհայում կայացած Իսլամական երկրների գագաթնաժողովում Բաշար Ասադը կարճատև հանդիպում ունեցավ Թուրքիայի նախագահի հետ[14]:

Պաղեստինում իրադրության կտրուկ սրումը, Հարավային Լիբանանում իրավիճակի վատթարացումը ստիպեցին Դամասկոսին ակտիվացնել երկխոսությունը ոչ միայն Թուրքիայի այլ նաև տարածաշրջանում իր մեկ այլ երկարատև հակառակորդի՝ Իրաքի հետ: Դամասկոսի մերձեցումը Իրաքի և Թուրքիայի հետ կարծում ենք բխում է առաջին հերթին զուտ անվտանգության նկատառումներից: Տարածաշրջանում Իրաքը պահպանում է Իսրայելի դեմ պայքարում այն «խորքը», որը ռազմավարական առումով կենսական անհրաժեշտություն է Սիրիայի համար: Ուստի Սադդամի տապալումը ու նոր ամերիկամետ վարչակարգ ունենալու հեռանկարը կարող է միայն սարսափ առաջացնել սիրիական ղեկավարության մոտ: Ուստի Սիրիան ամեն գնով փորձելու է իրադարձությունների նման զարգացմանը նախապատրաստվելու նպատակով լուրջ քայլեր ձեռնարկել տարածաշրջանային

իր դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: Թուրքիայի հետ հարաբերությունների սերտացումը կարծում ենք տեղավորվում է վերոհիշյալ նպատակի իրականացման տրամաբանությանը:

2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո հատկապես Դամասկոսի համար հրամայական դարձավ Թուրքիայի հետ հարաբերությունների սերտացումը՝ վերջինիս եթե ոչ համագործակցությունը ապա գոնե չեզոք դիրքորոշման ապահովումը ինչպես իսրայելա-պաղեստինյան, այնպես էլ իրաքյան ճակատներում: Թուրքական քաղաքականության վրա Իսրայելի ազդեցության նվազեցումն էլ իր հերթին կօժանդակի Սիրիային Իսրայելի դեմ արևելյան ճակատի ձևավորման գործում: Այդ նպատակով Դամասկոսին անհրաժեշտ է Անկարայի հետ ջրային և անվտանգության հարցերի շուրջ համագործակցությունից բացի, իրական բովանդակություն հաղորդել նաև երկկողմ ընդլայնումը ոչ միայն անվտանգության (ռազմական) այլև առևտրատնտեսական բնագավառներում:

Պետք է նշել, որ վերջին երկու տարվա ընթացքում առաջխաղացում արձանագրվեց վերոհիշյալ երկու բնագավառներում էլ: Ինչ վերաբերում է առևտրատնտեսական համագործակցությանը, ապա Սիրիայի և Թուրքիայի միջև ապրանքաշրջանառությունը 600 մլն. ամ. դոլարից հասավ 1 մլդ[15], ստեղծվեցին բազմաթիվ համատեղ ձեռնարկություններ գյուղատնտեսության, զբոսաշրջիկության, տրանսպորտի, կապի և այլ բնագավառներում:

Անվտանգության բնագավառում անտարակույս կարևորագույն իրադարձություն էր երկու երկրների միջև 2002թ. հունիսի 19-ին սիրիական բանակի սպայակույտի պետ գեներալ Հասան Թուրկմանիի այցը Անկարա, ուր վերջինիս հանդիպեց իր թուրք գործընկերոջ Հուսեյն Օզքոքի հետ և քննարկեց սահմանների անվտանգությանը, ահաբեկչության դեմ պայքարի, ընդհանուր 600 կմ. սահմանի լայնքով ականազերծման աշխատանքների իրականացմանը, կրթական ծրագրերի և համատեղ զինավարժություններ անցկացնելու հնարավորություններին վերաբերող հարցեր[16]: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև տարածաշրջանային անվտանգությանը, մասնավորապես պաղեստինա-իսրայելյան հակամարտությանը և Իրաքի դեմ ակնկալվող ԱՄՆ ռազմական գործողությունների նկատմամբ կողմերի դիրքորոշումները: Այցի ընթացքում ստորագրվել է համաձայնագիր երկու երկրների բանակների միջև վերոհիշյալ ուղղություններով համագործակցությունը սերտացնելու վերաբերյալ: Վերլուծաբանները որակեցին այդ այցը «նոր դարաշրջանի սկիզբ» երկու երկրների հարաբերություններում, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ սա զինվորականների միջև տեղի ունեցած առաջին հանդիպումն էր 1990թ. երկու երկրների միջև Ադանայում ստորագրված համաձայնագրից հետո:

2002թ. ընթացքում շարունակվեց երկկողմ հարաբերությունների

մերձեցման գործընթացը: Մարտի և հուլիսին համապատասխանաբար տեղի ունեցան Սիրիայի շինարարության նախարարի Հուսամ ալ-Ասվադի և ոռոգման նախարարության գլխավոր վարչության պետ Խալեդ Կալլասը այցելությունները Անկարա, ուր թուրքական կողմի հետ պայմանավորվածություններ ձեռք բերվեցին նշված բնագավառներում առկա խնդիրների կարգավորման և համագործակցության հետագա ուղղությունները հստակեցնելու վերաբերյալ:

Երկու երկրների գործադիր իշխանության ճյուղերի ակտիվ շփումներից բացի դրական տեղաշարժեր կատարվեցին Սիրիայի և Թուրքիայի օրենսդիրների միջև համագործակցությունը սերտացնելու ուղղությամբ: Այսպես, 2001թ. դեկտեմբերին Սիրիայի խորհրդարանում ստեղծվեց սիրիա-թուրքական միջխորհրդարանական բարեկամության խումբ, որը գլխավորեց Սիրիայի ծրագրավորման և արդյունաբերական հանձնաժողովի նախագահ Օմար ալ-Շալեհը: Օրակարգում է գտնվում նաև Սիրիայի վարչապետ Մուհամմադ Մուսթաֆա Միրոյի պաշտոնական այցը Անկարա, որը նախատեսվում էր իրականացնել ս.թ. մայիսի, սակայն Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջևիթի հիվանդության պատճառով հետաձգվեց անորոշ ժամանակով:

Վերջին դրական զարգացումը թուրք-սիրիական հարաբերություններում եղավ ս.թ. սեպտեմբերին կայացած Թուրքիայի Ազգային խորհրդի (Շուրա) տարեկան նիստի ընթացքում ընդունված որոշումը: Համաձայն լիբանանյան «Ալ-Անվար» օրաթերթի հաղորդագրության, այդ որոշման մեջ փոփոխության է ենթարկվել Թուրքիային անվտանգության սպառնացող երկրների ցանկը: Նրանում Սիրիան և Հորդանանը այլև նշված չեն որպես թշնամական երկրներ, ի տարբերություն Իրաքի[17]:

Անտարակույս Թուրքիայի և Սիրիայի մերձեցումը չի կարող չանհանգստացնել Իսրայելին: Թուրքիան հանդիսանում է Իսրայելի ռազմավարական դաշնակիցը տարածաշրջանում: Թուրքիան առաջին մահմեդական երկիրն էր, որը ճանաչեց Իսրայելի պետությունը: Այնուամենայնիվ, արաբական երկրների հետ հարաբերությունները բարելավելու ցանկությունը իր շարունակական ազդեցությունն է թողնում թուրք-իսրայելյան հարաբերությունների վրա: Անկարան դատապարտեց 1967թ. արաբա-իսրայելյան պատերազմի արդյունքում արաբական հողերի գրավումը Իսրայելի կողմից և կոչ արեց վերջինիս դուրս բերել իր զորքերը: Երբ Իսրայելը 1980թ. հուլիսին հայտարարեց Երուսաղեմը իր մայրաքաղաքը, Թուրքիան փակեց իր հյուպատոսությունը այդ քաղաքում և այնուհետև նվազեցրեց իր դիվանագիտական ներկայությունը Իսրայելում դեսպանության 2-րդ քարտուղարի մակարդակի: Այդուհանդերձ, Թուրքիայի վերաբերմունքը Իսրայելի նկատմամբ անհամեմատելի ավելի բարեկամական էր քան մահմեդական այլ երկրներինը: Չնայած Իսլամական Կոնֆերանս կազմակերպության բանաձևին Իսրայելի հետ բոլոր տեսակի առնչությունները խզելու

վերաբերյալ. Անկարան շարունակեց պահպանել իր դիվանագիտական ներկայությունը Թել-Ավիվում: Դեռ ավելին, թուրք-իսրայելյան համագործակցությունը առավել սերտացավ ռազմական ոլորտում, որն իր տրամաբանական ավարտն ունեցավ 1996թ. փետրվարին համապատասխան համաձայնագրի կնքմամբ[18].

Ներկայումս Իսրայելը մտահոգված է այն հանգամանքից, որ տարածաշրջանում իրավիճակի սաստկացման պայմաններում ՆԱՏՕ-ական իր միակ դաշնակցի Թուրքիայի և առաջնային հակառակորդի Սիրիայի միջև հարաբերությունների բարելավումը կհանգեցնի իր դիրքերի թուլացմանը կարևորագույն սիրիա-լիբանանյան ճակատում, իսկ երկարատև հեռանկարում նաև Սիրիայի հետ բանակցային գործընթացում: Անկարան էլ իր հերթին Սիրիայի հետ մերձեցմամբ կփորձի նվազեցնել ոչ մոտ ապագայում, սակայն հնարավոր Սիրիա-Իսրայել խաղաղության պայմանագրի իր համար բոլոր բացասական հետևանքները (ջրային, քրդական և այլ խնդիրների հետ կապված): Հարկ է նաև նշել, որ Թուրքիան կփորձի ամեն գնով խոչընդոտել Դամասկոսի և Իսրայելի միջև հարաբերությունների կարգավորումը եթե վերջինս իրականացվի նրա անմասնակցության շահերին հակառակ: Սակայն պետք է վստահ լինել, որ Անկարան չի հրաժարվի Իսրայելի հետ ռազմավարական համագործակցությունից, համենայն դեպս Սիրիայի հետ մերձեցումը Թուրքիան չի իրականացնի Իսրայելի հաշվին:

Այսպիսով, վերջին տարիների ընթացքում թուրք-սիրիական հարաբերությունների մերձեցման քննությունը, հնարավորություն է տալիս հանգել հետևյալ եզրակացության. եթե Թուրքիայի համար Սիրիայի հետ հարաբերությունների սերտացումը բխում է եվրասիական տարածաշրջանում ընթացող գլոբալ գործընթացներում Թուրքիայի դերի ակտիվացումից, հատկապես 2001թ. սեպտեմբերից հետո, ապա Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավումը Սիրիային ընձեռում է խուսանավման սեփական կարողություններն ընդլայնելու, տարածաշրջանում դիրքերն ամրապնդելու ու «Մերձավոր Արևելքի համար մղվող պայքարում»[19] վերջնականապես տանուլ չտալու պատմական հնարավորությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. B.M. Potskhveria. Turkey in 80's. Foreign Policy, էջ 64.
2. Տնտեսական առումով միայն նավթի գների կտրուկ աճը Դամասկոսին մոտ 200մլն. եկամուտ ապահովեց: Դրան գումարած տարբեր չափի ֆինանսական ներարկումներ եկան Եվրոպական Միությունից 200 մլն., Ճապոնիայից 500 մլն. վարկի ձևով, Սաուդյան Արաբիայից, Քուվեյթից և Արաբական էմիրություններից ստացվեց մոտ 2 մլրդ. դոլար:
3. Սանջաքը (արաբ. Լիվա) Օսմանյան կայսրության վարչատարածքային միավոր էր և մտնում էր վիլայեթի կազմի մեջ:
4. Ա.Ս. Բայրամյան, «Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939թթ.)», Երևան, 1998, էջ 158
5. 80-ականներին Թուրքիան մեղադրում էր Սիրիային նաև Հայաստանի ազատագրության գաղտնի բանակի (ՀԱՍԱԼԱ) անդամներին վարժեցման և զինման, ինչպես նաև արաբական ահաբեկչական խմբավորումներին օժանդակելու մեջ:
6. "Tercuman", 31.01.1991
7. M.B.Aykan, Turkish Perspectives on Turkish-US Relations, Istanbul:Middle East and Banking Publications, 1994, pp.346-347
8. М.А.Гасратян, Курдская проблема в Турции, Москва, 2001, стр.193-194
9. Peacewatch, Alain Makovsky, Syrian-Israeli Negotiations and Turkey, December 17,1999, Number 236
10. «Ալ-Զամանա»(Լոնդոն), 08.09.2000; "Jerusalem Post", 29.1o.2000.
11. «ԱԼ-Ղաբաս», (Քուվեյթ), 27.10.200
12. Իսմայիլ Ջեմի և Սիրիայի ԱԳ նախարար Ֆարուկ Աշ-Շարաայի միջև հանդիպումը տեղի ունեցավ նույն թվականի սեպտեմբերին Նյու-Յորքում, ՄԱԿ-ի «Հազարամյակի Գագաթնաժողովի» մասնակցության շրջանակներում:
13. "Jerusalem Post", 03.11.2000
14. "Hurriyet", 13.11.2000
15. «Ալ-Շարք ալ-Աուսաթ», 08.12.2001
16. «Ալ-Հայաթ», 10.06.2002
17. «Ալ-Անվար», 22.09.2002
18. Թուրքիա-Իսրայել առանցքին Սիրիան փորձեց հակադրել Իրանի հետ կապերի սերտացմամբ, ինչպես նաև սկսեց որոշակի հետաքրքրություն ցուցաբերել Հունաստան-Իրան-Հայաստան եռակողմ համագործակցությանը միանալու ուղղությամբ:
19. Seale Patrick. Assad and the Struggle for the Middle East, London,1988.

ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔԸ ԵՒ ԻՐ «ՍԵՒ ԳԻՐՔ»- Ը

20-րդ դարի 70-ականներից թուրք գրականություն են մուտք գործում գրողներ, որոնք, շարունակելով ավագ սերնդի ներկայացուցիչների ավանդույթները, ժանրային և թեմատիկ առումներով յուրացնելով համաշխարհային մոդեռնիստական գրականության նվաճումները, թուրք գրականությունը բարձրանում են համաշխարհային շուկա: Նրանցից է անցնող 30 տարիների իր ստեղծագործություններով թուրք և արտասահմանյան գրական աշխարհներում լայն ճանաչման հասած, գրականության բարձրակարգ մրցանակների արժանացած Օրհան Փամուք գրողը: Սույն հոդվածով հայ գրականագիտական մտքում նախաքայլ է կատարվում գրողին մեկնելու՝ նրա հարուստ գրական վաստակի միայն մի պատառի՝ «Սև գիրք» վեպի ընթերցմամբ:

Օրհան Փամուքը ծնվել է 1952թ. հունիսի 7-ին, Ստամբուլում: Սովորել է Ստամբուլի Ամերիկյան Ռոբերտ քոլեջում: Երեք տարի ուսանել է Ստամբուլի ճարտարագիտական համալսարանում, ապա նախասիրությունը փոխել է և 1976թ. ավարտել Ստամբուլի Համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը: Օրհան Փամուքը ի վերջո նախընտրել է վիպասանի ճանապարհը և ստանձնել վիպասանից պահանջվող նվիրումը՝ «փակվել առանձնասենյակում և փորձել իրականություն դարձնել իր ստեղծագործ երևակայությունը»: Ամուսնական կյանքը 1991թ. Փամուքին նվիրել է դուստր, որին կոչել է Ռույա:

Փամուքը սերում է հին և հարուստ ընտանիքից, Մանիսա և Իզմիր քաղաքների հունա-թուրքական միջավայրից: Նրա հայրական գծով մեծ հայրը՝ Ջևդեթ Փամուքը, եղել է Թուրքիայի Հանրապետության վաղ շրջանի ճանաչված ճարտարագետ-հիմնադիրներից: Հայրը՝ Գյունդուզ Փամուքը, պաշտոնավարել է պետական կառավարման կարևոր ոլորտներում, լինելով Իսմեթ Ինոնյուի մերձավորներից՝ նվիրվածությամբ համալրել է նրա ղեկավարած ժողովրդական կուսակցության համակիրների շարքը:

Օրհան Փամուքի մայրն էլ բարձրաշխարհիկ ընտանիքից է: Մոր կողմի նախապապերից՝ Իբրահիմ փաշան, 1700-ականներին Կրետեի կառավարիչն է եղել: Կինը՝ Այլին Փամուքը, նույնպես բարձր ծագում ունի: Նրա մայրական կողմը Բելառուսիայից փախած, Օսմանյան Կայսրության հպատակությունը ընդունած ընտանիքից է, իսկ հայրը Կայսրության Արդարադատության Նախարար Քազըմ բեյի որդին է եղել: Օրհան Փամուքի եղբայրը՝ Շեֆքեթ Փամուքը, մասնագիտական/տնտեսագիտություն/ ուսումնառությունը իրականացրել է ԱՄՆ-ում՝ Յեյլի և Բերքլի հայտնի համալսարաններում: Այնուհետև դասա-

խոսելով թուրքական և օտար համալսարաններում՝ նա իր ժամանակի-տական բնագավառում ծնունդ բերած փոփոխությունների շնորհիվ նպաստավոր դեր է խաղացել Փամուքի կենսագրականում:

Օրհան Փամուքը, 1985-1988թթ ապրելով ԱՄՆ-ում, մասնակցել է Այովա համալսարանի «Միջազգային գրողների ծրագրով» /International Writing Program/ հատուկ գրողների համար ԱՄՆ-ի Պետքարտուղարության կողմից կազմակերպվող ամենամյա դասընթացին և նրա հավաքականության միջավայրում հնարավորություն է ունեցել մոտենալ համաշխարհային գրական կյանքը ներկայացնող շրջանակներին, խորապես ուսումնասիրել, յուրացնել եվրոպական և ամերիկյան կլասիկան՝ կրելով այդ արժեքի դրական ազդեցությունը ինչպես իր, այնպես և իր գրական ստեղծագործությունների վրա: Պատահական չէ, որ նա հատուկ ընդգծել է՝ «Մի դասընթացի գնացի և կյանքը փոխվեց»[1]:

Այսօր Փամուքը ապրում է Ստամբուլում և իր կյանքը կազմակերպում է մտավորականի վաստակով, շահում է մրցանակներ իր տաղանդի գնահատումով:

1974թ. 22 տարեկանում, ուսանելու շրջանում Օրհան Փամուքը հայտնաբերում է իր կոչումը գրականության ոլորտում և լույս ընծայում իր առաջին գրական ստեղծագործությունը՝ «Մթություն և լույս»/Karanlık ve Işık/ նովելը, 1982թ.՝ իր անդրանիկ վեպը՝ «Ջևդեթ Բեյը և որդիները»/Cevdet Bey ve Oğullar/, 1983թ.՝ «Խաղաղ տուն»/Sessiz Ev/, 1985թ.՝ «Սպիտակ ամրոց»/Beyaz Kale/, 1990թ.՝ «Սև գիրք»/Kara Kitap/, 1994թ.՝«Նոր կյանք»/Yeni Hayat/, 1998թ.՝ «Իմ անունը Կարմիր է»/Benim Adım Kırmızı/, 2002թ.՝«Ձյուն»/Kar/ վեպերը, 1998թ.՝«Այլ գույներ»/Öteki Renkler/, 2003թ.՝ «Ստամբուլյան հիշողություններ և Քաղաքը»/İstanbul Hatıralar ve Şehir/ երկերը[2]:

Այսպիսով Օրհան Փամուքը հեղինակ է աշխարհի ընթերցասեր հասարակությանը հայտնի այսօր 7 վեպերի և տարբեր ժամանակներում և զանազան թեմաներով գրված հոդվածների, զրույցների, կենսագրական բնույթի հետաքրքիր փոքրածավալ ստեղծագործությունների:

Օրհան Փամուքի գնահատման չափանիշ են այն մրցանակները, որ շահել, կամ որոնց նա արժանացել է՝ «Ազգային լրատվամիջոցների գրական մրցանակ»/1979թ./, «Ազգային հրատարակչության գրական մրցանակ»/1983թ/, «Օրհան Քեմալի մրցանակ»/1983թ/, «Madaralı Roman ödülü»/1983թ/[3], «Եվրոպական հայտնության մրցանակ»/1991թ./, «Դուբլինյան գրական մրցանակ»/2003թ./[4] «Գերմանական գրահրատարակիչների խաղաղության մրցանակ»/2005թ./[5], «Մեդիչի մրցանակ»[6], «Նոբելյան մրցանակ»/12 հոկտ. 2006թ./:

Օրհան Փամուքի տաղանդի չափանիշ պետք է նկատել և այն գնահատականները, որոնք հնչեցրել են ընթերցող գրաքննադատնե-

րը՝ Փամուքը «բացարձակապես չքննարկվող մեծ գրող է», «աշխարհի ամենահիանալի», «մեր օրերի ամենահետաքրքիր», «չափազանց խելացի» գրողներից է, «90-ականների համաշխարհային գրականության մեջ գլխավոր հայտնությունն է», «իսկական գրական փարոս է», «արևելքում ծագած նոր աստղ է», «թուրք Ումբերտո Էկոն է»

Գրաքննադատները Օրհան Փամուքի աշխարհահռչակ հաջողության գաղտնիքը պայմանավորել են նրա կրկնակի «Մշակութային քաղաքականությամբ», առեղծվածայնությունների սյուժետային և գաղափարական ուղղվածությամբ, որ Փամուքը կարողացել է «սերտ երկխոսություն ստեղծել քրիստոնյա Եվրոպայի և իսլամ թուրքի միջև», արտացոլել իսլամական և քրիստոնեական մշակույթների պրոբլեմները, խոսել Օսմանյան Կայսրությունում իսլամական և քրիստոնեական երկու աշխարհների՝ Արևմուտքի և Արևելքի փոխներթափանցումների, այդ երկու աշխարհների որպես «շեմ» /խաչմերուկ/ հանդիսացող այժմյան հանրապետական Թուրքիայում ընթացող ավանդույթի և արդիականության մրցակցության, երկրի ներկա կյանքի վրա արևմուտքի բարեփոխիչ ազդեցության մասին՝ հնարավոր համարելով այդ կերպ Թուրքիան անցյալից դեպի ապագա՝ Եվրոպա տանող ուղու կառուցումը, «միավորել-հանգուցել արևելյան պատմվածքի ավանդույթները արևմտյան մոդեռնիզմի էլեմենտների հետ» և ստեղծել «ինտելեկտուալ, սրամիտ և նրբագեղ» ոճով «հիանալի գեղեցկությամբ աշխատանքներ»:

Օրհան Փամուքի կյանքում, նրա քաղաքական հայացքներում շրջադարձային կարելի է համարել 2005 թվականը: Համաշխարհային գրականության ներկայացուցիչների միջավայրում ճանաչված որպես արևելքի և արևմուտքի քաղաքական, մշակութային փոխհարաբերությունների դրսևորումներում արևելքից առողջ տրամաբանության կրող Օրհան Փամուքը բնականաբար չէր կարող անտարբեր մնալ-անցնել եվրոպական միությանը Թուրքիայի Հանրապետության անդամակցության նախապայմանների նկատմամբ, որոնցից է 20-րդ դարի առաջին քառորդում Օսմանյան Կայսրության տարածքում, հատկապես Արևմտահայաստանում իրականացված հայկական ցեղասպանության հարցը: Իսկապես, որպես ճշմարիտ քաղաքացի, մտահոգ իր երկրի ապագա առաջընթացով և այն իրականանալի տեսնելով միայն եվրոպական համագործակցության շրջանակներում՝ Օրհան Փամուքը իր տեղը գտնում է այն եզակի թուրք մտավորականների շարքում, ովքեր վերջին տասնամյակում աշխատում են ազատել Հանրապետությունը պատմական և ներկա ժամանակների տխուր էջերից, երկրի հասարակական կյանքը՝ դեպի քաղաքակրթություն տանող ճանապարհի ընթացքը խոչընդոտող բարդույթներից և գտնել ատիքներ՝ խոսելու այդ մասին հրապարակայնորեն: Օրհան Փամուքը գտնում է այդ փնտրվող պահը, երբ 2005թ. փետրվարին հրավիրվում է Գերմանիա՝ մասնակցելու իր «Ձյուն» վեպի գերմաներեն հրատարակության շնորհանդեսին,

ուր շվեյցարական «Տանգես Անցայգերի» /Tanges Anzeiger/ 2005, փետրվար 6-ի համարին օրվա իրադարձության վերաբերյալ տված հարցազրույցում, անդրադառնալով ընդհանրապես երկրների և ժողովուրդների պատմության փոխհարաբերությունների ընթացքում տեղի ունեցած, նույնիսկ ներկա ժամանակներում տեղի ունեցող տխուր իրադարձությունների մասին մարդու ազատ արտահայտվելու իրավունքի հանդուրժողությանը, առանձնապես ընդգծում է՝ «Թուրքիայում 30 հազար քուրդ և մեկ միլիոն հայ է սպանվել, ոչ ոք դա չի հանդգնում ասել, ես ասում եմ...»[7]: Միայն այս հայտարարությունը բավարար է նկատվում, որ Թուրքիայի լրատվամիջոցներով՝ Vatan, Akşam, Orta Doğu, Milliyet, Posta, Star, Hürriyet, Cumhuriyet ... դատապարտվի Փամուքը և մեղադրվի դավաճանության մեջ, նրա քայլը համարվի «ոչ քաղաքական»[8], «Նոբելյան մրցանակ ստանալու համար կատարված»[9], «անձնական, ֆինանսական շահ հետապնդող»[10], որակվի՝ «սև գրող», «ստախոս», «խղճուկ արարած»[11], տեսակետները՝ «վտանգավոր, անոքալի»[12]:

Լրագրողներին ձայնակցում են նաև ակադեմիական և համալսարանական շրջանակները՝ նրա խոսքերը դիտելով «դիտումնավոր», «անմիտ և մեծ թերություն վիպասանի համար», «անգրագիտություն», «ազգին վիրավորող», «եվրոպացիներից միավոր հավաքելու միջոց», «հրեական լոբբիի գործունեություն»[13]:

Իհարկե Օրհան Փամուքի համարձակությունը հարգողներ էլ են եղել՝ նկատելով գրողի ելույթը «մտավորականի ազնվության ու արիության վայել երևույթ»[14], «պաշտպանության արժանի», «Ամբողջ 20-րդ դարի ընթացքում աշխարհի առաջընթացի բեմահարթակում անլեզու կարգավիճակում հայտնված երկրի անունից համաշխարհային չափանիշներով խոսք»[15]. Փամուքի դեմ գրվածքները «լինչի գրականություն»[16], «Ցեղապաշտ, շովինիստական հարձակումներ»[17]:

Այս դեմ ու կողմ կարծիքներին զուգահեռ Թուրքիայի դատախազությունը մեղադրական հայց է ներկայացնում «թուրք ժողովրդի ինքնությունը վիրավորելու մեղադրանքով», և Ստամբուլի Շիշլիի դատարանը ընդունում է հայցը[18]: Սակայն եվրոմիության պատասխանատու մարմինների հայտարարությունները՝ Փամուքի դեմ բացված դատավարությունը լուրջ խախտում կդիտվի մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների[19], և բացասականորեն կազդի Թուրքիայի անդամակցության հարցի վրա, ստիպում են Արտգործնախարարությանը և Արդարադատությանը միջամտել խնդրին: Դատարանը որոշում է կարճել հարուցված գործը[20]:

Այսպիսով Օրհան Փամուքը իր կենսագրականում գրեց ճշմարիտ խոսքի մի փայլուն էջ:

***

«Օրհան Փամուքը համարվում է իր երկրի առաջադիմական վիպասանը: ... Դավանաբար արևմտյան ընթերցողների համար խորթ է, որ Թուրքիայում... կարող են հանդես գալ մոդեռնիստ և հետմոդեռնիստ գրողներ: Փամուքի 7 վեպերը հանրագումարի են բերում 20-րդ դարի վեպի զարգացման փուլերը»: Այս գնահատականով է սկսում Օրհան Փամուքի գրական վաստակին նվիրված խորարժեք իր հոդվածը քաղաքակիրթ աշխարհի գրող-գրագենադատ Ջոն Ափդայքը և իր այս համարձակ եզրակացությունը հաստատելու համար ընդգծում թուրք գրողի և անցյալի ու ներկայի համաշխարհային գրականության ներկայացուցիչների ստեղծագործությունների նմանության եզրերը, որ Փամուքի առաջին վեպը՝ «Ջևդեթ Բեյը և նրա որդիները» նման է Թոմաս Մանի «Բուդենբրոկներ» վեպին, «Խաղաղ տունը», որտեղ նկարագրվում է ընտանիքի անդամների մեկ շաբաթյա կյանքը, հիշեցնում է Վիրջինիա Վուլֆի և Ուիլյամ Ֆոլկների, «Սպիտակ ամրոցը»՝ որը մարդու երկակիության մասին է, Բորխեսի և Կալվինոյի գործերը, «Սև գիրք» արկածային վեպը՝ կորած մարդու, կյանքի մանրամասների մասին, գրված է, հեղինակի իսկ խոստովանությամբ, ըստ Ջոյսի «Ուլիսս»-ի, որ «Նոր կյանք» վեպ-երազը նկարագրել է ինչպես Կաֆկան՝ փոքր շեղումներով, /Ահմեդ Օկթայը «Նոր կյանքը» համեմատում է Ռիլկեի «Դուինյան էլեգիաներ» գրքի և Դանթեի «Նոր կյանք» վեպի հետ, հերոսուհի Ջանանին էլ նմանեցնում է Բեատրիչեին[21]/, «Իմ անունը Կարմիր է» դետեկտիվը իր սյուժեով պատկանում է Բիատի «Տիրապետում» և Ումբերտո Էկոյի «Վարդի անունը» ու «Ֆուկոյի ճոճանակը» վեպերի շարքին և օգտագործված նյութով՝ մանրանկարչությամբ, զուգահեռություն ունի Մանի «Դոկտոր Ֆաուստի» երաժշտության հետ[22], Սարա Էմիլի Միանոն էլ, Ջոն Ափդայքին հետևելով, նկատում է, որ «Ձյուն» վեպը, որպես քաղաքական թրիլեր «տոգորված է Դոստոևսկու շնչով»[23]: Ընդհանրապես, ըստ Ռոման Կոիվուշինի՝ Փամուքի համար որպես ուղի «կարևոր նշանակություն ունեն վիպագիր Մարսել Պրուստը, սուֆիզմի քարոզիչ Ջելալեդդին Ռումին, Դանտեն, Ղուրանի սուրահները՝ իհարկե չփորձելով ընտրություն կատարել արևմուտքի և արևելքի միջև, քանզի նրա գրքերում «երկու տարբերակներն էլ՝ արևմտյան և արևելյան, լրացնում են միմյանց»[24]:

Եւ ահա այս գրքային շփումները նկատող գրաքննիչների շրջանակում՝ բնականաբար հարց է առաջանում՝ արդյո՞ք վեպերը կարողանում են ընդգրկող նյութերով և թեմատիկայով կատարել իրենց առաքելությունը, և փորձում են մեկնել, որ եթե «19-րդ դարի գրողները սիրաշահում էին ավելի մեծահոգի և քիչ կամակոր ընթերցողին՝ գրելով ավելի մանրամասնորեն, խորը և ընդարձակ, Փամուքը աչքի է ընկնում խոսքի հղկվածությամբ և 19-րդ դարի գրողների և նրանց հետևորդների՝ Պրուստի և Մանի շունչն արտահայտելու ընդունակութ-

յամբ, բայց, այնուամենայնիվ, նրան բնազդաբար ծզում են Կալվինոյի ու Բորխեսի լակոնիկությունը, հանելուկային զգացողությամբ օժտված փիլիսոփաները, որ Փամուքի նորարարությունը զուգակցվում է նրա «հանելուկների» ճկունության և երկակիության հետ, հատկապես երկակիության, որի ծագումը, ըստ Փամուքի՝ կապված է Ասիայի ու Եվրոպայի միջև օրորվող Թուրքիայի աշխարհագրական միջավայրի հետ, այն երկրի, որը բաժանված է աշխարհիկության կողմնակից բարեփոխիչների և Մարոկկոյից մինչև Մալազիա ազդեցիկ ֆունդամենտալիզմ ծնող պահպանողական իսլամիստների միջև»[22]:

Կարծես տրված հարցին պատասխանելու համար Նուկետ Էսենը անդրադարձել է գրողի դիմանկարին, ըստ որի՝ Օրհան Փամուքը իր ազգակից մի շարք գրողներից տարբերվում է նրանով, որ նրա համար գրելը ապրելակերպ է, ինքնահաստատում, կիրք, կյանքի և իրականության հետ պայքար և վերջապես ջանք՝ իմաստ արտահայտելու միջոց, որ այս և ուրիշ մղումները կարևոր են, քանի որ գրելը աշխատանք է, կարիերա ... Իհարկե Փամուքի կարիերան չի սահմանափակում հետաքրքրությունները կյանքի տարբեր բնագավառների նկատմամբ, այլ սահմանազատում կամ ամբողջացնում է նրա ներգրավվումը դրանց մեջ:

Օրհան Փամուքը գրող-վիպասանի կողքին նաև անհատականություն է, երբ խորհում է պատմական, քաղաքական, սոցիալական, գեղագիտական կամ իրականությանը վերաբերող բազում հարցերի շուրջ[23]:

Նույն Նուկետ Էսենը նկատում է, որ ըստ Ֆրեդերիկ Ջեյմսոնի՝ Օրհան Փամուքի ստեղծագործությունները «Ազգային քաղաքական խորհրդանիշեր են», արտահայտում են Օրհան Փամուքը ներկայացնող հասարակության գլխավոր և պատմական մտապատկերները, որոնք ձևով և ոճով միանգամայն սերվում են Արևելքում սկիզբ առած հետմոդեռնիստական ոճից, ստեղծում Օրհան Փամուքի «Ներմ արտահայտված վեպի ձևավորման, զարգացման պատմությունը»: Լինելով նաև ակներև գրականագետ՝ Օրհան Փամուքը որպես վիպասան ծնվում է իր վեպերի պատմության հետ համատեղ, այլ կերպ ասած, ինչպես գրական աշխարհի հետ կապված նրա անհատական աշխատանքները:

Նուկետ Էսենը նշում է նաև, որ Օրհան Փամուքը թուրքական նովելի կոնտեքստում նորարար է: Նա վիպագրության մեջ թուրքական գրականության գեղարվեստական ստեղծագործության ճարտարապետական սկզբունքի ներմուծողն է: Նրա վեպերը նման են մանրակրկիտ կառուցված շենքերի, որտեղ բոլոր նյութերը ֆունկցիոնալ անկախ են, օժանդակում և արտահայտում, մեկնաբանում և ձևափոխում են մեկը մյուսին անբասիր հաջորդականությամբ: Ոչինչ, քարի ոչ մի կտոր պատահականորեն կամ առանց կառուցվածքային նպատակի չի դրվում: Գրքի ծրագիրը նախատեսում է բացատրություն յուրաքանչյուր բա-

ղադրիչի համար: Օրհան Փամուքի վեպը սկսում է կյանքը առնել ոչ թե գրելիս, այլ արդեն բավականին կատարելագործված նախագծի կատարման ընթացաշրջանում: Փամուք հեղինակը գերադասում է շեշտել վեպի գոյությունը և նրա ներդրումը կյանքում՝ պատշաճ կերպով որոնելով իմաստ կյանքի խնդրի և վերջինիս անորոշ դժվարության, անվերջության և քաոսի մեջ[27]:

Ուրեմն գրող Փամուքի առջև կանգնած խնդիրներից կարևորը այդ քաոսից դուրս գալն է: Եվ այդ իրականացնելու համար անհրաժեշտ է պայքարել ազդեցության դեմ՝ «ինքդ քեզ հասկանալու և ճանաչելու համար, ձգտելու լինել այնպիսին, ինչպիսին կաս», «ծնողը բերել նմանակելու և նորարարությունը ընկալելու ունակություն, որոնք մարդու գոյության էական պայմաններն են», որովհետև «մարդիկ բաց են ազդեցությունների, փոփոխությունների և նոր փորձությունների առջև, զգում են այս ամենի կարիքը, այնպես, ինչպես բույսերը՝ ջրի: Դիմադրել նորարարությանը նշանակում է չընդունել կյանքի հունը, չլրացնել մարդու մեջ գոյություն ունեցող դատարկությունը..., որը սովոր տխրությամբ չի լցված, այլ կարող է լինել մի վայր, որտեղ հերոսական մի բան է ծաղկում... ուր մարդ վերջապես գտնում է ինքն իրեն»:

Այնուամենայնիվ Իննես Շայլուտայի պնդմամբ «գրականության հետ Փամուքի առնչությունը հակասական է: Փայլում է պատմությունների միջոցով կյանքին իմաստ հաղորդելու ունակությամբ: Պատկերները փոխաբերություններ են, տեսիլք են մարմնավորում, այլ դեպքում գրականությունը կխամրի կյանքի դրամայի առաջ և նույնիսկ ի վիճակի չի լինի նկարագրել այն»: Հետևաբար գրականագետ Իննես Շայլուտան պարզում է, որ «ընդհանրապես գրականության և կոնկրետ փամուքյան գրականության իրական նպատակը դեպքերի և զգացմունքների պարզ նկարագրությունը չէ. Փամուքի դեպքում մի համառ պայքար է, մի հրաշալի փորձ՝ բացահայտելու իրականություն ու պատրանքները»: Փամուքի հավաստմամբ «կյանքը տեսնելու և նկարագրելու բազում ձևեր կան... Քաղաքականությունը, կրոնը, գրականությունը իրականության ամբողջականությունը դրսևորելու միջոցներ են»[28]:

Հետևաբար Փամուքի գրեթե բոլոր երկերում համաձուլված են այս միջոցները, առանձնապես ժամանակակից թուրք գրականության ամենավիճահարույց և ամենակարդացվող նրա «Սև գիրք» վեպում, որը, թարգմանվելով բազմաթիվ լեզուներով, գրավում է ինչպես լայն ընթերցողների, այնպես և ժամանակակից գրաքննադատների ուշադրությունը: Դուրինը «Սև գիրքը» համարել է «առաջին թուրքական դետեկտիվ վեպ, կլասիկ, միջպական ժանրի «վեպ-փնտրտուքի» օրինակ»[29]: Ըստ Ալեքսանդր Գենիսի՝ ««Սև գիրքը» յուրահատուկ հանրագիտարան է, որը զբոսաշրջիկներ է բերում Ստամբուլ, ինչպես Ջոյսի ««Ուլիսսը»՝ Դուբլին»[30], ըստ Գեբի՝ ««Սև գիրքը» Փամուքին համաշ-

խարհային ճանաչում է բերել»[31], ոմն ընթերցող «Սև գիրքը» նմանեցրել է «մի արկղիկի, որի մեջ թաքնված է Ստամբուլը»[32]: Ըստ տարբեր լրատվական միջոցներում տեղ գտած հոդվածների՝ ««Սև գիրքը» Փամուքի երկերի թագն է», «ժամանակակից ազգային դեպքան է», «Մեր օրերի համաշխարհային գրականության ամենահետաքրքիր, ամենադիպուկ վեպերից է»[33]:

«Սև գրքին» անդրադառնալիս՝ Ինեսս Շարլոտտան Ստամբուլ կատարած այցից իր հիշողություններում պահած մզկիթի հատակը շերտ առ շերտ ծածկող զարդանախշ գորգերի ստեղծած պատկերով է փորձում գնահատել այն: Ըստ նրա, հավատացյալների ծնկների համար նախատեսված այդ բարձերը խորհրդանշում են արևելքի և արևմուտքի, բազմաշերտ անցյալի և արհամարհված մշակույթի, ինչպես նաև իմաստալի, առեղծվածային կյանքի և վարկենական հաճույքներով լի մակերեսային կյանքի միջև եղած տարբերությունները, որ «Սև գիրքը» ընթերցողին շփոթահար է անում՝ հանգեցնելով դյուրին ենթադրությունների, թե կյանքը բազմիմաստ է, և գորգը բացի գորգ լինելուց այլ բանի էլ կարող է ծառայել, որ Փամուքը ներդաշնակ հակադրությամբ առանձնացնում է դիխոտոմիաները՝ արևելքն ու արևմուտքը, նույնությունն ու տարբերությունը, հասարակությունն ու անհատը, հնարանքն ու իրականությունը, իմաստալին ու անիմաստը, հավասարն ու անորոշը՝ դրանք համարելով անհատականության հանրընդհանուր որոնումների մաս, ընթացքում նաև ներկայացնելով գրականության կոչման հարիր «մեծ» հարցերով հանդերձ, երբեմն աշխույժ, երբեմն զայրացած պայքարում է, որ իր պատմվածքին տրամաբանական ձև և իմաստ չտա, այլ դիմադրի այդ բնական ներքին մղումին, քանի որ այդ որակները կյանքում գոյություն չունեն[34]:

Ինեսս Շարլոտտայի կարծիքով դիխոտոմիաների՝ երկճյուղավորման հայելային այդ խաղում, որը գրականությանը ծանոթ է ժամանակակից ֆանտազիստ գրողներից՝ Իտալո Կալվինոյից, Ժանետ Ուինթերսոնից, Ուիլյամ Գեսից և հատկապես Ջորջ Լուիս Բորխեսից, «Փամուքը ավելի վտանգավոր է երևում»: Նա հրապուրում է ընթերցողին և հանկարծ լքում է նրան՝ թողնելով առանց «քարտեզի և կենսամիջոցների», որպեսզի ընթերցողը ինքն ավարտին հասցնի իմաստի որոնումները: Այդ առումով էլ «Արևելքի «ամենաարևմտացված» այդ երկրում «Սև գիրքը»՝ լավ վաճառվելով հանդերձ, քննադատվել է ոչ միայն իր արտահայտչամիջոցների և արդիական ոճի, այլև երկիմաստ քաղաքականության, քեմալի հեգնական տոնի պատճառով ձախականների և ֆունդամենտալիստների կողմից[35]:

Գլեբ Շուլպյակովը, անդրադառնալով առանձնապես Օրհան Փամուքի «Սև գրքին», որոնում է նրա տեղը համաշխարհային գրականության մեջ՝ նկատելով, որ «Սև գիրքը» էականորեն տարբեր է Ջոյսի մոդեռնիզմից. նրա մեջ բավականին շատ է անձնական հետաքրքրությունը: Ջոյսը այդպիսի պրոբլեմ չունի: Եթե Ջոյսը պատմությունը հա-

մարում է մղձավանջը, որից ուզում է արթնանալ. Օրհան Փամուքը պատմությունը դիտում է քաղցր քուն, որն ուզում է անվերջ վայելել: Գլեբ Շուլպյակովը ընդգծում է նաև Յոյսի և Փամուքի պատմությունների մեջ գոյություն ունեցող տարբերությունները առարկայական փոխհարաբերությամբ՝ քաղաք-շուկա, քաղաք-կրպակ, որտեղ իրերը անցնում են մեկից մյուսի ձեռքը և սկսում են ապրել նոր կյանքով՝ իրենց մեջ կրելով նախորդ կյանքի մնացորդները: Ինչպես մարդիկ գիշերային հեքիաթում՝ «ուրիշ լինելով, մտնում են ուրիշի կյանքի մեջ»՝ առևտրի առարկա դարձնելով նրա գոյությունը»[36]:

Ռոման Կոփվուշինը դիտում է, որ «Սև գիրքը» որպես դետեկտիվ՝ հենված նրբազգացողության և երևակայության վրա, գրված է հեղինակին հատուկ արևելյան խորամանկությամբ՝ խուսափելով դիպուկ հարցերից և կոնկրետ բացատրություններից[37]: Իսկ «Սև գիրքը» իսպաներեն և ֆրանսերեն թարգմանող Խուան Գոյտիսոլոն նկատում է, որ «Սև գիրքը» հիշեցնում է բորխեսյան նովելների և սերվանտեսյան վեպի իլյուզիոնիստական ճարտարապետությունը, պատմողական արտահայտչամիջոցներով հասնում մինչև զավեշտի, հուրուֆիզմի* որոշ գաղափարների[38]:

«Սև գիրքը» ներկայացնում է Ստամբուլի Նիշանթաշ թաղամասում, Շեհրիքալփ կոչվող տանը ապրող ավանդապահ մի ընտանիքի զավակների՝ երկու եղբայրների /Մելիհի և եղբոր/ ժառանգների պատմությունը:

Գլխավոր հերոս Գալիպի հորեղբայր Մելիհը, թողնելով իր կնոջը և որդուն՝ Ջելալին, մեկնում է Ֆրանսիա, Փարիզ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անցնում է Մարոկկո, ուր և ամուսնանում է Մուհամմեդի սերնդից սերող Սուզանի հետ, ունենում է դուստր, կոչում Ռույա: Այս ընթացքում նրա առաջին կինը՝ Հալեն, զգալով ամուսնու անտարբերությունը ընտանիքի նկատմամբ, որդու՝ Ջելալի հետ տեղափոխվում է Աքսարայի հայրական տուն և ամուսնանում մի իրավաբանի հետ, բայց շուտով մահանում է: Ջելալը, կորցնելով մորը, վերադառնում է հայրական տուն: Հայրենի քաղաք է վերադառնում նաև հայրը իր նոր ընտանիքի հետ: Ջելալը ավագության և հասարակության մեջ ճանաչված երգիծաբան լրագրողի հանգամանքով վայելում է իրավաբան հորեղբորորդի Գալիպի և իր քրոջ Ռույայի հիացմունքն ու հարգանքը: Գալիպը և Ռույան ամուսնանում են:[39]

Պարզվում է, որ Ռույան ընդունակ չէ գրավվելու մայր-կնոջ պարտականություններով, այլ սիրում է ապրել հանելուկային կյանքով, դետեկտիվներ կարդալով և գրոսնելով: Գալիպին մնում էր միայն նրա նկատմամբ ցուցաբերել անպատասխան սիրո գուրգուրանք:

Հանկարծ մի օր անհետանում են Ջելալն ու Ռույան: Ջելալին գտնելու հույսով Գալիպը նախ այցելում է նրա աշխատավայր՝ «Միլլիեթ» թերթի խմբագրություն և, տեղեկանալով, որ Ջելալը վերջին օրերին ոչ երևացել է և ոչ էլ թղթակցություն է ուղարկել, գնում է նրա

բնակարանը, դիտում նրա նոթատետրերը, թերթում հոդվածներն ու խզմզումները: Անհետացման վերաբերյալ ոչինչ չգտնելով, որոշում է նրան փնտրել ամենուրեք, ստամբուլյան միջավայրում:

Գալիպը մտորում է, որ Ջելալն ու Ռույան չէին կարող գտնվել քաղաքից դուրս, որովհետև Ջելալը չէր սիրում ապրել այլ տեղ, բացի Ստամբուլից. նույնիսկ Ստամբուլի ասիական մասը Ջելալի համար բավարար «պատմական» չէր, իսկ թաքնվել ընկերներից մեկի տանը, Ռույան համաձայն չէր լինի: Անիմաստ էր անգամ նրանց փնտրել հյուրանոցներում, որտեղ կինն ու տղամարդը, նույնիսկ եղբայրն ու քույրը կարող էին կասկածի տեղիք տալ[40]:

Ի վերջո, ենթադրելով, որ նրանք կլինեն «Քոնաք» կինոթատրոնում, Գալիպը այցելում է կինո, ուր, նրան թվում է, ականատես է լինում Ջելալի սպանությանը, բայց չցանկանալով համակերպվել այդ իրողության հետ, համոզում է իրեն, որ երբևէ կգտնի իր հարազատին, նրան կվերագտնի իր մեջ, և երկու կենսագրությունները կնույնանան: Ու Գալիպը հետո թերթերում կկարդա, որ «Հայտնի լրագրող Ջելալ Սալիկը, որը «Միլլիյեթ» թերթում մի խորագիր էր վարում, երեկոյան ժամը 7-ին, իր քրոջ՝ Ռույայի հետ դուրս եկավ Նիշանթաշում գտնվող իրենց տնից և գնաց «Քոնաք» կինոթատրոն: «Վերադարձ տուն» ֆիլմը ավարտվեց... Լրագրողն ու իր քույրը բոլոր հանդիսատեսների հետ դուրս եկան կինոթատրոնից: ...Անցնելով Վալիքոնի աղայի պողոտայով, մտան էմլյաք պողոտա, ապա Թեշվիքիե: Մահը վրա հասավ...»[41]:

Կորցնելով հարազատներին՝ Գալիպը որոշ ժամանակ շարունակում է իր իրավաբանական գործունեությունը: Ապրում է ակտիվ կյանքով, հին ու նոր ընկերների հետ մասնակցում երեկույթների: Սակայն երբեմն, գիշերները մի շնչով մի քանի հոդված գրելուց հետո, ինչպես Ջելալն էր անում, հեռանում էր սեղանից, նստում բազկաթոռին և սպասում, թե շրջապատող իրերը երբ են վերածվելու մյուս աշխարհի նշանների, և այդ ժամանակ զգում էր, թե ինչպես է սկսում ընկնել հիշողության գիրկը, բացում ու փակում իր «ես»-ի դռները և առանձնաբար վերածվում այլ մարդու, որը կարող էր հանդիպել իր ստվերի հետ և լինել երջանիկ:

Հետաքրքիր է սյուժեի եզրահանգման փաստության մտածողությունը... Գալիպը աշխատում է տիրապետել իրեն, չընկնել Ռույայի մասին իր հիշողությունների, մելամաղձոտության գիրկը... Բայց երբեմն, երբ հայրը կամ մորաքույր Սուզանը զգուշացնում էին, որ չուշանա, նրան թվում էր, թե այդ ժամանակ, այնտեղ իրեն է սպասում «հիվանդ Ռույան»:

Գալիպը իրենց հին տունը գնալիս երբեք Ալաեդդինի կրպակի մոտով չէր անցնում, չէր քայլում իր հուշերի ակունքները հիշեցնող փողոցներով, որտեղ զբոսնել էր Ռույայի հետ, որտեղից անցել էին Ռույան ու Ջելալը «Քոնաք» կինոթատրոն գնալիս և վերադառնալիս: Այդ պատճառով հանդիպում էր Ստամբուլի հին փողոցների ցուցա-

նակների, անծանոթ պատերի, զարհուրելի կույր տների, որոնց պատուհանները փակված էին մուգ վարագույրներով: Այս անծանոթ վայրերով նրա պտույտները նրան վերածում էին այլ մարդու, և ամեն անգամ երբ մտնում էր Շեհիրքալփի իրենց տանը ու տեսնում էր պատշգամբից կախված փոքրիկ կապույտ կտորը, նրան կրկին թվում էր, որ Ռույան իրեն է սպասում, հիշում էր՝ իրենց ամուսնության երրորդ տարում ինչպես էին զրուցում ու պատկերացնում՝ ինչպես կանցկացնեն իրենց օրերը, երբ կլինեն յոթանասուններեք տարեկան...

Նրանք յոթանասուններեք տարեկան են... Ձմեռ է... Քայլում են Բեյօղլուի փողոցով: Խնայած փողերով միմյանց համար նվերներ են գնում՝ վերնաշապիկ կամ ձեռնոցներ: Դագել են հին, ծանր, իրենց հոտը պահպանող վերարկուներ, որ սիրով են կրում: Նրանք աննպատակ քայլում են, նայում ցուցափեղկերին: Դժգոհում են, որ ամեն ինչ փոխվել է, հիշում, թե ինչքան լավն է եղել հագուստը, ցուցափեղկը, և մարդիկ հասկանում են, որ նրանց խոսակցությունների պատճառը, նրանց ծեր լինելն է, և որ նրանք ապագայից ոչ մի սպասելիք չունեն... Գնում են մեկ կիլոգրամ շաքարապատ շագանակ, հետո փողոցներից մեկի անկյունում գրքի կրպակ են տեսնում, որը երբեք չէին տեսել: Կրպակում վաճառում են էժան գներով դետեկտիվ վեպեր: Գրքի կույտերից գրքեր են ընտրում, ուրախանում, որ որոշ ժամանակ Ռույան կարդալու բան կունենա: Տուն վերադառնալուց հետո կզբաղվեն սիրով, կծխեն ու կարտասվեն, թեյից առաջ մի փոքր կխմեն, որ բնորոշ է յոթանասուններեք տարեկաններին, թե հիշեն են անցել իրենց կյանքի տարիները: Գալիպը միշտ այս թեմայով է մտորում, համոզված, որ յոթանասուններեք տարեկանում Ռույան միայն իրեն կսիրի[42].

Իհարկե սյուժեն չի ավարտվում Գալիպի ապագայի այս պատկերացումով: Երկը հյուսվում է երեք ժամանակներով: Ընթերցողը, որ արդեն գիտի ապագան, հետաքրքրությամբ հետևում է ինքն իրեն, բայց դեռևս չի գուշակում հեղինակի առաջարկած հանելուկը /Այդպես են կառուցված որոշ իրար հաջորդող գլուխներ՝ սկզբում պատասխանը, հետո հանելուկը/, առավելև, ոչ միայն «տեղական», այժմյան ժամանակով, օրերով, այլև իրար հաջորդող ամբողջական ժամանակաշրջաններով թափառելով քաղաքում նույն ճակատագրերով կապված միջնադարյան սուֆի բանաստեղծ Ռումիի և Գալիպի հետ, վերջինիս եղբորը փնտրելու համար, միաժամանակ, հայտնվելով անցյալ ժամանակում, ակամա, զուգահեռաբար մասնակից է դառնում նաև Մեվլանայի՝ Ջելալեդդին Ռումիի հոգևոր սիրահարի՝ նրա «դեմքի և հոգու հայելի» Շամս Թաբրիզիի խորհրդավոր սպանության գաղտնիքի բացահայտմանը:

Երբ Շամս Թաբրիզին անհետանում է և դավադրաբար սպանվում, Մեվլանան չի համակերպվում իր երկրորդ «ես»-ի մահվան լուրի, բացակայության հետ: Որոշում է մեկնել Դամասկոս՝ Շամսին փնտրելու քաղաքի փողոցներում: Ընթերցողն էլ նրա հետ մտնում է ամեն

տուն, սրճարան, անկյուն, այցելում «սիրահարի» հին ընկերներին, ընդհանուր ծանոթներին, մզկիթներ, օթևաններ, վայրեր, որ Ջելալն սիրել էր: Եւ որոշ ժամանակ անց փնտրելը դառնում է նպատակ, ավելի կարևոր, քան գտնելը: Եթե ընկերոջ կորստյան վշտի որպես մխիթարանք՝ Ռումին ստեղծում է իր հանճարեղ «Մասնավին», Գալիպը իր հարազատների որոնումները չի դադարեցնում և իրականացնում է Ստամբուլում՝ դիտելով այն չկեղծված իրական աշխարհ[43]:

Աստիճանաբար իրական Ստամբուլը, որով թափառում է Գալիպը, ինչպես նկատում է Կրիվուլշինը, «վեր է ածվում կոդավորված տեքստի», որը լուծելու համար Գալիպ հերոսից պահանջվում է Ռույային գտնել հիշողությունների կծիկի մեջ...[44]:

Փամուկի հերոսն ինքն է գրում այս գիրքը՝ գտնվելով նրա մեջ և նրանից դուրս՝ փնտրելով բուն մարդկային կյանքը, չնույնացնելով կինոէկրաններում նկարված կյանքի հետ: Վեպը միտումնավոր է գրված խորամանկ, մշուշոտ մտքերով, կարծես, գիրքն ինքնիրեն շարադրվում է ընթերցողի աչքի առաջ: Բայց գրքի հետաքրքիր, լարված սյուժեի պահին ընթերցողը հարց է տալիս, թե ե՞րբ է հեղինակը հասնելու բուն իմաստին, և ինչպիսին կլինի այն: Փամուկը որպես պատմախան ակնարկում է, որ այնքան էլ համոզված չէ, թե ինչպես է ընթանալու պատմվածքը: Այն թափառում է, պտույտներ է գործում, կրկնվում է, կարծես՝ այդ ամենն ասվել է այլ գրողների կողմից: Չմտորեն շարադրված պատմվածքում հեղինակ Փամուկը, հարազատ մնալով իր գրելաոճին, մեկ շեղվում է մի կողմ և մի քանի գլուխ հետո հիշում է, մեկ էլ սխալ քայլ կատարելով, երկրորդ մասից անցնում է առաջինին և հակառակը, դեպքից դեպք անցնելով՝ ընդլայնվում և ուժեղանում է[45]:

Այս թափառումների ճանապարհին Փամուկը իր ամենահայտնի հայտնագործությունն է կատարում՝ ստեղծելով Ստամբուլի կերպարը իր ժամանակագրական շերտերով և սոցիալական բազմազանությամբ: Քաղաք, որ խորհրդանիշ է՝ բաժանված երկու մասի՝ եվրոպական և Ասիական: Երեք հազարամյա պատմությամբ, որպես չորս կայսրության մայրաքաղաք՝ հռոմեականից մինչև օսմանյան, այդ թվում միջնադարյան լատինական՝ խաչակիրների կողմից հիմնադրված:

Պատմվածքն ընդհանրապես երեք մարդու կյանքի մի քանի օրվա մասին է, զուգահեռ աճում են ինքնակենսագրական, պատմական թեմաները և Ստամբուլը, որոնք միահյուսվելով դառնում են Մերձավոր Արևելքի քաղաքակրթության մի վավերագիր, ուր զուգակցվում են հեթանոսությունը և քրիստոնեությունը, ուղղափառ իսլամը և նրա հետ մրցակցող աղանդները, զառամյալ հինը և նորօրյա միօրյան:

Փամուկյան վեպը առօրյա իրերի անսպառ հավաքածու է՝ մոռացված, կորած մանրուքների, բայց և ապագան կանխորոշող: Գրքում մտորումներ կան արևմտյան մշակույթի ազդեցության, ժողովրդավարության, լրագրության, կրոն, սիրո և այլնի մասին: Գալիպի դեգերումներից բացահայտվում է քաղաքի գունավոր, բնապաշտա-

կան պատկերները, որ մարդիկ կորցրել են իրենց գաղտնիքը և ապրում են՝ նմանակելով Արևմտյան հեռուստաֆիլմերի հերոսներին, հին Ստամբուլի փողոցները նորոգվել, նմանվել են Հոլիվուդյան դեկորացիաների: Բայց խախտվել են միահյուսված փոքր՝ տուն, ընտանիք, մեծ՝ հայրենիք, կրոն, պատմության շրջանակները: Թուլացել է այն գիտակցությունը, որ թույլ էր տալիս մարդուն իրեն կենտրոն համարել, հույս պահպանել փրկվելու: Այս երևույթի մասին Փամուքը խոսում է ամբողջ ստեղծագործության ընթացքում՝ փորձելով մարդուն տանել ինքնաճանաչման, որ նա վայելի հաղթանակի գաղտնիքի փայլը, ունենա «ես»-ի գիտակցությունը, խուսափի ամբոխի հետ ձուլվելուց և դիմազրկվելուց[46]:

Փամուքը իր ընթերցողին հուշում է, որ ինքն իրեն կարող է ճանաչել միայն այն դեպքում, երբ կճանաչի մարդկանց, կապրի նրանց կյանքով, կզգա նրանց ցավը, պարտությունները, կդառնա նրանց մտքերի կիսողը և այդպիսով կիմաստավորի իր կյանքը, հայելու արտացոլանքում կտեսնի իր իրական դեմքը: Այդ դեմքը նրան կպատմի իր մասին: Ուղեցույց ընթերցողը ընդունի իր առաջարկությունը, Փամուքը գծում է իր հերոս Գալիպի՝ ինքնաճանաչման հասնելու ընտրած ճանապարհը: Գալիպը իր կողքին կերպավորում է իրեն հետևող «աչքը»: «Աչքը» ճանաչում է Գալիպին, իսկ Գալիպը՝ նրան: «Աչքը» դառնում է նրա երկրորդ կեսը, կարծես երկար ժամանակ նրանք գիտեն իրար: «Աչքը» ուզում է օգնել նրան: Գալիպը սկսում է զգալ, որ ինքը կա, գոյություն ունի, «աչքի» ուշադրության կենտրոնում է, հավատում է, որ եթե այդ «աչքը» չլինի, ինքը կդադարի գոյություն ունենալուց: Զարմանալին այնքան իրական է, որ երբեմն Գալիպը մոռանում է, որ այդ «աչքը» իր ստեղծածն է: Գալիպը համոզվում է, որ, ենթարկվելով նրա հրամաններին, կսկսի գեղեցիկ կյանքով ապրել: Նա ինքն իրեն ներքաշում է իր ստեղծած, ցանկալի աշխարհի մեջ... Նա լուծվել է «աչքի» մեջ, դարձել մեկ ամբողջ, տեսել ինքն իրեն: «Աչքը» դարձել է ինքը: Գալիպը կարող էր ասել արդեն՝ «Այո, ես նման եմ, ես դարձել եմ նա»[47]: Փամուքը անհանգստանում է մարդու, ժողովրդի հոգևոր արժեքի հետզհետե կորստյան, նվազման համար, որ քաղաքում կան մարդիկ՝ ցնորված կինոթատրոններով, թախիծով համակված, որոնք մխիթարություն են փնտրում: Նրանց երազանքները փոշիացել են, ինչպես մերկ տխուր ծառերը զբոսայգու մեջ: «Այդպիսիները մարմնավորում են ազգի աղքատացումը: Այդպիսիները այսօր արհեստականությամբ են տեսնում և չեն տարբերում անցյալի հուշը, չեն զգում պատմությունը, կորցրել են հիշողությունը, անքնությամբ են տառապում»: Այդ դեպքում, Փամուքը նկատում է, որ «մարդը հայտնվել է անելանելիության առջև, կարծես սպառել է իր բոլոր հնարավորությունները, քանդվում է նրա աշխարհը»: Փամուքը մտահոգ է նույնպես իր հերոս Ստամբուլի ճակատագրով, նույն տխուր երևույթը տեսնում է նրա խորհրդանիշ-հրաշալիք՝ Բոսֆորի ապագայում: Նա հարց է տալիս իր ընթերցողին, թե արդյոք

ուշադրություն դարձրե՞լ է Բոսֆորի ջրերի տեղատվությանը ... ընթերցե՞լ, հետաքրքրվե՞լ է՝ ինչ է կատարվում աշխարհում ... գիտի՞, որ Սև ծովի մակարդակը բարձրանում է, իսկ Միջերկրականինը իջնում ... գիտի՞, թե «ինչ է սպասվում ապագայում, եթե շարունակվեն այդ պրոցեսները, ... որոշ ժամանակ անց եդեմական վայր Բոսֆորը կվերածվի «սև ճահճի»: Փամուքը պատկերացնում է, որ տեղատվությունից ի հայտ կգան նոր թաղամասեր, կսկսեն կառուցվել այդ կավային ամայությունում զվարճանքի տեղեր, խաղատներ, դերվիշների օթևաններ, գործարաններ... Ամերիկյան քաղաքակրթության մշտական ներկայությունը ցուցադրող ամերիկյան կայանված նավերի կողքին, ցամաքի վրա կհայտնվեն ծկների կմախքներ, «Օլիմպոս» քաղցրացրի շշերի կափարիչներ... Ենթադրում, որ այդ նոր հասարակությունում, առաջացած փոսում՝ թունավոր գազերի, ծկների դիակների, առնետների հարևանությամբ նոր, «հիասքանչ» ապրելու տեղ ստեղծելով՝ նոր հիվանդություններ, վարակներ կտարածվեն, և ոչ ոք չի պաշտպանվի այս աղետից. վայրը կփակեն փշալարերով, կհայտարարեն արգելված գոտի, իսկ պատշգամբներից, որտեղից մարդիկ մինչ այդ հիացել են լուսնի լույսի տակ փայլող Բոսֆորի ջրերով, այսուհետ կտեսնեն խարույկներ, ուր այրվում են քայքայված դիակներ, Ստամբուլի բնակիչները կզգան Բոսֆորի ափին, սեղանների վրա մահացածների նեխահոտը, որոնց շուրջ մի ժամանակ նստել, ռաքըն էին խմել, զգացել կյանքի բույրը, հանրակառքերով տուն վերադառնալիս բացել լուսամուտները, չնչել Բոսֆորից եկող թարմ օդը, այսուհետ պիտի փակեն պատուհանները, ծածկեն թերթերով, որպեսզի չտեսնեն այդ ահավոր տեսարանը, այդ անդունդը...[48]

Այս և նման իրողություններից կարծես փախչելով՝ Գալիպը կրկին հայտնվում է հուշերում, այս անգամ մանկության, Ռույայի հետ անցկացրած սքանչելի օրերում: ... Դեռ, այդ հեռավոր ու երջանիկ ժամանակներում, մտադրությունները և գործողությունները միասնական համակցություններ էին ... Նետն ու աղեղը շարունակություն էին ոչ միայն ձեռքի, այլև հոգու... Կյանքն ու պատմությունը այնքան իրական էին, որ ոչ ոք չէր հարցնում՝ ինչ է կյանքը և ինչ է պատմությունը: Երազներն իրականանում էին, և կյանքը մեկնվում:

Փամուքի փնտրտուքը ավարտվո՞ւմ է իր բնույթով անվերջանալի, աշխարհը պատկերող «Սև գրքով»: Թվում է՝ նա հուսալքություն է ապրում՝ գիտակցելով պայքարի անարդյունավետությունը, և ցավը նրան հանգեցնում է մեկ այլ գիրք գրելու մտքին, որը կրկին կլինի Մահդիի գալստյան և փրկվելու երազանքի մասին... Բայց արդյոք Մահդին մեր օրերում, այս իրապաշտ աշխարհում փրկություն երազողներին իրոք կարող է փրկել: Այնուամենայնիվ արևելյան ժողովուրդների պատմամտածողությանը քաջածանոթ Փամուքը Մահդիի գալուստը խիստ է առարկայացնում և զգուշացնում, որ փրկիչ Մահդին կարող է անժամանակ գալ՝ հատկապես երբ փրկություն աղերսողները

հայտնվել են աշխարհի հատակում:

Հետաքրքիր են Մահդիի գալստյան մեկնաբանությունը: Փամուքը մեկնում է այդ հանելուկը:

Եւ ահա գալիս է Մահդին... Իհարկե Մահդին եկել է օգնելու մարդկանց՝ մոռանալ ցավն ու տխրությունը, արթնացնելու նրանց կորած հույսերը, երջանկության տանելու, և ո՞վ, բայց արդյո՞ք նա կարող է, հարցնում է Փամուքը և պատասխանում՝ շատ դարեր առաջ դժբախտներին հույս տալ կարողացել է Մուհամմեդը, որովհետև սրով էր տարել հաղթանակից հաղթանակ: Բայց այսօր պատերազմով հաղթանակը անհնար է: Հաղթանակը ոչ միայն Իսլամի, այլ Արևելքի հաղթանակը Արևմուտքի նկատմամբ միայն երազանք է: Բոլորի համար տեսանելի է Արևմուտքի հարստությունը և Արևելքի աղքատությունը: Իհարկե ծայրահեղ աղքատությունը չի նշանակում զրկել խեղճերին պայքարելու հույսից... Կարելի է պայքարել երկրի ներսում աղքատության և դժվարության ստեղծողների դեմ, ներքին թշնամիների դեմ:

Թեև հույսն ու Ղուրանը հզոր և աշխարհիկ կյանքի հիմքերն են, այսօր սակայն հույսն ու ազատությունը փնտրվում են այնտեղ, որտեղ կա հաց, որովհետև հնարավոր չէ անվերջ մարդկանց հույսով օրորել: Որոշ ժամանակ անց նրանք կտեսնեն, որ գործը չի կարգավորվում, հացը չի շատանում, հույսն էլ հօդս կցնդի, նորից կկորցնեն Ղուրանի նկատմամբ հավատը, վերստին կընկնեն խորը հիասթափության, անբարոյականության, հզոր աղքատության մեջ, կորոշեն, որ կախաղան հանված դժբախտները իզուր են պատժվել: Եւ ահեղ դատաստանի օրը կստեղծեն իրենց պատմությունը, յուրաքանչյուրը կհավատա դրան և կցանկանա վերապատմել՝ կրելով հայտնի տառապյալի հաղթական պսակը: Եւ այդ ժամանակ Մահդին կդառնա Դաջալ, իսկ Դաջալը՝ Մահդի[49]:

Եւ ինչ է առաջարկում այնուամենայնիվ Փամուքը լրագրող Գալիպը: Հասարակությունների մեջ անխուսափելիորեն ծնվող, մարդուն անհանգստություն պատճառող հակադրությունները վերացնելու կամ մեղմելու համար նա պարզ ու հստակ, առաջին հայացքից տարօրինակ լուծում է առաջարկում, որ ընդհանրապես կյանքում հասարակության մեջ մտահոգ մտքերից ազատագրվելու համար մութ փողոցում մտահոգ մտքեր ծնողի և անլուծելի թողնողի ուղղությամբ կլսվի կրակոց, ինչպես պատմական այն բոլոր կարևոր իրադարձությունների ժամանակ հերոսներից մեկի սպանման առաքելության և այդ առաքելության նկատմամբ ցուցաբերած դավաճանության ի պատասխան:

Օրհան Փամուքը հավաստացնում է, որ հասկացողները իրավունք ունեն այս առարկայական աշխարհում գրավել ուրիշների տեղը և հագնել ուրիշների հագուստները: Երբ Մահդի հերոսները, որոնց վիճակված է ունենալ և տրվում է մարդուն կառավարելու իրավունքը, երբ իրենց շահի համար յուրացնեն այն և վաճառեն, իրենց ստեղծած

կեղծիքներից վախենալով փախչեն ժողովրդից, այնուամենայնիվ հա-
տուցում և վախեան կունենան...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Serdar Kuru, Orhan Pamuk dosyası, Kuş yumurtası üretmek ve Orhan Pamuk. www.guvercinevi.net, 25.09.2005. Տես նաև Orhan Pamuk's Biography, prepared by Nazan Haydari and Mujdat Pakkan www.opamuk.com, 30.06.2005.
2. From Wikipedia, the free encyclopedia, Orhan Pamuk's Biography, 19.07.2005.
3. Նույն տեղում:
4. Акунин Борис, Алмазная колесница, Орхан Памук. Библиография, www.literra.ru, 22.01.2006. Տես նաև Орхан Памук – лауреат IMPAC, www.7news.ru, 22. 01.2006.
5. <Aydinlik>, 30 ekim 2005, Orhan Pamuk's 6000 Alman Istihbaratı verdirdi. Տես նաև «Ազգ» օրաթերթ, 25. հուլիս. 2006թ., հոդ.՝ Օրհան Փամուքը Գերմանիայում արժանացել է խաղաղության մրցանակի: Интеллектуальный писатель Орхан Памук получил премию, www.lenta.ru, 22.01.2006.

Премия мира досталась турецкому писателю Орхану Памуку, 24.06.2005, www.inostranka.ru, 22.01.2006. Лауреатом немецкой премии мира стал турок, www.pravda.ru, 12.10.2005.

6. «Հայկական ժամանակ» օրաթերթ, 09 նոյ. 2005թ., հոդ.՝ Մրցանակ բուրգ գրողին: Տես նաև Волков Валерий, Опубликован первый список премии Медичи, www.resheto.ru, 12.10.2006.
7. «Ազգ» օրաթերթ, 11 փետ. 2005թ., հոդված՝ Թուրքիայում մեկ միլիոն հայ է սպանվել:«Նոր կեանք», շաբաթաթերթ, ԻԸ տարի, թիւ 43, հոկ. 6, 2005, հոդ.՝ Ս.Գ. Գրիգորեան, Զրուցեցինք Օրհան Փամուքին: «Վան Հայության» ամսագիր, թիվ 2, նոյ. 2006թ., հոդ.՝ Խոսքի ազատություն Թուրքիայում:
8. "Hürriyet", 16 subat 2005, Ahmet Hakan, Orhan üzerine tezler. Տես նաև "Agos", sayı 464, 18 Şubat 2005.
9. "Star", 11 Şubat 2005, Ardan Zentürk, Orhan Pamuk Canımı yaktın
10. "Cumhuriyet", 12 Şubat 2005, Ataol Behramoğlu, Orhan Pamuk'un şakaları.
11. "Hürriyet" gazetesi, 11 Şubat 2005, Fatih Altaylı, Kara yazar.
12. Turkish Papers and Scientists Declare Him Traitor of Nation, prepered by Hakob Chakrian, neomail.sourceforge.net,15.02.2005.
13 Նույն տեղում:
14.Նույն տեղում:
15. Haluk Şahin, Orhan Pamuk'a dostça hatırlatma, www.radikal.com.tr, 01.07.2005.
16. "Posta", 16 Şubat 2005, Mehmet Ali Birand.Orhan Pamuk neden düşündüğünü söylemesin?
17. "Agos" gazetesi, sayı 464, 18 Şubat 2005, Bırakın herkes konuşsun.
18. «Ազգ» օրաթերթ, 23 դեկ. 2005թ., 24 հունվ. 2006թ. հոդ.՝ Թուրքիան դատարանի առաջ /Ա-Բ մասեր/: Տես նաև "Agos", sayı 507, 16 Aralık 2005, Türkiye sanık kürsüsünde. Орхана Памука посадят за геноцид, 31.08.2005. www.resheto.ru, 12.10.2005.

19. "Sabah", 9 Ekim 2005, Erdal Şafak, Zamanlama şaheserleri. Տես նաև "Agos", sayı 498, 14 Ekim 2005. «Առավոտ» օրաթերթ,16 սեպ. 2005թ., հոդ.՝ Փամուքի դատավարությունը բարկացրել է Եվրոմիությանը: Информационная служба Genocide. ru, Хельсинская комиссия призывает снять обвинения в адрес Орхана Памука, октябрь 14, 2005, www.news.genocide.ru, 22.01.2006. «Հայկական ժամանակ» օրաթերթ,17 դեկ. 2005թ., հոդ.՝ Վճռորոշ դատավարություն:
20. Турция остановила суд над Орханом Памуком после угроз Евросоюза, www.podrobnosti. ua, 18.12.2005. Տես նաև «Ազգ» օրաթերթ, 24 հունվ. 2006թ., հոդ.՝ Կարճվեց Օրհան Փամուքի գործը: «Առավոտ» օրաթերթ, 24 հունվ. 2006թ., հոդ.՝ Չանեղնա թողեցին: Радио Свобода об Орхане Памуке, www.svoboda.org, www. belintellectuals. com, 22.01.2006.
21. Ahmet Oktay, Gösteri, Yeni hayat üzerine, 19.07.2005.
22. John Updike, Murder in Miniature, www.orhanpamuk.net, 20.07.2005.
23. Sarah Emily Miano, The Observer, "Snow" by Orhan Pamuk, www.orhanpamuk.net, 20.07.2005.
24. Кривушин Роман , Стамбульские тайны, www.sibpress.ru, 21.01.2006.
25. John Updike, Murder in Miniature, www.orhanpamuk.net, 20.07.2005.
26. Nüket Esen, Orhan Pamuk, Portrait of a Writer, www.orhanpamuk, 19.07.2005
27. Նույն տեղում:
28. Innes Charlotte, The Nation, March 27.1995, v 260, n 12, pp 245-248, www.orhanpamuk.net 19.07.2005.
29. Дубин Борис, Вступление, Орхан Памук, Черная книга, www.lib.votkinsk.net, 21.01.2006. Տես նաև Иностранная литература, н. 6, М., 1999, Орхан Памук, Черная книга, стр. 36.
30. Радио Свобода об Орхане Памуке, www.svoboda.org, www.belintellectuals.com, 22.01.2006.
31. "Независимая газета", Глеб Шульпяков, Когда отступили воды Босфора, www.exlibris.ng.ru, 21.01.2006.
32. Читая Памука , www.turkey-info.ru, 21.01.2006.
33. Orhan Pamuk, Kar romanı, İletişim Yayınları, Istanbul, 2002, s.431.
34. Innes Charlotte, The Nation, March 27.1995, v 260, n 12, pp 245-248, www.orhanpamuk.net 19.07.2005.
35. Նույն տեղում:
36. "Независимая газета", Глеб Шульпяков, Когда отступили воды Босфора, www.exlibris.ng.ru, 21.01.2006.
37. Кривушин Роман, Стамбульские тайны, www.sibpress.ru, 21.01.2006. Հուրուֆիներ – շիական համայնքի անդամներ, հիմնադրվել է XIV դ., հավատում էին Ղրանք տառերի միստիկական նշանակությանը: Հիմնադիրն է Ֆազլալլահ Աստարաբադին:
38. Дубин Борис, Вступление, Орхан Памук, Черная книга, www.lib.votkinsk.net, 21.01.2006.
39. Orhan Pamuk, Kara Kitap Romanı, İletişim Yayınları , Istanbul, 2004, s 17-19.

Иностранная литература, н. 6, М., 1999, Орхан Памук, Черная книга, Роман, Перевод с турецкого Веры Феоновой, стр. 41–45.

40. Kara Kitap Romanı , էջ 218: Черная книга, էջ 99:
41. Kara Kitap Romanı, էջ 427-428: Черная книга, էջ 160:
42. Kara Kitap Romanı, էջ 438-440: Черная книга, էջ 164-166:
43. Kara Kitap Romanı, էջ 254-255: Черная книга, էջ 108-109:
44. Кривушин Роман, Стамбульские тайны, www.sibpress.ru, 21.01.2006.
45. Дубин Борис, Вступление, Орхан Памук, Черная книга, www.lib.votkinsk.net, 21.01.2006.
46. Նույն տեղում:
47. Orhan Pamuk, Kara Kitap Romanı, İletişim Yayınları , İstanbul, 2004, s.114-117: Иностранная литература, н. 6, М., 1999, Орхан Памук, Черная книга, Роман, Перевод с турецкого Веры Феоновой, стр. 72-76.
48. Kara Kitap Romanı, էջ 23-25: Черная книга, էջ 45-46:
49. Kara Kitap Romanı, էջ 156-158: Черная книга, էջ 83-85:

ԼԵՎՈՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Թուրքերենի քերականական կառուցվածքը այսօր էլ շարունակում է թուրքագետ-լեզվաբանների ուշադրության կենտրոնում:

Թուրքերենը պատկանում է թյուրքական լեզվաընտանիքի օղուզասելջուկյան ենթախմբին և համարվում ամենից տարածում ունեցող թյուրքական լեզուներից մեկը: Թուրքերենում, չնայած նշանակալից չափով օտարալեզու շերտերի առկայությանը, պահպանվել են թյուրքական լեզուների հիմնական գծերը: Հնչյունաբանության և ձևաբանության յուրահատկությունների հետ մեկտեղ՝ ժամանակակից թուրքերենում առկա են նաև թյուրքական լեզուների շարահյուսական կառուցվածքի բնորոշ կողմերը. այն առաջին հերթին լեզվում գործող շարահյուսական տարրերի՝ բառակապակցությունների և նախադասությունների խիստ հաջորդականությունն է, որը պայմանավորված է նրանց բառաիմաստաբանական, ձևաբանական և շարահյուսագործառական բարդ ամբողջության առանձնահատկությամբ[1]:

Ինչպես յուրաքանչյուր լեզվում, թուրքերենում ևս լեզվական զարգացումներն ու փոփոխությունները բխում են ներքին ու արտաքին պատճառներից: Սովորաբար բոլոր լեզուների փոփոխության ներքին պատճառները կարող են դառնալ լեզվի համակարգի ներքին հակասությունները, նրա անհորինակությունը, իշխող օրինաչափությունների, կանոնավոր ձևերի կողքին՝ անկանոնների (բացառությունների և շեղումների) առկայությունը, լեզվական իմաստների և լեզվական ձևերի (լեզվական նշանների ներքին և արտաքին կողմերի) անհամապատասխանությունները[2]:

Լեզվի փոփոխության և զարգացման վրա մեծ չափով ազդում են նաև արտաքին գործոնները: Այս ճանապարհով տեղի ունեցող լեզվական փոփոխությունները ակադ. Գ. Ջահուկյանը կոչում է «գործառական փոփոխություններ»[3]: Արտաքին գործոններն են, որ առաջ են բերում լեզվական իրողության ներքին փոփոխություններ:

Տեսական այս մոտեցումով կարելի է քննել նաև ժամանակակից թուրքերենի քերականագիտության այս կամ այն քերականական կառուցվածքը, քանի որ վերջինս էլ անցել է որոշակի ժամանակագրական փուլ և այսօր էլ գտնվում է զարգացման ընթացքում:

Մյուս լեզուների նման թուրքերենի քերականական կառուցվածքում մեծ տեղ է գրավում բայը: Թուրքերենի, ինչպես և այլ լեզուների, բայական համակարգի մասին չի կարելի լիարժեք պատկերացում կազմել առանց անդեմ բայերի կամ դերբայների, քանի որ «դերբայնե-

րի ծագումնաբանական, ձևաբանական, բառակազմ-իմաստաբանական վերլուծությունը լույս է սփռում բայի խոնարհման համակարգի շատ իրողություններ ըմբռնելու և արժեվորելու համար»[4]:

Թուրքագետ լեզվաբանների հետազոտություններում և առանձնակի կարևորություն են ներկայացնում բայի անդեմ ձևերը, որոնք զուգահեռաբար ամփոփելով բայական և անվանական հատկանիշներ՝ շարունակում են տարակարծությունների տեղիք տալ՝ իրենց կարգավիճակը, տեղն ու դերը որոշելու և բնութագրելու հարցերում:

Թուրքերենի քերականությանը նվիրված համալիր ուսումնասիրությունները, Թուրքիայում սկսվել են 1930-40-ական թվականներից: Այս բնագավառի կայացմանը մեծապես նպաստել է «Թուրք լեզվագիտական ընկերությունը» (Türk Dil Kurumu): Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որի նպատակն էր Թուրքիայի հանրապետությունում համակարգել ժամանակակից թուրք քերականագիտական մտքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեև թուրք քերականագիտական միտքը սկսել է ձևավորվել դեռևս XIX դարի կեսերին, սակայն ավելի համակարգվել ու մշակվել է XX դարի երկրորդ կեսից սկսած:

Թուրք քերականագիտության պատմությունը ընդունված է բաժանել երկու ժամանակաշրջանի. առաջինը՝ 1846-ից մինչև XIX դարի վերջը, երկրորդը՝ XX դարի սկզբներից մինչև մեր օրերը: Մինչև Քեմալ Աթաթյուրքի լեզվական բարեփոխումները (1928 թ.), այն մեծապես կրում էր արաբական քերականության համակարգի այս ուղղությամբ ստեղծված ավանդույթների ազդեցությունը[5]:

Ռուս թուրքագետ-լեզվաբան Ն. Կոնոնովը նկատում է, որ առաջին շրջանում թուրք քերականները առաջնորդվում էին արաբական քերականության սկզբունքներով ու մոտեցումներով: Թուրք հեղինակների ուսումնասիրությունները կրում էին զուտ դպրոցական քերականության դասագրքերի բնույթ, որոնց հիմքը կազմում էր արաբերենի սխոլաստիկ համակարգը[6]: Թերևս դա էր պատճառը, որ նրանց չէր հաջողվում համակողմանիորեն լուսաբանել թուրքերենի քերականության հիմնական դրույթները, ձևաբանական և շարահյուսության յուրահատուկ կողմերը:

Երկրորդ շրջանում արձանագրվում է կտրուկ նահանջ արաբապարսկական քերականական համակարգից, որն էլ հենց այդ ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունների բնորոշ կողմն էր: Դեռևս XIX դարի վերջում Թուրքիայում հրատարակվում են քերականության դասագրքեր, որոնք կազմված էին «d' apres les principes de la grammaire europeenne»[7]: Սակայն մինչև 1950 – 60-ական թթ. որոշ թուրք լեզվաբաններ շարունակում էին իրենց գրած քերականություններում տուրք տալ արաբական լեզվաբանության ա-

կանոնություններից և շատ հարցեր քննում էին հին կաղապարների ներքո, զուգահեռաբար օգտագործում արաբերենի և ժամանակակից թուրքերենի քերականական տերմինները:

Վերջին տասնամյակներում ստեղծված թուրքերենի քերականության ուսումնասիրությունների, դասագրքերի ու ձեռնարկների մեթոդաբանությունն էապես տարբերվում է նախորդներից. դրանք աչքի են ընկնում իրենց համակարգվածությամբ, նյութի մատուցման հստակությամբ և պարզությամբ: Բացի այդ նոր աշխատությունները գրված են ժամանակակից լեզվաբանության սկզբունքների, մեթոդաբանության ու տեսությունների հիման վրա:

Թուրք լեզվաբանները, քննության առարկա դարձնելով ժամանակակից թուրքերենի և թյուրքական լեզուների դերբայների ծագումնաբանական, ձևաբանական, իմաստաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, բնութագրել և տվել են սահմանումներ, հստակեցրել նրանց տեղը խոսքի մասերի համակարգում:

Այս բնագավառում հատկանշական են Հակոբ Մարթայանցի (Դիլաչար) կատարած հսկայածավալ ուսումնասիրությունները: Վերջինս լինելով ժամանակակից թուրքերենի լեզվական բարեփոխումների հեղինակ՝ առաջիններից էր, որ Թուրքիայում կազմեց թուրքերենի համակարգված քերականության տեսություն, հրապարակեց ընդհանուր լեզվաբանությանը նվիրված իր ուսումնասիրությունը, ինչպես նաև բազմաթիվ հոդվածներ և հետազոտություններ, որոնք լույս են սփռում թուրքերենի ծագումնաբանության և քերականության այս կամ այն կարգերի լուսաբանմանը[8]:

Առավել կարևոր աղբյուրներից է թուրք լեզվաբան Մ. Էրգինի «Türk Dil Bilgisi» («Թուրքերենի քերականություն») ուսումնասիրությունը: Այն ունեցել է չորս հրատարակություն, որոնցից վերջինը վերանայված և լրացված տարբերակն է[9]: Աշխատությունը նվիրված է արևմտյան թուրքերենի քերականության քննությանը:

Առաջաբանում հեղինակը ընդգծում է, որ արևմտյան թուրքերենի քերականությունը ներկայացրել է նոր քերականական համակարգում, այսինքն՝ ուսումնասիրությունը տարվել է ոչ թե արևելյան և արևմտյան քերականությունների ընդունված շրջանակներում, այլ՝ հենց թուրքերենի կառուցվածքի թելադրված մեթոդաբանության համաձայն: Ըստ նրա՝ թուրքերենի քերականական ձևերը, որոնք թվում է, թե մեկ ամբողջություն չեն կազմում, անհրաժեշտ է կապել մեկ ընդհանուր համակարգի հետ: Մ. Էրգինն նշում է նաև, որ ուսումնասիրությունը ոչ թե ստատիկ քերականության նկարագրություն է, այլ իրենից ներկայացնում է պատմահամեմատական քերականություն: Քննության են ենթարկված ինչպես քերականական միավորների արդի վիճակը, այնպես էլ նրանց պատմական զարգացումները: Ուսումնասիրության ընթացքում այս հեղինակի կողմից համեմատականներ են անցկացվել հին թուրքերենի և մյուս թուրքական լեզվաճյուղերի, նաև

արևմտյան թուրքերենի բարբառների՝ գրավոր խոսքում առկա ձևերի հետ: Մ. Էրգինը իր աշխատության մեջ անդրադարձել է նաև թուրքերենի որոշ շեշտային (շեշտադրական) համակարգին, քերականական տերմինների խնդրին: Թուրքերենին չհամապատասխանող օտար տերմինների փոխարեն Մ. Էրգինը օգտագործում է թուրքերենի կառուցվածքին համարժեք ձևերը[10]:

Թուրք լեզվաբանի ուսումնասիրության և հետազոտության լեզվական նյութը քաղված է հին թյուրքական տեքստերից, հին անատոլիական թուրքերենի բնագրերից, օսմաներենի լեզվի շրջանում գոյություն ունեցող հիմնական դիվաններից, մի շարք արձակ տեքստերից, պատմություններից և գրառումներից (tezkire, tezkere), ինչպես նաև թանզիմաթյան[11] և հետթանզիմաթյան շրջանում հանդես եկած թուրք գրականության մի շարք ստեղծագործություններից, լեզվաբանների ուսումնասիրություններից:

Մ. Էրգինը, արևմտյան թուրքերենը համարելով ինքնատիպ քերականական կառուցվածք ունեցող լեզու, այնուամենայնիվ քերականական որոշ կարգեր քննելիս որոշ չափով հետևել է արաբական քերականության ավանդույթներին, թեև միաժամանակ փորձել է կիրառության մեջ մտցնել լեզվաբանության առաջադրած ժամանակակից մեթոդներն ու տերմինները:

Սակայն այդ երկու դպրոցների հստակ սահմանազատումը կատարել են միայն վերջին տասնամյակների թուրք լեզվաբանները:

Մ. Էրգինի ուսումնասիրության մեջ առանձին խոսքի մասերի հետ մեկտեղ քննության են ենթարկվել նաև բայի դիմավոր և անդեմ ձևերը՝ իրենց ծագումնաբանական, ձևաիմաստաբանական և շարահյուսական դրսևորումներով հանդերձ:

Ժամանակակից դերբայների ուսումնասիրման քննության համար արժեքավոր են թուրք քերականներ Ն. Քոչի, Մ. Հենգիրմենի, Ֆ. Հեփչիլինգիրլերի, Ա. Սըրըգյոլի աշխատությունները[12], որոնք գրված են լեզվաբանության առաջադրած ժամանակակից մեթոդներով. դրանք այսօր որպես բուհական դասագրքեր օգտագործվում են Անկարայի և Ստամբուլի համալսարաններում: Նրանց աշխատություններում խոսքի մասերը տարբերակելիս հաշվի են առնված բառերի իմաստային, գործառական, ձևաբանական և բառակազմական առանձնահատկությունները:

Թյուրքագիտության, թյուրքական լեզուների համեմատական քերականության և ժամանակակից թուրքերենի համակարգված քերականության համակողմանի և հիմնարար ուսումնասիրության ոլորտում բացառիկ ներդրում ունեն ռուսական ու խորհրդային թյուրքագիտական դպրոցը: Թյուրքագիտությունը այլ լեզվաընտանիքների լեզվաբանության նման զարգացել է կոնկրետ լեզուների հետազոտությունների՝ նկարագրման և մշակման, բոլոր թյուրքական լեզուների կամ լեզվական խմբերի ընդհանրացումների արդյունքում[13]:

Թուրքերենի համակարգված քերականության առաջին դասագրքերից մեկը կազմել է խորհրդային թյուրքագետ-լեզվաբան Վ. Ա. Գորդլևսկին, որը հրատարակվել է 1928 թվականին: Նրա ուսումնասիրության մեջ բնութագրված են թուրքերենի տիպաբանական առանձնահատկությունները: Քերականությունը ներկայացված է ըստ բաժինների՝ հնչյունաբանություն, ձևաբանություն, անդրադարձել է նաև թուրքերենի շարահյուսական առանձին խնդիրներին: Հեղինակը «Բայ» խոսքի մասը ներկայացնող բաժնում քննում է նաև թուրքերենի բայի անդեմ ձևերը՝ տարանջատելով դրանք երեք խմբի՝ անվանական, մակբայական դերբայներ և բայանուններ: Թեև գիրքը կոչվել է «Թուրքերենի քերականություն», սակայն ավանդաբար քերականական օրինակները տրված են օսմաներենով՝ զուգահեռ ռուսերեն տառադարձումներով: Ա. Սամոյլովիչի աշխատության նմանողությամբ[14], իրենից ներկայացնում է ժամանակակից «օսմանաթուրքական» քերականության դասագիրք: Վ. Ա. Գորդլևսկու ուսումնասիրությունը ունի նաև հատկանշական մի կողմ. այն կրում է ռուս քերականական դպրոցի ազդեցությունը[15]: Առհասարակ խորհրդային թյուրքագիտական դպրոցի վրա նկատելի է հնդեվրոպական և ռուսական լեզվաբանական դպրոցների ներգործած ազդեցությունները:

Եվրոպական տարբեր լեզուներով հրապարակված գիտական ժառանգություն է թողել խորհրդային թյուրքագետ-լեզվաբան Ն. Կ. Դմիտրևը: Նրա ուսումնասիրությունները նվիրված են թյուրքական լեզուների պատմության և նրանց կառուցվածքային առանձնահատկություններին վերաբերող բազմազան հարցերի լուսաբանմանը[16]: Թյուրքագետ-լեզվաբան Է. Վ. Սևորտյանը ընդգծում է, որ Դմիտրևի լեզվաբանական հայացքները ոչ թե իր նախորդների կողմից ասվածների պարզունակ կրկնությունն են, այլ նա թյուրքագիտության բնագավառում առաջադրել է որակական մի նոր աստիճան: Նրա ուսումնասիրությունները խարսխված են 20-րդ դարի սկզբներին հնդեվրոպական, առաջին հերթին սլավոնական և ռուսական լեզվաբանությունների տեսական մտքի արդյունքների վրա:

Խորհրդային թյուրքագետների շարքում հատկապես առանձնանում է ականավոր Ա. Կոնոնովը, որի աշխատությունները թարգմանվել են ինչպես եվրոպական լեզուներով, այնպես էլ ժամանակակից թուրքերենով: Մեծ արժեք է ներկայացնում նրա ժամանակակից գրական թուրքերենի քերականությանը նվիրված ստվարածավալ մենագրությունը, որտեղ հեղինակը տվել է թուրքերենի հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության համակարգված նկարագիրը: Որպես նյութ նրա համար ծառայել է ժամանակակից գրական թուրքերենի և մամուլի լեզուն[17]: Առաջնորդվելով գործառական-շարահյուսական սկզբունքներով՝ Ա. Կոնոնովը ժամանակակից թուրքերենում տարբերակում է տասնմեկ խոսքի մաս: Դերբայները նա քննում է «Բայ» խոսքի մասին նվիրված բաժնում՝ որպես բայի դրսևորման

ձևեր:

Ժամանակակից թուրքերենի բայի անդեմ ձևերը ավելի համակողմանի և ընդգրկուն ներկայացնելու համար պետք է հաշվի առնել նաև Ա. Կոնոնովի առաջադրած դերբայների իմաստաբանական, գործառական-շարահյուսական, ձևաբանական և բառակազմական հատկանիշները:

Թյուրքական լեզուների, հատկապես ժամանակակից թուրքերենի բայի անդեմ ձևերի ընդհանուր տեսությունը դիտարկելիս և համեմատական վերլուծություններ կատարելիս անհրաժեշտ է հենվել նաև խորհրդային թուրքագետ-լեզվաբաններ Շ. Ս. Այլարովի, Ն. Ա. Բասկակովի, Ա. Մ. Շչերբակի, Պ. Ի. Կուզնեցովի ուսումնասիրությունների վրա, որոնցում համգամանորեն տիպաբանական վերլուծության են ենթարկվել թյուրքական լեզուների կառուցվածքները՝ նրանց ձևաբանական և բառաիմաստաբանական առանձնահատկությունները[18]: Վերոնշյալ հեղինակները պատմահամեմատական քննության են ենթարկել նաև թյուրքական լեզուներում բայի դիմավոր և անդեմ ձևերի դրսևորումները, նրանց ձևաբանաշարահյուսական ծավալումները:

Հատկանշական են նաև Ս. Այլարովի աշխատությունները, որոնք որպես թուրքերենի ուսուցման բուհական դասագիրք և ձեռնարկ օգտագործվել են նաև խորհրդային Հայաստանում[19]:

Արժեքավոր ուսումնասիրությունների թվին է պատկանում Ա. Շչերբակի «Ակնարկներ թյուրքական լեզուների համեմատական ձևաբանության» մասին աշխատությունը, որն ըստ էության նրա «Թյուրքական լեզուների համեմատական քերականության» շարունակությունն է: Այս գրքում, համեմատական մեթոդի կիրառմամբ, բայի քերականական ձևերը դիտարկվում են հիմք+ձևույթ միացման համապատասխան հաջորդականությամբ: Ա. Շչերբակը իր այս ուսումնասիրության մեջ, ինչպես ինքն է խոստովանում, մեծ դժվարությամբ փորձել է հստակ սահմանազատում անցկացնել բայի բառափոխության և բառակազմության համակարգերի միջև: Հեղինակը նշում է, որ մի կողմից չկան բառափոխությանն ու բառակազմությանը վերաբերող ընդհանուր չափանիշներ (մի շարք թյուրքագետներ սահմանափակում են բայի բառակազմական ձևերի թիվը, իսկ ոմանք, ընդհակառակը, բայի գրեթե բոլոր ձևերը (խոնարհում, կերպ, սեռ) համարում են բառակազմական դրսևորումներ), մյուս կողմից էլ առանձին բայական ձևերի քերականական ընդգրկումներն այնքան բարդ են, որ ցանկացած միանշանակ սահմանազատումը ամբողջությամբ բավարար չի կարող լինել[20]: Ա. Շչերբակի մենագրության «Բայ» բաժնում ուսումնասիրության նյութ է դառնում բայի ձևաբանական փոփոխությունները: Այս բաժնում են տրված բայի ու անվան վերաբերյալ ընդհանրացնող տեսակետները[21]:

Թյուրքական լեզուների և հատկապես ժամանակակից թուրքերենի կառուցվածքային տիպաբանական առանձնահատկությունների

ուսումնասիրման բնագավառում մեծ ներդրում ունի ռուս թուրքագետ Ն. Ա. Բասկակովը: Նրա «Թյուրքական լեզուների պատմա-տիպաբանական ձևաբանությունը» մենագրության մեջ համգամանորեն վերլուծության են ենթարկված թյուրքական լեզուներում գոյություն ունեցող արմատային և ածանցային ձևույթները, փորձ է արված տարբերակել բառափոխության և բառաստեղծման սահմանները՝ խոսքի մասերի դասակարգման խնդրի առնչությամբ[22]: Ուսումնասիրության մեջ նաև վեր է հանվում թյուրքական լեզուներում *ագլյուտինացիայի* (կցականության) և *ֆյուզիայի* (թեքման) տարրերի հարաբերակցությունը: Հեղինակը համաձայն է այն տեսության, ըստ որի թյուրքական լեզուները միայն պահպանում են իրենց կցական կառուցվածքը, իսկ բառի տարրերը՝ վերջածանցները, արդյունք են ինքնուրույն բառերի քերականացման: Մենագրության մեջ մշակվել է նաև մի կարևոր հիմնահարց՝ թյուրքական բառի կառուցվածքային *իզոմորֆիզմը* (համապատասխանականություն) և բառակապակցության կառուցվածքը: Հեղինակը բառակազմական վերջածանցները դիտարկում է որպես քերականական և բառաիմաստաբանական հարաբերությունների արդյունք: Ն. Բասկակովը անդրադարձել նաև թյուրքագիտության մեջ բայի գործառութային կարգերին վերաբերող հայեցակարգին, ինչպես նաև թյուրքական լեզուներում, այդ թվում և ժամանակակից թուրքերենում, բայական բառակազմական սուբստանտիվ (մասդար) և ատրիբուտիվ (ածականական և մակբայական դերբայներ) կարգերի առանձնահատկություններին[23]:

Բայի անդեմ ձևերի թուրքերեն–հայերեն զուգաբանական համեմատություններն անցկացնելիս կարևոր աղբյուր կարող են ծառայել հայ լեզվաբանության մեջ այս ուղղությամբ եղած հիմնարար ուսումնասիրությունները: Հայ քերականության մեջ սկզբնական շրջանում բայի անդեմ ձևերը դիտվում էին որպես անվան և բայի ձևաբանական ու կիրառական հատկանիշներով բնորոշ բառախումբ: Մինչև խորհրդային հայ քերականագիտությունը դերբայները հիմնականում կամ միացվել են բային, կամ էլ տարալուծվել հարաբերակից այլ խոսքի մասերի մեջ: Դերբայի՝ որպես քերականության յուրահատուկ հասկացության տեղը քերականական այլ հասկացությունների մեջ որոշակելու ուղղությամբ արժեքավոր ներդրում են հայ լեզվաբաններ Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գ. Ջահուկյանի, Ա. Աբրահամյանի, Է. Աղայանի, Հ. Բարսեղյանի, Հ. Պետրոսյանի աշխատությունները[24]: Ժամանակակից հայ քերականագետները դերբայը համարում են բայի դրսևորման առանձին ձևեր, թեև դրանց մի մասի մեջ բայական ու անվանական հատկանիշների զուգահեռ առկայությունը մինչև այսօր էլ տարակարծությունների տեղիք է տալիս՝ այդ բառերի տեղն ու դերը որոշելու հարցում:

Հայ ուսանողներին և աշակերտներին թուրքերենի դերբայների ուսուցման գործընթացում ներկայումս օգտագործվում է առաջին ան-

գամ 2001թ. հրատարակված և 2004թ. վերահրատարակված Ալ. Սաֆարյանի, Ա. Սողոմոնյանի, Տ. Լոքմագյոզյանի հեղինակած «Թուրքերենի դասագիրքը»: Այն ոչ միայն մեծապես դյուրացնում է հայ լսարանին թուրքերենի ու մասնավորապես նրա դերբայական համակարգի ուսուցումը, այլև նրանում տեղ գտած քերականական մեկնություններն ու լեզվական փաստերի ձևակերպումները, համարժեք եզրերն արժեքավոր նյութ են մատուցում գիտական ուսումնասիրությունների համար[25]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. А. Баскаков, Словосочетания в современном турецком языке. М., изд. "Наука", 1974, с. 3.
2. Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1987, էջ 10:
3. Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 10-11:
4. Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1953, էջ 6:
5. Նշենք, որ Թուրքիայում ընդհանրապես թուրքերենի քերականության դասավանդումը սկսվել է 1839 թվականից, երբ բացվեցին առաջին ռուշդիե (աշխարհիկ) դպրոցները: Թուրքերենի քերականության առաջին ուսումնասիրությունը կատարել է 1530 թ. Բերգամացի Քադրին: Քերականության հաջորդ աշխատությունը գրել է հայտնի թուրք քերական Քյոթահիայից Աբդուրահման Ֆեհմին. այն լույս է տեսել 1846 թթ: 1851 թ. Ստամբուլում թուրք պատմաբաններ Ֆուադ էֆենդին և Ջևդեթ էֆենդին հրատարակում են «Օսմաներենի օրենքները» (Kavaid-i Osmaniye) քերականության համառոտ ուսումնասիրությունը: Այստեղ կրկին նկատվում է արաբական քերականագիտության ավանդույթների ազդեցությունը: Այնուհանդերձ այս աշխատությունը հետագայում ծառայում է որպես հիմք թուրք և եվրոպացի թուրքագետ - լեզվաբանների հետագա պրպտումների համար: 1928 թ. Քեմալ Աթաթուրքը կատարում է լեզվական բարեփոխումներ, որի արդյունքում օսմաներենի արաբապարսկական այբուբենից անցում կատարվեց լատինատառի: Լեզվական բարեփոխումներին հատկապես նպաստում է 1932 թ. ստեղծված «Թուրքական լեզվագիտական ընկերությունը»:
6. А. Кононов, Грамматика современного турецкого литературного языка, с. 12-13.
7. А. Кононов, նույն տեղում:
8. A. Dilâçar, Devlet Dili Olarak Türkçe, TDK , A. Ü. Basımevi, 1962. Նույնի՝ Türk Diline Genel Bir Bakış, TDK, Ankara, 1964. Նույնի՝ Gramer Tanımı, Adı, Kapsamı, Türleri, Eğitimdeki Yeri ve Tarihçesi, TDAY-Belleten, 1971. Նույնի՝ Türk Dilinde " Kılınış", TDAY-Belleten, 1973-1974. Նույնի՝ Dil, Diller ve Dilcilik, TDK, Ankara, 1982.
9. M. Ergin, Türk Dil Bilgisi, Sofia, 1967. Մ. Էրգինի սույն գիրքը այսօր էլ համարվում է բուհական դասագիրք և այն ներառված է Թուրքիայի համալսարաններում ընթերցվող թուրքերենի քերականության դասընթացներում: Առաջին անգամ տպագրվել է 1958 թ. Ստամբուլում, երկրորդ անգամ՝ 1962 թ. Ստամբուլում, երրորդ հրատարակությունը՝ 1967թ. Սոֆիայում, չորրորդ հրատարակությունը՝ 2003թ. Ստամբուլում:
10. M. Ergin, Türk Dil Bilgisi, Istanbul, 2003, s. 46.
11. Թանզիմաթ-բարենորոգումներ, բարեփոխություն, Օսմանյան կայսրությունում 1839-ից մինչև 1870- ական թթ.ընդունված այսպես կոչված չափավոր-առաջադիմական բարենորոգումների անվանումը:
12. N.Koç, Yeni Dilbilgisi, İnkilap Kitabevi, İstanbul, 1990. M. Hengirmen, Yabancılar

için Türkçe Dilbilgisi, İstanbul, 1999. M. Hengirmen, Türkçe Temel Dilbilgisi, Ankara, 1999. F.; Hepçilingirler, Öğretenlere ve öğrenenlere Türkçe Dilbilgisi, İstanbul, Remzi Kitapevi, 2004.; Ağırgöl, Türk Dilbilgisi, Liseler için, İstanbul, 1994.
13. Э. Севортян, Структура и история тюркских языков, Изд. "Наука", М., 1971, с. 7.
14. А. Самойлович, Краткая учебная грамматика современного османско - турецкого языка, Л. 1925.
15. В. А. Гордлевский, Грамматика турецкого языка, М., 1928.
16. Н. К. Дмитрев, Материалы по османской диалектологии. Фонетика карамалицкого языка. «Зап. колегии востоковедов», т. III, вып. Л., 1928, т. IV, 1930. Н. К., Дмитриев, Строй турецкого языка, Л., 1939. Н. К. Дмитриев, Строй тюркских языков, М., 1962.
17. А. Кононов, Грамматика современного турецкого литературного языка, Москва-Ленинград, 1956.
18. Shu' А., А. Потебня, Из записок по русской грамматике, I-II. М., 1958. П. И. Кузнецов, Происхождение прошедшего времени на -ды и имен действия в тюркских языках.-В кн. : Тюрко-монгольское языкознание и фольклористика. М., 1960. Э., В. Севортян, О Некоторых вопросах структуры предложения в тюркских языках.- ИСГТЯ, III. А. М. Щербак, Очерки по сравнительной морфологии тюркских языков, глагол, Л. 1981. Б. А. Серебенников, Историческая морфология пермских языков, М., 1963, с. 140. А. Н. Баскаков, Словосочетания в современном турецком языке, М., 1974. А. Н. Баскаков, Историко- типологическая морфология тюркских языков. Изд. "Наука", М., 1979.
19. Ш. С. Айларов, Учебник турецкого языка. Под редакцией академика В. А. Гордлевского, М., 1954. Ш. С. Айларов, Развернутые члены предложения в современном турецком языке, М. 1974.
20. А. М. Щербак, Նշվ. աշխ., էջ 3:
21. А. М. Щербак, նույն տեղում:
22. Н. А. Баскаков, Историко-типологическая морфология тюркских языков. Изд. "Наука", М., 1979.
23. Н. А. Баскаков, Նշվ. աշխ., էջ 37:
24. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 5, Երևան, 1965: Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965: Ս. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953: Է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967: Գ. Ջ. Պետրոսյան, Հայերենի բայի ձևակազմության մի քանի հարցեր, (ԲԵՀ,1984, N 2): Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:
25. Ալ. Սաֆարյան, Ս. Սողոմոնյան, Թուրքերենի դասագիրք, երկրորդ լրամշակված հրատարակություն, գիրք Ա, Երևան, 2001: Ալ. Սաֆարյան, Ս. Սողոմոնյան, Տ. Լոքմագյոզյան, Թուրքերենի դասագիրք, գիրք Ա, Երևան, 2004:

ARMENO-TURCICA

ARMENIANS AND TURKS: CONTACTS IN HISTORY FROM SELDJUKIDES TIMES UP TO THE END OF THE 19TH CENTURY[1]

We are always inside the history.
Karl Jaspers.

One thousand years is a tangible period of history. There are not so many peoples on the Earth, which have a 1,000-year-old history of neighborhood. Armenians and Turks are just among those few groups of peoples.

However, the history of the neighborhood of Turks and Armenians has another peculiarity, which makes it unique in many respects. It is a history of neighborhood of the peoples, whose relations were effected by a terrible catastrophe, such as genocide.

It is not accidentally that I use word catastrophe. Genocide is a large-scale catastrophe, which distorts the process of normal development of not only the victim-people, but also of that, who sullied itself by participating in this terrible crime as a result of the ill will of its rulers.

"It is a dark spot on the forehead of my people," said Ahmed, one of the heroes of the novel "*Romantika*" by the well-known Turkish writer Nazim Hikmet.

Genocide factor lays a great responsibility on us, historians. As we are not only "inside the history," as Karl Jaspers wrote in the last century, but also to some extent create it by our professional activity, that is, interpretation of historical reality. That is why, a quiet study of the history of the neighborhood of our peoples without surplus emotions will contribute to creating such conditions when it will become possible to start the uneasy way of overcoming the negative consequences of genocide, and I believe in it.

---

[1] Text of paper is based on the talk given at the International Conference "In the History and Beyond History: Armenians and Turks: One Thousand Years of Relations», organized by the Institute "Venice and Europe", Cini Foundation, Venice, Italy, October, 2004.

I have chosen the factor of existence of Armenian statehood as a criterion for panoramic review of the main periods of history of our peoples' interaction. Just the statehood of Armenians, as the 1,000 years history of various Turkic peoples in Asia Minor is, factually, the history of uninterrupted statehood.

Thus, the neighborhood of Armenians and Turks processed in two forms: relations between two sovereign states or residence of Armenians as part of and subordinate to Turkey. If one takes into account that all the Turkish countries in Asia Minor were Islamic states, it is necessary to admit that Armenians were subjected to double discrimination there: national and confessional. Of course, in different periods of time, the discrimination was of different heaviness, but its essence remained unchanged. That is, Armenians evidently did not enjoy equal rights, which had its impact on the nature of the contacts between Armenians and Turks.

Basing on this criterion, I propose that the history of Armenian-Turkish contacts should be divided into three main periods. Of course, it is a conditional division.

The first period of time embraces the 11-14th centuries. Both aforementioned forms are characteristic to it.

The second period of time is some 500 years of Armenians being as part of the Turkish state – Ottoman Empire, that is, here we deal with only one form of neighborhood. It includes in it the period beginning from the 15^{th} and ending in the 20^{th} centuries. Factually, this period of time resulted in the Armenian Genocide.

And, finally, the third period of time began in the 20th century, when the Armenians statehood was restored. I'd like to believe that its main leitmotiv would be liquidation of negative consequences of the catastrophe of genocide.

I

The Armenian-Turkish contacts started in 1016. The tribes of Turkmen mercenaries serving in the armies of the various Emirates located on the territory of Iran raided the Armenian Kingdom of Vaspurakan ruled by the dynasty of Artsrunies. They deeply impressed the local Armenians not only by their unusual appearance and the way to fight, but also by their traditions. Thus, the historian of the 11th century Tovma Artsruny mentioned their "horrifying" appearance and that they lived "in mountains, valleys and deserts."

This clash between Armenians and Turks can be characterized as a cultural shock suffered by the settled population of Armenia engaged in agriculture from the first meeting with nomadic tribes. Though at the cost of great losses, the Armenians of Vaspurakan managed to maintain their independence and made the Turkmens to leave the borders of their state, however, the fear of the new raid was so great that the King Senekerim preferred to yield Vaspurakan to Byzantium in order to save at least the physical presence of his people. Thus, already the first contact with Turks had grave consequences for Armenians: though indirectly, but it resulted in collapse of Vaspurakan Kingdom.

After those events, starts the 75-years period of gradual conquest of almost the whole territory of Armenia by various Turkic tribes. Those years are described in the Middle Age Armenians chronicles as a period of chaos, physical annihilation of population and hold up of rich towns.

The modern Armenian historiography divides that period into two stages. If the first stage was the period of separate raids, which weakened and shook various Armenian state formations, which was taken into advantage by Byzantines, the second period was connected with systematic conquests by the armies of Seljuks under command of the sultan or his commanders.

The first stage resulted in establishment of almost full control of Byzantium over Armenia, and the conquest of Armenia by Seljuks completed the second stage. Thus, at the initial stage of Armenian-Turkish contacts the factor of a third regional force originated as one of the most important factors, which has remained up to nowadays. At first, it was Byzantium, then Iran, and later it was Russia. All these states were geopolitical rivals of Turkey. The most important direction of this competition was aspiration to establishment of control over the Armenian Plateau.

It is clear that this competition had its impact on the Armenian-Turkish relations and in the most unexpected way. There were many cases when Armenians perceived Muslim - Seljuks as the lesser of two evils and established allied relations with them against Christian Byzantium, which did not hide its aggressive goals in respect to Armenia.

As regards Byzantium, at first, it used Turkic raids for successful completion of its policy of invading Armenia, and then failed to properly protect it from Seljuk-Turks.

The establishment of domination of Turk-Seljuks over Armenia not only led to a sharp reduction of socio-economic and cultural level of the country, but also resulted in mass flow out of the population. This process especially activated after occupation of the big Armenian town of Ani in 1064. Simultaneously, the process of settlement of various Turkic tribes in the Armenian Plateau started.

In the same period of time, such form of the Armenian-Turkish neighborhood as residence of Armenians as part of various Turkish states began. It was often leading to destruction of economy, sharp decline in the level of social and cultural life of the Armenian population, to strong national and religious pressure by the ruling Turkish element.

However, there were periods of time of comparatively favorable attitude of the Turkish authorities to the Armenian population. Thus, in the 12^{th} century a peculiar "modus vivendi" was established between the Seljuks and various groups of the Armenian population. The Seljuk rulers needed Armenian merchants, craftspeople, architects.. Favorable conditions were created for them, there were even cases when Armenian refugees returned from Christian Byzantium to their native country, however, under rule of Muslim-Seljuks.

At the same time, it was already then that cases of forceful mass conversion into Islam and enslavement of the Armenian population were observed, in particular, *Ghulams* institute originated, when the Armenian boys converted into Islam were educated at special schools and used as a military force or on public service.

Besides, various groups of the Armenian population were converted into Islam on the voluntary basis, mainly, representatives of the higher strata of the population for social reasons. Thus, a transitional group of population originated between Christian-Armenians and Muslim-Turks, which were called *Armens by* the Arabic middle-aged sources. It were Armenians who voluntarily admitted Islam, but did not lose their ethnic roots.

In several cases one could speak of a peculiar *symbiosis* between Armenians and Turks. Thus, in our opinion, the Armenian-Turkish relations in the emirates of *Danishmendids* and *Khlat* in the 12^{th} century are characteristic. The coins of Danishmendids as a rule had a cross indicated on them, while the rulers of Khlat called themselves *Shah-i Armens.*

The relations between the Armenian Cilician Kingdom and various Turkish states were an especially interesting page in the history of the Armenian-Turkish relations. In our opinion, they were especially noteworthy as it was interstate relations. That is why, we think that it was the very period in

the 1,000-year-long history of the Armenian-Turkish relations, which has a direct exit to the our days when both Armenia and Turkey are sovereign states.

I shall not dwell on all the details of the Armenian-Turkish interstate relations of that period of time. I shall emphasize just one point, which attracted my attention and which I think is of great importance.

In the period before appearance of Mongols in the region of Cilicia, a peculiar rather tenuous balance between the leading regional forces of that period was maintained i.e. Byzantines, crusaders, Vatican, Seljuks, Mamluks, European states or, if these forces are brought to the confessional basis, which was rather important in that period, between the Orthodoxy, Catholicism, Islam

Cilicia was obliged to its art of equilibration between these forces (of course, there were other reasons as well) for its existence and comparative welfare in such complicated and important region in the world in that period of time.

The situation began changing after origination of a new stern force of Mongols in the region in the 40s of the 13^{th} century. Owing to the fact that there were pagans, not Muslims, Christians, mainly, crusaders, Vatican and the Armenians of Cilicia tried to establish allied relations with them and to use them against Muslims: Seljuks and Mamluks. Armenians succeeded in it as they acted rather rapidly. At first, King Khetum sent his brother Smbat there as his Ambassador, and then he personally visited the Great Khan of Mongols and proposed an alliance against Muslims. As the proposal was mutually advantageous, the alliance was established. Armenian troops alongside with Mongols participated in a number of battles against Mamluks and defeated them at Aleppo and Damask.

As a result, Cilicians' relations with Mamluks and Seljuks worsened, but they managed to achieve real guarantees of security and territorial integrity for their state. In particular, Seljuks had to stop their policy of permanent pressure and demand of large contributions by Cilicia Kingdom, supported by their armed raids to the depth of Cilicia, which greatly damaged the country, as it was in 1233 and 1245.

However, as a result of changes in the regional geo-strategic situation, what seemed to be a great success of Cilician diplomacy turned into a catastrophe. Becoming aware that Mongols, who established control over a considerable part of Islamic Syria due to Armenians, became so strong that caused threat to them, Crusaders unexpectedly established an alliance with Mamluks. As a result, Mongols were defeated and they had to leave the region of Eastern Mediterranean. Thus, Cilician Armenia was deprived of its "strategic

ally," speaking with modern terms. As the fragile balance established in the past, before Mongols' period, was broken, Cilician Armenia was subjected to new, even more severe attacks by its Islamic neighbors, Mamluks and Seljuk Turks, who aspired to "punish" Cilician Armenians for the alliance with their enemies, Mongols. Especially severe was the attack by Mamluks, who reduced the prospering country into ruins within several weeks. Cilician Armenia could not recover from that terrible attack, though existing for some one century. Later its territory and the Armenians residing there were included into the Ottoman Empire.

Thus, the first period in the history of the Armenian-Turkish relations resulted in collapse of the Armenian statehood. The Turkish factor played a considerable role in it. As a result, the Armenian people proved to be part of the Turkish state. Hereby, more than five hundred-years history of Turkey's domination over Armenians was initiated.

2

In the course of such short time set for our talks it is very difficult to characterize such a large period of time rich with important historical events as the "Ottoman period" for the Armenian-Turkish relations. However, I shall try, emphasizing only its several, the most significant peculiarities, in our opinion.

The Armenian-Turkish relations were carried out at several levels in that period of time and were different from the spatial point of view. I shall explain my idea.

Those relations were determined by a great number of circumstances. I shall mention only several of them.

At first, they were reflection and at the same time realization of the Islamic theoretical approaches regarding to Christians in practice. I shall not dwell on them, all the present are professionals and know them very well.

Second, in our opinion, rather important and determining the whole spectrum of the Armenian-Turkish relations in the Ottoman period was the fact that they developed up to the middle of the 19th century under the control of the Turkish ruling elite, which interests, in our opinion, were determined with the following goals:

- To maintain control over the strategically important Armenian Plateau (which is known to had been an object for strong rivalry between the Ottoman Empire and Iran for several hundreds of years);
- To maintain the power over the Armenian population;
- To rule Armenians in a maximum centralized way.

The form which would secure an achievement of these goals in respect

to Armenians and other subordinated peoples, Christians and Jews, in the most optimal way was found already in the 15th century by the Turkish rulers in the person of Sultan Mehmed II. This form is called a *system of millets* in the scientific literature.

Rich research literature is dedicated to this brainchild of the sultan, the conqueror of Constantinople, however, discussions on it do not end, often arising diametrically opposite opinions on the essence of the system of millets. Several researchers consider it almost a prototype of the modern confederate approach to the state structure of polyethnic and polyconfessional societies like Swiss Confederation. Meanwhile, others consider it an instrument of oppression on dependant peoples. Having no intention to participate in those discussions at the moment and without going into detailed consideration of all the peculiarities of functioning of such a complicated system as the system of millets, undoubtedly, was, we shall only mention several important, in our opinion, points:

- As the millets were formed by the authorities, they served, first of all, to their interests. We have already touched upon those interests;
- At the same time, owing to their peculiarities, they secured some internal autonomy for the members of the millets;
- Normal functioning of the system of millets was possible only in conditions when the force of arms and the centralized state government supported it.

When in the 18th century the force of the Turkish arms weakened and disintegration of the system of centralized government started, the system of millets stopped fulfilling the goals set to it by the state power.

There were spheres in the State attitude to the Armenian population, which were not included either in the sphere of Sheriat or in the sphere of the system of millets. Among them is, first of all, the practice of *devshirme*, a system by which Christian male children at the age of 8-20 were seized, with the object of their conversion into Islam and denationalization, as well as for their future use in the government or military service. The Middle Age Armenian manuscripts are full with descriptions of the horrors devshirme.

There were other levels of Turkish-Armenian contacts in the Ottoman period (till the end of the 19th century) as well. In particular, the relations between representatives of the lower *strata* of the two nations. Unfortunately, that level of the Armenian-Turkish contacts has been left without attention of specialists so far both in Armenia and Turkey. One can suppose that it is one of

the spheres wherein the cooperation of the Armenian and Turkish historians (and not only historians) will be especially fruitful.

For example, the study of the problem of Armenians' participation in the movement of *Celali* seems to be interesting. Like the joint studies of the spheres of the Armenian-Turkish cultural, scientific, language contacts would be interesting. Of course, a considerable work has been carried out here both by the Armenian and Turkish specialists, a great number of facts have been accumulated. However, joint generalizing studies are necessary.

However, at the empirical level a considerable contribution of the Armenian people to the culture and science of the Ottoman Empire can be stressed in a preliminary sense. One can speak also of a *peculiar syncretism* at the level of everyday culture between Turks and Armenians, which is still felt nowadays both in Turkey and Armenia, as well as in Armenian and Turkish Diasporas in some cases. In short, multi-profile specialists have much to study here.

Above, I have already mentioned the differences in the Armenian-Turkish contacts depending on the spatial factor. I meant that starting from the 18th century great was the number of Armenians who had settled in Constantinople and Smyrna. While in the 19th century, they were playing a great role in the lives of these towns. The difference between the Armenian-Turkish contacts in those towns and those in the territory of Western Armenia was striking. In those towns, the situations on the whole, and in particular, the state of Armenians, were safer.

Meanwhile, in Western Armenia there were no elementary guarantees of security of either property or life. The Armenian sources of that period are full with information on massacres, robbery, requisitions, and open discrimination Armenians by the Turkish authorities.

Weakening of the central power in the 18th century even more worsened the state of the Armenian population, as the factor of oppression and terror by the Kurd tribes, became an addition to the oppression by the authorities. The Kurdish tribes took advantage of impunity and direct support by the authorities, methodically expanding their natural habitat in the territory of Western Armenia.

The process of political modernization of the Ottoman Empire initiated by the pro-western part of the Turkish elite in the epoch of Tanzimat was a

some kind reaction to the challenges created by the *dysfunction* of the millet system and led to the changes in the nature of the Armenian-Turkish contacts.

It would be interest to dwell on the problem of the role and place of Armenians in the process of political modernization of the Ottoman Empire in 30-70s of the 19th century. I especially studied this problem and disagree with the point of view of both the specialists in Armenian and Ottoman study that they are only "objects" of reformative activity. I have chosen and analyzed only three problems of the great variety of issues connected with these subjects, which I think are presentable enough.

1. Cases of durable personal contacts of Armenians and the leading Ottoman rulers of those years, the initiators and heads of the process of political modernization. I give a conditional determination to these relations, such as "friendship."

2. Armenians as part of the so-called "modernizer" Ottoman bureaucracy, in particular, in the Foreign Ministry of the Ottoman Empire.

3. Participation of Armenians in the struggle for declaration of the First Ottoman Constitution.

My study of the problem "Armenians and the process of political modernization of the Ottoman Empire" allowed the following: first of all, to make a conclusion on the *involvement* of Armenian figures of liberal trend into this process; second, to reveal *the tendency towards gradual activation of their role* in it, which was more clearly displayed in the period of struggle for the First Ottoman Constitution.

At the same time, in that period, an aspiration was observed for *influencing* the process of modernization with the object of achieving its correction to the necessary direction. Armenian liberals came out against tendencies towards assimilation in interpretation of doctrine of *Ottomanism* by several Turkish governmental and political circles and tried to achieve a legislative registration of the provisions allowing reforms on its basis in the spirit of <friendship and equality> of the peoples in the Ottoman Empire.

Characteristic is in this aspect the speech by a well-known figure S. Papazyan at the session of the National Assembly (the highest deliberative body of the Armenian millet) in December of 1876, several days before declaration of the constitution. He said: <Let's openly state to our Ottoman brothers and try to make them understand that we are Armenians and shall

preserve our nationality even under the Ottoman flag. Aspiration for amalgamation will not be useful for any of us, however we (the peoples in the Ottoman Empire are meant - P.S.) have common interests that is why we are a single whole as citizens of the Ottoman Empire.>. Many representatives of the Armenian elite shared this point of view in that period of time.

A new page in the history of the Armenian-Turkish contacts was opened by the first Ottoman Parliament in 1877-1878. As the study of protocols shows, there were cases of joint acts by the Armenian and Turkish parliamentarians on the basis of common interests.

However, soon forces counting on the return to the former pre-modernized methods of governance of the multi-national empire prevailed in the Turkish elite. In practice, it reduced to establishment of the regime of "zulum" of Sultan Abdul Hamid II.

The policy of mass destruction of the Armenian people for preservation and absorption of the territory of Western Armenia became a response of that regime to origination of the Armenian Problem.

The general result of the Armenian-Turkish contacts for the Armenian people was grave: loss of a considerable part of the historical Motherland and the achievements of its living activity in that territory, large-scale human losses. Such is the historical truth, bitter truth Its recognition by our colleagues, Turkish historians, will contribute to the beginning of a long way towards overcoming of aftermaths of the catastrophe of the Genocide or paraphrasing Jaspers words the getting out of history.

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՄՇԵՆԱՀԱՅԵՐԻ ԲՌՆԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ*

Ժամանակակից թուրք պատմագիտությունը մշակել է բացարձակ ապագիտական դիրքորոշումներ Հայաստանի և հայ ժողովրդի պատմության նկատմամբ, որոնցից չի խուսափել նաև հայոց Համշեն գավառի պատմությունը: Մասնավորապես, թուրք աղբյուրագետները, ժամանակակից թուրքերենի վերածելով Համշենի և հարակից շրջանների օսմանյան աշխարհագիր մատյանները, ապա դրանք քաղվածաբար հրապարակելով և խեղաթյուրման ավանդական զինանոցն օգտագործելով, աղավաղում են Համշենի պատմությունը, պատմական ժողովրդագրությունը և տեղանունները:

Համշենի գավառը համընկնում է Մեծ Հայքի Տայք աշխարհի Խաղտիք գավառին: Այսօր այն Թուրքիայի վարչական ստորաբաժանումներից մեկն է՝ Ռիզեի նահանգի Հեմշին գավառը (իլչե), որը գտնվում է Սև ծովի հարավարևելյան ափին: Խաղտիքի տարածքը համարվում է հայ ժողովրդի կազմավորման օջախներից մեկը[1]: Տարբեր ժամանակաշրջաններում այն եղել է Հայասայի, Վանի ու Փոքր Հայքի թագավորությունների կազմում[2]: Նախքան Պոնտոսի թագավորության և Հռոմի կայսրության տարածաշրջանում երևալը, Խաղտիքի գավառը, անտարակույս, գտնվել է հին Հայաստանի պետության անմիջական վերահսկողության կամ առնվազն նրա ռազմաքաղաքական ազդեցության ոլորտում: Այդ են փաստում Խաղտիքի ինչպես Արարատյան թագավորության՝ Ուրարտուի սահմանների մեջ ընդգրկված լինելը, այնպես էլ տարածաշրջանի հայախոս բնակչությունն ու հայկական տեղանունները:

Հետագայում այն հայտնվել է Պոնտոսի և Հռոմի ենթակայության տակ, որը, սակայն, շատ առումներով ձևական էր, քանի որ գավառը շարունակում էին կառավարել բնիկ հայ իշխանները: Խաղտիքի հայ բնակչությունը դեռևս հնագույն ժամանակներից աչքի է ընկել իր խիզախությամբ ու մարտունակությամբ: Պատահական չէ, որ բյուզանդական կայսրերը հաճախ էին օգտագործում տեղական հայ զորաջոկատները ռազմական տարբեր արշավանքներում[3]: Հայկական բարձրավանդակը, այդ թվում և Խաղտիք գավառն իր ռազմավարական կարևոր դիրքի պատճառով դարձել էր կռվախնձոր Բյուզանդիայի և Սասանյան Իրանի, հետագայում Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև: Խաղտիքը հայտնի էր իր բնական անառիկությամբ, ա-

նանցանելի անտառներով ու լեռներով, 5-րդ դարի պատմիչ Եղիշեի բնորոշմամբ՝ «յանկոյս երկիրն Խաղտեաց»[4]: Հատկանշական է, որ Վարդանանց պատերազմի օրերին ապստամբական կարևոր հենակետերից մեկը համարվել է Խաղտիքի գավառը[5]:

Իր անմատչելիության և անանցանելիության շնորհիվ այս տարածաշրջանը դարձել էր ապաստան արաբական հալածանքներից խուսափող հայ նախարարների ու բնակչության համար, հատկապես 774-775 թվականների ապստամբությունից հետո: Ինչպես վկայում են հայ պատմիչները, մոտավորապես 789-790թթ. նախարարներ Շապուհ և Համամ Ամատունիների գլխավորությամբ[6] 12 հազար հայեր (ըստ երևույթին Այրարատյան նահանգի Արագածոտն ու Կոտայք գավառներից[7]), այլևս չդիմանալով արաբների վարած տնտեսական և իրավական ծանր քաղաքականությանը, հաղթելով իրենց հետապնդող արաբական ուժերին, հասնում ու բնակություն են հաստատում Բյուզանդական կայսրության սահմաններում գտնվող Տամբուր քաղաքում: Հետագայում քաղաքը հիմնովին ավերում են վրացական ուժերը, ու նրա տեղում Համամ իշխանը կառուցում է մի նոր քաղաք՝ այն անվանակոչելով Համամաշեն[8]:

Հայկական տեղանվան պատմաաշխարհագրական նշանակությունը

Խաղտիք գավառի և հարակից ճորոխի ավազանի հայկական բնօրրան լինելը փաստում են ինչպես հայ և օտար բազմաթիվ պատմական սկզբնաղբյուրներն ու հետազոտությունները, այնպես էլ հայկական և թուրքական աղբյուրներում գրանցված տեղանունները: Առհասարակ տեղանունները լեզվական կայուն փաստեր են, յուրահատուկ կոդեր, որոնց հայկական արմատները մասամբ գալիս են վաղնջական շրջանից[9]:

Այնուհանդերձ, թուրք հեղինակներ Ա. Սաքաօղլուն[10], Մ. Քըրզըօղլուն[11] Համշեն տեղանվան մեջ փորձում են «գտնել» օղուզա-չաղաթայական բաղադրիչներ: Նրանց վառ երևակայության արդյունքում համշենահայերն ու Համշենի իշխանության հիմնադիր Համամ Ամատունին սերում են թուրքական «Քայան Ուցուն» ցեղից[12]: Այսպես՝ Մ. Քըրզըօղլուն առաջ է քաշում հրաշամերժ և հակասական տեսակետներ: Ըստ նրա՝ համշենցիները «ղփչաղ-թուրքական ճյուղի քայքար ցեղին պատկանող» «փոկական մահմեդականներ են և մաքուր թուրքեր»[13], որոնց բնակավայրերը գտնվել են Կովկասում[14]: Թուրք հեղինակը համշենահայերին դարձնում է նաև պարթև Արշակունի, վերջիններիս էլ՝ «հին օղուզների հետնորդներ»[15]: Այս ապացուցական եղանակով էլ ստուգաբանում է Համշեն տեղանունը՝ ժխտելով տեղանվան երկու բաղադրիչների հայկական արմատները:

Ա. Սաքաօղլուն Համշեն տեղանվան մեջ ձգտում է տեսնել թյուրքական-չաղաթայական արմատ, միաժամանակ մերժում Հովհան

Սամիկոնյանի «Տարոնի պատմություն» գրքում հիշատակված Համշենի հայկական իշխանության և համշենահայերի մասին արժեքավոր փաստի պատմական հավաստիությունը, անգամ՝ Համամ Անատոլու հայ լինելը[16]: Թուրք և վրաց պատմաբանների՝ համշենահայերի ծագումը և ազգային պատկանելությունն աղավաղող պարծանքները ժամանակին քննադատել է բանասեր-ազգագրագետ, համշենահայերի պատմության և ազգագրության լավագույն մասնագետ Ս. Վարդանյանը: Թուրք պատմաբան Մ. Ոզալի երևակայությամբ Խոփայի մահմեդականացված հայերը «խեթական թուրքերից են ծագում» և «Հախախուլամական շրջանում թուրքերի կողմից ընդունված կրոնի պատճառով մի որոշ ժամանակ հայերեն են խոսել, սակայն նրանք, ընդունելով մահմեդականություն, վերադարձել են թրքության գիրկը, ստացել իրենց բուն ազգային դիմագիծը: Այդ ժողովուրդը հիմա թուրքախոս է. թուրքերենից բացի այլ լեզու չգիտի»[17]: Այս առթիվ Ս. Վարդանյանը, հերքելով թուրք պատմաբանին, որպես անհերքելի փաստ նշում է, որ վերջին տասնամյակներում հայ և օտար բանահավաքները կրոնափոխ համշենահայերի սերունդներից գրի են առել Համշենի բարբառով զանազան բանահյուսական նյութեր: Իր հերթին, վրաց հեղինակ Շ. Բաճաշին, թեև քննադատում է թուրք պատմաբանների միակողմանի մոտեցումները, սակայն մերժում է նաև «հայերեն սկզբնաղբյուրներն ու հայ գիտնականներին»՝ պատճառաբանելով, թե իբր «հայերեն լեզվով գոյություն ունեցող գրականությունը գիտականորեն հավաստի չէ»: Առանց որևէ հիմնավորման նա հայտարարում է, թե «Համշենում բնակչության կեսից ավելին լազերից է բաղկացած, իսկ մնացած մասն իրենից ներկայացնում է խառնուրդ մասսա: Նրանց էթնոգենեզում գլխավոր դեր է խաղացել հայ լուսավորչական եկեղեցին, որին, ինչպես երևում է, միացել է լազերի որոշակի մասը»: Վրաց գիտնականի նման եզրակացության համար հիմք է ծառայել Համշենի բարբառում լազերենից փոխառյալ ընդամենը հինգ բառի առկայությունը: Ս. Վարդանյանը ճշմարտացիորեն քննադատում է վրաց գիտնականին և նշում նրա հոդվածում տեղ գտած անճշտություններն ու հակասությունները[18]:

Ինչ վերաբերում է Համշեն տեղանվանը, ապա կասկածից վեր է, որ այն բնիկ հայկական է: Տեղանվան մեջ առկա են *Համամ* անձնանունը և *շեն* բաղադրիչները: Շեն բաղադրիչը հին հայկական բառ է, որը նշանակում է բնակավայր, գյուղ, ավան: Ժամանակակից թուրքերենում գործածական *«շեն» - ուրախ* բառի իմաստով չի կարող բացատրվել տեղանունը, ինչը փորձում է անել Քըրզըօղլուն[19] (ի դեպ, այն թուրքերենում փոխառյալ է): Համամաշեն տեղանունը հետագայում լեզվական արտաբերության օրենքով սղվել է և դարձել Համ+շին, այնուհետև Համշենի բարբառի օրինաչափ ազդեցությամբ՝ Հոմշին՝ առաջին վանկի *ա>ո* հնչյունափոխությամբ: Թերևս թուրքերենի ազդեցությունից էլ բխում է Հեմշին տարբերակը: Նշենք, որ *շեն* բա-

դադրիչով տեղանունները տարածված էին ամբողջ Հայաստանում՝ Արտաշեն, Նորշեն, Վահանաշեն, Մարտունաշեն, Մուշեղաշեն, Շենիկ և այլն:

Համշենահայերի մարդաբանության ուսումնասիրման փորձեր

Վերոնշյալ թուրք հեղինակները դիմելով իրենց կեղծարարության զինանոցին, նպատակաուղղված աղճատում են նաև համշենահայերի մարդաբանական պատկանելությունը՝ նրանց վերագրելով անհայտ ռասայական՝ «օղուզական կամ թուրքմենական տիպ»: Տարբեր ռասայական հատկանիշները խառնելով՝ նրանք ստեղծել են մի միջանկյալ տիպ՝ տալով հետևյալ բնութագիրը՝ համշենցիները «կլորագլուխ, ուղիղ քթով, շագանակագույն կամ թխահեր, կարճահասակ, լայնաթիկունք մարդիկ են»[20]: Նշենք նաև, որ 1994թ. վերջին մի խումբ թուրք գիտնականներ Խոփայի գավառակի գյուղացիների հունական և համշենցիների հայկական գենետիկական ծագումը ստուգելու նպատակով ձեռնարկել են արյան քննություն: Տեղացիները խիստ վրդովվել են այդ արյան պարտադիր քննությունից, «հատկապես Ստամբուլի համալսարանի դասախոս պրոֆ. Սելիլ Աքսոյի և նրա խմբից՝ պնդելով, որ նրանք իրենց ուսումնասիրություններով կասկած են հարուցում այդ շրջանի բնակիչների զտարյուն թուրքական ծագման վերաբերյալ: Խոփայում տեղի ունեցած 7 հազարանոց բողոքի ցույցի ժամանակ ցուցարարները, տեղում գործող բոլոր կուսակցությունների մասնակցությամբ, հայտարարել են, որ «իրենք թուրք ազգից բացի այլ ազգություն չեն ճանաչում, և որ իրենց միակ դրոշը թուրքականն է»[21]: Նրանք նաև կտրուկ մերժել են իրենց վերագրվող հունական և հայկական ծագումը, միաժամանակ այն կարծիքն են հայտնել, որ «այդ միջոցառումը անջատողական նպատակներ ունի և ջուր է լցնում ԱՄԱԼԱ-ի և ՔԲԿ-ի ջրաղացին»[22]:

Ինչպես պարզորոշ երևում է լրատվությունից, Թուրքիայի քաղաքական որոշակի ուժեր, լավ իմանալով տեղի բնակչության ծագումնաբանությունը, փորձել են հարցը քաղաքականացնել և ազդել գիտական հետազոտությունների արդյունքների վրա:

Թուրքական կողմի նման պահվածքը մեզ ստիպեց նախաձեռնել Հայաստանի Հանրապետության տարածքում ապրող համշենահայերի մարդաբանական ուսումնասիրությունը, որը սիրահոժար իրականացրեց ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող Նվարդ Քոչարը:

Հայաստանի տարածքում բնակվող համշենահայերի նախնական մարդաբանական՝ գլխի, դեմքի ժառանգական հատկանիշների չափագրումը, ձեռնաթաթի մաշկի գծանախշանկարների ուսումնասիրությունը, մարդաբան-ժառանգաբան Ն. Քոչարին տալիս են բոլոր հիմքերը՝ անելու հետևյալ եզրակացությունները (Ն. Քոչարի համաձայ-

Նության մեր սույն հոդվածում ներկայացնում ենք նախնական քննության արդյունքները, առաջիկայում սպասվում է այդ խմբերի DNT-ի ուսումնասիրությունը: Ինչպես վկայում է մարդաբանը, վերոնշյալ հատկանիշների ուսումնասիրությունը ևս բավարար է եզրակացությունների համար:

Համշենահայերն իրենց մարդաբանական (ռասայական) հատկանիշներով, որոնք խիստ ժառանգական են, արտացոլում են նախնիների ժառանգական համալիրը, և ոչնչով չեն տարբերվում նախկինում ուսումնասիրված հայկական տարբեր էթնոտարածքային խմբերից:

Հայկական էթնոսի ճնշող մեծամասնությունը օժտված է վառ արտահայտված արմենոիդ ռասայական հատկանիշներով, որոնց բարձր ցուցանիշները հայտնաբերվել են նաև այնպիսի հնագույն ժողովուրդների մոտ, ինչպիսիք էին խեթերը, խուռիները, ուրարտացիները, սարիները, շումերները և այլն: Հնագույն այդ ժողովուրդները վերացել են պատմության թեմահարթակից, սակայն այդ հատկանիշները, որոնք դոմինանտ (գերիշխող) են, այսօր արտահայտված են հայ ժողովրդի ճնշող մեծամասնության մեջ: Սա վկայում է հայ ժողովրդի բարձրաստիճան հոմոգենության (միատարրության) մասին, այնպիսի միագենության, ինչը և մատնանշում է այդ տիպի անդրենածին լինելու փաստը ամբողջ Առաջավոր Ասիայի տարածքում:

Եվ քանի որ ժամանակակից համշենահայերն իրենց ժառանգական համալիրով մտնում են վերոնշյալ միակերպության մեջ, հետևաբար որևէ կասկած լինել չի կարող, որ վերջիններս կազմում են տոտալ (ամբողջական) հայկական էթնոսի մի մասը: Եվ եթե հայտնաբերվեն չնչին տարբերություններ, ապա դրանք բնորոշ են բոլոր հայկական ենթախմբերին, որովհետև ամեն մի առանձին հայկական ենթախումբ որոշակի ժամանակահատվածի ընթացքում մեկուսացած է եղել մյուս խմբերից (համեմատական), և խաչասերումը տեղի է ունեցել ոչ թե միջխմբային, այլ ներխմբային ձևով[23]:

Անդրադառնալով թուրք հեղինակների մարդաբանական մեկնություններին, որոնցով համշենահայերին վերագրվում է «օղուզական մարդաբանական տիպը», ապա այստեղ դրսևորվում է նրանց ճշգրող անգրագիտությունը ռասայագիտության բնագավառում, որտեղ դասակարգումների մեջ այդպիսի տիպ ընդհանրապես գոյություն չունի: Հայտնի է, որ մարդկային եվրոպեոիդ ռասայական բնի հարավային ճյուղը բաղկացած է երկու ռասայական խմբերից. դրանք են հնդմիջերկրածովային և բալկանոկովկասյան ռասաները, որոնցից ամեն մեկը իր հերթին ստորաբաժանվում է ավելի մանր մի քանի ռասայական տիպերի: Օղուզական տիպ մարդաբանությունը չի ճանաչում ոչ եվրոպեոիդների, ոչ մոնղոլոիդների և ոչ էլ, առավել ևս, նեգրոիդների մեջ[24]:

Թուրք պատմաբան Մ. Քըրզըօղլուն, դիմելով կեղծարարական բոլոր միջոցներին, ձգտում է ապացուցել, որ «Ճորոխյան Անատոլիայի ժողովուրդը ամբողջությամբ կապված է թյուրքական ցեղերի հետ», «համշենցիները լազերի նման թյուրք ժողովուրդ են»[25]: Թուրք հեղինակները, արհեստականորեն նվազեցնելով քրիստոնյաների թիվը (հատկապես հայերի, որոնք Համշենում ու հարակից շրջաններում մեծամասնություն էին), պնդում են, թե իբր 14-15-րդ դարերում վերոնշյալ տարածքներում բնակիչների զգալի մասը մահմեդական էր: Ձեռքի մեկ հարվածով թուրք են դարձնում նաև քարթվելական ընտանիքին պատկանող լազերին (այսպիսի ապագիտական և հորինված պատմություններով ողողված են նաև թուրքական ինտերնետային կայքերը)[26]:

Հայ և օտար աղբյուրները, այդ թվում՝ օսմանյան աշխարհագիր մատյանները (մաստաբ) ցույց են տալիս, որ մինչև 18-րդ դարի սկիզբը Համշենում քրիստոնյա հայ բնակչությունը, չնայած տևական հալածանքներին, կազմել է մեծամասնություն և կարողացել է պահպանել իր հավատքն ու ազգային դիմագիծը[27]:

Այսպես, թուրք պատմաբան Մ. Գյոքբիլգինի հրապարակած Տրապիզոնի լիվային (գավառին) պատկանող օսմանյան աշխարհագիր մատյաններից տեղեկանում ենք, որ XVI դարում Համշենը գրանցվել է որպես կազա՝ Տրապիզոնի լիվայի (գավառի) կազմում, որն օսմանյան տիրապետության տակ անցնելով՝ բաժանվել է երեք նահիեի՝ Համշին, Քարահեմշին, Էքսանոս: Համշենը որպես տուրք վճարել է «ռուզգանի շիրա» (խաղողից պատրաստված հատուկ ըմպելիք), մեղր, մեղրամոմ: Դավթարում արձանագրված են նաև Բալա և Զիր անուններով բերդերը[28]: Զիր բերդը Ղ. Ինճիճյանի հիշատակած Զիլքալեն է, այն ժայռի վրա շինված բերդ է, որի մի մասը ձգվում է մինչև Բաշ-Համշին գետակը, նմանվում է աշտարակի և գտնվում է Բաշ-Համշենից մեկ օրվա ճանապարհի հեռավորության վրա: Բերդում մնացել են կամարակապ հին շինությունների հետքեր[29]: Այսօր էլ պահպանվում է բերդի մի մասը. այն շարունակում են կոչել Զիլ-քալե: Ա. Ծուլըմյանը այն նույնացնում է Արտաշեն իշխանի կառուցած բերդի հետ[30]: Ավանդության համաձայն՝ Բագրատունյաց թագավորական ցեղից սերած Մարտիրոսը որոշում է Գրիգորի աղջկան կնության վերցնել իր որդու՝ Արտաշենի համար: Գրիգորը, սակայն, չի համաձայնվում, այդժամ «Մարտիրոս զինու զորութեամբ Գրիգորի երկիրը կը մտնէ, կը պատերազմի, կը յաղթէ, կառնէ աղջիկը, կը պսակէ Արտաշէնի վրայ, Արտաշէն Գրիգորի երկրի մէջ, Համշէնի մեծ գետի վերի ակներում մօտ մի հսկայ բերդ կը կառուցանէ, որ այսօր եւս Արտաշէն կասուի»[31] (ընդգծումը՝ Լ. Մ.): Բերդի մոտակայքում են գտնվում Վերչենիկ (հավանաբար այս տեղանվան հիմքում ընկած են Հ. Տաշյանի հիշատակած

Վարշամակը. այն տեղական ավանդությամբ կապվում է «Ս. Վարդանանց նշխարաց հետ»[32]), Էլեվիտ (Եղնովիտ[33]), Խաչիվանք, Բաշ Ջանջին գյուղերը:

Մ. Գյոքբիլգինը հրապարակել է 1532թ. Տրապիզոնի լիվային պատկանող հետևյալ կազաների ժողովրդագրական տվյալները՝

Աթինայի կազա	Տրապիզոնի կազա
գյուղ – 30	գյուղ-199
շունչ – 4068	տուն-12639 քրիստ., 1094 մահմեդ
տուն – 584 քրիստ., 3096 մահմեդ.	եկամուտը-2.158.861
եկամուտ- 306. 500 ակչե	
Ռիզեի կազա	Համշենի կազա
գյուղ-21	գյուղ-34
շունչ- 4563	շունչ-682
տուն-3617 քրիստ, 310 մահմեդ.	տուն- 457 քրիստ., 214 մահմեդ..
եկամուտ- 293.550 ակչե	եկամուտ-116. 816

Այսպիսով, 1532թ. Համշենի երեք նահիեներից կազմված կազայում գրանցվել է 34 գյուղ, որոնցում եղ 671 տուն՝ 214-ը՝ մահմեդական, իսկ 457-ը՝ քրիստոնյա, ընդհանուր առմամբ՝ 682 շունչ[34]: Մեր համոզմամբ՝ Մ. Գյոքբիլգինը Համշենի պարագայում փորձել է հնարավորինս նվազեցնել կամ նույնիսկ ցույց տալ ժողովրդագրական պատկերը: Նա «հայեր» եզրույթն առհասարակ չի գործածում: (Օսմանյան աշխարհագիր մատյանների՝ թուրք աղբյուրագետների կողմից միտումնավոր քաղվածաբար և աղճատված ներկայացնելու մեթոդի պատմաքաղաքական նպատակները վերլուծել ենք մեր նախորդ հրապարակումներում[35]):

Մեծանուն հայագետ Լ. Խաչիկյանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհուպ մինչև 15-րդ դարի վերջը Համշենն ամբողջությամբ գտնվում էր հայկական իշխանների ենթակայության ներքո[36]: Փաստերը վկայում են, որ Համշենում կամ հարակից շրջաններում օսմանյան վերահսկողության հաստատման և բռնի մահմեդականացման փորձերն սկսվել են 16-րդ դարի վերջերից միայն: Ուստի հիմքեր կան եզրակացնելու, որ 16-րդ դարում Համշենում քրիստոնյաները (իմա՝ հայերը) չնչին բացառությամբ եղել են մեծամասնություն, և Գյոքբիլգինի հրատարակած «մահմեդական» տների թիվը համոզիչ չէ: Իսկ Համշենից հայ բնակչության արտահոսքն սկսվել է 1723թ. դաժան անցքերից հետո[37]:

Հետաքրքրական է Պ. Ինճիճյանի հաղորդած հետևյալ վիճակագրական փաստը. 19-րդ դարի սկզբում Համշենից 8 ժամ հեռավորության վրա գտնվող Խևակ գյուղում կար մահմեդականություն ըն-

ղունած հայերի 200 տուն[38]: Ս. Վարդանյանը, հրատարակելով և քննության ենթարկելով Մխիթարյան վրդ. Մեհերյանի արժեքավոր ձեռագիր հուշագրությունը, նշում է, որ Համշենի Խևակ գյուղի մասին տեղեկությունները Ղ. Ինճիճյանը, ըստ երևույթին, քաղել է այս ակզբնաղբյուրից: 1776թ. Պողոս վրդ. Մեհերյանը անձամբ է այցելել Խևակ ու նաև հարևան գյուղերը, թողել բացառիկ կարևոր ազգագրական հիշատակումներ մահմեդականացված հայերի մասին[39]:

Խևակի օրինակը վկայում է, որ Համշենում և հարակից շրջաններում բնակավայրերը կարող էին նաև բազմամարդ լինել:

Վիճակագրական կարևոր տվյալներ է հայտնում ազգագրագետ Սարգիս Հայկունին. գյուղերը, տեղանքի զառիվայր պայմանների պատճառով, ունեին 20-30, մինչև իսկ 50 տուն, որոնք միմյանցից զատվում էին «1-2-3 վերստ» հեռավորության վրա[40]: Ս. Հայկունու գրառումների համաձայն՝ 1700-ական թթ. Համշենում կար 8-10 հազար, իսկ Սև Գետում՝ 5-6 հազար տուն հայություն[41]:

Տարբեր են 1833 թթ. ամերիկացի բողոքական քարոզիչներ Սմիթի ու Դուայթի ճանապարհորդական նոթերում գրանցված տվյալները. Համշենի հայերի «մի զգալի մասը դավանում է մահմեդականություն», բնակչությունը մոտ 3-4 հազար հայ ընտանիք է, որոնք բնակվում են 70 կամ 80 գյուղերում[42]:

Գերմանացի գիտնական Կ. Կոխը, որը 1843-1844թթ. անցել է Համշենի և հարակից շրջաններով, հաստատում է, որ Խևակը «կը կազմվի հինգ թաղամասերե (կամ գյուղամասերե) և ունի 200 տուն՝ 1000 մինչև 1200 բնակիչով»[43]: Կ. Կոխը հաղորդում է նաև, որ 1843-1844թթ. Համշենի ամբողջ տարածքում կար ընդամենը 1500 տուն:

Որպես կողմնակի լրացնող փաստ նշենք, որ Համշենի հարակից շրջանում՝ Սև գետում, հաստատված համշենահայության 1780թ. բռնի մահմեդականացման պատճառով դատարկվել է 100 գյուղ, մահմեդականացվել 10 հազար համշենահայ[44]:

Թեև այս տեղեկությունները վերաբերում են XVIII-XIX դարերին, սակայն դրությունը, անկասկած, նույնը պետք է լիներ նաև XVI-XVII դարերում, քանզի սոցիալ-տնտեսական պայմանները հիմնականում նույնն էին: XVII-XIX դարերի ընթացքում Համշենում ու հարակից շրջաններում բռնի մահմեդականացման քաղաքականության արդյունքում արձանագրվել են նաև բնակչության տեղաշարժերի դեպքեր, որը ենթադրում էր բնակչության թվի անկում:

Սակայն, եթե հիմք ընդունենք Կ. Կոխի հաղորդումը, որ Համշենը XIX դարի առաջին կեսին ուներ 1500 տուն բնակիչ, ապա ընտանիքի անդամների միջին թիվը 8-ով[45] կամ, ինչպես առաջարկել ենք նախորդ հոդվածներից մեկում, 10-ով հաշվելու դեպքում ստացվում է մոտավորապես վիճակագրական այն պատկերը, ինչը 1700-ական թթ. համար ներկայացնում է Ս. Հայկունին (միջին գործակիցը 8-ով հաշվելու դեպքում՝ 12.000, իսկ 10-ի դեպքում՝ 15.000 շունչ բնակչություն):

Մ. Գյոքբիլգինի հրապարակած՝ օսմանյան աշխարհագիրների տվյալները այս սկզբունքով հաշվելու դեպքում XVI դարում կունենանք հետևյալ պատկերը.

ա) 671 (քրիստոնյա և մահմեդական) տների ընտանիքի անդամների միջին թիվը 8-ով հաշվելու դեպքում՝ 5368, իսկ 10-ի դեպքում՝ 6710 շունչ բնակչություն:

բ) 457 քրիստոնյա տների՝ ընտանիքի անդամների միջին թիվը 8-ով հաշվելու դեպքում՝ 3656 շունչ, իսկ 10-ով հաշվելու դեպքում՝ 4570 շունչ:

գ) 214 մահմեդական տների՝ ընտանիքի անդամների միջին թիվը 8-ով հաշվելու դեպքում՝ 1712, իսկ 10-ով հաշվելու դեպքում՝ 2140 շունչ:

Այսպիսով, XVI դարում Համշենի երեք նահիեներին վերաբերող թուրք աղբյուրագետի հրապարակած թվերը մեր կարծիքով միտումնավոր նվազեցված և խեղաթյուրված են. ընդամենը 457 քրիստ., 214 մահմեդ. տուն, 682 շունչ բնակչություն, ընտանիքների և շենքերի թիվը գրեթե համընկնում են, և միջին գործակիցով հաշվելու դեպքում մեկ տանը ընկնում է մեկ շունչ:

Նշենք նաև, որ անընդունելի է Կ. Կոխի յուրաքանչյուր ընտանիքի անդամների թիվը 5,5-ով հաշվելը: Պատմական փաստերը վկայում են, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայկական ավանդական ընտանիքը բաղկացած է եղել ոչ թե 5, այլ առնվազն 10, անգամ 20-30 շնչից[46]: Գ. Արծրունին նշում է, որ Արևմտյան Հայաստանում հիմնականում հանդիպել է 10, 15, 18, 20 և մինչև 40 ու ավելի անդամներից կազմված հայ ընտանիքների: 5, 6, 7 հոգանոց բաղկացած ընտանիքներ ավելի քիչ են նկատվել և «ես համարձակ կարող եմ ասել, որ հայ ընտանեաց անդամների թիւը 10-ից պակաս հաշուել չի կարելի»[47]:

XIX դարի վերջում ցարական կառավարության հանձնարարականով Կովկասյան ռազմական օկրուգի գլխավոր շտաբի կազմած աղյուսակներում՝ Էրզրումի վիլայեթի մահմեդական ընտանիքների միջին թիվը հաշվված է 6, իսկ քրիստոնյաներինը՝ 10 շունչ[48]:

Կարծում ենք՝ Համշենի վիճակագրական հաշվարկը ճիշտ կլինի կատարել՝ հաշվի առնելով այս հանգամանքը: Համշենցիները մահմեդականացվելուց հետո էլ պահպանել են բազմազավակ ընտանիք ունենալու ավանդույթը: Դա է հաստատում նաև հետևյալ ուշագրավ փաստը. Ս. Վարդանյանը, 1984 և 1987թթ. ուսումնասիրելով Ղրղզստանում, Ղազախստանում, Ուզբեկստանում, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում հաստատված մահմեդական համշենցիների բանահյուսությունն ու կենցաղավարությունը, արժեքավոր տեղեկությունների շարքում նշում է, որ նրանց ընտանիքները բազմանդամ են, «հաճախ ունեն 5-7, երբեմն 10 երեխա»[49]: Ազգագրագետի հաշվարկով՝ Ղազախստանի Չիրկինո գյուղում 1980-ականներին բնակվում էր 48 տուն 286 շունչ, իսկ Ղրղզստանի Ուչ-Կորգան գյուղում՝ 29

տուն 226 կրոնափոխ համշենցի[60]:

Բռնի մահմեդականացման փուլերը

1555թ. Ամասիայում թուրք-պարսկական հաշտության պայմանագրի կնքումից հետո օսմանյան իշխանություններն սկսեցին Համշենում և հարակից գավառներում իրականացնել բռնի մահմեդականացման քաղաքականություն՝ բնակչության ըմբոստ ոգին կոտրելու, նոր գրավված այդ երկրամասը վերջնականապես հպատակեցնելու և յուրացնելու հեռագնա նպատակով:

Համշենում կամ հարակից շրջաններում բռնի մահմեդականացումների փորձեր և մահմեդականացումներ սկսվել են XVI դարի վերջին (1578թ.)[61], պարբերաբար իրականացվել են XVII դարի ընթացքում[62]: Այս քաղաքականությունը հատկապես սուր բնույթ է ստացել XVIII դարի սկզբներին (1710թ.[63], 1723թ.[64]): 1723թ. բռնամիջոցներն, անտարակույս, կապ ունեին հայերի՝ 1722թ. Արևելյան Հայաստանում սկսած զինված ազատագրական շարժման հետ, որը հակաիրանական ծայրահեղ տրամադրություններ էր առաջացրել Օսմանյան արքունիքում, ընդհուպ մինչև հայ ազգն ամբողջությամբ բնաջինջ անելու քննարկումները: Այսպես, 1725 թ. մարտի 9-ին Ստամբուլից Վենետիկ հղված մի փաստաթղթում ասված է. «...թագաւորն (հմա՝ սուլթան Ահմեդ Գ-ը) տաղտկացեալ է ի հայոց եւ բազմիցս կամեցեալ է ի պատճառս Անձնիշխանին (այսինքն՝ Իրանում ընթացող պատերազմի) բնաւ զՀայս բնաջինջ առնել, բայց մուֆթին ոչ տուեալ է զհրաման առ ի բնաջինջ առնել զՀայս»[65]:

Հայր Պողոս Վ. Մեհրյանի վերոնշյալ հուշագրությունից տեղեկանում ենք, որ 1776թ. դրությամբ Համշենի Խևակ և հարակից որոշ գյուղեր մահմեդականացվել էին: Դատելով վարդապետին ցույց տված ջերմ ընդունելությունից՝ նրանք կրոնափոխվել են ոչ վաղ անցյալում[66]:

Թուրքեր ենիչերական զորաջոկատների և մոլլաների ուղեկցությամբ, բռնությամբ հավաքում էին և անմնայն դաժանությամբ ստիպում տեղում մահմեդականություն ընդունել, դիմադրողներին ուղղակի ոչնչացնում էին: 17-րդ դարի հայ հեղինակ Գրիգոր Կամախեցու բնորոշմամբ՝ թուրքերի համար ալլահին մատուցած ամենակարևոր ծառայությունը համարվում էր իր կյանքի ընթացքում մի քանի քրիստոնյայի մահմեդականացնելը. «Զքրիստոնեից ուրանալ զՔրիստոս եւ ի Մահմետի օրէնս եւ ի կրօնս դառնալ»[67]:

Այս ընթացքում Համշենի հայ բնակչության մի մասը ստիպված ընդունել է մահմեդականություն, որոշ դեպքերում՝ առերես: Իսկ մի մասն էլ դիմել է փախուստի՝ թաքնվելով Տրապիզոնի և Սամսունի (Ջանիկի) անտառներում ու քարանձավներում: Որոշ հատվածն էլ սփռվել է Ճորոխի ավազանում և Սև ծովի առափնյա շրջաններում: Ամենից դաժանը Սև գետում հաստատված համշենահայության 1780թ. բռնի մահ-

մահմեդականացումն էր, որի արդյունքում դատարկվել է 100 գյուղ, մահմեդականացվել 10 հազար համշենահայ: Բնակչության մի մասը կոտորվել է, մյուսը՝ հաստատվել Օրդուում, Արաքլիքալեում, Խոփայում («Փոքր Համշեն»//«Հոպա Համշեն»), Թիրեբոլուում, Սպերում, Բաբերդում, Կերասունում, Սամսոնում, Չարշամբայում, Խուրշինլուում, Խոտորջրում, Ճորոխի ավազանում:

Մեծանուն հայագետ Լ. Խաչիկյանը, հենվելով Պ. Թումայանցի կողմից Սամիրա գյուղում գտնվող Շաբանկոնցի հիշատակարանի վերապատմության վրա, նշում է, որ Սև ծովի «հայության մահմեդականացումը, արյունահեղ պայքարով ու բռնություններով, իրագործվեց «Հայոց ՌՄԻԹ»-1780թ»: Նրա կարծիքով հենց այս թվականի դեպքերն են, որ բերնեբերան պատմվելով՝ գրանցվել են Ս. Հայկունու կողմից՝ թվագրվելով 1708-1710թթ.[58]:

1531թ. մի ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ օսմանյան իշխանությունները, ենիչերական զորամիավորումը համալրելու նպատակով Համշենում և հարակից շրջաններում անցկացրել են նաև մանկահավաքներ (դևշիրմե). «...ենիչարա համար տղայ ժողվեց ի հայոց ազգէս, այսչափ տեղեացս այս տարի ժողովեցին՝ ու զապագայն Աստուծոյ է գիտելի. ի Տրապիզոնէ, ի Համշէնու, ի Սպերու, ի Բաբերդու, ի Դերջանայ, ի յերզնկա, ի Կամախա, ի յԱկնիարհովիս...»[59]: Մանկահավաքը մահմեդականացման քաղաքականության համակարգված միջոցներից մեկն էր, որի մասին սոսկալի ցավով են խոսում հայ գրիչները[60]:

1877-97 թթ.-ի ընթացքում համշենահայերը կրկին ենթարկվել են մահմեդականացման, դիմադրողները կոտորվել են: Հենց այս ընթացքում էր, որ դեպի Սև ծովի ռուսական ափեր՝ Աբխազիա, Աջարիա, Դիմ տեղափոխվեցին մեծ թվով համշենահայեր: 1915 թ. իթթիհատականները սկսեցին զանգվածային տեղահանումներն ու կոտորածները, նաև բռնի մահմեդականացումները Տրապիզոնում, Օրդուում, Սամսոնում, Նիկոմեդիայում և հարակից շրջաններում[61]: Շնորհիվ հայրուկային առանձին ջոկատների, համշենահայերի մի մասը կարողացավ անցնել Ռուսաստան, Հյուսիսային Կովկաս, Խորհրդային Հայաստան՝ պահպանելով իր ազգային ինքնությունն ու քրիստոնյա հավատը[62]:

Բռնի մահմեդականացման քաղաքականությունը կարելի է բաժանել երեք փուլի:

Առաջին՝ 15-17 րդ դարեր. 1) այս քաղաքականությունը գործի է դրվել հիմնականում ռազմական և ժողովրդագրական նպատակներով: Օսմանյան կայսրությունը ձգտում էր ունենալ լոյալ ազգաբնակչություն հատկապես իր սահմանային շրջաններում՝ ինչպես արևելքում, օրինակ՝ Ճորոխի ավազանում ու հարակից գավառներում, այնպես էլ արևմուտքում, օրինակ՝ Բալկանյան թերակղզում: 2) Կրոնափոխությունը հետապնդում էր նաև կայսրության ժողովրդագրական պատկերը վերաձևելու նպատակ: 3) Բռնի մահմեդականացման

երևույթը պետք է դիտարկել նաև ընդհանուր համատեքստում. ընթացում էին թուրք-պարսկական պատերազմները և կողմերը ձգտում էին տիրանալ ռազմավարական տեսակետից հույժ կարևոր Հայկական բարձրավանդակին: Այդ ժամանակաշրջանում կայսրության համար լուրջ գլխացավանք էին դարձել նաև մահմեդական գյուղացիության՝ «ջելալիների» անվամբ հայտնի ապստամբությունները՝ շիա դավանանքի ներքո, որոնք նաև հրահրվում էին Իրանի կողմից: Ապստամբական գործողությունները ընթանում էին հիմնականում Արևմտյան Հայաստանում, այդ թվում և Հաճընի հարակից շրջաններում[63]: Օսմանյան կայսրությունը, այդ տարածքներում (հատկապես սահմանային) իրականացնելով մահմեդականացման քաղաքականություն, ձեռք կբերեր սուննի մահմեդական բնակչություն ի հակակշիռ Իրանի: 4) Իսկ այդ շրջանում Իրանը վարում էր Արևելյան Հայաստանը ամայացնելու քաղաքականություն. բռնագաղթեցնելով հայ բնակչությանը՝ խոչընդոտում էր օսմանյան զորքերի առաջխաղացմանը[64], իսկ մյուս կողմից օսմանյան իշխանությունները, հենվելով մոլեռանդ մահմեդական ամբոխի և ենիչերական ջոկատների վրա, բռնի դավանափոխ էին անում հայերով խիտ բնակեցված սահմանային շրջանները:

Երկրորդ շրջան՝ 18-րդ դար-19-րդ դարի կեսեր. Թուրքիան ձեռք էր բերել մի նոր ախոյան՝ Ռուսաստանը. վերջինս հավակնություններ ուներ նաև Օսմանյան կայսրության արևելյան քրիստոնյաներով բնակեցված վիլայեթների նկատմամբ: Ուստի օսմանյան իշխանությունները դիտում էին այդ գավառներում բնակվող քրիստոնյաներին որպես Ռուսաստանի դաշնակից պոտենցիալ ուժ, և նրանց մահմեդականացումը բխում էր նաև աշխարհաքաղաքական իրավիճակի օսմանյան ընկալումներից:

Երրորդ շրջան՝ 19-րդ դարի վերջ և մինչև 20-րդ դարի կեսեր. բռնի մահմեդականացումն ամբողջովին խարսխվում էր թուրքիզմի գաղափարախոսության վրա, քանի որ այդ շրջանում այն ենթադրում էր բնակչության թուրքացում:

Կայսրությունը ստեղծել էր հատուկ օրենքներ և սոցիալ-տնտեսական այնպիսի պայմաններ, որոնք նպաստում էին նաև «կամավոր» մահմեդականացմանը ոչ միայն Հաճընում, այլև Արևմտյան Հայաստանի այլ վայրերում[65]: Կրոնափոխ էին լինում՝ հիմնականում խուսափելու համար ծանր հարկերից՝ հատկապես ջիզիեից, կրոնական և այլ զանազան հալածանքներից:

Մահմեդականացման հետևանքները

Մահմեդականացված համշենահայերը նույնպես չխուսափեցին բռնություններից: 19-րդ դարի ամբողջ ընթացքում և 20-րդ դարի սկզբում նրանց էլ հալածում էին հայերեն (Համշենի բարբառով) խոսելու համար: Արդյունքում՝ հայերենի հաշվին մեծ չափով տարածում գտավ թուրքախոսությունը:

Թեև Թուրքիայում մնացած համշենահայությունը սկզբնական շրջանում առերես էր ընդունել մահմեդականությունը, ցավոք ժամանակը, ինչպես նաև միջավայրը կատարել են իրենց դերը: Փաստերը ցույց են տալիս, որ նրանց հայկական ինքնությունն արտահայտվում է *գենետիկական ծագման մասին հիշողությամբ ու մշակութային որոշ շերտերի պահպանմամբ:*

Բուն Համշենում բաշ-համշենցիներն արդեն թուրքախոս են, թեև շարունակում են գործածել մի շարք հայերեն բառեր (Համշենի բարբառով): Միաժամանակ գավառի բնակիչները պահպանում են հայկական որոշ ծեսեր և ավանդույթներ, կենցաղային սովորություններ, երգեր ու պարեր: Պահպանվել են նաև մի շարք տեղանուններ և անձնանուններ:

Էթնիկ-տեղային որոշակի ակտիվություն նկատվում է Արդվինի նահանգի Խոպա և Բորչկա գավառներում բնակվող մահմեդականացված համշենցիների միջավայրում: Նրանք շարունակում են խոսել Համշենի բարբառով: Այն հայերենի բացառիկ բարբառներից է, որն իր մեջ պահպանել է վաղնջահայկական շրջանի, գրաբարյան և միջին հայերենի շերտեր: Եվ պատահական չէ, որ Համշենի բարբառը լեզվաբաններն անվանում են հին հայկական լեզու[66]: Դարերի ընթացքում, սակայն, բարբառում ներմուծվել են թուրքերեն բառեր և արտահայտություններ, այն կրել է թուրքերենից բխող հնչյունական ազդեցություններ: Բարբառն ունի նաև խոսվածքային տարբերակներ[67]: Այսօր այս բարբառը կենդանի է, այն որպես մայրենի լեզու է ծառայում նաև Սև ծովի հյուսիսային ափերին ու Հայաստանում հաստատված համշենահայերի մի մասի համար: Այս փաստը վկայում է, որ Համշենի բարբառն այսօր էլ շարունակում է կենսունակ լեզու լինել: Արևմտյան գիտնական Ռ. Բենինգհաուսի դիտարկումների համաձայն Թուրքիայի հայերը գրեթե հասկանում են Խոփայի համշենցիների բարբառը, բայց վերջիններս բոլորովին չեն հասկանում մյուս հայերին[68]:

Ս. Վարդանյանը, որը ուսումնասիրել է Խոփային հարակից Աջարիայի սահմանամերձ գյուղերից 1944թ. Միջին Ասիա աքսորված կրոնափոխ համշենցիների գրառած բանահյուսությունն ու բարբառը, այն համարում է Համշենի բարբառի առանձին խոսվածք, որը «զգալի տարբերություններով հանդերձ մոտ է Տրապիզոնի շրջակա գյուղերի խոսվածքին»: Այն իր հերթին բաժանվում է երկու ճյուղի՝ արդլեցիների՝ Արդալա գյուղի բնակիչների և թուրքլանցիների՝ դրսեցիների[69]:

Մահմեդական համշենցիների մասին բերենք ևս մի քանի տեղեկություններ: Մինչև 1980-ական թվականները, Թուրքիայի մյուս շրջանների հետ համեմատ, Համշենում շատ քիչ մզկիթներ են եղել[70]: Համշենցիների մեջ կարելի է հանդիպել այնպիսիններին, որոնք իրենց չեն համարում մոլեռանդ մահմեդականներ, նույնիսկ շատ են սիրում օգտագործել ոգելից խմիչք, որն խալամով արգելված է: Այս առումով ուշագրավ է, որ հարևանությամբ ապրող լազերը համշենցիներին ան-

վանում են խաղաղ, հարբեցող և անհավատ: Համշենցիներն ունեն նաև իրենց յուրահատուկ ճաշատեսակները[71]:

Հակասական են տեղեկությունները Թուրքիայի Հանրապետությունում բնակվող ***հայկական ծագում ունեցող մահմեդական զանգվածի***, ներառյալ համշենցիների թվաքանակի վերաբերյալ: Տարբեր աղբյուրների համաձայն նրանց թիվը տատանվում է 1,5 մինչև 4-5 միլիոնի միջև[72]: Նրանց թվաքանակի որոշումը խիստ բարդ խնդիր է, քանի որ, Թուրքիայի Հանրապետության սահմանադրության համաձայն (1924 թվականի առաջին սահմանադրության 88-րդ հոդվածը[73], որը դարձել է 1982 թվականին ընդունված սահմանադրության 66-րդ հոդվածը)՝ ամեն ոք, ով Թուրքիայի քաղաքացի է, համարվում է թուրք[74]: Ավելին՝ 2005թ. հոկտեմբերին Թուրքիայի կառավարությունը քննարկեց և հաստատեց Անվտանգության խորհրդի ներկայացրած «Ազգային անվտանգության քաղաքականության մասին փաստաթուղթը», որը դարձյալ ընդգծում է, որ Թուրքիայի Հանրապետությունում հիմնարար սկզբունքներ են հանդիսանում մեկ պետություն, մեկ ազգ, մեկ դրոշ և մեկ լեզու դրույթները: Փաստաթղթում պահպանվում է Թուրքիայի յուրաքանչյուր քաղաքացուն «ազգությամբ թուրք» համարելու սկզբունքը:

Բնական է, որ հետևողականորեն իրականացվող այսպիսի ձուլողական քաղաքականության արդյունքում, վախի և զանազան հալածանքների մթնոլորտում, Թուրքիայում ապրող ազգային փոքրամասնությունների ինքնությունները աստիճանաբար փոշիանում են, այդ թվում՝ մահմեդականացված հայության սերունդներինը: Բացառություն են քրդերը, որոնք իրենց ստվարաթվության և տևական պայքարի հաշվին պահպանում են ինքնության սուր զգացողություն: Այսօր անգամ Ստամբուլի հայությունը հայապահպանության լուրջ խնդիրներ ունի[75], ուր մնաց թե մահմեդական «հայը» զերծ մնա նման վտանգից:

Թուրքիայում բնակվող համշենցիների ինքնությունը խճճելու, պատմական ճշմարտությունն աղճատելու նպատակով, մեծ աշխատանքներ են տանում թուրքական «պատմագիտական» դպրոցը, թուրքական հատուկ ծառայությունները, նրանց կողմից վերահսկվող տարբեր ինտերնետային կայքերը, որոնց նպատակն է ամեն կերպ կանխել Թուրքիայում ապրող ազգային փոքրամասնությունների ազգային գիտակցության վերելքը:

Այդուհանդերձ, 2005 թ. Թուրքիայի համշենցիների նախաձեռնությամբ թողարկվել է ***«Վովա»*** (Ով է-Լ. Ս.) - ***«Hamşetsnu Xağ-Hemshin ezgileri»*** բացառիկ արժեք ներկայացնող 14 երգերից բաղկացած ձայնասկավառակը, որի միջոցով ևս հնարավորություն ենք ստանում որոշակի պատկերացում կազմել նրանց պահպանած հայկական մշակութային շերտերի, հատկապես Համշենի բարբառի այսօրվա վիճակի մասին: Երգերի մեծ մասը Համշենի բարբառով է: Կան նաև թուրքերեն և խառը՝ բարբառով ու թուրքերենով երգեր: Երգերը կատարում են Հո-

փայի, Արտանուշի, Արտաշեն, Մաքրիալ, Չարդինա/Ծարդինա, Արդալա, Խիզո, Զուրիջի, Չավուշնի, Չղիալա, Ձալունա, Խալքասի, Քոփրիջի բնակավայրերի համշենցիները:

Երգերի մի մասը, ինչպես գրված է սկավառակին կից հրատարակված ալբոմում, երիտասարդ սերունդն արդեն մոռացության է մատնել: Մուսթաֆա Բիբեր անունով մի համշենցի, որը նաև այս ձայնասկավառակի գործիքավորողն է, պատմում է, որ երկու տարի վաչկատունի նման կյանք վարելով, գյուղից գյուղ է անցել՝ գրառելու համար այս երգերը: Մեր կարծիքով այս երգերը իրենց տաղաչափությամբ ու բովանդակությամբ հիշեցնում են հայկական քնարական երգերը, քառատող խաղիկները և իրենց ուրույն տեղը կարող են գտնել համշենահայերից գրանցված բազմաթիվ մանիների կողքին: Ձայնասկավառակում ներկայացված են՝ հարսանեկան, սիրո, աշխատանքի, պանդխտության երգեր: Հետաքրքրական է, որ երգերում պահպանվել են նաև այնպիսի լեզվական փաստեր, որոնք հիշեցնում են նրանց նախկին քրիստոնեական դավանանքը (խոչ<խաչ, ժոմ<ժամ, քիլիսե<եկեղեցի):

Այս փաստերը, սակայն, պետք է գնահատել որպես հայկական մշակութային որոշ շերտերի պահպանում, բայց ոչ հայկական գիտակցության դրսևորում, քանի որ հայ ազգին պատկանելու և հայկականության կարևոր բաղադրիչները՝ քաղաքական ու հոգեբանական կապվածությունները, Հայաստան հայրենիքի ընկալումները գալով, ***հայկական ծագում ունեցող մահմեդականների*** մեծ մասի մոտ հիմնականում մոռացության են մատնվել:

Իսկ Տրապիզոնի լեռնային շրջաններում (Քարադերեում), Օրդուում, ինչպես նաև Գյումուշխանեում և Բաբերդում (Բայբուրթ) բնակվող համշենցիների սերունդների մեջ հայկականության շերտերի պահպանման աստիճանը դեռևս չի ուսումնասիրված՝ հասկանալի պատճառներով: Նրանց վերաբերյալ կան առանձին կցկտուր տեղեկություններ:

Հայկական ծագման մասին հիշողությունը, կարելի է ասել, որոշ չափով թարմ է Մեծ եղեռնի ընթացքում մահմեդականացված հայության սերունդների մոտ, որոնք գաղտնի պահպանել են քրիստոնեությունը (նրանց նաև անվանում են «ծպտյալ հայեր»):

Մահմեդական համշենցիների ինքնանվանումը «հոմշեցի» է (hemshili), մինչդեռ քրիստոնյա համշենահայերն այս ինքնանվանումը չեն գործածում դրա փոխարեն կիրառելով «համշենցի» կամ «համշենահայ» տերմինը: Մահմեդականացված հայերի սերունդների մեծ մասն ուղղակի մերժում է հայկական ինքնությունը կամ խուսափում հարցից, մի մասն էլ բավարարվում է՝ ընդամենն ընդունելով իր նախնիների հայկական ծագումը:

Բաշ-համշենցիների հիմնական զանգվածը իրեն պարզապես թուրք-հեմշինլի է համարում[76]: Կրասնոդարի երկրամասում հաստատ-

ված մահմեդականացված հեմշինցիներն (խեմշիլներ) տարածաշրջանում տիրող հակաքրդական-հակամեսխեթցիական մթնոլորտի, ինչպես նաև տեղի համշենահայ համայնքի կատարած լուսավորչական աշխատանքի արդյունքում (հատկապես, իսլամից հրաժարվելու ու դարձի գալու ուղղությամբ) նկատվում են գիտակցության որոշակի տեղաշարժեր: Սակայն նրանց *ինքնության վերականգնմանը զգալի - խանգարում է մահմեդականությանը համառորեն կառչած մնալը*, ինչպես նաև Կրասնոդարի երկրամասում տարածում գտած հայատյացությունը[77]:

Նշենք նաև, որ այժմ Թուրքիայի Հանրապետությունում բնակվող՝ *հայկական ծագում ունեցող մահմեդական զանգվածի սերունդներ* բնակվում են, մասնավորապես, Վանում, Մուշում, Վարդոյում, Արդահանում, Ճորոխի ավազանում, Սև ծովի հարավ-արևելյան առափնյա շրջաններում: Վերջերս նրանց շրջանում արձանագրվել են հայկական արմատների նկատմամբ հետաքրքրություն դրսևորելու *առանձին, բայց ոչ զանգվածային դեպքեր*:

Եվ ամենակարևորը՝ չմոռանանք, որ հայ լինելու գլխավոր նախապայմաններից են հայրենիքի՝ Հայաստանի զգացում-գիտակցումը, պատմական արդարության վերականգնման պահանջը, որոնք բացակայում են ծագումով հայ մահմեդականացված զանգվածի մեծ մասի մոտ՝ վերը նշված պատճառներով: Ուստի առաջիկայում մահմեդականացված համշենցիներից, առավել ևս մահմեդականացված այլ տարրերից վերահայացում ակնկալելը, մեր կարծիքով, միամտություն է: Մեզանում այս խնդրի շուրջ գոյություն ունի որոշակի թյուրըմբռնում, կարելի է ասել՝ անտեղի զգացմունքային ոգևորություն: Չհաստատված տեղեկություններն ինչ-ինչ առանձին ընտանիքների և անհատների հայկական ինքնության ընդունման կամ վերականգնման մասին բավարար չեն ընդհանրացնող եզրակացությունների համար:

Այսուհանդերձ, Թուրքիայում բնակվող հայկական ծագում ունեցող մահմեդականների գոյությունը մի երևույթ է, որի ուսումնասիրությունը խիստ կարևոր է և այժմեական: Չի բացառվում, որ մի օր այս խնդիրը կարող է շահարկման առարկա դառնալ (եթե արդեն չի դարձել) ինչպես թուրք պետության, այնպես էլ այլ օտար ուժերի կողմից ի վնաս հայության և Հայաստանի: Այժմ նշենք ընդամենը մեկ օրինակ. թուրքական ժամանակակից գրականության մեջ (Քեմալ Յալչըն) մահմեդականացած-թուրքացած կամ «ծպտյալ հայ» տարրերի միջոցով արդեն սկսվել է թուրքական մոտեցումներով «հայ-թուրքական բարեկամության» քարոզը[78]: Այս ամենը հուշում է, որ մեզ անհրաժեշտ է բազմակողմանիորեն՝ պատմական, քաղաքական, մշակութային, հոգևոր-կրոնական տեսանկյուններից, վերլուծել և պատկերացնել խնդիրը՝ Հայաստանի շահերից ելնելով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* Հոդվածի նախնական տարբերակը ընթերցելու և օգտակար խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում բանասեր, համշենահայության պատմության և ազգագրության երկարամյա ուսումնասիրող, Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ փոխնախագահ, «Ձայն համշենական» թերթի գլխավոր խմբագիր Սերգեյ Վարդանյանին:

1. Капанцян Гр., Хайаса-Колыбель Армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1947, с. 27. Տե՛ս նաև Арутюнян Б., К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII-IV вв. до н. э., «Պատմա-բանասիրական հանդես», ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1998, N 1-2, ст. 233-246:
2. Տե՛ս նաև Տաշեան Հ. Յ., Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1921, էջ 9-10: Տե՛ս Վարդանյան Ս., «Ձայն համշենական», գիրք չորրորդ, Երևան, «Վերնատուն» հրատ., 1999, էջ 13:
3. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, հ. II, էջ 235-238, 271: Տե՛ս նաև՝ Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Важнейшие сведения о лазах. Тифлис, 1890, вып. 9 с. 57, 102-109.
4. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, ԵՊՀ հրատ., Երևան, 1989, էջ 252:
5. «Պարսկական զորատներին նույնպիսի կազմակերպված դիմադրություն էին ցույց տալիս Հայաստանի լեռնադաշտային մասին սահմանակից շրջանների, հատկապես Տորոսի ավազանի զինված ջոկատները: Այստեղ՝ Տայքում, Պարխարյան լեռների և խաղտիքի խիտ անտառներում Վարդան Մամիկոնյանի եղբոր՝ Համազասպի մոտ ապաստան էր գտել ապստամբների հիմնական մասը: Այստեղից կարելի էր տևական դիմադրություն կազմակերպել...» (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 188-190): «Յորոց վերայ տեղեակ առաջնորդք եկեալ զցայգն, ընդ ծագել առաւօտուն պատրաստքն զինուք անկանէին ի վերայ այնց նորին ընկերաց Համազասպայ Մամիկոնէի, ի գիւղն որ անուանի Որդնահաղ, ի գաւառին Տայոց. քանզի ի ժամուն իջեալ էին ի յամրոցացն լերինն Պարխարայ. արք փախստիցն ճեպով յիւրաքանչիւր երիվարս հասանէին: Ոմանք մերկանդամք և ոմանք զինեալք հարկանէին ի զօրացն Պարսից. և դարձուցեալ ընդ կրունկն՝ անդէն փախստականս առնէին. յորոց բազումս անդէն ի շինամիջին և գալլս ի մէջ ագարակացն յերկիր կործանէին: Եւս զկատարելութեան պսակն ընկալեալ, զոր երանելի սեպուհն Համազասպ փափագանօք և բազում ցանկութեամբ խնդրէր՝ ժամանել զկնի սուրբ եղբօրն իւրոյ. և վաղվաղակի լսելի լինէր. զի հաւանեցաւ Աստուծոյ ի փափագ առնն՝ կատարեր զխայցուածսն և պսակէր զարդարն» (Ղազար Փարպեցի. Հայոց պատմություն, ԵՀ հրատ., Երևան, 1982, էջ 174):
6. Պատմութիւն Պետրոսեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 167-169: Հղումը տե՛ս նաև Խաչիկեան Լ., նշվ. հոդվ., էջ 122-123:
7. Խաչիկեան Լ., Էջեր համշինահայ պատմութիւնից, «Աշխատութիւններ», հատոր Բ, «Գանձասար» Աստուածաբանական կենտրոն, Երևան, 1999, էջ 124-125:
8. Յ. Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 284: Տե՛ս նույնի

աշխարհաբար թարգմանությունը՝ Պողիան Սամիկոնյան, Տարոնի պատմություն, Երևան, 1989, էջ 113:

9 Այդ մասին տե՛ս Սահակյան Լ., XVI դարի օսմանյան աշխարհագիր-մատյաններում գրանցված հայկական տեղանունների հնչյունական առանձնահատկությունները, Արևելագիտական ժողովածու, Հ. V, Երևան, 2004, էջ 272-288:

10 Տե՛ս Sakaoğlu, A. M.: Dünden Bugüne Hemşin, İstanbul, 1990.

11 Տե՛ս Kırzıoğlu, M. F.: Yerli Kaynaklara Göre Hemşin, İstanbul, 1966.

12 Kırzıoğlu, M. F.: Yerli Kaynaklara Göre Hemşin, հղումը տե՛ս նաև Hemşin Gizemi, İkinci Bölüm, Türk Araştırmacıları, İstanbul, 1997, s. 75.

13 Kırzıoğlu, M. F., նույն տեղում, հղումը տե՛ս նաև Hemşin Gizemi, s. 75.

14 Kırzıoğlu, M. F.: Horasan-Hamedan Yoluyla Doğu Anadolu'ya Gelen Eski Oğuz (Arsak-Part) Kalıntısı Hemşinliler, TFA içinde, Cilt 10, No. 203 (Haziran), İstanbul, 1966, s. 4100.

15 Kırzıoğlu, M. F.: Նույն տեղում:

16 Sakaoğlu, A. M.: Dünden Bugüne Hemşin, s. 16.

17 Վարդանյան Ս., Կոռնափիոս համշենահայերին պատմա-ազգագրորեն ներկայացնելու փորձ, Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված 1984-1985 թթ. ազգագրական և բանագիտական դաշտային հետազոտությունների հանրագումարին: Զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 95-97: Տե՛ս նույնի՝ Նախկին Խորհրդային Միությունում բնակվող մահմեդական հայերը, «Բազմավեպ», Վենետիկ, 1996, N 1-4, էջ 193-194, հմմտ Riza M., Benlik ve Dilbirliğimiz, Ankara, 1982, s. 35-36. Թուրքական կեղծարարություններին անդրադարձել է նաև Ռ. Սեյրոնյանը (տե՛ս նույնի՝ Նոր փաստեր մահմեդական համշենահայերի մասին, Երիտասարդ արևելագետների հանրապետական XXIII գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, 2002, էջ 45-47):

18 Վարդանյան Ս., «Բազմավեպ», էջ 194-195:

19 Ժամանակակից թուրքերենում չկա բառ բայացնել է՝ «şenlemek» և բացատրվում է «անմարդաբնակ վայրը մնելով և մարդկանցով լցնելու» իմաստով (տե՛ս Eyuboğlu, İ. Z.,Türk Dilinin Etimoloji Sözlüğü, İstanbul, 1988, s. 626): Զարմանալի է, որ Քըրզըօղլուն չի նկատել բառի այս իմաստը:

20 Sakaoğlu, A. M.: Dünden Bugüne Hemşin, s.77.

21 «Երկիր» օրաթերթ, 22 հուլիսի, 1994:

22 Նույն տեղում:

23 Այդ մասին տե՛ս Кочар Н., Антропология армян, Ереван, 1989. Տե՛ս նաև Հարությունյան Ռ., Քոչար Ն., Ինչ են պատմում մեր գեները, Երևան, 1989:

24 Մի քանի թյուրքախոս ժողովուրդների մոտ առկա են թուրանական կամ հարավսիբիրյան և ուրալյան ռասայական տիպերը: Թյուրքախոս են նաև յակուտները, որոնք դասական մոնղոլոիդների ներկայացուցիչներ են: Թյուրքախոս ժողովուրդների շրջանում ոչ մի օղուզական տիպ գոյություն չունի (Տե՛ս Рогинский Я. Я., Левин М. Г., Антропология, М., 1978).

25 Kırzıoğlu, M. F.: Yerli Kaynaklara Göre Hemşin, հղումը տե՛ս Hemşin Gizemi, İkinci Bölüm, s. 86.

26 Տե՛ս http:// www. hemsinli.com/. Ռ. Բենինգհաուսը տեղեկացնում է, որ Քըրզըօղլուն սերտ կապեր է ունեցել Համշենի բնակչության հետ և նրանց մեջ տարածել է իր ստահոդ քարոզը, որը մեծ ազդեցություն է ունեցել

(տե՛ս Hemşin Gizemi, İkinci Bölüm, s. 86).

27 Թումայեանց Պ., Պոնտոսի հայերը. աշխարհագրական և քաղաքական վիճակ Տրապիզոնի, «Լումայ», Տփխիս, 1899, էջ 175: Հայկունի Ս., Նշխարներ. կորած և մոռացուած հայեր, «Արարատ», Վաղարշապատ, 1895, էջ 239-243:

28 Gökbilgin, M. T., XVI Yüzyıl Başlarında Trabzon Livası ve Doğu Karadeniz Bölgesi, Türk Tarih Kurumu Belleten, 26, no 101-104, Ankara, 1962, s. 293-337.

29 Ինճիճեան Ղ., Նոր Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 132: Տե՛ս նաև՝ Յովհաննէսեան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ-Ս. Ղազար, 1970, էջ 629:

30 Тузумджян А., Хопа-Хемшили и Баш-Хемшилы, Материалы экспедиции, «Զանգ Համշենական», Երևան, NN1-2 (18-19) հունվար- փետրվար, 2008:

31 Խաչիկեան Լ., Էջեր համշինահայ պատմութիւնից, էջ 128-129: Հմմտ. Հայկունի Ս. նշվ. հոդվ., «Արարատ», 1895, էջ 295-297:

32 Տաշեան Հ. Յ., Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչեւ Կարին, էջ 21: Տե՛ս նաև Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 39:

33 Էլեվիտ/Եղնովիտ գյուղի մոտ է գտնվում Խաչիքար կամ Խաչիկ հոր վանքը, որտեղ 15-16-րդ դարերում ընդօրինակվել են մի շարք ձեռագրեր (տե՛ս՝ Խաչիկյան Լ., նշվ. հոդվ., էջ 138-139):

34 Gökbilgin, M. T., XVI Yüzyıl Başlarında Trabzon livası ve Doğu Karadeniz Bölgesi, s. 323.

35 Սահակյան Լ., Պատմական ժողովրդագրության առանցքային նշանակությունը ցեղասպանագիտության համար (Բարձր Հայքի հյուսիսային գավառների պատմաժողովրդագրական քննություն), Հայոց Մեծ եղեռն-90, Երևան, ԵՊՀ հրատ. էջ 385:

36 Խաչիկյան Լ., էջեր համշինահայ պատմությունից, էջ 132-138:

37 Հայկունի Ս., նշվ. հոդվ., էջ 239-243, 293-297: Առաքել, Ճորոխի ապագանը, Վիեննա, 1929, էջ 110:

38 Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. մասն առաջին., հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 379:

39 Վարդանյան Ս., Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 2004, 3 (167), ՀՀ ԳԱԱ հրատ., էջ 160:

40 Հայկունի Ս., Տրապիզոնի հայ գիւղացոց կեանքը, «Արարատ», 1905, էջ 738-739:

41 Հայկունի Ս., նույն տեղում: Խաչիկեան Լ., էջեր համշինահայ պատմութիւնից, էջ 142: Հմմտ. Վարդանյան Ս., Նախկին խորհրդային Միութիւնում բնակուող մահմետական հայերը, «Բազմավէպ», Վենետիկ, 1996, N 1-4, էջ 190:

42 SMIT ELI and H. G. O. DWIGHT, Missionary Researches in Armenia, Boston, 1833, p. 325. Հմմտ. Վարդանյան Ս., նույն տեղում, էջ 190:

43 K. Koch, Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844, II, Reise im pontischen Gebirge und türkischen Armenien, Weimar, 1846, p. 1-40. Տաշեան Հ. Յ, Տայք, դրացիք և խոտորջուր, պատմական-տեղեկագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, Վիեննա, 1980, էջ 218: Հմմտ. Վարդանյան Ս., նույն տեղում, էջ 160:

44 Թումայեանց Պ., նշվ. աշխ., 175: Հմմտ. Минасян М., Армяно

Причерноморья, Ереван, 1990, с. 28.

45 XIX-XX դարերի հայ ընտանիքի միջին թվի վերաբերյալ կան նաև այլ հաշվարկներ: Ս. Մելքոնյանը, Էրզրումի վիճակագրական աղյուսակները կազմելիս, հայ գյուղական ընտանիքի անդամների միջին թիվը ընդունել է 8 շունչ, քաղաքներինը՝ 6 կամ «առավելագույնը՝ 7, իսկ քրդերինը՝ ավելի պակաս» (Մելքոնյան Ս., Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, «Հայաստան» ԳԱԱ հրատ., 1994: էջ 112, 114-115):

46 Այդ մասին տե՛ս Սահակյան Լ., Պատմական ժողովրդագրության առանցքային նշանակությունը ցեղասպանագիտության համար (Բարձր Հայքի հյուսիսային գավառների պատմաժողովրդագրական քննություն), Հայոց Մեծ եղեռն-90, էջ 379-397:

47 Արծրունի Գ., Վիճակագրական տեղեկություններ Հայաստանի բնակիչների մասին, «Մեղու Հայաստանի», 1882, հունվար, էջ 3: Չմռ. Մելքոնյան Ս., նշվ. աշխ., էջ 110:

48 Сборник маршрутов в районе Олты-Сагинлук-Эрзерум, выпуск III, 1) Статистические таблицы санджаков Эрзерумского, Байбуртского и Эрзинджанского. А. Р. Декнет. Перевел с турецкого и составил М. Ш. Мирзаев. 2) Маршрут от сел. Кепри-кей до с. Нориман. Д. К. Артамонов. Тифлис, 1881, ст. 70-71.

49 Վարդանյան Ս., Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, «Իրան-Նամե», Արևելագիտական հանդես, 1994, N 1-2-3, էջ 6:

50 Վարդանյան Ս., նույն տեղում, էջ 11:

51 Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, էջ 108-109:

52 Мар Н. Батум, Ардаган, Карс, Пг., 1922, с 47-48.

53 Հայկունի Ս., Նշխարներ, Կորած և մոռացուած հայեր, Սև ծովացիք, էջ 239, 240-242:

54 Ատրպետ, նշվ. աշխ., էջ 110:

55 Այվազյան Ա., Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում: Երևան, Մատենադարան, «Լուսակն», 2003, էջ 70: 1720-ական թթ. Իրանում և Օսմանյան կայսրությունում հակահայկական տրամադրությունների մանրամասն քննությունը տե՛ս **A. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal* (Yerevan: Center for Policy Analysis, American University of Armenia, 1997). Կան տեղեկություններ նաև այն մասին, որ արևելահայ ազատագրական շարժումը որոշակի գաղտնի կապեր ուներ Արևմտյան Հայաստանի հայոց հետ, մասնավորապես, Վանի, Տիգրանակերտի (Դիարբեքիրի) և Տարոնի շրջաններում (տե՛ս **A. Aivazian**, *Iran & the Caucasus*, vol. 5 (Tehran: International Publications of Iranian Studies, 2001), pp. 85-92:

56 Վարդանյան Ս., Կարևոր սկզբնաղբյուր մահմեդական հայերի մասին, էջ 163:

57 Գրիգոր Կամախեցի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915, էջ 467-468: Չմռ. Անասյան Յ., Թուրքական ֆուրուսիյաթը եւ հայերը (Օսմանեան կայսրութեան ձուլողական քաղաքականութեան պատմութիւնից), «Հասկ հայագիտական տարեգիրք», Անթիլիաս-Լիբանան, 1994, էջ 222:

58 Խաչիկյան Լ., նշվ. հոդվ., էջ 142-143:

59 Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., ՀՍՍՀ ԳԱ հրատ.,

Երևան, էջ 330, հմմտ. Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 6:

60 Զուլալյան Մ., նշվ. աշխ., էջ 331: Մանկաժողովների մասին տե՛ս Զուլալյան Մ.,«Դևշիրմեն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, N 2-3, էջ 247-258: Շաքարյան Մ., «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում, Դևշիրմե, Երևան, 2006:

61 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. Нерсисяна М. Г., Ереван, 1966, с. 246-247. Տե՛ս նաև Վարդանյան Ս., Հայոց համշենական, Երևան, 1989, էջ 8-9: Տե՛ս Микаелян В., Армянский вопрос и геноцид армян в Турции, Ереван, 1995.

62 Թոփալյան Ա., Օրերու հետ, Լոս Անջելոս, 1953, էջ 322:

63 Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 41:

64 Զուլալյան Մ., նույն տեղում, էջ 43:

65 Տե՛ս Անասեան Յ., Թուրքական ծուբաքլուքը եւ հայերը (Օսմանեան կայսրութեան ծուլդղական քաղաքականութեան պատմութիւնից), էջ 221-256:

66 Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1947, էջ 12-13:

67 Աճառյան Հ., նշվ. աշխ., 12:

68 Hemşin Gizemi, İkinci Bölüm, Türk Araştırmacıları, s. 85.

69 Վարդանյան Ս., Հայոց համշենական, գիրք երրորդ, Երևան, 1989, էջ 207:

70 Տե՛ս Մելքոնյան Ռ., Նոր փաստեր մահմեդական համշենահայերի մասին, էջ 47: Տե՛ս նաև՝ http://www.lazebura.net/english-Lazebura.net, հմմտ. Խանլարյան Կ., Հայ էթնիկրոնական տարրը Արևմտյան Հայաստանում (1991-2005 թթ.) «21 դար», N 3, 2005, էջ 128:

71 Նրանց ամենասիրած բանջարեղենը կարմրագլուխ կաղամբն է: «Պեղվալի» կամ «զարգենիչ» կոչվող (ճզմիչ) գործիքով կաղամբը հասցնում են խյուսի վիճակի, որից հետո ուտում են եգիպտացորենի հացով: Նրանց սեղաններից անպակաս է «Չարիալայի ապուրը», որը պատրաստում են կարմրագլուխ կաղամբից, լոբուց, փորոտիքի յուղից և ոսկրոտ մսից: Շատ տարածված է «թերթեր» կոչված ճաշատեսակը, որը պատրաստվում է կաղամբի կտորների վրա միսը և յուղ ավելացնելով (Hemşin Gizemi, İkinci Bölüm, Türk Araştırmacıları, s. 81-82).

72 Այվազյան Հ., Համշէն և համշէնահայութիւն, Ալիք, 2005, թիւ 279(19622) էջ 112-113:, Խանլարյան Կ., նշվ. հոդ., էջ 126-127, 127-128:

73 Григорян Э. А., Турецкая республика. Основные институты государственного строя. Изд.- Наука, Москва, 1974, с. 41.

74 Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XX века, Москва, 2001, с. 39, 307.

75 Ռ. Հայաստենեան, "Իսլամհայութիւնը" այսօր, Ազդակ, Բացառիկ, 1 Յունուար, 2008, Պէյրութ, էջ 96:

76 Тулумджян А., նշվ. հոդվ., էջ 5-6:

77 Кузнецов И. В., Турки-хемшилы или исламизированные армяне? (случай "неясной этнической идентичности" // Диаспоры. N 1-2. 2000. Տե՛ս նույնի՝ Хемшилы Краснодарского края (1980-90-е гг.), /Старый Свет /археология, история, этнография. Краснодар. Кубанский государственный университет. 2000, с. 110-139. Տե՛ս նույնի՝ Северо-западный Кавказ (Краснодарский край):

что происходит с этническими меньшинствами. Кавказ. Выборный год. Ежегодник КИСМИ. Ереван 2005, с. 115.

78 Yalçın, Kemal, Seninle Güler Yüreğim, İstanbul, 2000. Տե՛ս նույնի արմատահայերին թարգմանությունը՝ «Հոգիս քեզնով էր խայտում», Երևան, Ծանգակ հրատ., էջ 116, 118, 125-126, 151, 181, 188, 190 (այս խնդրին մենք անդրադառնալու ենք առանձին հոդվածով):

ԱՐԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ 1896թ. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Այս տարվա փետրվարին լրանում է 110 տարի այն օրվանից, երբ Ամերիկայի Միացյալ Նահանգների հանրահայտ հասարակական գործիչ, Ամերիկյան Կարմիր խաչի հիմնադիր և նախագահ, մեծ մարդասեր Կլարա Բարտոնը ժամանեց Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս՝ կազմակերպելու և ղեկավարելու 1894-96 թթ. կոտորածներից տուժած հայ բնակչությանը օգնություն ցուցաբերելու աշխատանքները: Թեև Ամերիկյան Կարմիր խաչի այս առաքելության մանրամասները ժամանակին լայնորեն լուսաբանվել են ամերիկյան և հայկական մամուլում, պատմագիտական աշխատություններում, դրանք դեռևս չեն դարձել մասնագետների հատուկ ուսումնասիրության առարկա:

1922թ. հայ հասարակական-քաղաքական գործիչ և դիվանագետ Գարեգին Պաստրմաջյանը ճշմարտացիորեն գրում էր. "1895թ. մեծ կոտորածից հետո, Կլարա Բարտոնի անձնական օրինակի շնորհիվ, մենք հայտնաբերեցինք ևս մեկ քրիստոնյա տերություն և ազգ, որը նվիրված է մեր ընդհանուր կրոնի վեհ սկզբունքներին, հանդիսանում է ազատության և արդարության չեմպիոն, բոլոր ճնշված և տառապյալ ժողովուրդներին օգնության ձեռք մեկնող բարեկամ: Մենք երախտապարտ ենք Կլարա Բարտոնին այն բանի համար, որ նա առաջինն էր այն ամերիկացիներից, որոնք ոգեշնչեցին մեզ այդ հավատով:"[1]

Կլարիսա (Կլարա) Հարլոու Բարտոնը ծնվել է 1821 թ. դեկտեմբերի 25-ին ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Նորդ Օքսֆորդ քաղաքում՝ բարեկեցիկ ֆերմեր Ստեֆանի և տան տնտեսուհի Սառայի ընտանիքում: Նրանք ունեին հինգ երեխա, որոնցից ամենա կրտսերը Կլարան էր: Նա այնքան խելացի և ուշիմ երեխա էր, որ իր ավագ եղբայրների և քույրերի օգնությամբ ոչ միայն կարողացել էր ինքնուրույն ուսում ստանալ, այլև 17 տարեկան հասակում սկսել էր դասավանդել դպրոցում: 1850 թ. նա ընդունվում է Նյու Յորք նահանգի Կլինտոն քաղաքի Լիբերալ ինստիտուտը, իսկ երկու տարի անց հիմնում Նյու Ջերսի նահանգի առաջին հանրային դպրոցը Բորդենթաուն քաղաքում: 1854թ. նա մեկնում է ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոն, ուր աշխատանքի է ընդունվում ԱՄՆ Արտոնագրային գրասենյակում: Սա բացառիկ դեպք էր այդ ժամանակ ԱՄՆ-ում, երբ կինը աշխատանքի էր նշանակվում ֆեդերալ կառավարության գրասենյակներից մեկում:

ԱՄՆ Քաղաքացիական պատերազմի (1861-65 թթ.) ընթացքում Կլարա Բարտոնը մի խումբ ընկերների հետ միասին նվիրում է իրեն

վիրավորված զինվորներին օգնություն ցուցաբերելու և կազմակերպելու գործին: Մինչ այդ ԱՄՆ-ում ընդհանրապես արգելված էր, որ կինն այցելեր դաշտային հոսպիտալ, զինվորական ճամբար, կամ հայտնվեր մարտադաշտում: Սակայն Կլարա Բարտոնին հաջողվեց իր նվիրումով և խիզախությամբ վստահություն ձեռք բերել պետական պաշտոնյաների ու սպայական կազմի մոտ, և շատ շուտով երկիրը ճանաչեց նրան որպես "մարտադաշտի հրեշտակ": 1864թ. նա պաշտոնապես ստանձնեց ԱՄՆ Բուժքույրերի միության ղեկավարի պարտականությունները և սկսեց միջոցներ հավաքել ու կազմակերպել հոսպիտալների մատակարարման, ինչպես նաև բուժքույրերի պատրաստման աշխատանքները: Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ Նախագահ Աբրահամ Լինկոլնի համաձայնությամբ նա ղեկավարեց մարտադաշտերում կորած զինվորների մասին տեղեկատվության հավաքի, ցուցակների տպագրության և մահացածների ինքնությունը հաստատելու աշխատանքը:

1869թ. Կլարա Բարտոնը մեկնեց Եվրոպա: Շվեյցարիայում նա ծանոթացավ Միջազգային Կարմիր խաչի Կոմիտեի գործունեությանը և Ժնևի կոնվենցիայի հիմնադրույթներին, ինչպես նաև որպես կամավոր մասնակցեց Կարմիր խաչի փրկարար աշխատանքներին 1870-71 թթ. ֆրանկո-պրուսական պատերազմի ընթացքում: 1873թ. Կլարա Բարտոնը վերադարձավ ԱՄՆ և մեծ ծավալի քարոզչական գործունեություն ծավալեց Կարմիր խաչի գաղափարները տարածելու ուղղությամբ: 1881թ. մայիսին Կլարա Բարտոնը հիմնում է Ամերիկյան Ազգային Կարմիր խաչ կազմակերպությունը և հասնում նրան, որ մեկ տարի անց ԱՄՆ-ն միանում է Ժնևի կոնվենցիային: Կլարա Բարտոնի գործուն աշխատանքի շնորհիվ 1884թ. Ժնևի կոնվենցիայի տեքստում ԱՄՆ առաջարկով կատարվել է լրացում, համաձայն որի Միջազգային Կարմիր խաչը պետք է զբաղվեր մարդասիրական գործունեությամբ ոչ միայն պատերազմի, այլև բնական աղետների դեպքում:

Կլարա Բարտոնը ղեկավարեց Ամերիկյան Կարմիր խաչը մինչև 1904թ.: Կազմակերպությունը մեծ ծավալի մարդասիրական աշխատանք տարավ Միացյալ Նահանգներում, մասնավորապես, 1882, 1884 թթ. Միսիսիպի և Օհայո գետերի ջրհեղեղների, 1886թ. Տեխասի սովի, 1887թ. Ֆլորիդայի դեղնատենդի համաճարակի, 1888թ. Իլինոյսի երկրաշարժի, 1889թ. Պենսիլվանիայի ջրհեղեղի, 1898թ. իսպանա-ամերիկյան պատերազմի ժամանակ: Կլարա Բարտոնը զգալի դերակատարություն ունեցավ նաև կանանց իրավունքների պաշտպանության գործում, կանանց ընտրական իրավունքներ տրամադրելու օգտին ԱՄՆ-ում ծավալված շարժման մեջ, սերտորեն համագործակցեց ամերիկյան կանանց իրավունքների հայտնի պաշտպաններ Սյուզեն Էնթոնիի և Լյուսի Սթոնի հետ: Կլարա Բարտոնը մահացել է 1912թ. ապրիլի 12-ին Մերիլենդ նահանգի Գլեն էքո գյուղաքաղաքում, 91 տարեկան հասակում: Իր գրչին են պատկանում "Կարմիր խաչի պատմությունը",

"Կարմիր խաչը խաղաղության և պատերազմի մեջ", "Իմ մանկության պատմությունը" և այլ գրքեր:

Կլարա Բարտոնը գրեթե նոր էր ամփոփել Հարավային Կարոլինայի կղզիներում Ամերիկյան Կարմիր խաչի կողմից կատարած աշխատանքը և զբաղված էր Կարմիր խաչի պատմության գրքի խմբագրությամբ, երբ նամակներ սկսեց ստանալ 1894-95 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող կոտորածների ընթացքում տուժած հայերին օգնություն ցուցաբերելու խնդրանքով: Սա մի անսովոր խնդիր էր Կլարա Բարտոնի համար, քանի որ այն ոչ բնական աղետ էր, ոչ էլ պատերազմական գործողությունների արդյունքում տեղի ունեցած դժբախտություն: Խոսքը գնում էր "մարդու կողմից հրահրված կոտորածի մասին, որն իր մեջ պարունակում էր նույնը քաղաքական տարրեր:"[2]

Այդ օրերին Նյու Յորքում հիմնադրվել էր Ազգային Հայկական Օգնության Կոմիտեն (National Armenian Relief Committee), որի կազմում ընդգրկված էին ազդեցիկ հասարակական գործիչներ: 1895թ. վերջին Կոմիտեն և Ամերիկյան Միսիոներական խորհուրդները միասնաբար դիմեցին Կլարա Բարտոնին և Կարմիր խաչին՝ օգնության և փրկարար աշխատանքները կազմակերպելու, սննդի և պարենի մատակարարումն ապահովելու նպատակով: Օգնության հայթայթման աշխատանքներն արդեն իսկ սկսված էին Մեծ Բրիտանիայում և Միացյալ Նահանգներում, սակայն Թուրքիա այն հասցնելու և տեղում գործը կազմակերպելու համար որևէ այլ կազմակերպություն համապատասխան փորձ ու միջոց չուներ: Օսմանյան կայսրությունում ապրող ու գործող հարյուրավոր ամերիկացի միսիոներները նույնպես տուժել էին կոտորածների հետևանքով, փաստորեն բանտարկված էին իրենց տներում և որևէ օգնության ծրագիր իրականացնելու հնարավորություն չունեին[3]: Կլարա Բարտոնին ուղղված նամակներում պատվելի Ջադսոն Սմիթը Բոստոնից և Սպենսեր Թրասքը Նյու Յորքի Ամերիկյան Օգնության կոմիտեից նշում էին, որ թեև կոտորածների ընթացքում սպանվածներին հնարավոր չէր այլևս կյանքի ետ բերել, սակայն միայն Ամերիկյան Կարմիր խաչը կարող էր օգնության ձեռք մեկնել տասնյակ հազարավոր քաղցած, որբ և անօգնական մարդկանց: Նրանք համոզված էին, որ որպես ոչ քաղաքական և ոչ աղանդավորական կազմակերպություն Կարմիր խաչը կարող է հայտնվել այնպիսի վայրերում, ուր նույնիսկ բանակը չէր կարող հասնել[4]: Ինչպես հետագայում նշում էր Կլարա Բարտոնը, կոտորածներից տուժած հայ բնակչությանը օգնություն ցուցաբերելու հարցում Ամերիկյան Կարմիր խաչին ընդգրկելու գաղափարը պատկանում էր Կոստանդնուպոլսում գործող ամերիկացի միսիոներ, պատվելի Հենրի Օ. Դուայթին[5]:

Թեև Կլարա Բարտոնը 74 տարեկան էր և "խուսափում էր պատասխանատվությունից", նա համաձայնեց մասնակցել ծրագրին, պայմանով, որ Կարմիր խաչը հանդես է գալու ամերիկյան ժողովրդի

անունից և ապահովված է լինելու համապատասխան ֆինանսական միջոցներով: 1895 թ. դեկտեմբերի 14-ին նա հայտարարեց, որ համապատասխան ֆինանսական միջոցների ձեռքբերումից անմիջապես հետո Ամերիկյան Կարմիր խաչը օգնության արշավախումբ է ուղարկելու դեպի Հայաստան՝ օժանդակություն ցուցաբերելու 350 հազար քաղցած և սոված մարդկանց: Նա խնդրեց հատկացնել Կարմիր խաչին 5 մլն դոլար և 20 հոգանոց աշխատախումբ, սակայն հետագայում այդ թիվն իջավ 500 հազարի, այնուհետև 100 հազարի և վերջում խոստացվեց ընդամենը 50 հազար: Ի վերջո ամերիկյան և բրիտանական տարբեր բարեգործական կազմակերպությունների միջոցով ստացվեց 116 հազար դոլարից ավելի գումար, որից 15 հազար 400 դոլարը առաքելության ավարտից հետո, որպես արտակարգ անհրաժեշտության հիմնադրամ, մնաց ամերիկյան միսիոներական կազմակերպության տրամադրության տակ: "Պետք է նշել, որ գումարները հիմնականում հավաքվել էին Միացյալ Նահանգների բողոքական և ավետարանական եկեղեցիների միջոցով"[4]:

"Մարդ արարածներ էին սովամահ լինում, - հետագայում գրում էր Կլարա Բարտոնը, - և նրանց հնարավոր չէր հասնել: Առաջին կոտորածներից ի վեր որևէ լուր չկար հազարավոր քաղաքներից ու գյուղերից, որոնց վրայով կրակ ու սուր էր անցել, և միայն Կարմիր խաչն էր, որ կարող էր նրանց հասնելու ինչ-որ հույս տածել: Ուրիշ որևէ մեկը դաշտային աշխատանքի պատրաստ չէր. այն ուներ փորձված դաշտային աշխատողներ, և Թուրքիան Կարմիր խաչի պայմանագրի ստորագրող պետություններից էր:" Բացի այդ, ստեղծված առիթը հնարավորություն էր տալիս Կլարա Բարտոնին լռեցնելու վերջերս իրեն և Կարմիր խաչին քննադատողներին, ապացուցելու, որ մարդկանց օգնությունն իր կյանքի և իր ղեկավարած կազմակերպության առաքելությունն է, և որ միայն Ամերիկյան Կարմիր խաչը կարող էր իրականացնել նման բարդ խնդիր[5]:

Օսմանյան կայսրության կառավարությունը կասկածանքով էր վերաբերվում յուրաքանչյուր օգնության ծրագրին՝ արտասահմանից, տեսնելով դրանցում քաղաքական բանսարկություն կամ միջամտություն իր ներքին գործերի մեջ: Թուրք իշխանությունները հայտարարում էին, որ օգնության նպատակով երկիր թույլ չեն տալու մուտք գործել "նույնիսկ այնպիսի համբավ ունեցող կազմակերպությանը, ինչպիսին է Կարմիր խաչը": Մասնավորապես, Օսմանյան կայսրության դեսպանությունը Վաշինգտոնում փաստորեն մերժել էր մուտքի արտոնություն տրամադրել Ամերիկյան Կարմիր խաչի ներկայացուցիչներին: Սակայն Կլարա Բարտոնը, հավատալով միջազգային պայմանագրի ուժին, չնայած իր հասակին և վատառողջ վիճակին, որոշեց անձամբ մեկնել Կոստանդնուպոլիս և բանակցել Բարձր Դռան հետ: Նա սկսեց իր ճամփորդությունը 1896 թ. հունվարի 22-ին անորոշության զգացումով, քանի որ վստահ չէր, թե արդյո՞ք Բարձր Դուռը թույլ

տալու է Կարմիր խաչի պատվիրակությանը մուտք գործել երկիր, թե ոչ: Փետրվարի 6-ին Ամերիկյան Կարմիր խաչի պատվիրակությունը ժամանեց Լոնդոն, որտեղ Կլարա Բարտոնը Կոստանդնուպոլսից լուր ստացավ այն մասին, որ Միացյալ Նահանգների դեսպանության ղեկավար, նախարար Ալեքսանդր Տերրելը կարողացել է համոզել Բարձր Դռանը թույլ տալ Ամերիկյան Կարմիր խաչի պատվիրակությանը մուտք գործել Թուրքիա: Այստեղից էլ, Վիեննայի ճանապարհով, պատվիրակությունը մեկնեց Թուրքիա և Կոստանդնուպոլիս հասավ փետրվարի 16-ին: Կլարա Բարտոնին ուղեկցում էին Ջուլիան Բ.Հաբբելը, պ-ն Փուլմանը, Չառլզ Կինգ Վուդը և հատուկ դաշտային գործակալ Էդուարդ Մ.Վիստարը: Հետագայում պատվիրակությանը միացան լեզվաբան Էռնեստ Մեյսոնն ու իր մայրը, ինչպես նաև ամերիկացի բժիշկ Այրա Հարրիսը[9]:

Կոստանդնուպոլիս ժամանելուն պես Կլարա Բարտոնը հանդիպումներ ունեցավ Միսիոներական խորհրդի անդամների, ամերիկյան Ռոբերտ քոլեջի տնօրեն Ջորջ Ուոշբըրնի հետ: Այնուհետև Ալեքսանդր Տերրելի և նրա թարգմանիչ, փորձված դիվանագետ Գարգիուլոյի ուղեկցությամբ Կլարա Բարտոնը հանդիպում ունեցավ Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Թյուֆիկ փաշայի հետ: Հանդիպման սկզբում Տերրելը Միացյալ Նահանգների կառավարության անունից իր համակրանքն ու մտահոգությունը հայտնեց կոտորածների արդյունքում երկրի ներքին շրջաններում տառապյալ ժողովրդի կացության, միաժամանակ հավաստիացնելով, որ օգնության խնդիրը բացառապես մարդասիրական բնույթ ունի և չի հետապնդում քաղաքական, ազգային կամ կրոնական նպատակներ: Իր խոսքում Կլարա Բարտոնը նշեց. "Մենք բերել ենք միմիայն ինքներս մեզ, մեզ չի ուղեկցելու թղթակից և մենք տուն հասնելուն պես գիրք չենք գրելու Թուրքիայի մասին: Մենք դրա համար չենք այստեղ: Քողարկված ոչինչ չի արվելու: Մեր կողմից ուղարկվելիք բոլոր հաղորդագրությունները գնալու են բաց, ձեր հեռագրատան միջոցով, և ես ուրախ կլինեմ, եթե ձեր բոլոր գրվածները տեսանելի լինեին ձեր կառավարության համար: Իհարկե ես այժմ չեմ կարող ասել նրանց բովանդակության մասին, բայց կարող եմ երաշխավորել նրանց ճշմարտության, անկեղծության և ազնվության համար, և թե ինչպես են դրանք օգտագործվելու յուրաքանչյուր պատասխանատու մարդու կողմից: Ես երբեք չեմ քննարկելու կամ թույլատրելու ծածուկ կամ գաղտնի գործողություն ձեր կառավարության նկատմամբ, և պետք է ներեք ինձ, փաշա, եթե ասեմ, որ փոխադարձաբար նույն վերաբերմունքն էլ ձեզնից եմ սպասելու": Այս խոսքերից անմիջապես հետո Թյուֆիկ փաշան պատասխանում է. "Եվ դա դուք կունենաք: Մենք հարգում ենք ձեր դիրքը և ձեր աշխատանքը:"[10]

Նկատի առնելով Ամերիկյան Կարմիր խաչի և նրա ղեկավար Կլարա Բարտոնի միջազգային համբավն ու հեղինակությունը, Բարձր

Ռուսն իր համաձայնությունն է տալիս ամերիկյան կազմակերպության կողմից հայկական կոտորածների արդյունքում տուժած բնակչության և շրջանների համար առաջարկվող օգնության և գյուղատնտեսության վերականգնման ծրագրերին[11]: Միաժամանակ կառավարության նախապայմանն այն էր, որ ծրագիրը չի կարող իրականացվել Կարմիր Խաչի նշանաբանով, այլ պետք է ձևակերպվի որպես Կլարա Բարտոնի անձնական արշավախումբ: Բարձր Դուռը մտահոգ էր, որ մահմեդական բնակչությունը խաչն ընկալում է որպես քրիստոնեության խորհրդանիշ, ինչը կարող էր էլ ավելի խորացնել արդեն իսկ պայթյունավտանգ կրոնական թշնամությունը: Արշավախմբերի անվտանգությունն ապահովելու նպատակով կառավարությունը յուրաքանչյուրին կցում է զինվորական հատուկ ուղեկցորդներ[12]: Կլարա Բարտոնը հետագայում նշում էր, որ Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի հետ իր զրույցն առաջին և վերջին հանդիպումն էր թուրք պաշտոնյայի հետ Կոստանդնուպոլիս այցելության ժամանակ: Բարձր Դուռն ու տեղական իշխանությունները որևէ դժվարություն չհարուցեցին առաքելության ողջ ընթացքում[13]:

Նախնական ծրագրի համաձայն, արշավախումբը պետք է ճանփորդեր Սև Ծովի երկայնքով դեպի արևելք և այնուհետև ցամաքային ճանապարհով հասներ Հայաստան: Սակայն Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆիլիպ Քարրին խորհուրդ է տալիս առաջին հերթին օգնություն ցուցաբերել Մարաշի և Զեյթունի բնակչությանը, որը ենթարկված էր վտանգավոր համաճարակների[14]: Արդեն իսկ մարտի 18-ին Կլարա Բարտոնի գլխավոր օգնական, Թուրքիայում Ամերիկյան Ազգային Կարմիր Խաչի կողմից գլխավոր դաշտային գործակալ նշանակված Ջուլիան Հաբբելը մեկնեց Ալեքսանդրետ, որտեղ սկսեց քարավաններ պատրաստել դեպի Այնթապ, ուր որոշված էր հիմնել հարավային դաշտի կենտրոնակայանը: Այստեղից էլ նրանք ուղևորվեցին հյուսիս-արևելք դեպի Խարբերդ, Մարաշ, օգնություն հասցնելով քաղաքներում պատսպարված հազարավոր փախստականներին: Կլարա Բարտոնը մնաց Կոստանդնուպոլսում իր ֆինանսական քարտուղար Փուլմանի հետ, որպեսզի տեղում համադրի ծրագրի իրականացման գործընթացը: Կոտորածներին հետևեցին բծավոր տիֆի, դիզենտերիայի և ծաղկի համաճարակները: Մասնավորապես, Զեյթունում և Մարաշում ծագած համաճարակի առաջն առնելու նպատակով հրավիրվեց Արևելքում ժանտախտի և համաճարակների հայտնի մասնագետ Այրա Հարրիսը, որի կենտրոնակայանը գտնվում էր Սիրիայի Տրիպոլի քաղաքում: Հիվանդների թիվը երկու քաղաքներում հասնում էր շուրջ 10 հազարի, իսկ մահացողների թիվն օրըստօրե մեծանում: Սակայն շնորհիվ ամերիկացի մասնագետների գործունեության շատ շուտով հիվանդների թիվը և մահացու դեպքերը կտրուկ նվազեցին[15]:

Կարմիր խաչը չորս արշավախումբ գործուղեց "Հայկական

Թուրքիա, Միջերկրականից Սև ծով ընկած տարածաշրջանները, հասցնելով անհրաժեշտ օգնություն, վերանորոգելով տներ և վերաբնակեցնելով ողջ մնացածներին: Առաջին արշավախումբը ղեկավարում էր Ջուլիան Բ. Հաբբելը, երկրորդը՝ Էդուրդ Մ. Վիստարը, երրորդը՝ Չարլզ Կինգ Վուդը, չորրորդը՝ Այրա Հարրիսը: Արշավախմբերն այցելեցին Քիլիս, Այնթապ, Մարաշ, Զեյթուն, Բիրեջիկ, Ուրֆա, Դիարբեքիր, Ծարլին, Խարբերդ, Պալու, Մալաթիա, Արաբկիր, Էգին, Սըվազ, Տոկատ և Սամսուն: Երբ փախստականները կրկին վերահաստատվեցին իրենց տներում և գյուղերում, նրանք ապահովվեցին սննդամթերքով, դեղամիջոցներով, հագուստով, սերմնահատիկով, մանգաղներով, ջուլհակահաստոցներով և անիվներով: Նույնիսկ քրդերի կողմից գողացված անասունները գնվեցին և վերադարձվեցին տերերին: Դրան գումարած գյուղացիներին տրվեց շուրջ երկու հազար գութան քաշող եզ և զանազան գյուղատնտեսական գործիքներ, մասնավորապես, շուրջ 500 գութաններ: Տեղերում, գյուղերում և շրջաններում Կարմիր Խաչի ֆինանսական քարտուղարին հանձնարարվել էր նաև ուղարկել 5 հազար լիրա (22 հազար դոլար) պատվելի Գեյթսին, որը պետք է բաժաներ արշավախմբերի միջև անասուն գնելու և 1897թ. բերքահավաքն ապահովելու համար[16]:

Կլարա Բարտոնի հրահանգով, օգնության բաժանումը տեղերում իրականացվում էր գյուղական կամ շրջանային հանձնախմբերի միջոցով, որոնց կազմում ընդգրկված էին հիմնականում տեղական եկեղեցու առաջնորդներ և ճանաչված առևտրականներ, որոնք քաջատեղյակ էին ժողովրդի կարիքներին և սովորություններին: Ըստ Բարտոնի, ամենից դժվար խնդիրը կոտորածներից փրկվածների անտարբերությունն էր աշխատանքի և ապագայի նկատմամբ, ինչը սարսափելի վշտի և վախի հետևանք էր: Կարմիր Խաչի ներկայացուցիչները մտահոգ էին, որ շարունակական օգնությունը կարող էր էլ ավելի խորացնել այդ իրավիճակը, ինչի արդյունքում մարդիկ կհայտնվեին ծայրահեղ չքավորության վիճակում: Այդ իսկ պատճառով ամերիկացիները զգալի աշխատանք տարան նաև մարդկանց աշխատանքով ապահովելու և համայնքների տնտեսական կյանքը վերականգնելու ուղղությամբ[17]:

Թուրքիայում Ամերիկյան Կարմիր Խաչի գործունեության ողջ ընթացքում առաքելությանը մեծ օգնություն և օժանդակություն ցուցաբերեցին ամերիկյան միսիոներները: Մասնավորապես, Կլարա Բարտոնն իր զեկույցում հիշատակում էր Հենրի Դուայթի, Ջոզեֆ Գրինի, Ջորջ Կնեպպի, Ջորջ Ուոշբռնի, Գրեյս Քիմբալի, տիկին Լիի, Ռոբերտ Քոլեջի հիմնադիր, վետերան միսիոներ Սայրուս Համլինի դուստրերի և այլոց անունները[18]:

Սակայն այս ընթացքում ամեն ինչ չէ, որ կատարվեց Կլարա Բարտոնի ցանկությամբ: Միացյալ Նահանգներից բազմաթիվ հոռետեսական հեռագրեր և նամակներ էին ստացվում իր հասցեով առ այն, թե

իրր օգնության առաքելությունը պետք է դադարեցնել, քանի որ թուրք կառավարությունը խոչընդոտում է Կարմիր խաչի գործունեությունը, արշավախմբերի երթուղիները ընտրված են եղել սխալ, ֆինանսական միջոցները հարկավոր են Կարմիր խաչին ԱՄՆ-ում կարիքները հոգալու համար և այլն: Ծրագրի ներկայացուցիչները դժգոհ էին այն բանից, որ առաքելության հաջողությունը կապվում էր ամբողջությամբ Կլարա Բարտոնի, այլ ոչ թե Ամերիկյան Կարմիր խաչի կամ ներկայացուցիչների անվան հետ: Վիրավորված և զայրացած նման վերաբերմունքից, Կլարա Բարտոնը հեռացիր իրեն Ամերիկյան Կոմիտեներին, "ազատելով նրանց հետագա ներկայացուցչություններ կատարելու անհրաժեշտությունից:" "Մենք կավարտենք մեր աշխատանքը առանց հետագա օժանդակության," - գրում էր նա[19]:

Կլարա Բարտոնի գործունեությունը քննադատության ենթարկվեց նաև ԱՄՆ-ի հայ համայնքի որոշ ներկայացուցիչների կողմից, որոնք գտնում էին, որ թեև Ամերիկյան Կարմիր խաչի առաքելությունը պետք է սահմանափակվեր միմիայն Օսմանյան կայսրության հայ բնակչությանն ուղղված օգնությամբ, արշավախմբի անդամներն օժանդակում էին նաև թուրք ժաժեռյալներին: Նման քննադատությամբ աչքի ընկավ այդ օրերին նաև "The Christian Herald" օրաթերթը, որը 50,182 դոլար էր հավաքել կոտորածներից տուժած հայերին օգնություն տրամադրելու նպատակով: Հետագայում Կլարա Բարտոնի կյանքի ու գործունեության մասին ուսումնասիրություններ կատարած որոշ հեղինակներ գնահատում էին առաքելության կողմից թուրք բնակչությանը ցուցաբերած օգնության հանգամանքը Կարմիր խաչի բոլոր կարիքավորներին հասնելու սկզբունքով, ինչպես նաև ոչ միայն հայերին օժանդակելու, թուրք պաշտոնյաների հետ հնարավոր պայմանավորվածությամբ[20]:

ԱՄՆ վերադառնալուց մի քանի ամիս անց Պետական Դեպարտամենտը Կլարա Բարտոնին հանձնեց սուլթան Աբդուլ Համիդի կողմից իրեն շնորհված Շեֆակաթի երկրորդ աստիճանի շքանշանը` իր կատարած աշխատանքի համար[21]: Որոշ հեղինակներ համարում են, որ Կլարա Բարտոնի առաքելության անսպասելի արդյունքներից մեկն այն էր, որ ինքը ակամա դարձավ բարի կամքի դեսպան և մեծապես նպաստեց թուրք-ամերիկյան հարաբերությունների բարելավմանը[22]:

Չնայած քննադատությանը և տարբեր խոսակցություններին, Կլարա Բարտոնը բարձր էր գնահատում Ամերիկյան Կարմիր խաչի կողմից իրականացված առաքելությունը, որի արդյունքում հնարավորությունների սահմաններում ամեն ինչ արվել էր հազարավոր կյանքեր փրկելու համար: Իր "Կարմիր խաչի պատմությունը" գրքում նա մեծ երախտագիտությամբ էր արտահայտվում Ամերիկյան Կարմիր խաչի իր աշխատակիցների մասին, որոնք հինգ ամիսների ընթացքում չափազանց ծանր և վտանգավոր պայմաններում նվիրումով կատարեցին իրենց պարտքը` 1894-96 թթ. հայկական կոտորածներից տուժած-

ների օգնություն ցուցաբերելու գործում: Կլարա Բարտոնը մեծ ակնածանքով էր արտահայտվում նաև Կոստանդնուպոլսում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցիչ Ալեքսանդր Տերրելի մասին, որն արեց հնարավոր ամեն ինչ՝ Ամերիկյան Կարմիր խաչի առաքելությունը հաջողությամբ իրականացնելու համար[23]:

Կլարա Բարտոնը վերադարձավ Լոնդոն սեպտեմբերի 2-ին: Այստեղ նա տեղեկացավ Բանկ Օտտոմանի միջադեպի և դրան հետևած Կոստանդնուպոլսի հայ բնակչության նոր ջարդի մասին: Նա հետաձգեց իր հետագա ուղևորությունը դեպի ԱՄՆ, անմիջապես հեռագրեր հղեց Վաշինգտոն և Կոստանդնուպոլիս, առաջարկելով հարկ եղած դեպքում վերադառնալ Թուրքիա և շարունակել Ամերիկյան Կարմիր խաչի գործունեությունը: Սակայն այս անգամ նրան խորհուրդ չտրվեց վերադառնալ Կոստանդնուպոլիս[24]:

Վաշինգտոնում նրա պատվին տրվեց շքեղ ընդունելություն "Shoreham" հյուրանոցում, որը կազմակերպել էին այն անհատները, որոնք նվիրատվություններ էին կատարել Կարմիր խաչի համար՝ այդ դժվարին առաքելությունն իրագործելու նպատակով[25]:

Կլարա Բարտոնն ամենևին էլ ավարտված չէր համարում Օսմանյան կայսրության հայ բնակչության օգնության գործը: Նա գտնում էր, որ Հիսուս Քրիստոսի դավանանքին պատկանող հայերը թողնված են կիսավայրագ քաղաքակրթության քմահաճույքին, նրանցից 100-200 հազարը կարիք ունեն ապաստանի, սննդի, դեղամիջոցի և ընդհանրապես, քաղաքակիրթ աշխարհի կարեկցանքին և բարերարությանը: Ըստ Կլարա Բարտոնի, եթե այդ մարդկանց շուտափույթ կերպով օժանդակություն չցուցաբերվի, մինչև մյուս տարվա մայիսը նրանցից շուրջ 50 հազարը կկնքեն իրենց մահկանացուն սովից և զրկանքներից[26]:

Կլարա Բարտոնի և նրա գործակիցների Օսմանյան կայսրությունում կատարած մարդասիրական առաքելությանը վերաբերող զեկույցները հրատարակվել են մեկ գրքով Վաշինգտոնում՝ 1896 թ. վերջին (America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, DC, 1896): Այդ զեկույցները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ մանրամասն նկարագրում են կոտորածներից տուժած հայ բնակչության վիճակը և ամերիկյան արշավախմբերի կողմից հայերին ցուցաբերած օգնությունը: Գրքի թարգմանությունն ու հրապարակումը Հայաստանում կարևոր է ինչպես հայ ընթերցողին և մասնագետներին այդ օրագրերին ծանոթացնելու, այնպես էլ Կլարա Բարտոնի անունը հավերժացնելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Charles Sumner Young, Clara Barton. A Centenary Tribute, Boston, 1923, p. 342.
2. Marshall W. Fishwick, Illustrious Americans: Clara Barton, Morristown, New Jersey, 1966, p. 222.
3. Percy H. Epler, The Life of Clara Barton, New York, 1915, p. 276; David H. Barton, Clara Barton. In the Service of Humanity, Westwood, Connecticut and London, 1995, p. 128.
4. Percy H. Epler. Op.cit. p. 277.
5. America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, DC, 1896, p. 3, 27.
6. Blanche Colton Williams, Clara Barton. Daughter of Destiny, Philadelphia, New York, London, 1941, p. 338-339; Clyde E. Buckingham, Clara Barton. A Broad Humanity. Philantropic Efforts on Behalf of the Armed Forces and Disaster Victims. 1860-1900, Alexandria, VA, 1980, p. 259-260; George H. Pullman, American Relief Expedition to Asia Minor Under the Red Cross, Washington D.C., 1896, pp. 50-51.
7. America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, DC, 1896, p. 4; Percy H. Epler. Op.cit. p. 277; William E. Barton. Clara Barton. Founder of the American Red Cross, vol. II, Boston and New York, 1922, p. 245.
8. David H. Barton, Op. Cit., p. 129.
9. Percy H. Epler. Op.cit., p. 277; Blanche Colton Williams. Op.cit., p.339; William E. Barton. Op. cit., p. 247-248.
10. America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, DC, 1896, p. 7-8; Percy H. Epler. Op.cit. p. 277-278; Marshall W. Fishwick, Op. cit., p. 76; William E. Barton. Op. cit., p. 249-250.
11. Jeannette Covert Nolan, The Story of Clara Barton of the Red Cross, New York, 1941, p. 268.
12. Clyde E. Buckingham, Op. Cit., p. 260; William E. Barton, Op.cit., p. 250-251.
13. America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, DC, 1896, p. 10, 29.
14. America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, DC, 1896, p. 16.
15. Marshall W. Fishwick, Op.cit., p. 223.
16. Percy H. Epler. Op.cit. p. 279-280.
17. Clyde E. Buckingham, Op. Cit., p. 261.
18. William E. Barton. Op.cit., p. 252-253.
19. Blanche Colton Williams, Op.cit., p.340-341; David H. Barton, Op. cit., p. 130; William E. Barton. Op.cit., p. 254.
20. Clyde E. Buckingham, Op. cit., p. 262-263.
21. Blanche Colton Williams, Op.cit., p.340-341; David H. Barton, Op. cit., p. 130; William E. Barton. Op.cit., p. 254.
22. David H. Barton, Op. cit., p. 130.
23. Percy H. Epler. Op.cit. p. 280-281.
24. America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, DC, 1896, p. 31-32.

25. Percy H. Epler. Op.cit., p. 280-281.
26. America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, DC, 1896, p. 44.

ԱՐՄԻՆԵ ՅԱԿՈԲՅԱՆ

ՄԱՏԹԵՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ (1908-1909թթ.)

1908թ. արևմտահայ իրականության մեջ տեղի ունեցավ իրադարձություն, որն աննախադեպ էր 1863թ. Ազգային սահմանադրության ընդունումից ի վեր: Նախորդ պատրիարք Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանը (1894-1896թթ.) վերընտրվեց Կ.Պոլսի հայոց պատրիարք: Դա վառ ապացույցն էր այն ոգևորության և խանդավառության, որով համակված էին արևմտահայության բոլոր խավերը[1]:

Իր պատրիարքության ժամանակահատվածում ժողովրդի կողմից մեծ հեղինակություն և հարգանք վայելելով, Իզմիրլյանը գործում էր ի նպաստ Հայկական հարցի բարձրացման և «թուրքահայոց» խնդիրների լուծման: Այդ էր պատճառը, որ 1896թ. սուլթանական կառավարության հարկադրանքով նա ստիպված էր հրաժարական տալ և աքսորվել Երուսաղեմ[2]: Այսպիսով, երիտթուրքական հեղաշրջումը և Սահմանադրության ընդունումը հնարավորություն տվեցին արևմտահայությանը նոր իշխանությունների օրոք արտահայտելու իր գնահատանքը «Երկաթյա պատրիարքի» հանդեպ:

Գործող պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը (1896-1908թթ.) առանձնանում էր իր հեռատես և խաղաղասեր քաղաքականությամբ: Կոտորածներին հաջորդած ծանր ժամանակահատվածում ձեռք բերելով իշխանությունների վստահությունը, նա աշխատում էր արևմտահայության համար կայուն և անվտանգ կարգավիճակ ապահովել[3]: Սակայն, ինչպես Օրմանյանն է նշում, նախկին իշխանության օրոք «գործունեայ դեր վարողները, պետք է նոր կացութեան մէջ քաշուէին»: Համարելով սա բնականոն ընթացք, նա միևնույն ժամանակ փաստում է, որ նմանօրինակ փոփոխություններ տեղի չունեցան հույն և կաթոլիկ պատրիարքների հարցում[4]: Շարունակելով իր հետևողական գործելաոճը, պատրիարքն աշխատում էր չթողնել պատրիարքարանը «անտերունչ» վիճակի մեջ, ավարտել սկսած գործերը, այնուհետև պաշտոնական հրաժարական տալ: Այդուհանդերձ, «ժողովուրդը ծափահարում էր Սահմանադրությունն ընդունած սուլթանին, միևնույն ժամանակ հրաժարական էր պահանջում սուլթանի կողմից ընտրված Օրմանյանից», վկայում է «Նոր Դար» շաբաթաթերթը[5]: Այսպիսով ձևավորվում է անհանդուրժողական մի մթնոլորտ, երբ մի կողմից պատրիարքը փորձում էր հետևել գործերի ընթացքին, մյուս կողմից «հեղափոխականներեն» տրամադրված ժողովուրդը անհապաղ հրաժարական էր պահանջում:

1908թ. հուլիսի 16-ի Հայոց Ազգային ժողովի նիստում Օրման-

յանը տվեց իր պաշտոնական հրաժարականը: Նույն օրն էլ Զմյուռնիայի առաջնորդ Եղիշե եպիսկոպոս Դուրյանը նշանակվեց տեղապահ, մինչ նոր պատրիարքի ընտրվելը[6]: Վերջինս համարվում էր Իզմիրլյանի «ձեռնասունն» ու հետևորդը և առավելապես գիտնական էր ու մտավորական, ունի բազմաթիվ աշխատություններ և ուսումնասիրություններ[7]: Իր տեղապահության երեք ամիսների ընթացքում (մինչև հոկտեմբերի 31-ը) Եղիշե եպիսկոպոսը գործում և առաջնորդվում էր Իզմիրլյանի խորհուրդներով և առանձնահատուկ փոփոխություններ չիրականացրեց[8]:

Հարկ է նշել, որ տվյալ ժամանակաշրջանում նախապատրաստվում էին նաև կաթողիկոսական ընտրությունները: 1907թ. վախճանվել էր Մկրտիչ Խրիմյանը և Մայր Աթոռի կաթողիկոսական գահը ավելի քան մեկ տարի թափուր էր: Պատճառը նաև Հայոց եկեղեցու նկատմամբ ցարական կառավարության կողմից իրականացվող բարեփոխումներն էին[9]: Առաջադրվող թեկնածուներից ամենամեծ ժողովրդականություն վայելում էր Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանը[10]: Հետևաբար երիտթուրքական կառավարությունը, որի քաղաքական նպատակներին չէր համապատասխանում Իզմիրլյանի՝ իր պատրիարքության առաջին շրջանում վարած գործունեության սկզբունքները, այնուամենայնիվ գիտակցում էր, որ նրա պատրիարքության երկրորդ շրջանը երկար չէր տևելու: Ուստի կառավարությունը ոչ միայն քաջալերում, այլև արագացնում էր պատրիարքական ընտրությունները: Այսպես, Ազգային ժողովի ատենագրություններում նշվում է կառավարությունից ստացված նամակի մասին, որով զգուշացվում է չուշացնել պատրիարքական ընտրությունները[11]: Այնուհետև, Երուսաղեմից Իզմիրլյանի վերադարձի կապակցությամբ կազմակերպված տոնակատարությանը մասնակցում էին նաև թուրք պաշտոնյաներ[12]:

Նախկին պատրիարքն իր հերթին, հատուկ նամակով ողջունում է ազատությունը, երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կազմակերպությանը և սուլթանին: Նամակի հայատառ թուրքերենով պատճեն գտնվում է Մատենադարանում, Իզմիրլյանի անձնական արխիվում: Դա փառաբանման և երախտիքի մի ուղերձ է, որով Իզմիրլյանը իր և պատրիարքարանի պատրաստակամությունն է արտահայտում հանուն օսմանյան միասնության և բարգավաճման: Բոլոր օսմանցիներին շնորհավորում է այն «արևածագի» առիթով, որ բերեց ազատությունը[13]:

Հայոց Ազգային ժողովը, հետևելով ընդունված կանոնակարգին, հոկտեմբերի 8-22-ը իրականացրեց արդեն ձևական բնույթ կրող ընտրությունները: Ժողովը միաձայն Իզմիրլյանին ընտրեց Կ.Պոլսի հայոց պատրիարք: Ընթացակարգի համաձայն, Բ.Դռան կողմից էր տրվում վերջնական հաստատումը, ինչը ստացվեց հոկտեմբերի 26-ին: Սակայն, ինչպես վերը նշել էինք, սկսվել և արդեն ընթանում էին կաթողիկոսական ընտրությունները: Արդյունքում, իր պատրիարքական ուխ-

տի (հոկտեմբերի 31-ին) հաջորդ օրը, Իզմիրլյանն ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս[14]:

Իր պատրիարքության շատ կարճ ժամանակահատվածում (մինչև 1909թ. փետրվարի 10-ը) «երկաթյա պատրիարքը» շարունակեց իր ազգանպաստ գործունեությունը՝ այս անգամ փորձելով օգտագործել իշխանությունների բարեհաճությունն ու վստահությունը:

Երբ պատրիարքը հրավիրվում է Բ.Դուռ սուլթանի և նախարարների կողմից ընդունելության, փոխադարձ վստահությունների հետ մեկտեղ ներկայացնում է արևմտահայության խնդիրները: Մինչ Իզմիրլյանի վերընտրությունը, Ազգային ժողովի կողմից կառավարությանն առաջարկվել էր ստեղծել քննիչ հանձնաժողով՝ հայաբնակ գավառներում տեղի ունեցող անօրենությունները կարգավորելու նպատակով: Պատրիարքը նորից բարձրացնում է այդ հարցը: Սուլթանի և բոլոր նախարարների կողմից տրվում են խոստումներ, որ «ջանք չեն խնայի հայոց երջանկության համար»[15]:

Իշխանությունները արտաքուստ փորձում են հոգալ արևմտահայության խնդիրները. նշված հանձնաժողովը ստեղծվում է: Սակայն նրա կազմում ընդգրկված էր միայն մեկ հայ, իսկ մնացած անդամները նախկին ռեժիմի ներկայացուցիչներ էին: Փաստորեն, դժվար էր ակնկալել, որ այս հանձնաժողովը բարեփոխումներ կիրականացնի[16]:

Պատրիարքը որոշ վարչական փոփոխություններ իրականացրեց պատրիարքարանում՝ ներքին խնդիրները ավելի արդյունավետ քննելու և լուծելու նպատակով: Որոշվեց Վարչական ժողովները պատրիարքարանում գումարել, հաստատել լրագրական ժամանակավոր դիվան, որտեղ ներկայանալու էին լրագրերի խմբագիրները լուր ստանալու համար[17]:

Հարկ է նշել, որ երիտթուրքական հեղափոխության արդյունքում Օսմանյան կայսրությունում ակտիվացել էր հասարակական-քաղաքական կյանքը: Կառավարությունը համագործակցելով հպատակ ժողովուրդների ղեկավար ուժերի հետ ձգտում էր օգտագործել նրանց ներուժը[18]: Այդ գործընթացին ներգրավված էր նաև հայ հոգևորականությունը. եկեղեցիներում լսումներ և ժողովներ էին կազմակերպվում, որոնց մասնակցում էին նաև մահմեդականները: Հիմնական նպատակը երիտթուրքերի հռչակած գաղափարների մեկնաբանումն ու տարածումն էր[19]:

Այդուհանդերձ արևմտահայության խնդիրները օրեցօր բազմապատկվում էին: Հայաբնակ գավառներից պատրիարքարանը ստանում էր հայերի սպանությունների, առևանգումների, խոշտանգումների մասին լուրեր: Գավառների հոգևոր առաջնորդները ծանուցագրեր էին ուղարկում տիրող ծանր իրավիճակի և անօրենությունների մասին[20]:

Պատրիարքի անմիջական միջնորդությամբ որոշ միջադեպեր կարգավորվում են: Սակայն ակնհայտ էր, որ նոր կառավարությունը հպատակ ժողովուրդների նկատմամբ չի իրագործելու իր հռչակած

«ազատությունը» և «արդարությունը»:

Երիտթուրքական հեղափոխության խանդավառությունը Օսմանյան կայսրությունում հետզհետե տեղի էր տալիս: Կայսրության բաղադրիչը կազմող ազգային փոքրամասնությունների նկատմամբ երիտթուրքերի վարած քաղաքականությունը սկզբունքայնորեն չէր տարբերվում Աբդուլ Համիդյան քաղաքականությունից[27]:

Իհարկե հեղափոխականորեն տրամադրված արևմտահայության համար հարկադրաբար հրաժարական տված պատրիարքին վերընտրելու հնարավորությունը առաջընթաց քայլ էր ընկալվում: Ժողովրդի բոլոր խավերը ակնկալում էին, որ նոր իշխանությունների օրոք «Երկաթյա պատրիարքը» կիրագործի ազգային հարցի և տիրող անօրինականությունների լուծմանն ուղղված իր քաղաքականությունը: Իշխանությունների կողմից հեղափոխական խոստումները, դրանց արտաքուստ դրսևորումները և Իզմիրլյանի սկզբունքային գործելաոճը հիմք էին տալիս կարծելու, որ ի վերջո արևմտահայության համար սկսվել էր խաղաղ և ապահով ժամանակաշրջան: Այդուհանդերձ դա տեղի չունեցավ: Հիմնական պատճառը, ինչպես վերը նշել էինք, երիտթուրքերի կողմից սուլթանական կառավարության քաղաքականության իրագործման շարունակականությունն էր: Իր պատրիարքության կարճ ժամանակահատվածում Իզմիրլյանը քայլեր ձեռնարկեց կարգավորելու անհապաղ լուծում պահանջող որոշ խնդիրներ: Սակայն տարեց և աքսորի հետևանքով տկարացած առողջությամբ պատրիարքի համար նույնիսկ հստակ մշակված և համակարգված քաղաքականության միջոցով գործնականորեն անհնար էր հիմնավորապես բարեփոխել արևմտահայության կյանքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Հ Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2001, էջ 5828:
2. Հակոբյան Ա., Կ. Պոլսի պատրիարք Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանի հրաժարականի պատճառների հարցի շուրջ, Երիտասարդ արևելագետների հանրապետական XXVI գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 2005, էջ 102-107:
3. Պողոսյան Ս. Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2-րդ, գիրք առաջին, Երևան, 2001, էջ 96:
4. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Հ Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2001, էջ 5811:
5. «Նոր Դար», N 3, 26/ X, 1908:
6. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Հ Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2001, էջ 5813:
7. Գաբամաճեան Ս., Անճապարտի Տ.Տ. Մատթեոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան, Բարձրաշնորհ Տ. Եղիշէ ս. եպիսկոպոս Դուրեան. Կ. Պոլիս, 1908, էջ 40:
8. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Հ Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2001, էջ 5830:
9. Առավել մանրամասն տես՝ Тунян В.Г., Правление католикоса Измирлиана (1908-1910гг.), Ереван, 2004, с. 13.
10. «Նոր Դար», N 2, 5/ X, 1908:
11. «Ժամանակ», N4, 18/X , 1908.:
12. Koçaş S., Tarih boyunca Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1967, s. 166.
13. Մատենադարան, Արխիվ Իզմիրլյան Կաթողիկոսի, թղթ. 14 , վավ. N155:
14. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Հ Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին 2001, էջ 5829:
15. «Ժամանակ», N29, 17/XI , 1908:
16. «Ժամանակ», N35, 23/XI , 1908:
17. «Ժամանակ», N17, 5/XI , 1908:
18. Шпилькова В.И., Младотурецкая революция, 1908-1909гг., Москва, 1977, с. 172.
19. «Ժամանակ», N25, 12/XI, 1908:
20. Օրինակները տես՝ «Ժամանակ», N15, 31/X; N20, 6/XI; N23, 10/XI, 1908:
21. Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос в конце XIX – начале XX веков, Ереван, 1988, с. 75.

ԱՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ

1915Թ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼԻՑ.

Բեհաեդդին Շաքիրի այցն արևելյան վիլայեթներ

1915-17թթ. Հայոց ցեղասպանության նախապատրաստական գործընթացը դեռևս ուսումնասիրության կարիք ունեցող մի շարք հարցեր է հարուցում: Հիմնական խնդիրը կապված է արխիվային փաստաթղթերի սակավաթվության հետ, քանի որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության արխիվի ճակատագիրը անհայտ է, գիտական շրջանառության մեջ գտնվող արխիվային նյութերը երկրորդական բնույթի փաստաթղթեր են: Այդ պարագայում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում այդ իրադարձությունների կազմակերպիչների և մասնակիցների հուշերը: Ինչ վերաբերվում է «Իթթիհաթ վե Թերաքքիի» ղեկավարների հուշերին, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք գրվել են առաջին համաշխարհային պատերազմից հետո և հիմնական նպատակ էին հետապնդում արդարացնել այն միջոցները, որոնք կիրառվել են Օսմանյան կայսրության հայ բնակչության դեմ և միաժամանակ մեղքի առյուծի բաժինը կամ հայերի կամ իրենց այլ գործընկերների վրա բարդելն է: Այսպես, Թալեաթ փաշայի կաբինետում արդարադատության նախարար Հալիլ Մենթեշեն իր հուշերում նշում է, որ երբ նա վերադարձավ Բեռլինից Թալեաթը նրան հարցնում է, թե Գերմանիայում հայերի տեղահանությունը ինչ տպավորություն է թողել և ավելացնում. «Հալիլս, ես քո մեղքը ինձ վրա եմ վերցրել: Ասեցի, Հալիլը եթե գա, հոգեվիճակիս վրա ճնշում կգործադրի, թե արի ես գործին վերջ տանք, ասեցի թող դրանից հետո գա, որոշումս կայացրի, ստացվում է սխալվեցի»[1]:

Այնուամենայնիվ, ականավոր իթթիհաթականների հուշերը կարևոր դեր են խաղում հայոց ցեղասպանության կնճռոտ պահերի լուսաբանման խնդրում: Երիտթուրքական վերնախավում տեղեկատվածության տեսակետից առանձնահատուկ տեղ էր գրավում «Թանին» թերթի գլխավոր խմբագիր, «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներսում Թալեաթ փաշայի խմբավորման անդամ Հյուսեյն Ջահիտ Յալչընը: Հյուսեյին Ջահիտը մտերիմ հարաբերություններ ուներ երիտթուրքերի պարագլուխներից Ջավիդի, որի մահապատժից հետո իր վրա վերցրեց նրա երեխաների խնամքը, Բեհաեդդին Շաքիրի, Նազիմի, Իսմայիլ Ջամբոլատի, Զիյա Գյոքալպի և մյուսների հետ: Իր հուշերում Հյուսեյին Ջահիդը դիպուկ բնութագրություններ է տվել իր ճանաչած երիտթուրք առաջնորդներին:

Հյուսեյն Ջահիդի հուշերում կարևոր դրվագներ կան կապված 1915թ. հայերի տեղահանման և ոչնչացման ծրագրի մշակման ու իրա-

գործման խնդրում այս կամ այն անձի խաղացած դերի հետ, ընդորում Հյուսեյին Ջահիդի վկայությունները և պնդումները տարբերվում են մյուս երիտթուրքերի վկայություններից: Այսպես, Հյուսեյին Ջահիդը Հայոց Մեծ եղեռնի ծրագրի հեղինակ համարում է Բեհաեդդին Շաքիրին. «Տեղահանության հարցում Բեհաեդդին Շաքիրի դերը ո՞րն էր: Նույնիսկ ամենահատուկ մեր հանդիպումների ժամանակ այդ հարցը չի մեկնաբանվել, չի պարզաբանվել: Բացահայտ, հստակ մի ապացույց չունեմ, սակայն այլ խնդիրները քննարկելիս, բերանից թռած մի խոսքից, արտահայտված գաղափարից, զսպել չկարողացած ձեռնաշարժումից, կարճ ասած աչքով չտեսնվող, սակայն մարդու մեջ կասկած հարուցող թեթև և նուրբ ապացույցներից իմ մեջ ուժեղ և հստակ մի կարծիք ստեղծվեց, որ տեղահանման գործի ամենամեծ գործիչը և կազմակերպիչը նա է: Կարծում եմ, որ միայնակ արևելյան վիլայեթներում շրջելով հող նախապատրաստելով, սկզբունքը որոշեց և անձնական համոզմունքները իրականացնել աշխատեց, կարևոր պաշտոն զբաղեցնելու պատճառով իր որոշումները որպես կենտրոնական կոմիտեի և կառավարության որոշումներ ներկայացնելով՝ միավորեց և, վերջապես, կառավարությունում եղած որոշ ազդեցիկ ընկերներին էլ իր հետևից տարավ:

Դրա համար, եթե մի օր անհրաժեշտ լինի վերականգնել Բեհաեդդին Շաքիրի հիշատակը, նրա հուշարձանը երախտագիտությամբ բացելու են արևելյան վիլայեթների կենտրոնում», - այսպես է ներկայացնում Հյուսեյին Ջահիդը Բեհաեդդին Շաքիրի դերը Հայոց ցեղասպանության ծրագրի մշակման հարցում[2]: Հյուսեյին Ջահիդը "Իմ ծանոթները" հուշերի գրքում նա երկու առանձնահատկություն է հաղորդում, որոնք թույլ են տալիս հստակ պատկերացում կազմել Բեհաեդդին Շաքիրի անձի մասին: Առաջինը, նա նշում է. «Բեհաեդդին Շաքիրը «Իթթիհատ վե Թերաքքի» խորհրդարանական և կենտրոնական կոմիտեի ժողովներում մշտապես հանդես էր գալիս որպես ամենաարմատական միջոցների ամենաակտիվ կողմնակից: Նրա մտքով անգամ չէր անցնում, որ համաձայնության գալու համար հնարավոր է զոհաբերել գաղափարն ու համոզմունքները: Նրա տեսակետից աշխարհ չկար, դիմացինները գոյություն չունեին, դժվարություն գոյություն չունի, իսկ գոյություն ունի միայն իդեալ և սկզբունք: Եվ այդ ուղղությամբ, առանց ավելորդ մտածմունքների, անհրաժեշտ է քայլել վճռական և վերջնական քայլերով»[3]: Երկրորդը՝ «Նա որևէ բան չի մոռանում և չի ներում: Նրա մտքով չէր անցնում, որ մարդու մոտ թուլության պահեր կարող են լինել»[4]:

Իր մյուս, "Քաղաքական հուշեր" գրքում Հյուսեյին Ջահիդ Յալչինը ավելի հստակ է ներկայացնում Բեհաեդդին Շաքիրի դերը Հայոց ցեղասպանության գործում, հիմնական շեշտը դնելով վերջինիս կողմից հայկական վիլայեթներ կատարած այցելության և հանդիպումներին: Նա գրում է. «երևում է, թե Բեհաեդդին Շաքիրը մի ժամանակ արևել-

յան իբրով շրջելով՝ վալիների, մութասարիֆների և այլ անձանց հետ հանդիպելիս, իր պարտականությունների սահմանը անցնելով, սեփական մտքերը ներկայացրել է որպես Կենտրոնական Կոմիտեի և կուսակցության որոշում և ցանկացած ձևով համոզել տեղական իշխանություններին»[5]:

Հյուսեյին Ջահիդի կողմից ներկայացված Բեհաեդդին Շաքիրի կերպարը ամբողջական չի լինի, եթե չնշենք մի կարևոր հանգամանք ևս, այն է, որ ինքը Բեհաեդդին Շաքիրը գտնվում էր մի այլ երիտթուրք առաջնորդի ազդեցության տակ, որը կարևոր դեր է խաղացել Բեհաեդդին Շաքիրի «Միություն և առաջադիմություն» կազմակերպության ազդեցիկ անդամ դառնալու գործում: Դա դոկտոր Նազիմն է, կամ այլ անվամբ Սելանիկցի Նազիմը: Հայտնի թուրք բանաստեղծ Յահյա Քեմալը անձամբ ականատես է եղել և մանրամասն նկարագրել, թե ինչպես Նազիմի ազդեցության տակ Բեհաեդդին Շաքիրը վերափոխվում, դառնում հայտնի իթթիհաթական: «Թեև ինչպես այդ մարդուն դոկտոր Նազիմը վերափոխեց, ինչպես հայտնի կոմիտեական դարձրեց, դա այլ հուշումս նկարագրելու պատճառով այստեղ էլ չեմ կրկնի: Միայն ասեմ, որ եթե Բեհաեդդին Շաքիրը չծանոթանար դոկտոր Նազիմի հետ, եղած անձը չէր դառնա, արած գործերը չէր անի, ունեցած վախճանը չէր ունենա, այդ ժամանակից ի վեր կապրեր որպես քիչ մարդկանց կողմից ճանաչված մի բժիշկ»[6]:

Նազըմ-Բեհաեդդին Շաքիր տանդեմի ազդեցության հասկանալը կարևոր է ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլ նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության ընդհանուր պատմության հասկանալու տեսակետից: Երիտթուրքական կազմակերպության ներսում եղած խմբավորումների միջև հարաբերությունները և կազմակերպության ընդհանուր քաղաքականության վրա նրանց խաղացած դերը ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ կուսակցության ներսում իրական իշխանությունը գտնվում էր ոչ թե Թալեաթի, ինչպես դա նկարագրվում է, այլ Նազիմ-Բեհաեդդին Շաքիր երկյակի ձեռքում: Իթթիհաթականներն այս երկյակն անվանում էին «դոկտորների խումբ», քանի որ երկուսն էլ մասնագիտությամբ բժիշկ էին[7]: Մինչև 1913թ. այս երկյակի ազդեցությունը հավասարակշռում էր միայն Մահմուդ Շևքեթ փաշայի գլխավորած ռազմական, կամ սպայական թևի ազդեցությամբ: Իթթիհաթի ռազմական թևի ճնշման տակ 1910թ. Թալեաթը ստիպված էր հրաժարական տալ կառավարությունում իր զբաղեցրած պաշտոնից[8]: Թալեաթի թիմին պատկանող առավել ազդեցիկ երկու անձ՝ ֆինանսների նախարար Մեհմեդ Ջավիդը և արդարադատության նախարար Հալիլ Մենթեշեն իրականում հանդիսանում էին ոչ թե նրա, այլ Նազիմի կողմնակիցներ, քանի որ երկուսին էլ երիտթուրքական շարժում ներգրավել էր Նազիմը և երկուսն էլ պատկանում էին կրոնափոխ հրեաների (դյոնմե, սաբեթայիստներ) խմբավորմանը, որի առաջնորդ հանդիսանում էր Նազիմը: Դոկտոր Նազիմը վերահսկում էր այն-

պիսի կարևոր դերում, ինչպիսին է գաղափարախոսությունը: Նույնիսկ Մահմուդ Շևքեթ փաշայի սպանությունից հետո, երբ երկրում հաստատվեց Թալեաթ-Էնվեր-Ջեմալ եռյակի իշխանությունը, դա արտաքին պատկեր էր: Եռյակի երրորդ անդամի՝ Ջեմալ փաշայի ազդեցությունը սահմանափակ էր, իսկ Թալեաթ - Էնվեր խմբավորումների հարաբերությունների հավասարակշռումը նույնպես կապված էր Նազըմ-Բեհաեդդին Շաքիր երկյակից: Բավական է նշել, որ 1916թ. Էնվեր կողմնակից Յաքուփ Ջեմիլի վնասազերծման հաջողությունը նմանապես կապված էր Նազըմի խաղացած դերի հետ:

Նազըմ-Բեհաեդդին Շաքիր երկյակը բանալորոշ դեր խաղաց 1915թ. հայերի տեղահանման և ոչնչացման ծրագրի մշակման ու իրագործման քաղաքականությունում: Դեռևս 1909թ. սկսած Նազըմի մշակում էր Մակեդոնիայի քրիստոնյա բնակչության տեղահանման և մահմեդական բնակչությամբ փոխարինման ծրագիրներ: Մի շարք փաստեր թույլ են տալիս ենթադրել, որ սկսած 1911թ. վերջից 1912թ. սկզբից նման ծրագրեր սկսվեցին մշակվել նաև Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Այդ կոնտեքստում անհրաժեշտ է դիտել Հյուսեյին Ջավիդի կողմից հիշատակվող Բեհաեդդին Շաքիրի այցն արևելյան վիլայեթներ:

Բեհաեդդին Շաքիրի մասին գրված աշխատությունների հեղինակները ուշադրություն են դարձնում այն հանգամանքի վրա, որ 1908թ. հեղաշրջումից մինչև «Հատուկ կազմակերպության» (Teşkilat-ı Mahsusa) կազմակերպության հիմնադրումը, Բեհաեդդին Շաքիրը, լինելով երիտթուրքական կազմակերպության ամենաազդեցիկ անդամներից մեկը, որևէ պաշտոն չի զբաղեցրել, չի եղել ոչ պատգամավոր, ոչ էլ նախարար[9]: ԹՊ վարչապետարանին կից Օսմանյան արխիվում պահպանվող մի փաստաթղթից երևում է, որ Ֆահրի բեյը Շքոդեր քաղաքում գտնվող հիվանդանոցի գլխավոր բժշկի պաշտոնում նշանակվելուց հետո թափուր մնացած Առողջապահության և բժշկության խորհրդի (Meclisi Tibbiye Mülkiye ve Sıhhiyeyi Umumiye) նախագահի պաշտոնում 1910թ. հունիսի 21-ին նշանակվել է դոկտոր Բեհաեդդին Շաքիրը[10]: Բեհաեդդին Շաքիրի նշանակման մասին տեղեկացվել է նաև Ներքին գործերի նախարարությունը, ինչից կարելի է ենթադրել, որ այս խորհուրդը ինչ-որ կապ է ունեցել կամ գտնվել է Ներքին գործերի նախարարության վերահսկողության տակ[11]:

Օսմանյան արխիվում պահպանվող մի այլ փաստաթուղթ ամբողջովին հաստատում է Բեհաեդդին Շաքիրի արևելյան վիլայեթներ շրջագայելու Հյուսեյին Ջավիդ Յալչընի հաղորդած տեղեկությունները, սակայն միաժամանակ վկայում է, որ Ջավիդ Յալչընը կամ չի տիրապետել ամբողջ ինֆորմացիային կամ, ինչը ավելի հավանական է, գիտակցաբար թաքցրել է շատ կարևոր հանգամանք, այն է, որ Բեհաեդդին Շաքիրի այցը արևելյան վիլայեթներ չի եղել անձնական նախաձեռնություն, այլ իրականացվել է Ներքին գործերի նախարարութ-

յան գիտակցությամբ: Հավանական է նաև, որ Հյուսեյին Ջահիդի հաղորդած Բեհաեդդին Շաքիրի այցելությունն արևելյան վիլայեթներ և օսմանյան արխիվի փաստաթղթում նշված շրջագայությունը երկու տարբեր իրադարձություններ են: Անշուշտ, Բեհաեդդին Շաքիրը շատ անգամ այցելել է արևելյան վիլայեթներ: Սակայն մի քանի փաստերի և հետագա իրադարձությունների համեմատությունը ցույց է տալիս որ և Հյուսեյին Ջավիդի, և օսմանյան արխիվի փաստաթղթերը վկայում են նույն այցելության մասին:

1912թ. փետրվարի 12-ին էրզրումի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էլազիգի վալիներին Ներքին գործերի նախարարությունից հղված հեռագրում տեղեկացվում էր, թե «Իթթիհաթ վե Թերաքքիի քարտուղար Բեհաեդդին Շաքիրը այցելելու է ձեր վիլայեթները, ուսումնասիրելու խոլերայի հարցը, որի համաճարակի տարածման հավանականությունը ավելի հնարավոր է դառնում գարնանը (ilkbaharda olabilmek ihtimali olan kolera incelemek üzere)»: Նամակի երկրորդ մասից, որը շատ հետաքրքիր է, տեղեկանում ենք, որ Ներքին գործերի նախարարության Չորրորդ բաժանմունքից Ֆուատ բեյը Բեհաեդդին Շաքիրին առձեռն հանձնելու է չորս հատ փակ ծրար, ուղղված այդ իլերի վալիներին[12]:

Այս նամակը շատ ուշագրավ է մի քանի տեսակետից: Նախ խոսքը գնում է խոլերայի համաճարակի մասին, որը գոյություն չունի և միայն «հավանական է»: Իսկ օսմանյան որևէ աղբյուրում չի նշվում, թե 1912թ. կամ 1913թ. գարնանը նշված վիլայեթներում խոլերայի համաճարակ է գրանցվել: Մյուս կողմից, կասկած են հարուցում վալիներին հասցեագրված այն գաղտնի նամակները, որոնք Բեհաեդդին Շաքիրին առձեռն պետք է հանձներ Ներքին գործերի նախարարության Չորրորդ բաժանմունքի աշխատակից Ֆուաթ բեյը: Փաստաթղթում ոչ մի կերպ չի ակնարկվում, որ այդ նամակներում խոսքը գնում է խոլերայի դեմ ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Եթե նույնիսկ ենթադրել, թե խոսքը գնում է խոլերայի դեմ պայքարի մասին, ապա անհասկանալի է, թե ինչու այդ միջոցառումները գաղտնի բնույթ են կրում: Հայտնի է, որ Բեհաեդդին Շաքիրը իր ուշադրության կենտրոնում մշտապես պահում էր հայաբնակ վիլայեթները: Թուրք հայտնի լրագրող Ահմեթ Էմին Յալմանը, որն անձամբ ծանոթ էր Բեհաեդդին Շաքիրին, հետևյալ կերպ է նկարագրում վերջինիս մտորումները այդ հարցում: «Իթթիհաթ վե Թերաքքիի անդամ, իր պատկերացմամբ շատ կրքոտ հայրենասեր և «Հատուկ կազմակերպության» առաջնորդ Բեհաեդդին Շաքիրն այսպես էր մտածում. «Հասկանալի է, որ ռուսական սահմանի մոտ հայերի կոմպակտ ապրելը պետության գոյատևման տեսակետից մեծ վտանգ է ներկայացնում: Վտանգը մեջտեղից վերացնելու համար յուրաքանչյուր միջոցառման դիմելը ազգային բարեկեցության պահանջ է: Այդ ուղին բռնելը հնարավոր է նշանակում է հակասել ազգային և մարդկային օրենքներին: Ես պատրաստ եմ իմ

կյանքով վճարել դրա ծանր հետևանքները: Նպատակին հասնեմ էլ, չհասնեմ էլ ինձ դատապարտողները շատ են լինելու: Սակայն գիտեմ, որ շատ հեռավոր ապագայում կլինեն հասկացողներ, թե ես ինձ զոհել եմ հանուն իմ հայրենիքի»[13]: «Հատուկ կազմակերպության» անդամ Գալիբ Վարդարը նույնպես նշում է, թե երբ Բեհաեդդին Շաքիրը «Միություն և առաջադիմություն» կուսակցության երկու անդամների՝ Յուսուֆ Սամիին ու Սափանջալի Հաքքըին առաջարկել է իր հետ մեկնել էրզրում, մասնակցելու հայերի տեղահանությանը, նրանք հարցրել են, թե ինչ է լինելու հայերի ունեցվածքը տեղահանությունից հետո, որևէ ծրագիր կա այդ կապակցությամբ: Այս հարցին Բեհաեդդին Շաքիրը բացեիբաց պատասխանել է. «Ի՞նչ ծրագիր, ասեցինք չէ հայերին տեղահանելու ենք...թե դրա տակ ինչ է թաքնված հասկացեք»[14]:

Հյուսեյին Ջահիթ Յալչընը, ներկայացնելով Բեհաեդդին Շաքիրի այցելությունը արևելյան վիլայեթներ, փորձում է պատասխանատվության մեծ մասը գցել մի անհատի վրա, այսինքն կուսակցությունը և կառավարությունը զերծ պահել հայերի ցեղասպանության իրականացման մեղադրանքից: Չնայած նույն Հյուսեյին Ջահիդը իրավացիորեն նշում է, որ «հայերի տեղահանությունը չի կարող մեկ մարդու գործ լինել»[15], սակայն շեշտում է այն հանգամանքը, որ Բեհաեդդին Շաքիրը հայերի հարցում իր սեփական գաղափարները ներկայացրել է որպես կուսակցության որոշում: Օսմանյան արխիվի վերոհիշյալ փաստաթղթից ակնհայտ է դառնում, որ իրականում Բեհաեդդին Շաքիրը ոչ միայն գործել է կուսակցության, այլ նաև կառավարության անունից: Սա նաև ևս մեկ անգամ վկայություն է, որ հայերի հարցում երիտթուրքական կուսակցությունը և կառավարությունը գործել են միասնաբար: Ինչ վերաբերվում է կորպորատիվ պատասխանատվությունն անհատական պատասխանատվությանը վերածման փորձերի, ապա նման փորձ առաջին անգամ ի հայտ եկավ 1918թ. նոյեմբերին Օսմանյան խորհրդարանի «Հինգերորդ հանձնաժողովում» Սաիդ Հալիմ փաշայի և Թալեաթ փաշայի կառավարությունների նախարարների հարցաքննման ժամանակ, երբ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակվա կառավարության անդամները հայերի ցեղասպանության պատասխանատու էին անվանում միայն Թալեաթ փաշային և նրա մոտակա շրջապատի մի քանի անհատի:

Եզրակացնելով, կարելի է նշել, որ «Իթթիհաթ վե Թերաքքիի» Կենտրոնական Կոմիտեում հայերի տեղահանման և ոչնչացման ծրագրերը սկսել են լրջորեն քննարկվել դեռևս 1912թ. սկզբից, ինչի ապացույց է հանդիսանում Բեհաեդդին Շաքիրի վերոնշված այցը արևելյան վիլայեթներ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. տես. Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları, İstanbul 1986, s. 216.
2. տես. Hüseyin Cahit Yalçın, Tanıdıklarım, Yaşantı, İstanbul, YKY, 2001, s. 83.
3. Նույն տեղում, էջ 81-82.
4. Նույն տեղում, էջ 82.
5. տես. Hüseyin Cahit Yalçın, Siyasal Anılar, İstanbul 2000, s. 316.
6. տես. Yahya Kemal, Siyasi ve Edebi Portreler, İstanbul, 1986, s. 122.
7. Խմբի երրորդ անդամը, նույնպես ճանաչվածությամբ բժիշկ Ռուսուհի Դիքմեն էր:
8. տես. Feroz Ahmad, The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics 1908-1914, Oxford 1969, p. 85-86.
9. տես. Hikmet Çiçek, Dr. Bahattin Şakir. İttihat ve Terakki'den Teşkilatı Mahsusa'ya Bir Türk Jakobeni, İstanbul 2004, s. 19.
10. տես. BOA, DH., MUİ, dosya 107, vesika 18, tarih 1328/C./16, s. 1.
11. Նույն տեղում:
12. տես. BOA, DH., ID, dosya 46, vesika 53, tarih 1330, S. 23, ss. 1/1, 2.
13. տես. Ahmed Emin Yalman, Yakın Tarihte Gördüklerim ve Geçirdiklerim, cilt I, 1888-1922, İstanbul 1997, ss. 401-402.
14. տես. Samih Nafiz Tansu, İttihad ve Terakki İçinde Dönenler, Anlatan: Galib Vardar, yazan: Samih Nafiz Tansu, İstanbul 2003, s. 442.
15. Նույն տեղում, էջ 315.

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1944-1945ԹԹ

1942թ. վերջերին, երկար տարիներ անց, հայկական սփյուռքում նորից ձևավորվել և էլ ավելի լայն ծավալ էր ընդունել «Ազգային ուժերի միասնության» գաղափարը: Իսկ 1943թ. դրական տեղաշարժ էր նկատվել սփյուռքում գործող կուսակցությունների և կազմակերպությունների քաղաքական վարքագծում: Կարելի է ենթադրել, որ դրան նպաստել էր երկու հանգամանք: Առաջինը՝ Ստալինգրադի հաղթանակն էր, որը կանխատեսում էր առանցքի երկրների պարտությունը: Երկրորդը՝ Թեհրանի կոնֆերանսում երեք մեծ տերությունների կողմից պատերազմում համատեղ գործողությունների և հետպատերազմյան համագործակցության մասին ընդունված որոշումն էր: Շատ տրամաբանական ու բնական էր, որ դաշնակից երկրների հաղթանակի հեռանկարը այդ տարիներին սփյուռքահայերի մեջ արթնացրել էր հույսեր հայկական հողերի վերադարձման խնդրի շուրջ: Քանի որ, Թուրքիան պատերազմին չէր մասնակցում և չեզոքության քողի տակ աջակցում էր առանցքի երկրներին, ավելին վարում էր հակախորհրդային քաղաքականություն:

Նախ 1925թ. դեկտեմբերի 17-ին Փարիզում կնքված խորհրդա-թուրքական «չհարձակման և չեզոքության» պայմանագրի և դրան կցված 1929թ. դեկտեմբերին Անկարայում ստորագրված արձանագրության Բ. հոդվածի խախտումն էր: Համաձայն, որի կողմերը պարտավորվել էին տեղյակ պահել որևէ պետության հետ քաղաքական պայմանագիր կնքելու մասին և առանց մյուս կողմի համաձայնության այն չստորագրել: Մինչդեռ Թուրքիան 1941թ. հունիսի 18-ին ֆաշիստական Գերմանիայի հետ կնքած պայմանագրով ոչ միայն խախտել էր խորհրդա-թուրքական համաձայնագիրը, այլև ծրագրել էր Գերմանիայի Ստալինգրադում (1942թ. նոյեմբեր) ունեցած հաղթանակի դեպքում հարձակվել ԽՍՀՄ-ի վրա: Դա են վկայում հետպատերազմյան տարիներին հրապարակված Գերմանիայի արտգործ նախարարության գաղտնի փաստաթղթերը[1]: Բացի այդ, Թուրքիան ի նպաստ ֆաշիստական երկրների բազմիցս խախտել է Մոնթրոյի նեղուցների վերաբերյալ համաձայնագիրը: Խորհրդային միության նկատմամբ Թուրքիայի կողմից նման քաղաքականությունը չէր կարող անպատիժ մնալ: ԽՍՀՄ հետևելով իր սկզբունքներին 1945թ. մարտի 19-ին չեղյալ հայտարարեց 1925թ. խորհրդա-թուրքական բարեկամության դաշնագիրը: Շեշտելով, որ վերոհիշյալ դաշնագիրը ստորագրվել է անկայունության շրջանում: Երբ Ռուսաստանը և Օսմանյան Թուրքիան

նոր էին ավարտել պատերազմը արևմտյան երկրների դեմ[2]: Հասկանալի է, որ Թուրքիայի համար խորհրդային միության ձեռնարկած այս քայլը անակնկալ չէր:

Խորհրդա-թուրքական հարաբերությունների վատթարացումը սփյուռքահայերի շրջանում ամրապնդեց այն հույսերը, որ այս անգամ հայկական հողային պահանջը ի վերջո լուծվելու է հօգուտ հայերի: Դա չի վրիպել նախ և առաջ Մեծ Բրիտանիայի արտգործ նախարարության հայացքից: Սպահանի բրիտանական հյուպատոսը 1945թ. մարտին Լոնդոն էր հեռագրել, թե այստեղ նոր նշանակված հայոց հոգևոր առաջնորդ Վահան Վրդ. Կոստանյանը, Նոր Ջուղա հասնելուն պես անցել է իր պարտականություններին և իր ելույթում հայտարարել է. «Ժամանակը հասել է հայերին իրենց հայրենի երկիրը վերադառնալու »[3]: Իսկ 1945թ. ապրիլի 11-ին Կահիրեից Մեծ Բրիտանիայի արտգործ նախարար Ա.Իդենին ուղարկված մեկ այլ նամակում ասվում էր. «Մենք տեղեկություններ ենք ստացել այն մասին, թե հայերը և՛ Եգիպտոսում, և՛ Միջին Արևելքում քարոզչություն են տանում: Հայերը երազում են Թուրքիայից ազատագրված տեսնել հայկական նահանգները և միացված Հայկական խորհրդային Հանրապետության հետ »[4]:

Սփյուռքահայերը դեռևս պատերազմի տարիներին էին հասկացել, որ իրենց գործելու ժամանակն է, «խաղասեղանի» վրա դրված է Հայաստանի ապագան: Սփյուռքահայերի շրջանում կազմավորվեցին առաջին «Ազգային խորհուրդները», որոնցից ամենա մեծ դերը խաղաց «Ամերիկահայ ազգային խորհուրդը»: Այն կազմավորվել է 1944թ. մարտի 19-ին, ռամկավարների, հնչակյանների, առաջադիմականների, հայրենակցականների և այլ միությունների անդամներից: Խորհրդի առաջին նախագահն էր ռամկավարների պառաջնորդ Պետրոս Ա. Թերզյանը, որին հաջորդել է Նշան Շահինյանը[5]: Ամերիկահայ ազգային խորհուրդը իր կազմավորման առաջին օրից ծավալել է լայնածավալ գործունեություն: 1944թ. կազմավորված Ամերիկահայ Ազգային խորհրդի նպատակն էր՝ համերաշխություն և համագործակցություն ստեղծել գաղութի ներսում, ինչպես նաև աշխատել հայ ժողովրդի գերագույն շահերի պաշտպանության համար: Կողմերը համաձայնվել էին «օգնել (դաշնակիցների) պատերազմական ջանքերում», «կազմակերպել ձեռնարկներ և օգնել ձեռնարկներու ի նպաստ Սովետ Միության և Սովետ Հայաստանի», և «պաշտպանել տարագիր հայերու իրավունքները հարկ եղած բոլոր միջոցներով և աշխատել ի խնդիր անոնց հայկական հողին վրա վերաբնակեցման»: Փաստաթղթի վերջում ասված էր. «Ամերիկահայ ազգային խորհուրդը հայկական իրավունքներու տերը կճանաչնա Հայաստանի կառավարությունը»[6]:

Բացի այդ, շարժումը ծավալվեց հայկական սփյուռքի բոլոր կարևոր գաղութներում: Ֆրանսահայերի Ազգային խորհրդի գլուխ անցավ ազգային դատի պաշտպաններից Արշակ Չոպանյանը, եգիպտահայերինը՝ նշանավոր երգիծանկարիչ Ալ.Սարուխանը: Ազգային

խորհուրդներ կազմավորվեցին Սիրիայում և Լիբանանում, Հունաստանում, Պաղեստինում, Ուրուգվայում և այլուր, ուր երբևիցե եղել են հայկական գաղութներ[7]: Այս բոլոր Ազգային խորհուրդները մեծ նվիրվածությամբ և հույսով սկսեցին իրենց գործունեությունը: Հրատարակվեցին գրքեր և գրքույկներ, հոդվածներ, թերթիկներ, պատրաստվեցին հուշագրեր և դիմումներ, բացի այդ ի նպաստ հայոց դատի տեղի ունեցան հանրահավաքներ և հավաքույթներ: Վերոհիշյալ կազմակերպությունների և Ամերիկահայ Ազգային խորհրդին կից գործել է նաև ՀՅԴ կուսակցության կողմից ստեղծված «Հայկական Ազգային կոմիտեն»՝ Ռուբեն Դարբինյանի և Սիմոն Վրացյանի ղեկավարությամբ[8]: Սակայն արդարացի պետք է լինել և ընդունել այն իրականությունը, որ Ամերիկահայ Ազգային խորհուրդը այս պայքարում դարձավ այն ուժը, որը միավորեց աշխարհում սփռված բոլոր հայկական կազմակերպություններին և ստանձնեց կառավարման դերը:

Նույն ժամանակաշրջանում Հայաստանում ևս հետաքրքրություն առաջացավ հայկական դատի նկատմամբ: Էջմիածնի հոգևոր առաջնորդներից Գևորգ Արք. Չեոքչյանը 1945թ. ապրիլի 19-ին հանդիպել է Խորհրդային Միության ղեկավար՝ Ի.Ստալինի հետ: Այս հանդիպումը նշանակալից է մի կողմից նրանով, որ Չեոքչյանը թույլտվություն ստացավ կաթողիկոսական ընտրություն անցկացնել պատերազմի ավարտից հետո, մյուս կողմից էլ այն սկիզբ դրեց Հայաստանում հայկական դատի նոր ալիքին: Կաթողիկոսի նոր ընտրությունը կայացավ 1945թ. հունիսին: Ս. Էջմիածնում հունիսի 22-ին սկսած Ազգային եկեղեցական Համաժողովին մասնակցելու նպատակով աշխարհի չորս ծայրերից Հայաստան ժամանած եկեղեցական և աշխարհիկ պատգամավորները համատեղ մի նամակ պատրաստեցին Ի.Ստալինին, որտեղ հիմնականում անդրադառնում էին հայերի դարավոր երազանքի իրականացմանը, այսինքն Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հողերի միացումը Մայր Հայրենիքին: Ավելին սփյուռքահայերը ներգաղթել էին ցանկանում Խորհրդային Հայաստան[9]: Ազգային Եկեղեցական Ժողովի այս նամակը ցույց տվեց, որ համայն հայությունը ներկայացված պահանջատերի հարցում միասնական է: Արդեն սփյուռքահայերը ստեղծել էին Ազգային խորհուրդներ և առանձին-առանձին իրենց պայքարն էին տանում: Կաթողիկոսի ընտրությունները դարձան այս շարժման շուրջ վերջիններիս միավորման սկիզբը: Ս. Էջմիածնից վերադառնալուն պես պաղեստինահայության պատգամավորը Երուսաղեմում մի հրապարակային հայտարարություն արեց, որ հետագայում սփյուռքահայ մամուլում ներշնչանքի թեմա դարձավ: Նա պատմել է, որ աշխարհիկ պատգամավորներից մի մասը պատիվ են ունեցել հանդիպելու Խորհրդային Հայաստանի արտգործ նախարար՝ Հ.Կարապետյանին: Արտաքին գերատեսչության ղեկավարը ամրապնդել է պատգամավորների հույսերը և վստահեցրել, «որ շուտով կարելի պիտի ըլլայ Արարատը դիտել երկու կող-

մեն »[10]: Նման հայտարարությունը իհարկե չէր կարող ուշադրությունից զերծ մնալ: Ավելին, արդեն ԽՍՀՄ-ը Թուրքիային ներկայացրել էր նոր պահանջներ, որոնցից մեկը վերաբերում էր Կարսի, Արդահանի և Արդվինը խորհրդային Հայաստանին վերադարձնելուն: Ըստ արևմտյան աղբյուրների պահանջված տարածքը կազմում էր 6,500 քառ. մղոն, 300000 բնակչությամբ[11]:

ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջը, ինչպես նաև սփյուռքահայերի ձեռնարկած քայլերը նպաստեցին, որ Հայկական հողերի վերադարձման հարցի քննարկումը դառնա, այդ տարիներին, մեծ տերությունների միջև կայացած բոլոր հանդիպումների ֆորմալ և ոչ ֆորմալ թեմաներից մեկը: Ամերիկահայ Ազգային խորհուրդը Հայկական Ազգային կոմիտեի հետ համատեղ 1945թ. ապրիլի 25-հունիսի 26-ը Սան-Ֆրանցիսկոյում ընթացող ՄԱԿ-ի առաջին կոնֆերանսի աշխատանքներին ներկայացրել է երկու հուշագիր՝ «Հայ ժողովրդի գործը» և «Հայկական հարցի առթիվ»[12]: Առաջինում պահանջվում էր Հայկական հողերի միացումը ազատ, անկախ Հայաստանի գոյություն ունեցող պետությանը և արտասահմանում ապրող ու Հայաստան մեկնելու ցանկություն ունեցող հայերի վերադարձը: Այս հուշագիրը այդ տարիներին մեծ արձագանք է ունեցել ու տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթում՝ ոգևորություն առաջացնելով Հայաստանի բնակչության ամենա լայն շրջանակներում[13]: Խորհրդային Հայաստանում ապրող հայությունը՝ սփյուռքահայության առաջ քաշած վերոհիշյալ հարցերը համարում էր միանգամայն բնական և արդարացի: Եվ այդ է պատճառը, որ այդ օրերին խորհրդային թերթերում տպագրվել են նամակներ ի նպաստ Հայկական դատի՝ «Արդարության ձայնը», «Հասել է ժամանակը», «Մեկ ու կես միլիոն մարդկանց ձայնը» և նման վերնագրերով[14]: Այդ նամակներից հատկապես հատկանշական է հայ ազգի մեծ վիպասան Դ. Դեմիրճյանի հայրենասիրական ոգով գրվածը. «Արդյո՞ք հասել է ժամանակը: Մի՞թե ժամանակը չէր: Երբ Ազգերի լիգան պրեզիդենտ Վիլսոնին հանձնարարեց որոշել ազատ, անկախ Հայաստանի սահմանները, երբ դա ընդունվեց բոլոր տերությունների կողմից ներառյալ նաև Թուրքիայի: Եվ հաստատվեց Սևրի պայմանագրով ժամանակը միշտ էլ եղել է, հայերի արյան հեղեղական հեղեղումը՝ միշտ հիշեցրել է ժամանակը: Բայց միշտ էգոիստական շահերի մոլուցքների մթնոլորտում խեղդվել է հայերի ձայնը:

Սակայն ինչու՞ այսօր արդեն ժամանակն է և ճշմարիտ ժամանակը: Հայերը ունեն իրենց երկիրը : Տարագիր հայությունը իրավունք ունի պահանջելու, որ Սովետական Հայաստանին միացվի իրենց արյամբ ոռոգված հայրենի հողերը:»[15]: Սակայն ինչպես ցույց տվեց պատմությունը ժամանակը դեռևս չէր եկել:

Սան-Ֆրանցիսկոյի հուշագիրը արձագանք գտավ ոչ միայն խորհրդային Հայաստանի մամուլում, այլև թուրքականում: Թուրքական «Ջումհուրիեթ» թերթը 1945թ. մայիսի 9-ին խմբագրության անունից

տեղեկացրել է.

«Հայերը, հանդիսանալով թուրքական հպատակներ, օգտվում են մեր օրենքների բոլոր իրավունքներից, որոնք տարածվում են մեր քաղաքացիների վրա: Այդ դեպքում վերոհիշյալ հաղորդագրությունը կոնֆերանսի հավաքված երկրների ներկայացուցիչ-ների հայերի դիմումի մասին, տեղին չէ և անհիմն է»[16]: Ավելի ուշ վերոհիշյալ թերթի թղթակիցներից մեկը հանդիպում է ունեցել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Արսլանյանի հետ, վերջինս նշել է, որ հանդիսանալով հայերի հոգևոր ներկայացուցիչը զբաղվում է միայն կրոնական հարցերով, և քանի որ քննարկվող հարցը հանդիսանում է զուտ քաղաքական, նա լիազորված չէ հայկական համայնքի անունից ինչ-որ մի բան ասել այդ առումով»[17]: Նման պատասխանը ողջանով է գոհացրել թուրք ընթերցողին և Թուրքիայի կառավարությանը հայտնի չէ, սակայն այն, որ սփյուռքահայերը շարունակում էին իրենց գործունեությունը այս ուղղությամբ բավականին ցավագին է ընդունվել վերջիններիս կողմից: Թուրքիային անհրաժեշտ էին դաշնակիցներ և այդ հարցում վերջինիս աջակցեց Անգլիան և ԱՄՆ-ն:

ՄԱԿ-ին ներկայացված հուշագրերը միակը չէին: 1945թ. ամռանը Սան-Ֆրանցիսկոյում ՀՅ Դաշնակցության Ազգային կոմիտեն Ս. Վրացյանի ստորագրությամբ հուշագիր է ներկայացրել, որում պահանջում էր Թուրքիայի կողմից բռնագրաված հայկական հողերի ազատագրումը ու կցումը Խորհրդային Հայաստանին[18]: Վերոհիշյալ կազմակերպությունը 1945թ. հուլիսի 5-ին, Պոտսդամի կոնֆերանսի նախօրեին, մեկ այլ հուշագիր էլ է ներկայացրել Ստալինին, Տրումենին և Չերչիլին: Այն չէր տարբերվում նախկինից: Այստեղ ասվում էր. «Ցանկանամք կը հավատալ և կը խնդրէ ձեզմէ արդար լուծում մը հայկական խառնիչ հարցին, այն է՝ կցել ներկայ վերածնվյալ Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան ոչ միայն Կարս և Արտահանի շրջաններ, այլև Թուրքահայաստանը, որ դաշնակից պետութեանց առաջարկով սահմանուած է նախագահ Ուիլսընին կողմէ է»[19]: 1945թ. հուլիսի 16-ին, Ամերիկահայ Ազգային խորհուրդն ևս նույնանման փաստաթուղթ է ներկայացրել Մեծ տերությունների առաջնորդներին: Ավելի ուշ, 1945թ. սեպտեմբերի 15-ին, այս կազմակերպությունը նույն բովանդակությամբ հեռագիր է հղել նաև Լոնդոնում գումարված Մեծ տերությունների արտաքին գործերի նախարարների հանդիպմանը: Այն ևս արձագանք է գտել ոչ միայն անգլիական, այլև ամերիկյան և ֆրանսիական մամուլում: Հեռագրում ասվում էր. «Ամերիկահայ Ազգային խորհուրդը յարգանօք կը յանձնէ ձեր պատկառելի մարմնին նկատառության և արդարամիտ տրամադրության երկարամյա պահանջները հայ ժողովուրդին

ժամանակը հասած է որ արդարություն ըլլայ Հայաստանին և հայերուն, արդարություն մը, որ անցած հարիւրամեակի պատմական հեռանկարի՝ կրնայ նշանակել ոչ նվազ բան ազգահավաքումը աշ-

խարհի երեսին ցիրուցան եղած մեկուկես միլիոն թրքահայերու և Թուրքիոյ մեջ հայկական նահանգներու միացումը Սովետական Հայաստանի ազատ և ապահով հանրապետութեան»[20]:

Մինչդեռ այս հռչակագրերը, դիմումները և հուշագրերը հակառակ ազդեցությունը են ունեցել: Արևմտյան պետությունները դրանցում տեսան ոչ թե ազգային շարժումով, այլ խորհրդային ազդեցություն: Հունաստանում Բրիտանիայի դեսպանը արտ. գործ. նախարարություն ուղարկած իր զեկուցագրում տեղեկացրել է, որ Հունաստանի հայերը խնդրագիր են ներկայացրել, որը ստորագրված է Հունահայոց հոգևոր առաջնորդ Մազլումյան Արքեպիսկոպոսի, Ազգային իշխանության ղեկավարներ Գ. Բաղդադյանի և Գ. Գալստյանի կողմից: Ըստ դեսպանի մեկնաբանության դա ցույց է տալիս, թե որքան մեծ է խորհրդային ազդեցությունը այստեղի հայերի վրա: Հայկական հողերին վերաբերող Ֆրանսահայերի կողմից ներկայացված խնդրագրին էլ Լոնդոնը տվել էր հետևյալ գնահատականը. «ստորագիրներուն մեջ պատուոյ վերապահուած էր Հայ Ազգային ճակատին, որ կը թելադրէ թէ նախաձեռնութիւնը առնուած էր իրենց մեջ եղող «ուղեկիցներուն» կողմէ»[21]: Մինչդեռ այս փաստաթղթի տակ ստորագրել էին Արշակ Չոպանյանը, պրոֆ. Մանուկյանը, Լևոն Մեսրոպյանը, Առաքել Չաքրյանը:

Տեղեկացնենք, որ այս խնդրագրերը լուսաբանվել և մեկնաբանվել են ինչպես սփյուռքահայ, այնպես էլ խորհրդային և օտարերկրյա մամուլում: Այդ տարիներին օտարերկրյա թերթերում լույս են տեսել հայկական հողային պահանջին վերաբերող բազմաթիվ հոդվածներ և նամակներ: 1945թ. հուլիսի 4-ին «Նյու-Յորք Թայմս»-ում հրատարակված գրող Լևոն Զավեն Սուրմելյանի նամակը պաշտպան է կանգնում Կարսի և Արդահանի ԽՍՀՄ-ի կողմից ներկայացված պահանջատիրոջը[22]: Սակայն ամենամեծ արձագանքը ստացել է խորհրդային և օտարերկրյա մամուլում Հայկական հարցի շուրջ կազմակերպված հանրահավաքները: Հանրահավաքներից ամենամարդաշատը տեղի է ունեցել Բեյրութում: Այսպես, «Պրավդա»-յում և հայկական մամուլում լուսաբանվել է 1945թ. հուլիսի 29-ին Լիբանանահայերի ազգային կոմիտեի և այստեղի հոգևոր առաջնորդ արք. Աչապահյանի նախաձեռնությամբ կազմակերպված հանրահավաքը և հանրահավաքի մասնակիցների ԽՍՀՄ-ի առաջնորդ Ի.Ստալինին ուղված նամակը: Սակայն Ամերիկահայ Ազգային խորհուրդը չբավարարվեց միայն հուշագրերի, հեռագրերի առաքումով և դրան հարակից աշխատանքներով: Հայաստանի իրավիճակը տեղում ուսումնասիրելու նպատակով Պետրոս Թերզյանի, Պատրիկ Սելյանի և հայրապետ Չիմ Չանքալյանի ղեկավարությամբ պատվիրակություն էին ուղարկել հայրենիք: Պատվիրակությունը վերադարձին պես 1945թ. հոկտեմբերի17-ին Նյու-Յորքի Ջ. Վաշինգտոն հյուրանոցում մամուլի ասուլիս է հրավիրել և ներկայացրել իրենց տպավորությունները, տեղեկացնելով խորհրդային Հայաստանի կառավարությունը նա պաշտպանում է իրենց Թուրքիային

ներկայացրած պահանջները[23]: Բացի այդ տեղեկացնում են, որ կառավարության վերահսկողությամբ խորհրդային Հայաստանի բնակչության շրջանում անցկացվում են հանդիպումներ և զրույցներ, որոնց ընթացքում պարզաբանվում էր սփյուռքահայության կողմից թուրքական իշխանության ներքո գտնվող Հայկական հողերի պահանջի մասին հուշագրերը: Դա վկայում էր, որ ԽՍՀՄ-ը իրենց հետ համակարծիք է:

Միությունից, պետք է ձեռք բերել նաև մեծ տերությունների աջակցությունը: Այդ նկատառումով արտերկրում ապրող հայերը սկսեցին համագործակցել տվյալ երկրի կառավարության անդամների, օրենսդիրների, գիտության և արվեստի ներկայացուցիչների հետ: Ամերիկահայ Ազգային խորհուրդը, օրինակ, Սենատում ի նպաստ հայկական դատի այդ տարիներին հավաքել է 20 հազար ստորագրություն: Միաժամանակ ստեղծվել է հայերի իրավունքների պաշտպանության հանձնախումբ՝ սենատոր Է. Սմիթի նախագահությամբ. վերջինիս կից էլ կազմավորվել է «National Adviser Council», որի անդամներից էին Սմիթից բացի կոնգրեսմեն Սելըր, մեծ փիլիսոփա Թ. Դրայզերը և ուրիշներ: Նշենք, որ ամերիկյան այս կազմակերպությունը 1946թ. ապրիլի 28-ին Նյու-Յորքի Քարնեգի Հոլի մեջ կազմակերպել է մեծ միջոցառում ի նպաստ հայկական դատի: Իրենց ելույթներում սենատոր Չարլզ Թոփին, կոնգրեսմեններ Սելըր, Սևիջը և ուրիշները պահանջել են «արդարություն հայերի համար», այսինքն հայկական հողային պահանջների արդար լուծում[24]: Սակայն «արդարություն հայերի համար» կոչը այդպես էլ չի ծառայել իր նպատակին: 1947թ. շարժումը սկսել է անկում ապրել:

Այն, որ պատերազմից հետո հայկական հարցը իր դրական արդյունքը չստացավ ունեն իր արտաքին և ներքին պատճառները: Նախ աշխարհում քաղաքական իրադրությունը փոխվել էր: Եթե պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն համագործակցում էին, և առանցքի երկրների դեմ պայքարում հանդես էին գալիս որպես դաշնակիցներ, ապա պատերազմից հետո դրությունը այլ էր: Արդեն, 1946թ. մարտին, Ֆուլտոնում հնչել էր Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ՝ Ու. Չերչիլի նշանավոր այն ելույթը, որը սկիզբ դրեց «սառը պատերազմին»: Դա մի պատերազմ էր, որ ընթանում էր խորհրդային Միության դեմ: Այս պայքարում Թուրքիան դարձավ Անգլիայի և ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակիցը: Ինչն իր կարևոր դերը խաղաց ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ծագած խնդիրներում: Ի տարբերություն 1945թ.-ի, 1946-ին պաշտոնական Անկարան զգալով ԱՄՆ-ի և Անգլիայի աջակցությունը իրեն ավելի վստահ էր զգում: Դա է վկայում 1946թ. ապրիլի 16-ին Թուրքիայի արտգործ նախարար Հասան Սաքայի ամերիկացի լրագրողներին տված հարցազրույցը: Թուրք պաշտոնյան վստահեցրել է, որ հողային որևէ պահանջատիրության մասին խոսք չկա և թե դա միայն լուրեր են: Նա խորհրդային ռադիոն չի համարել պաշտոնական օրգան և պաշտոնապես հայտարարել է. «Իրականում

մեզ համար գոյություն չունի Կարսի և Արդահանի հարցը»[25]: Այսպիսով, Մեծ տերությունները իրենց ձեռքը մեկնեցին թուրքերին: 1947թ. «Տրումենի դոկտրինայի» և «Մարշալի պլանի» իրագործման հետևանքով Թուրքիան ԱՄՆ-ից ստացել է ռազմական և տնտեսական օգնություն: Փոխարենը ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան «կոմունիստական վտանգը կանխելու համար» Թուրքիայի տարածքում թույլատրություն ստացան կառուցելու իրենց ռազմական բազաները: Եվ մի անգամ էլ ի նպաստ իրենց շահերի ոտնահարեցին հայ ժողովրդի շահերը:

ԽՍՀՄ-ն էլ պահանջելով Կարսը և Արդահանը հետապնդում էր իր շահերը: Մի կողմից ցանկանում էր վերականգնել Ցարական Ռուսաստանի Օսմանյան կայսրության հետ 1914թ. ունեցած սահմանը, մյուս կողմից էլ փորձում էր պատժել Թուրքիային պատերազմի տարիներին «չեզոքության» քողի տակ վարած հակախորհրդային քաղաքականության համար: 1945թ. Պոտսդամի կոնֆերանսի ժամանակ Ստալինը հայտարարել է. «Խոսքն այն մասին է, որ վերականգնենք մինչև I համաշխարհային պատերազմը եղած սահմանները: Ես նկատի ունեմ Կարսի մարզը, որը մինչև պատերազմը գտնվում էր Հայաստանի կազմում և Արդահանի շրջանը, որը մինչև պատերազմը գտնվում էր Վրաստանի կազմում»[26]: Մի քանի ամիս անց Թուրքիային հողային պահանջ է ներկայացրել նաև Վրաստանը: Նման զարգացումները էլ ավելի են խճճել իրադրությունը: Բացի այդ ԽՍՀՄ-ի կառավարությանը և սփյուռքահայերին անհրաժեշտ էր հստակեցնել Թուրքիային ներկայացրած իրենց հողային պահանջները: Քանի որ ԽՍՀՄ սահմանափակվում էր միայն Կարսի և Արդահանի նահանգներով, մինչդեռ սփյուռքահայերը պահանջում էին հայկական հողերի վերադարձը, համաձայն Սևրի պայմանագրի: Հաշվի չառնելով դա Մեծ տերությունները շարժումը որակել են ոչ թե ազգային, այլ ԽՍՀՄ-ի ազդեցության արդյունք: Տարաձայնություններ էին առաջացել նաև ՀՅԴ և սփյուռքում գործող հայկական մյուս կուսակցությունների միջև: ԵՎ դաշնակները շարունակել են պայքարը առանձին:

Այսպիսով, 1944թ. սփյուռքում սկիզբ առած հայրենասիրական այս շարժումը լայն թափ է ստացել 1945-1946թթ.: Սփյուռքում գործող կազմակերպությունները ակտիվ գործունեություն են ծավալել՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, ԽՍՀՄ-ի, Ֆրանսիայի կառավարություններին և ՄԱԿ-ին ողողելով նամակ դիմումներով: Պահանջելով վերականգնել պատմական արդարությունը և հնարավորություն ստեղծել հայ ժողովրդին վերադառնալ Մայր հայրենիք: 1947թ. Նյու-Յորքում Ամերիկահայ Ազգային խորհրդի նախաձեռնությամբ հրավիրված Համաշխարհային Հայկական Կոնգրեսը Ազգային խորհուրդների գործունեության գագաթնակետը է հանդիսացել, միաժամանակ սկիզբ դնելով շարժման անկմանը: Եվ չնայած 1946-47թթ. Հայկական հարցը շարունակում էր մնալ քաղաքական ասպարեզում, սակայն Մեծ տերություն-

ների արդեն կողմնորոշվել էին: Վաշինգտոնում տիրում էր այն տեսակետը, թե որքանով մեծանա և հզորանա Հայաստանը՝ նույն քանով կուժեղանա ուժը խորհրդային Միության, ինչ չէին կարող նրանք թույլ տալ:

1945թ. բարձացված հայկական հարցը չնայած Սան Ստեֆանոյի, Բեռլինի, Սևրի, Լոզանի ճակատագրին է արժանացել, սակայն կարևոր էր այն փաստը, որ երկար տարիներ անց մի անգամ էլ միջազգային ասպարեզ բարձացվեց և լսվեց Հայկական դատը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Правда, 27.III. 1947.
2. Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, т. III, М.1946, с. 146.
3. *Սարգսյան Զ.*, Հայկական հարցի մասին, Բեյրութ, 1947, էջ 27:
4. Նույն տեղում:
5. *Ահարոնյան Վարդգես*, Մեծ երազի ճամբուն վրայ , Պէյրութ, 1964, էջ 195:
6. *Թոփուզյան Հ.*, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Ե. 1986, էջ 252:
7. *Ահարոնյան Վարդգես*, Մեծ երազի ճամբուն վրայ , էջ 195:
8. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034,գ.95, թթ 283-284:
9. Լրաբեր, Նյու-Յորք, 16.II.1946:
10. *Զաքարյան Յ.*, Կարս (պատմա-աշխարհագրական տեսություն), Երուսաղեմ, 1946, էջ 8:
11. *Dean Acheson*, Present at the creation, my years in the state department, New York, 1947, pp. 199-200.
12. Արևելք Տարեգիրք, Հալեպ, 1948, էջ 73-77:
13. Սովետական Հայաստան, 15.VI.1945:
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում:
16. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 034,գ.95, թթ 146-148:
17. Նույն տեղում:
18. Արևելք Տարեգիրք, Հալեպ, 1948, էջ 73-77:
19. Նույն տեղում:
20. Զարթօնք, Բեյրութ, 18.VII.1975:
21. *Սարգսյան Զ.*, էջ 40:
22. New York Times, New York, 4.VII.1945.
23. Զարթօնք, 17.VII.1975:
24. *Ահարոնյան Վարդգես*, էջ 196:
25. *ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ*, Обзор турецкой прессы, февраль-июнь, 1946, с. 57.
26. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, М. 1980, с. 149.
27. *Մնդոյան Անդրանիկ*, Հայկական դատի նոր հանգրվանը, Բեյրութ, 1967, էջ 24

ԳՆԵԼ ՂԼԵՋՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայ մշակույթի պատմության մեջ Ղուկաս Ինճիճյանն այն գիտնականներից է, որը թողել է հսկայական գիտական ժառանգություն: Այն կարիք ունի լուրջ ուսումնասիրության և վերլուծության:

Օսմանյան կայսրության պատմությանը և աշխարհագրությանը հեղինակն անդրադարձել է իր մի շարք աշխատություններում: Դեռևս 1794 թ. նա հրատարակում է «Ամարանոց Բիւզանդեան»: Այս աշխատության որոշ հատվածներ թարգմանվել են իտալերեն և ֆրանսերենի հետևանքով այն ստացել է եվրոպական համբավ[1]: 1804թ. հրատարակվեց Ղ. Ինճիճյանի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» Ե և Զ հատորները՝ նվիրված Օսմանյան կայսրությանը, իսկ 1806թ. Ասիայի մասին Ա հատորը՝ նվիրված Հայաստանին: Հեղինակը Օսմանյան կայսրությունը դիտում է եվրոպայի բաղկացուցիչ մաս՝ նշելով նրանից, որ կայսրության մի մասը և «թագաւորանիստ քաղաքն» եվրոպայի մեջ են[2]: Հարկ է նշել, որ Օսմանյան պետության եվրոպական տերություն լինելու կամ չլինելու հիմնախնդիրը ընդհուպ մինչև բանգիմաքի երկրորդ շրջանի սկիզբը (1856թ. փետրվար) եղել է նաև միջազգային դիվանագիտության քննարկման առարկա և հետագայում էլ այն հաճախ է արծարծվել[3]: Ակադեմիկոս Մ.Զուլալյանը բարձր է գնահատել Ասիայի Ա հատորը: Այդ մասին գրում է. «Ղուկաս Ինճիճյանի «Աշխարհագրությունը» մի խևական հանրագիտարան է XVIII դարի Արևմտյան Հայաստանի նահանգների ու գավառների մասին»[4]:

Օսմանյան կայսրության պատմության հարցերը Ղ. Ինճիճյանի կողմից արծարծվել են նաև 1800-1803թթ. և 1804-1820թթ. հրատարակված «Տարեգրություն», ապա «Եղանակ Բիւզանդեան» պարբերականներում:

Մեծ գիտնականը սերունդների գնահատմանն է թողել մեկ պատմական ուսումնասիրություն ևս, որտեղ շարադրում է 1750-1800թթ. ընդհանուր պատմությունը[5]:

Ինչպե՞ս է գնահատված Օսմանյան կայսրությունն այս գիտական ժառանգության մեջ: Այս հիմնախնդիրը մեր պատմագրության մեջ տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել[6]:

Ղ. Ինճիճյանը իր դարի գիտնականն էր՝ օժտված հետազոտական անկրկնելի կարողություններով: Օսմանյան պատմության շարադրանքում աչքի է զարնվում հեղինակի զգուշավոր ոճը: Եղած մեկնաբանություններում նա գովեստի խոսքեր է գրում սուլթանների գործունեության վերաբերյալ, որոնք, սակայն, կարծես գալիս են սքողելու

աշխատության տողատակերում հիշող գաղափարները և կամ շարադրվող խոսուն փաստերը:

«Տարեգրութեան» մեջ Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված կարևոր հոդվածներից է «Կարգ օսմանեան թագաւորաց», որտեղ հեղինակը հակիրճ շարադրում է սուլթանների ժամանակագրությունը՝ սյունյակներում նշելով կառավարման թե՛ մահմեդական և թե՛ հռոմեական-գրիգորյան թվականները: Թվարկում է նաև նրանց կառուցած գործերը[7]: Ղ. Ինճիճյանը այս հոդվածում խոսում է սուլթանների հաղթանակների, կառուցած շինարարական գործերի մասին, նաև նրանց պարտությունների մասին, նշում, թե ինչպես էին ենիչերիները իրար ետևից գահազրկում այս կամ այն սուլթաններին, սպանում նրանց, բանտը նետում և այլն: Ղ. Ինճիճյանը գրում է Մեհմեդ II-ի կատարած արշավանքների մասին՝ իրավացիորեն նշելով, որ նվաճումների մեջ «ամենեն երևելի Ստամպօլն» էր[8]: Կարելի է ենթադրել, որ այս հոդվածի պատվերը հեղինակը ստացել է հենց հայ ընթերցողից, քանի որ նախաբանում Ղ. Ինճիճյանը նշում է, որ այն «ցանկալի է ընթերցողին»: Ուշագրավ է, որ նույն հոդվածը՝ չնչին խմբագրական փոփոխություններով, նա տպագրել է նաև 1813 թ. «Եղանակ Բիւզանդեան»ում[9]: Այստեղ ակնառու է նյութի պահանջարկի հանգամանքը: Սա նշանակում է, որ ձևավորվել է ընթերցող հասարակություն, որը կարևոր գործոն լինելուց զատ, ինքնին մեծ նվաճում էր շատ առումներով:

XVIII դարի առաջին կեսում սրվում է պայքարը Օսմանյան կայսրության վերնախավի ներսում: Մի կողմից սուլթանների շրջապատը ուլեմների հետ միասին ձգտում էին սահմանափակել Բ.Դռան հնարավորությունները, մյուս կողմից երկրի բյուրոկրատիան, նույն ուլեմների հետ դաշնակցած, հանդես էին գալիս սուլթանական ֆավորիտների ամենաթողության դեմ: Այս պայքարն իր արտահայտությունն է գտել «Պարապատում» աշխատության մեջ: Խոսելով Մահմուդ I-ի մասին՝ հեղինակը զովերգում է նրան՝ գրելով, որ «ասոր օրը շատ հանգիստ կեանք ունեցաւ ժողովուրդը մանաւանդ Ստամպօլի մէջ, քանզի՝ աժան, առատութիւն՝ աղէկ, ինքը զուարճասէր, խաղաղասէր թագաւոր ըլլալով՝ կուզեր որ ժողովուրդն ալ հանգստեան մէջ ըլլայ...»[10]: Այս գովասանքի խոսքերից հետո Ղ. Ինճիճյանը խոսում է քըզլար աղասի[11] Հաֆիզ Բեշիր աղայի և մահմեդականություն ընդունած Սուլեյման անունով մեկի մասին: Յոզեֆ Համմերը վկայակոչում է, որ այս քըզլար աղասի Բեշիրը «... կարողացավ ձեռք բերել նույն ազդեցությունը և իրականացնել նույնքան անսահմանափակ իշխանություն հարեմի և սուլթանի վրա, որքան իր անվանակից նախորդը...»[12]: Ըստ Համմերի՝ քըզլար աղասին փոխեց մեծ վեզիր էմին Մուհամմեդ փաշային և նրա տեղը նշանակեց Մուստաֆային: Ղ. Ինճիճյանը ևս հաստատում է, որ քըզլար աղասու և Սուլեյմանի խոսքը շատ կարևոր էր, կառավարության գրեթե բոլոր գործերը նրանք էին կատարում, այն աստիճան, որ

«վեզիրին խոսքը չէր ըլլար, անոնց խոսքը կըլլար»: Այս երկուսի գործունեությունից ոգեշնչված կ.Պոլսում հրդեհներ են սկսվում, «որ սովորական նշան է ոգորհալու...»[13]: Ղ. Ինճիճյանը նշում է,որ 1752 թ. մայրաքաղաքում մի շարք հրդեհներ են տեղի ունենում:Ռուս դիվանագետ Ա. Ա. Օբրեսկովյայի վկայությամբ 1752 թ. մայրաքաղաքում երեք շաբաթ անընդմեջ չեն դադարում հրդեհները: Ի վերջո նոր մեծ վեզիր Մուստաֆա փաշան սուլթանին է ներկայացնում 200 ուլեմների կողմից ստորագրված մի դիմում, որում պահանջվում էր հեռացնել քըզլար աղասի Հաֆիզ Բեշիրին: Սուլթանը ստիպված զիջում է[14]: Ժամանակավորապես կ.Պոլսում հրդեհները դադարում են:

Ընդհանրապես կ.Պոլսի հրդեհների մասին, որ սոցիալական մեծ չարիք էր, հարուստ նյութ է պարունակում նաև Ղ. Ինճիճյանի «Ժամանակագրութիւն դիպուածոց Կոստանդնուպոլսոյ ՚ի ԺԸ դարուն» հոդվածը: Օրինակ 1782թ. հրդեհի մասին գրում է. «Հինգ մեծ կրակ եղավ Ստամպոլ, ամենեն մեծը օգոստոսի 21 ըստ նոր տոմարին եղավ, 60 ժամ քշեց Ստամպոլին իրեք մասին մեկը մնաց»[15]:

Մահմուդ I-ի ներքին և արտաքին քաղաքականության վրա մեծ ներգործություն է ունեցել նաև շատ ազդեցիկ ներքինապետ Հաջի Բեշիր աղան[16]: Սա վերը հիշատակված Հաֆիզ Բեշիր աղայի «անմիջական նախորդն» է: Հայտնի օսմանագետ Մ. Ս. Մեյերը վկայակոչում է անգլիական դեսպան Ջ. Պորթերի խոսքը «այս մեծ խելքի և հարուստ փորձի տեր մարդու» մասին, որը համոզեց երիտասարդ սուլթանին, որ գահը պահպանելու և երկրի հանգստությունը ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել իր հարևանների հետ, բաց չթողնել իշխանությունը ձեռքից և հաճախ փոխել մեծ վեզիրներին, որպեսզի ոչ մեկը չկարողանա այդ պաշտոնում մնալ երեք տարուց ավել[17]: Ղ. Ինճիճյանը հաստատում է այս երևույթը: Յուրաքանչյուր սուլթանի գործունեությունը նկարագրելուց հետո նա շարադրում է մեծ վեզիրների ցուցակը: Մահմուդ I-ի մեծ վեզիրների ամբողջական ցուցակը տեղ է գտել «Դարապատում» աշխատության առաջին հատորում[18]: Սուլթանի իշխանության 24 տարվա ընթացքում իրար հաջորդել են 16 վեզիր, որոնց կառավարման ամենաերկար ժամկետը չի գերազանցում չորս տարին կամ այլ կերպ ասած՝ միջին հաշվով յուրաքանչյուրի կառավարման ժամկետը չի գերազանցում մեկուկես տարին: Այս նույն մոտեցմանը հարազատ է մնում նաև Մահմուդ I-ին հաջորդած Օսման III-ը[19]: Իր կառավարման երեք տարիների ընթացքում իրար հաջորդեցին յոթ մեծ վեզիրներ: Իհարկե, մեծ վեզիրների կառավարման ժամկետը չի կարող դիտվել այդ պաշտոնյաների գործունեության որակի բացասական նշան, բայց նաև իրականություն է, որ այն պետության մեջ ստեղծում էր անկայունության մթնոլորտ, որը և մեծացրել խոչընդոտ էր հանդիսանում հասարակական բնականոն զարգացման համար: Ահա հենց այս պարզագույն ճշմարտությունն է հեղինակը մատուցում իր ընթերցողին՝ առանց որևէ մեկնաբանության: Ղ. Ինճիճյանի բերած

այս փաստական տվյալները համընկնում են Մ. Ս. Մեյերի վկայակոչած տվյալներին[20]:

Հեղինակի աշխատանքներում տեղ են գտել նաև որոշ փաստական վրիպումներ: Օրինակ՝ Ղ. Ինճիճյանը, կարևորելով պետությունների միջև կնքված պայմանագրերի համառոտագրված տեքստերն իր ընթերցողին ներկայացնելը, «Դաշնակցութիւն թագաւորաց» հոդվածում 1800թ. կնքված մի շարք պայմանագրերի կողքին զետեղել է նաև անգլո-օսմանյան դաշինքը[21]: Հեղինակը, ինչպես տեսնում ենք, այստեղ թույլ է տալիս թվական անճշտություն: Ինչպես հայտնի է, Ֆրանսիայի դեմ ուղղված այս դաշինքը կնքվել է 1799թ.[22]: Ղ. Ինճիճյանի աշխատություններում տեղ գտած վրիպումները հավանաբար արդյունք են նրա օգտագործած աղբյուրների:

Հեղինակի՝ օսմանյան պատմության մասին նյութերը սկզբնաղբյուրային նշանակություն ունեն, քանի որ այնտեղ շարադրված բազում դեպքերին անձամբ ականատես է եղել հեղինակը: Հարկ է նշել, որ նա իր աղբյուրներին հազվադեպ է հղումներ կատարում: Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված էջերում Ղ. Ինճիճյանը երբեմն այս կամ այն փաստի մասին խոսելիս որպես սկզբնաղբյուրներ հիշատակում է «տաճկին քահըստ», «տաճկական թվականիններ»[23]: Այս ժամանակագիրների մեջ ամենից շատ օգտվել է Ռեսմի Ահմեդ էֆենդիից: Նա այս հեղինակից տարբեր առիթներով ընդարձակ մեջբերումները կատարում է հայատառ թուրքերենով[24]:

Ղ. Ինճիճյանը փորձ է անում նաև իր ընթերցողին ներկայացնել Օսմանյան տերության արտաքին քաղաքականությունը և դրա հետ կապված ներքին դրությունը XVIII դարի երկրորդ կեսին: Ընդ որում, նա դա ձգտում է կատարել պարզ, մատչելի, սակայն ճշմարիտ մեկնաբանությունների միջոցով: Այդ բոլորի հիմքում նա տեսնում է պետական շահերի գործոնը, որի դերն էլ ամեն առիթով նշում է: Այսպես՝ Ռուսաստանի 1760-ական թվականների արտաքին քաղաքականությունը Լեհաստանում դժգոհությամբ ընդունվեց նրա հակառակորդներ Ֆրանսիայի և Ավստրիայի կողմից, որոնք ջանք չխնայեցին Ռուսաստանի դեմ հանել Օսմանյան կայսրությանը: 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմում եվրոպական երկրների դիրքորոշման մասին Ղ. Ինճիճյանը՝ նշում է, որ ֆրանսիական օգնությունը Օսմանյան կայսրությանը սահմանափակվեց միայն մասնագետների տրամադրմամբ, որոնք վերանորոգում և ամրացնում էին թուրքական պաշտպանական կառույցները: Այս բանը հաստատում են նաև այլ հետազոտողներ[25]: Իսկ «Ինկլիզը որովհետև Մոսկովին հետ մէկ դաշնադրութիւն մը ներգեր էր ու առնենները պատառուրի վրայօք ... խօսք տըվավ, որ ամէն կերպով Մոսկովին օգնէ»[26]: Հեղինակն այստեղ ի նկատի ունի 1766 թ. ռուս-անգլիական առևտրային պայմանագիրը, որով առևտրի ասպարեզում ռուսական կառավարության զիջումները փոխհատուցվեցին լեհական հարցում Անգլիայի համաձայնությամբ[27]: Օսմանյան կայս-

թյանը պատերազմի մեջ ներքաշելու գործում հեղինակը խոսում է Կ.Պոլսի ֆրանսիական դեսպանի դերակատարման մասին, «որ էր մարքէզ Բոհէֆր, ան ալ իր մարդիկներով կրգրգէր սաճիկը»[28]: Ղ. Ինճիճյանի նշած ֆրանս-օսմանյան այս համագործակցությունը հաստատում է նաև Ի. Ուզունչարշըլըն[29]:

Ղ. Ինճիճյանը մեջբերում է հակամարտող կողմերի միմյանց պատերազմ հայտարարելու մասին փաստաթղթերը, մանրամասն նկարագրում ռազմական գործողությունների ընթացքը և ցույց տալիս կողմերից յուրաքանչյուրի շահը: Նա քննադատում է Ռուսաստանին Լեհաստանը թուլացնելու և իրեն ենթարկելու քաղաքականության համար: Միանշանակ է, որ նրան դուր չի գալիս նաև այս պատերազմում Օսմանյան կայսրության նպատակները, որն «ուզեց իր ուժը ցուցնել, մանաւանդ թէ ինքը առնել Լեհաստանը»[30]: Հեղինակը ցավ է ապրում Լեհաստանի համար: Մատնանշելով օտար երկրներից լեհերի օգնություն խնդրելը, գրում է. «Ինչ ցաւալի վիճակ, ինչ խեղճ կառավարութիւն, ինքը անհոգ անզօր նստիլ զօրաւոր թագաւորաց մէջ, եւ երբոր գլուխը բան մը գայ, ան ատենը հեռու թագաւորներու դիմել, զօրք խնդրել, օգնութիւն մուրալ»[31]:

Հետաքրքրական փաստեր են տեղ գտել նաև պատերազմական գործողությունների նկարագրություններում: Օրինակ՝ 1769թ. Վալախիայի վրա օսմանյան զորքերի հարձակման մասին գրում է. «Իրեք ռումէլի փաշաներու հրաման գնաց՝ որ Ուլահ Պուղտան վազեն, Մոսկովը անկէց հալածեն, մէջինները քաղեն. ասոր վրայ 25 հազար առնաւուտ զօրք Ուլահ Պուղտան յարձակեցան, բայց չի կրցան մտնել, միայն մէկ քանի տեղեր զարկին, մէջինները գերի ըրին. Աստանայոլ բերին ծախեցին, ինչպէս եկեղեցիներում պատկերները քերին, սէրային առջին դնելով կոխկռտեցին (ընդգծումը-Գ.Ղ.)»[32]: Արձանագրելուց բացի հեղինակը ոչ մի կերպ չի մեկնաբանում սրբապատկերների հետ կատարվածը: Թեև ինքնին հասկանալի է, թե ինչպես պետք է վերաբերեր հայր Ղուկասը նման բարբարոսությանը: Կարելի է ասել, որ հեղինակը վերոհիշյալ հատվածում ի ցույց է դնում նաև մի այնպիսի նողկալի երևույթ, ինչպիսին սրբապղծությունն է: Բայց եթե անգամ գերեվաճառությունը Օսմանյան կայսրությունում ժողովրդի համար սովորական դարձած և նրա կողմից «ավանդականորեն ընկալվող կենցաղի և հոգեբանության հարատևող գործոն»[33] էր, այնուամենայնիվ քրիստոնեական բարոյականությամբ շարժվող Միխիթարյան միաբանության անդամ Ղ. Ինճիճյանի համար այն չէր կարող դիտվել այլ կերպ, քան բարբարոսության հերթական դրսևորում: Հեղինակը չէր կարող մաս կազմել օսմանյան հասարակության զանգվածային հոգեբանության այն վայրենի դրսևորումներին, որ այնքան սովորական էր այն ժամանակներում[34]:

Ղ. Ինճիճյանը մանրամասն ներկայացնում է նաև հաշտության բանակցությունների ողջ ընթացքը: Որպես սկզբնաղբյուր հեղինակը

օգտագործել է դեռևս 1772 թ. օսմանյան կողմից բանակցությունները վարող Օսման էֆենդիի ոսկերիչ (ղույումճի) Պողոս Ինճիճյանի գրառումները, որի մասին գրում է. «Իր աչքով տեսածներուն տեղն ի տեղը աղէկ պատմութիւն գրած ունի, ալ ճամփորդութեան պատմութիւը, օսմանեան բանակին փարթամութիւնը, Մոսկովին բանակին ցանցազան խաղերը, որ կընէին, ժողովներուն ըլլալիքը խօսակցութեան համար, ետքը երկու դիպացէն ինչպէս բաժնուիլը»[35]: Հավանաբար այս ականատեսի գրառումները պահպանվում են Վենետիկի Մխիթարյան միաբանության դիվանում:

Հեղինակը փորձում է բացատրել պարտության պատճառները, որոնցից գլխավորը համարում է օսմանյան բանակը: Բայց անգամ այդ բանակի մասին նա տարբեր կարծիքներ է արտահայտում: Մի կողմից նշում է օսմանյան բանակի հզորության և պատրաստվածության մասին, մյուս կողմից ցույց է տալիս այդ բանակի քայքայված վիճակը: Օրինակ՝ գրում է, որ պատերազմի դաշտից ենիչերիներից շատերը «փախան անատոլու իրենց քաղաքները գացին, ճամփան շատ տանկի քաղաք թալլելով, վնասելով»[36]: Ինչպես տեսնում ենք, այստեղ բացահայտ ակնարկ կա ենիչերիական զորքի անպիտանիության և ավազակաբարո վարքի մասին: Արձանագրենք, որ «Պարապատումի» այդ հատորը, որի մեջ գրված է ենիչերիների մասին, լույս է տեսել 1826թ., երբ Մահմուդ II սուլթանը նրանց ոչնչացրեց:

Այսպիսով՝ Ղ. Ինճիճյանի աշխատություններում հսկայական նյութ կա Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության, նրա ներքին դրության, սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին:

Ղ. Ինճիճյանի համար խիստ էական է հայ ընթերցող հասարակություն ձևավորելու նպատակը: Այս խնդրի իրագործմանն է ուղղված հեղինակի ողջ գիտական և հասարակական գործունեությունը, իսկ օսմանյան պատմությունը Ղ. Ինճիճյանի համար հզոր միջոց է հայկական հասարակության ազգային ինքնագիտակցության զարթոնքի համար: Այն ժամանակվա հայ ընթերցողի համար կամա թե ակամա հարց էր առաջանում. ո՞վ է ինքը օսմանյան տերության մեջ, արդյո՞ք դա իր պետությունն է, կարո՞ղ է ստեղծել սեփականը:

Միանշանակ է, որ ժամանակի հայկական դառն իրականությունը հսկայական ազդեցություն է գործել հեղինակի աշխարհայացքի վրա, որն արտացոլվել է ոչ միայն աշխատություններում, այլ նաև նրա հասարակական գործունեության մեջ: Բայց խոսելով Ղ. Ինճիճյանի մասին՝ չպետք է մոռանալ, որ նա ժամանակակիցն է եղել Ֆրանսիական մեծ հեղափոխության, Նապոլեոնյան պատերազմների, Վիեննայի վեհաժողովի և Սրբազան դաշինքի: Հեղինակի պահպանողական ոգին շարունակ փորձության է ենթարկվել նրա ապրած ժամանակաշրջանի աշխարհացունց դեպքերի ազդեցության ներքո: Միևնույն ժամանակ, ստիպված լինելով զգուշավորությամբ շարադրել իր պատմությունը, նա մի կողմից գովում է օսմանյան սուլթաններին, պաշտպանում

Նրանց վարած արտաքին քաղաքականությունը, մյուս կողմից հաճախ առանց մեկնաբանման շարադրում է փաստեր, որոնք ցույց են տալիս պետության ճգնաժամային իրավիճակը: Օսմանյան պատմության նվիրված ողջ շարադրանքում նկատելի են հենց այս ալեբախությունները, որոնք տեղ էին ունենում հեղինակի հոգում և կարմիր թելի նման անցնում են նրա ողջ պատմանյութով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *L. Indjidjian*, Description du Bosphore. Trad. de l'arménien en français par F. Martin.Paris, Sajou, 1813. In-8, 135p, *L. Indjidjian*, Villegiature de Byzantini sul Bosforo.Tradotta dal Ch. Aznavor. Venezia, S. Lazzaro, 1830.
2. *Ղ. Ինճիճեան*, Տարեգրութիւն 1799 տարւոյն... Յամի տեառն 1800, Վենետիկ-Ս.Ղազար, էջ 9:
3. Տես. *А. Д. Новичев*, История Турции, т. IV, (1853-1875), Л. 1978, с. 73-75, *Р. А. Сафрастян*, Доктрина османизма в политической жизни Османской империи, Ереван, 1985, с. 34, *В. И. Шеремет*, Османская империя и Западная Европа, М. 1986, с.229, 240, *Б. Мюнкин*, Европейцы ли турки?, Ереван 1991.
4. *Մ. Կ. Զուլալյան*, Արևմտյան Հայաստանը XVI - XVIII դդ, Երևան, 1980, էջ11:
5. *Ղ. Ինճիճեան*, Դարապատում որ է աշխարհաճառ կամ ընդհանուր պատմութիւն, Դար ութուտասներորդ, Վենետիկ-Ս.Ղազար, 1824-1828:
6. *Հ. Ղազարյան*, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 18: *Մ. Ք. Կարինյան*, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատոր 2, Երևան, 1960, էջ 89: *Ե. Ղ. Սարգսյան*, Հայ թարգմանությունը XIX դարում և XX դարասկզբին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. X, Թուրքիա» գրքում, Երևան, 1979, էջ 253:
7. *Տարեգրութիւն 1800 տարւոյն որ է Յիշատակարան*... Վենետիկ-Ս.Ղազար, էջ 64-72:
8. Նույն տեղում, էջ 67:
9. Եղանակ Բիւզանդեան Բազմավէպ 1813, Վենետիկ-Ս.Ղազար, էջ 160-169:
10. *Ղ. Ինճիճեան*, Դարապատում...(1760-1757), Վենետիկ-Ս.Ղազար, 1824, էջ 235:
11. Ղ. Ինճիճյանի մոտ սևամորթ ներքինապետի պաշտոնը հիշատակվում է «զգլար աղասի, խզլար աղասի» ձևերով, թուրքերենում "kızlar ağası", բառացի աղջիկների պետ:
12. *J. Hammer*, Histoire de l'Empire Ottoman depuis son origine jusqu'a nos jours, T. XV, 1739-1757, Paris, 1839, p. 229.
13. *Ղ. Ինճիճեան*, Դարապատում... Նույն տեղում:
14. *М. С. Мейер*, Османская империя в XVIII веке, Черты структурного кризиса, Москва, 1991, с.148.
15. *Ղ. Ինճիճեան*, Եղանակ Բիւզանդեան 1817, Վենետիկ-Ս.Ղազար, էջ 88: 1782թ. այս ահավոր հրդեհի մասին հիշատակել են նաև *Մ. Չամչյանը*, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հատոր Գ, Համա-

նախագահություն, Երևան, 1984, էջ 104: *Մ. Չամչյան*, Պատմություն Հայոց, Կոստանդնուպոլիս, 1871, էջ 437:

16. *İ. H. Uzunçarşılı*, Osmanlı tarihi, IV. Cilt, 1. Bölüm, 2. Baskı.Ankara, 1978, s.332.
17. *М. С. Мейер*, ук.соч, с. 144.
18. *Ղ. Ինճիճեան*, Դարապատում... Նույն տեղում, էջ 239-242:
19. Օսման III-ի մեծ վեզիրների ամբողջական ցուցակը տես. *Ղուկաս Ինճիճեան*, Դարապատում... (1757-1768), Վենետիկ-Ս.Ղազար, 1825, էջ 247-248:
20. *М. С. Мейер*, там же.
21. *Տարեգրութիւն 1800 ամացն որ է Յիշատակարան*... Վենետիկ-Ս. Ղազար, էջ 14-16:
22. *G. Noradounghian*, Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman, Tome deuxième, 1789-1856, Paris, 1900, p. 28-31.
23. *Ղ. Ինճիճեան*, Դարապատում... (1768-1780), Վենետիկ-Ս.Ղազար, 1826, էջ 43-44:
24. Նույն տեղում, էջ 15, 19-20, 41-42, 57-61, 123-124, 154-158 և այլն:
25. *W. Miller*, The Ottoman Empire (1801-1913), Cambridge, 1913, p.3.
26. *Ղ. Ինճիճեան*, Դարապատում... (1768-1780), Վենետիկ-Ս.Ղազար, 1826, էջ 26-27:
27. История *Дипломатии*, Под редакцией *В. П. Потемкина*, Том первый, Москва, 1941, стр. 287, Всемирная история, том 14, Минск, 1998, стр. 48.
28. *Ղ. Ինճիճեան*, Դարապատում... (1757-1768), Վենետիկ-Ս.Ղազար, 1825, էջ 261: Անհասկանալի է մնում, թե ինչու Ղ. Ինճիճյանը ֆրանսիական հանրահայտ դեսպան և քաղաքական գործիչ Շառլ դ'Վերժեննեին անվանում է «Ճառընեալ բռինճը»:
29. *İ. H. Uzunçarşılı*, Osmanlı tarihi, IV. Cilt, 2. Kısım, XVIII. yüzyıl, Ankara, 1959, s.209.
30. Ղ. Ինճիճեան, Դարապատում... (1757-1768). Վենետիկ-Ս.Ղազար.1825, էջ 261:
31. Նույն տեղում, էջ 263:
32. *Ղ. Ինճիճեան*, Դարապատում... (1768-1780), Վենետիկ-Ս.Ղազար,1826, էջ 43:
33. *Ա. Ա. Խառատյան*, Գերության համակարգը Օսմանյան կայսրությունում, (XV-XVIII դդ.), ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2001, 1, էջ 40: Այստեղ հարկ է հիշել Մ. Բլոկին, որը խոսելով երևույթի կամ փաստի գնահատման մասին՝ հրավիրողին գրում է, որ պետք է դեռ բացահայտել, թե ինչպես էր գնահատվում այդպիսի երևույթը ժամանակի համընդհանուր բարոյականության համապատասխան /*М. Блок*, Апология истории или ремесло историка, Москва, «Наука», 1986, стр. 82/.
34. Պատմության մեջ հոգեբանական գործոնի մասին տե՛ս. История и психология, Москва, «Наука», 1971.
35. *Ղ. Ինճիճեան*, Դարապատում...(1768-1780), Վենետիկ-Ս.Ղազար,1826,էջ 64: Այստեղ հետաքրքրություն է առաջացնում նաև «Ինճիճյան» ազգանունը: Արդյո՞ք ազգակցական կապ կա Ղ. Ինճիճյանի հետ: Հայտնի է, որ Ղ. Ինճիճյանի տոհմական ազգանունը եղել է Միքայելյան: Անդրիկյանի վկայությամբ «Ինճիճյան» ազգանունը «... Ղ. Ղուկասէն գտնուած կամ հնարուած կը սեփականուի՝ փայլացնելու համար զայն իր գրերուն մա-

կատըս»: Թ. Ն. Անդրիկեան, Յ. Ղուկաս Ինճիճեան, Բազմավէպ, 1912թ. թիւ 1, էջ 42/: Այս կապակցությամբ խիստ ուշագրավ է Գ.Բամպուքճյանի կողմից կատարված մի գրառում, ըստ որի Ղ. Ինճիճյանը «Արդիահանապարհեցի Ինճիջի Յակոբ Միքայելյանի թոռն է և որդին Պողոս Ինճիճյանի»: /Kevork Pamukciyan, İstanbul yazıları, cilt I, İstanbul, 2002, s. 213/. Ցավոք Գ. Բամպուքճյանը չի նշում իր աղբյուրը: Ըստ երևույթին «Ինճիճյան» ազգանունը Ղ. Ինճիճյանը վերցրել է իրենց տոհմական համանուն արհեստից: Նրանք զբաղվել են ոսկերչությամբ և ակնավաճառությամբ:

36. *Ղ. Ինճիճեան, Դարապատում*...(1768-1780), էջ 42:

"ՔՈՒԼԵԼԻԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ" ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ. ՆԵՐԳՐԱՎԵԼՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օսմանյան կայսրության պատմությունը լի է դավադրություններով, հաջողված ու չհաջողված հեղաշրջումների փորձերով: Սակայն դրանցից և ոչ մեկը չի առաջացրել այնքան գիտական ու քաղաքական հետաքրքրություն և միաժամանակ՝ իրարամերժ մեկնաբանությունների տարափ, ինչքան 1859թ. սեպտեմբերին Կ.-Պոլսում բացահայտված սուլթան Աբդուլ Մեջիդի դեմ ուղղված դավադրությունը:

Այդ ամսվա կեսերին մայրաքաղաքում ձերբակալվեց դավադիրների մի խումբ: Նրա անդամները բանտարկվեցին "Քուլելի" անվանումը կրող զորանոցում, երեք-չորս շաբաթվա ընթացքում հարցաքննվեցին ու շատ արագ դատվեցին պետական բարձրաստիճան այրերից կազմված հատուկ դատական ատյանի կողմից: Նրանցից չորսը դատապարտվեցին մահվան, իսկ մնացյալները՝ տարբեր ժամկետների ազատազրկման կամ աքսորի: Սուլթան Աբդուլ Մեջիդի կարգադրությամբ մահապատիժները փոխարինվեցին աքսորով: Դավադրության այս չհաջողված փորձը արձանագրվեց Թուրքիայի պատմության տարեգրություններում որպես "Քուլելիի իրադարձություն" (Kuleli vaka's):

Հետազոտողների հետաքրքրությունը այս առաջին՝ հայացքից նախորդ բազմաթիվ դավադրություններից ոչնչով չտարբերվող իրադարձության նկատմամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ դավադիրները ստեղծել էին ժամանակակից հասկացողությամբ առաջին քաղաքական կազմակերպությունը Թուրքիայի պատմության մեջ: Այն ուներ իր քաղաքական ծրագիրը, որի շուրջ համախմբվել էին կազմակերպության անդամները[1]:

Սակայն այդ կարևոր իրադարձությունը լուսաբանող աղբյուրները զարմանալիորեն սակավաթիվ են, մասնավորապես, դեռևս չի հայտնաբերվել դավադիրների ծրագրի տեքստը[2]: Հետազոտողներին հայտնի աղբյուրների հիմնական զանգվածը գիտական շրջանառության մեջ է դրվել անցյալ դարի 30-60-ական թթ. և հետագայում նշանակալի լրացումներ չի ունեցել: Նրա հիմքը դրել է թուրք պատմաբան Ուլուղ Իղդեմիրը, որի մենագրությունում օգտագործված և հրատարակված են հեղինակի կողմից օսմանյան պետական արխիվի "Փաստաթղթերի գանձարան" (Hazine-i Evrak) հավաքածուի պահոցում հայտնաբերված դավադիրների դատավարության պաշտոնական արձանագրությունների տեքստերը[3]: Իղդեմիրի գրքի հրատարակումից մի քանի տարի հետո մեկը մյուսի հետևից լույս տեսան անվանի պատմաբաններ Թարըք Զաֆեր Թունայայի, Էնվեր Զիյա Քարալի և Իսմայիլ Համի Դանիշմենդի

օսմանյան աղբյուրների վրա հիմնված ընդհանրացնող բնույթի աշխատությունները, որտեղ հատուկ տեղ էր հատկացված "Քուլելիի իրադարձության" լուսաբանմանը[4]:

Հետագա տարիներին դավադրության ուսումնասիրմանը անդրադարձան արտասահմանցի մասնագետները, փորձելով լրացնել նրա աղբյուրագիտական հենքը արևմտյան ու ռուսական արխիվային նյութի ներգրավմամբ: Մոսկվացի թուրքագետ Վերա Շպիլկովան առաջինն էր, որը այդ նպատակով ձեռնարկեց ռուսական դիվանագիտական աղբյուրների հետազոտումը, հրատարակելով ընդհամենը մեկ ոչ ծավալուն հոդված, որը, սակայն, պահպանել է իր գիտական նշանակությունը մինչև մեր օրերը[5]: Ավելի ուշ ռուսական դիվանագիտական վավերագրերին հպանցիկ անդրադարձել է նաև Իռմա Ֆադեևան[6]:

"Քուլելիի իրադարձության" հետ առնչվող արևմտյան դիվանագետների պաշտոնական գրագրությանը ծանոթացել է ամերիկացի թուրքագետ Ռոդերիկ Դեյվիսոնը, որը ուսումնասիրել է բրիտանական, ֆրանսիական, ավստրիական, շվեդական և ամերիկյան արխիվները: Նա ներգրավել է նաև ժամանակիցների որոշ հուշագրություններ և մամուլի հաղորդագրություններ: Դեյվիսոնի գրչին պատկանող օսմանյան բարենորոգումներին նվիրված հիմնարար մենագրությունում տեղ է գտել է այդ իրադարձության սեղմ, սակայն կարևոր նկարագրությունը[7]:

Հիմնականում վերը նշված աշխատությունների շնորհիվ է ձևավորվել "Քուլելիի իրադարձության" հետազոտման աղբյուրագիտական հենքը: Այն ունի մի շարք կարևոր բացեր. քիչ են ուսումնասիրված օսմանյան արխիվները, ժամանակակիցների և մամուլի վկայություններից շատերը մասնագետների համար մնում են անհայտ: Արդեն շրջանառության մեջ գտնվող աղբյուրները նույնպես քիչ են: Այսպես, օրինակ, Ռ. Իրդեմիրի գրքում հրատարակված հարցաքննությունների ընթացքում դավադիրների տված պատասխանները կցկտուր բնույթ ունեն և լրիվ չեն[8]: Չի կարելի բացառել, որ նրանց զգալի հատվածը ավելի ուշ ոչնչացվել է իշխանությունների կողմից[9]: Դիվանագիտական փաստաթղթերի օգտագործումը շատ դեպքերում նույնպես չի նպաստում հարցերի պարզաբանմանը, քանի որ Կ.-Պոլսի օտար դեսպանատների զեկույցները իրենց կառավարություններին հաճախ հիմնվում են կասկածելի լրատվության աղբյուրների վրա: Այդ փաստը ժամանակին արձանագրել է արևմտյան դիվանագիտական արխիվների այնպիսի լավ գիտակ, ինչպիսին արդեն հիշատակված Ռ. Դավիսոնն է, գրելով, թե դեսպանատները դավադրության մասին ստացել էին "իրար հակասող" հաղորդագրություններ[10]: Նրա այդ եզրահանգումը հաստատվում է թեկուզ այն փաստով, որ ուսումնասիրելով ռուսական դիվանագիտական գրագրությունը Վ. Շպիլկովան և Ի. Ֆադեևան հանգել են իրարից զգալի տարբերվող եզրակացությունների:

Ըստ էության, հետագա բոլոր հետազոտողները հենվել են վերը

նշված աշխատությունների վրա և կախված իրենց պատմագիտական մոտեցումներից ու քաղաքական նախասիրություններից՝ առաջարկել "Քուլեյիի իրադարձության" այս կամ այն մեկնաբանությունը: Աղբյուրների պակասը լուրջ խոչընդոտ է այդ կարևոր իրադարձության ավելի խորը և հիմնավորված վերլուծության համար:

Այդ բացը որոշ չափով կարելի է լրացնել ներգրավելով ժամանակի հայկական մամուլի նյութերը: Որոշ դեպքերում նրա հրապարակումները կրկնում են արդեն հայտնի փաստերը, սակայն քիչ չեն նաև նոր ուշագրավ տեղեկություններ պարունակող հաղորդագրությունները: Այսպես, օրինակ, Կ.-Պոլսի "Մասիս" շաբաթաթերթի էջերում տեղ գտած լուրերից կարելի է եզրակացնել, որ դավադրությանը նախորդող ժամանակահատվածում Օսմանյան կայսրության թուրք ազգաբնակչության շրջանում նկատվում էր հակաքրիստոնեական տրամադրությունների լուրջ աճ, ինչը որոշ դեպքերում արտահայտվում էր քրիստոնյաների նկատմամբ արյունալի հաշվեհարդարների տեսքով[11]: "Մասիսի" կողմից արձանագրված են նաև կառավարության կողմից ոտնձգված արևմտամետ բարենորոգումների քաղաքականության դեմ ուղղված զանգվածային ընդվզումների դեպքեր, որոնք սովորաբար ղեկավարվում էին մահմեդական հոգևորական դասի ներկայացուցիչների կողմից: Այդ տեսանկյունից հատկանշական են իրադարձությունները Խարբերդ նահանգի Ակն գյուղաքաղաքում: Համաձայն "Մասիսի", որը այդ լուրը արտատպել է հայատառ թուրքերեն "Մեջմուայը հավադիսից", Ակնի մահմեդականները մուֆթիի առաջնորդությամբ ընդվզել են կառավարական հրովարտակի դեմ, որով թույլ էր տրվում եկեղեցիներում ղողանջել զանգերը: Այդ հրովարտակը մաս էր կազմում կառավարության կողմից թանզիմաթի բարենորոգումների շրջանակներում իրականացվող քաղաքականության և հակասում էր շարիաթին, ինչը և օգտագործում էր մուֆթին, հրահրելով ամբոխին քրիստոնյաների և արևմտամետ կառավարության դեմ: Լրագիրը վկայում է, որ ամբոխը պահանջում էր ոչնչացնել ոչ միայն "գյավուրների" եկեղեցիները, այլ նաև կառավարության հրամանները և նրանց տեղ հասցնողներին[12]: Նման իրադարձությունների մանրամասն նկարագրումները թույլ են տալիս հստակ պատկերացում ստանալ այն մթնոլորտի մասին, որը տիրում էր Օսմանյան կայսրությունում և ազդում էր դավադիրների մտածելակերպի վրա:

Մինչև մեր օրերը շարունակվում է բանավեճը "Քուլեյիի իրադարձության" բնույթի վերաբերյալ: Հետազոտողներից շատերը, հետևելով Թուրքիայի նոր շրջանի պատմության "եվրոպականացված պարադիգմին", բնութագրում են դավադրությունը որպես "հակամիապետական", նշում են, որ նրա մասնակիցները ունեին "ազատական" ու "սահմանադրական" հայացքներ և համարում են այն Օսմանյան կայսրությունում սահմանադրական շարժման առաջին արտահայտումը[13]: Թուրքիայում այդ մոտեցումը ժամանակին ստացել է Աթաթ-

յուրքի հավանությունը և տեղ է գտել Թուրքական պատմական ընկերության կողմից հրատարակված պաշտոնական պատմության էջերում[14]:

Դավադիրների սահմանադրական հայացքների մասին գրել են նաև որոշ ժամանակակիցներ: Սակայն նրանք չեն հիմնվել արժանահավատ փաստերի վրա: Այսպես, օրինակ, 1859թ. դավադրությանը անդրադարձել է այդ ժամանակաշրջանում Բաղդադում տեղակայված ֆրանսիական հյուպատոս Է. Էնգելհարդտը: Տարիներ անց նա հրատարակեց հուշագրական բնույթի ստվարածավալ մի գիրք, որտեղ պաշտպանվում է Ֆրանսիայի պաշտոնական քաղաքականությունը Օսմանյան կայսրության նկատմամբ, որի նպատակն էր արևմտամետ բարենորոգումների միջոցով պահպանել նրա տարածքային ամբողջականությունը: Այստեղ նշված է, որ դավադրության նպատակը խորհրդարանի հռչակումն էր, ընդ որում, այն պիտի կազմված լիներ և մահմեդականներից, և քրիստոնյաներից[15]: Այդ կարևոր տեղեկության աղբյուրը, համաձայն Էնգելհարդտի, ոմն "անանուն հրապարակախոս" էր[16]: Ցավոք, այս կասկածելի տեղեկատվությունը հետագայում բազմիցս օգտագործվել է մասնագիտական գրականության մեջ՝ չենթարկվելով լուրջ քննության:

Կան նաև մասնագետներ, որոնք կապ են տեսնում դավադիրների և առաջին թուրք սահմանադրականների՝ "Նոր օսմանցիների" գաղտնի կազմակերպության միջև, կամ էլ նույնիսկ համարում են դավադրությունը հեղափոխական երիտթուրքական շարժման սկզբնավորումը ազդարարող իրադարձություն[17]:

Հետազոտողների մեկ այլ, բավական մեծաթիվ խումբ գտնում է, որ դավադիրների հիմնական նպատակն էր վերջ դնել թանզիմաթի արևմտամետ բարենորոգումներին ու վերականգնել քրիստոնյաների ստորադաս իրավական դրությունը Օսմանյան կայսրությունում ամրագրող շարիաթի օրենքները իրենց "անաղարտ" տեսքով[18]: Այդ տեսակետների կողմնակիցները հենվում են ինչպես ձերբակալվածների ցուցմունքների, այնպես էլ այն հանգամանքի վրա, որ դավադիրներից շատերը պատկանում էին մահմեդական հոգևորական դասին:

Այս վերջին մեկնաբանությունը ոչ ուղղակի կերպով հաստատվում է հայկական մամուլի հրապարակումներով: Օրինակ, "Մասիսի" էջերում զետեղված մի հետաքրքիր նյութից պարզվում է, որ դավադրության բացահայտումից անմիջապես հետո սուլթան Աբդուլ Մեջիդը, որը դավադիրների գլխավոր թիրախն էր, Թոփ Քափուի իր պալատում շուտափույթ կատարել է "Ռուկյա խրղովակի փոփոխման"[19] կրոնական մեծահանդես ծիսակատարությունը, ձգտելով այդպիսով վերականգնել թանզիմաթի բարեփոխումների հետևանքով ուղղափառ մահմեդականների աչքերում իր սասանված հեղինակությունը[20]:

Դավադիրները եղել են լավ կազմակերպված և ունեցել են բազմաթիվ համախոհներ: Համաձայն ձերբակալվածների ցուցմունքների,

դավադրությանը պատրաստ էին միանալ տասնյակ հազարավոր զինվորականներ և կրոնական կազմակերպությունների անդամներ[21]: Մատնության հետևանքով այն բացահայտվելուց հետո տեղի ունեցան ձերբակալություններ: "Մասիսը", դեռևս չունենալով պաշտոնական տվյալներ, զգուշորեն հայտնում էր "բազմաթիվ" ձերբակալությունների մասին[22], իսկ Թիֆլիսի "Մեղու Հայաստանի" շաբաթաթերթը, հենվելով ռուսական աղբյուրների վրա, գրում էր երկու հարյուր "բանտարկվածների" մասին[23]: Սակայն կառավարությունը արագ սթափվեց ու ամեն կերպ փորձեց կոծկել դավադրության իրական չափերը, այդ նպատակով պաշտոնական հաղորդագրություններում զետեղելով ձերբակալվածների ակնհայտորեն նվազեցված թվեր: "Մասիսի" համապատասխան հրապարակման մեջ կարդում ենք, թե համաձայն պաշտոնական տվյալների, նրանց թիվը կազմում էր ընդամենը 34 մարդ[24]:

"Մեղու Հայաստանի" կողմից տպագրված հաղորդագրություններից մեկը ցույց է տալիս, թե անհրաժեշտության դեպքում ինչ արագ էր կողմնորոշվում ու գործում օսմանյան կառավարությունը և ինչպես էր հասնում իր տեսանկյունից նպատակավոր լուրերի տարածմանը: Լրագիրը գրում է, թե Փարիզի թուրքական դեսպանատունը դավադրության բացահայտումից երկու օր չանցած Կ.-Պոլսից ստացավ հեռագիր, որտեղ ընդգծվում էր, թե դավադրությունը ուղղված է եղել սուլթանի դեմ և նրանում "երևելի բան չկար", թե դավադիրների թիվը քառասունից չէր անցնում և նրանց մեծամասնությունը "չերքեզներ ու քրդեր էին"[25]: Այս դրույթները, որոնք զգալիորեն տարբերվում են և դավադիրների ցուցմունքներից, և մի շարք այլ վկայություններից, հետագայում դրվեցին "Քուլելիի իրադարձության" պաշտոնական մեկնաբանության հիմքում և մեծապես ներազդեցին որոշ հետազոտողների մոտեցումների վրա[26]: Այնպես որ, հայկական լրագրի վերևում հիշատակված հաղորդագրությունը, օսմանյան արխիվների և ժամանակի արտասահմանյան մամուլի դժվար հասանելիության պայմաններում ունի կարևոր աղբյուրագիտական նշանակություն:

Դավադրությունը բացահայտվելուց հետո, համաձայն ոչ պաշտոնական հաղորդագրությունների, տեղի ունեցան մի քանի իրադարձություն, որոնք լրացուցիչ լույս են սփռում նրա մասնակիցների բուն նպատակների վրա: Դրանցից մեկի մասին տեղեկացնում է "Մեղու Հայաստանին", գրելով, թե մայրաքաղաքի եվրոպական թաղամասում հայտնաբերվել է "այրող մեքենա", որի նպատակն էր "կրակ տալ ֆրանկների թաղը"[27]: Այսպիսով մեկ անգամ ևս հաստատվում է այն կարծիքը, որ դավադրությունը իր էությամբ հակաքրիստոնյա ու հակաարևմտյան էր: Այս լուրը վկայում է նաև, որ դավադիրների ձերբակալություններից հետո ազատության մեջ էին մնացել նրանց համախոհները, որոնք փորձում էին գործել: Ուշագրավ է, որ որոշ թուրք հեղինակներ ժամանակին նույնպես նշել են այդ հանգամանքը[28]:

Իրադրությունը մայրաքաղաքում դավադրությունը բացահայտելուց հետո առաջին մի քանի շաբաթվա ընթացքում չափազանց լարված էր: Սադրազամ Ալի փաշայի ղեկավարած կառավարությունը, որը գտնվում էր Մեծ տերությունների լուրջ ճնշման ներքո, շտապում էր հանգստացնել և արտասահմանյան դեսպանատներին, և երկրի քրիստոնյա հպատակներին, պնդելով, թե դավադիրները թեպետ հանդես էին գալիս արևմտամետ բարենորոգումների դեմ, սակայն չէին ծրագրել վնաս հասցնել քրիստոնյաներին: Այդ նպատակով, նախքան հետաքննության արդյունքների պաշտոնական հրապարակումը, իշխանությունները կազմակերպեցին լրատվության արտահոսք: Իշխանամետ "Մասիսը", չնշելով լրատվության աղբյուրը, գրում էր, թե հայտնի է դարձել, որ "այս դավադրությունը հին գաղափարի տեր անձանց գործ է, այսու ամենայնիվ [դավադիրները – Ռ.Մ.] տերության քրիստոնյա ժողովուրդացը գեշություն ընելու դիտավորություն չունեին"[29]:

Ուշագրավ է, որ սուլթանի հրամանով ստեղծված և Ալիի կողմից ղեկավարվող հանձնաժողովի կատարված հետաքննության պաշտոնական արդյունքները այդպես էլ լրիվին չհրապարակվեցին, այլ ամփոփվեցին հատուկ տեղեկագրի մեջ և հանձնվեցին սուլթան Աբդուլ Մեջիդին: "Մասիսը" փոխանցմամբ այդ "մեծահատոր գրքի" մեջ տեղ էին գտել ինչպես հետաքննության մանրամասները և մեղադրյալների հարցաքննությունների արդյունքները, այնպես էլ եզրահանգումներ դավադրության բնույթի վերաբերյալ[30]: Լրագիրը ենթադրում էր, որ այն լրիվին կհրապարակվի մի քանի օր հետո[31]: Սակայն կառավարությունն արտոնեց հրատարակել այդ գրքի միայն այն փոքրածավալ հատվածը, որտեղ ներկայացված էին ձերբակալվածների անունները և նրանց մասին որոշ տեղեկություններ, որոնք, ի դեպ, արդեն վաղուց հայտնի էին[32]:

Դավադրությունը բացահայտելուց հետո օսմանյան իշխանությունները դիմեցին կտրուկ միջոցների, որոնց նպատակն էր բացառել նման միջադեպերի կրկնության հնարավորությունը[33]: Հայկական մամուլի էջերում տեղ գտած տեղեկատվությունը այդ գործունեության մասին հետաքրքիր է առաջին հերթին նրանով, որ որոշ դեպքերում նրա հաղորդած փաստերը տեղ չեն գտել այլ աղբյուրներում և հետազոտողների համար մնացել են անհայտ: Այսպես, օրինակ, "Մասիսի" հրապարակումից պարզվում է, որ չեյխ-ուլ իսլամի կարգադրությամբ ստեղծվել էր նոր "հանձնարարական ժողով", որը պիտի հետևեր սոֆթաների (հոգևոր ուսումնական հաստատությունների ուսանողների) վարքին և դրա հիման վրա նրանց տար համապատասխան բնութագրեր: Բացասական բնութագրեր ստացողներին պիտի անհապաղ վտարեին ուսումնական հաստատություններից ու վերադարձնեին իրենց ծննդավայրերը[34]: Այս նախադեպը չունեցող որոշումը փաստում է, թե որքան մեծ էր իշխանությունների անհանգստությունը սոֆթանե-

րի միջավայրում ստեղծված իրադրությամբ:

Վերևում շարադրված փաստերը հնարավորություն են տալիս եզրակացնել, որ ժամանակի հայկական մամուլի հրապարակումները պարունակում են մի շարք նոր տեղեկություններ "Քուլելիի իրադարձության" մասին և կարող են նպաստել նրա հետազոտման աղբյուրագիտական հենքի ընդլայնմանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այդ տեսակետը ժամանակին առաջ է քաշել ու հիմնավորել է ճանաչված թուրք քաղաքագետ ու պատմաբան Թարըք Զաֆեր Թունայան: Տես. *Tarık Z. Tunaya*, Türkiye'de siyasî partiler (1859 -1952). İstanbul, 1952, s. 89 – 90: Ներկայումս այն չի վիճարկվում:
2. Գերմանացի հետազոտող Բ. Շտեռնը Օսմանյան կայսրությունում ծավալված բարենորոգչական շարժմանը նվիրված իր գրքում նույնիսկ մեջբերում է պատառել դավադիրների ծրագրից, սակայն չի նշել որևիցե աղբյուր: Տես. *Bernhard Stern*, Jungtürken und Verschwörer. Die innere Lage der Türkei unter Abdul Hamid II. Leipzig, 1901, S. 110.
3. *Uluğ İğdemir*, Kuleli Vak'ası hakkında bir araştıma. Ankara, 1937.
4. *Tarık Z. Tunaya*, Türkiyede siyasî partiler (1859-1952). İstanbul, 1952, s. 89 – 90; *Enver Ziya Karal*, Osmanlı Tarihi, VI: Islahat fermanı devri, 1856 – 1861. Ankara, 1954, s. 95 – 97; *İsmail Hami Danişmend*, İzahlı Osmanlı tarihi kronolojisi. Cilt 4, 1703 – 1924. İstanbul, 1955, s. 188 – 190.
5. *В. И. Шпилькова*, Антимонархический заговор 1859 г. в Турции. – Проблемы востоковедения, 1959, No. 1, с. 100 – 104.
6. *Н. Л. Фадеева*, Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм - панисламизм): XIX – начало XX в. Москва, 1985, с.76.
7. *Roderic Davison*, Reform in the Ottoman Empire, 1856-1976. Princeton, 1963, p. 100 – 103.
8. *Uluğ İğdemir*, Kuleli Vak'ası hakkında bir araştıma. Ankara, 1937, s. 34-37.
9. Այդ մասին տես ներքևում:
10. *Roderic Davison*, Reform in the Ottoman Empire, 1856-1976. Princeton, 1963, p. 102.
11. Տես, օրինակ, *Մասիս*, 1859, 23 հուլիսի:
12. *Մասիս*, 1859, 13 օգոստոսի:
13. Տես, օրինակ, *В. И. Шпилькова*, Антимонархический заговор 1859 г. в Турции. – Проблемы востоковедения, 1959, No. 1, с. 100 – 104; *Niyazi Berkes*, Türkiye'de çağdaşlaşma. İstanbul, 1978, s. 241 – 244; *Raif Karadağ*, Muhteşem İmparatorluğu yıkanlar. 4. Baskı. İstanbul, 1991, s. 177, 85 – 93.
14. Tarih, III: Yeni ve yakın zamanlar. İstanbul, 1933, s. 252.
15. *Ed. Engelhardt*, La Turquie et le Tanzimat ou histoire des réformes dans L'Empire

Ottoman depuis 1826 jusqu'à nos jours. Paris, 1882, p. 159.

16. Ibid., p. 158.
17. Այդ տեսակետը բազմիցս հայտնել է երիտթուրքական շարժման ժամանակից ու հետագայում Ահմեդ Բեդևի Քուրանը, չհիմնավորելով այն համոզիչ փաստերով: Տես, օրինակ, նրա հետևյալ գրքերը. *Ahmed Bedevi Kuran*, İnkılâp tarihimiz ve İttihad ve Terakki. İstanbul, 1948, s. 20; *Ahmed Bedevi Kuran*, Osmanlı İmparatorluğunda ve Türkiye Cumhuriyetinde İnkılâp Hareketleri. İstanbul, 1959, s. 62.
18. Տես, օրինակ, *L. Collas*, Histoire de L'Empire Ottoman jusqu'à la revolution de 1909. Paris, [s.d.], p. 139; *Roderic Davison*, Turkish Attitudes Concerning Christian – Muslim Equality in the Nineteenth Century. – The American Historical Review, 1954, Vol. LIX, No 4, p. 861; *İsmail Hami Danişmend*, İzahlı Osmanlı tarihi kronolojisi. Cilt: 4, 1703 – 1924, İstanbul, 1955, s. 188 - 189. *Ю. А. Петросян*, К вопросу о характере Кулелийского инцидента 1859 г. и его месте в истории Турции. – Народы Азии и Африки, 1961, 6, с. 108; *Roderic Davison*, Reform in the Ottoman Empire, 1856-1976. Princeton, 1963, p. 102; *Fürüzan Hüsrev Tökin*, Türkiye'de siyasî partiler ve siyasî düşüncenin gelişmesi, 1839 – 1965. İstanbul, 1965, s. 16 – 17. *Mümtaz'er Türköne*, Siyasi ideoloji olarak İslamcılığın doğuşu. 2. Baskı. İstanbul, 1994, s. 145; *Hüseyin Çelik*, Ali Suavi ve dönemi. İstanbul, 1994, s. 21; *Murat Bardakçı*, 139 sene önceki şeriat komplosunun hikâyesi. – Hurriyet, 8 Kasım 1998.
19. Այդ խորհրդակի ծոց պահվում էին Սերքաշի մզկիթի վրայից հավաքված անձրևի "սրբազան" կաթիլներով:
20. *Մասիս*, 1859, 10 սեպտեմբերի:
21. *Uluğ İğdemir*, Kuleli Vak'ası hakkında bir araştırma. Ankara, 1937, s. 59 – 63.
22. *Մասիս*, 1859, 10 սեպտեմբերի:
23. *Մեղու Հայաստանի*, 1859, 10 հոկտեմբերի:
24. *Մասիս*, 1859, 17 սեպտեմբերի:
25. *Մեղու Հայաստանի*, 1859, 17 հոկտեմբերի:
26. Համաձայն պաշտոնական տվյալների ձերբակալվածների վերջնական թիվը հասել էր քառասունմեկի: Տես. *İsmail Hami Danişmend*, İzahlı Osmanlı tarihi kronolojisi. Cilt: 4, 1703 – 1924. İstanbul, 1955, s. 189.
27. *Մեղու Հայաստանի*, 1859, 7 նոյեմբերի:
28. Ձերբակալություններից խուսափողների թիվը այդպես էլ մնաց անհայտ: Տես. *İsmail Hami Danişmend*, İzahlı Osmanlı tarihi kronolojisi. Cilt: 4, 1703 – 1924. İstanbul, 1955, s. 189.
29. *Մասիս*, 1859, 19 սեպտեմբերի:
30. Տես. *Մասիս*, 1859, 29 հոկտեմբերի:
31. Նույն տեղում:
32. Տես. *Մասիս*, 1859, 5 նոյեմբերի:
33. Տես այդ մասին. *Roderic Davison*, Reform in the Ottoman Empire, 1856-1976. Princeton, 1963, p. 102; *В. И. Шпильков*, Антимонархический заговор 1859 г. в Турции. – Проблемы востоковедения, 1959, No. 1, с. 103 – 104.
34. *Մասիս*, 1859, 19 նոյեմբերի:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՋՎԱԳՑՈՒՅՑ ՈՒ ԲԱՑԱՌԻԿ ԳԻՐՔ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարո ՔՅՈՒՐՔՄԱՆ. Հայ նկարիչները Օսմանյան կայսրությունում 1600-1923թթ., Ստամբուլ, Մաթուսալեմ, 2004թ. երկու հատոր, 988 էջ (թուրքերեն, անգլերեն լեզուներով):

Garo KÜRKMAN. *OSMANLI İMPERATORLUĞU'NDA ERMENİ RESSAMLAR 1600-1923*. İstanbul, Matûsalem Uzmanlık ve Yayıncılık, 2004, 2cilt; 988s.

Երկհատորյակն ու ճոխ հրատարակած այս աշխատության հեղինակը ստամբուլահայ ճանաչված ու հեղինակավոր գիտնական, Օսմանյան կայսրության տարածքի գիտության և արվեստների, արհեստների միջազգային ճանաչման արժանացած հետազոտող, մեր ժամանակակից Կարո Քյուրքմանն է, իսկ գործը՝ նրա 15 տարիների տքնաջան աշխատանքի ու պրպտումների հոյակապ արտահայտությունը: Այն տպագրվել է Ստամբուլի «Մաթուսալեմ» հրատարակչության կողմից թուրքերեն ու անգլերեն երկու տարբերակներով, երկհատորյակ է:

Տարիներ ի վեր պոլսահայ կանադաբնակ գիտնականի ուսումնասիրության առարկա են հանդիսանում Օսմանյան կայսրության տարածքում մշակույթի ու գիտության տարբեր ճյուղերի ուսումնասիրությունը: Կարո Քյուրքմանի սույն աշխատությանը նախորդել են՝

1. Չափ ու կշիռը Անատոլիայում,
2. Օսմանյան արծաթե կնիքները,
3. Չափ ու կշիռը Օսմանցիների մոտ պատկառելի գործերը:

Հեղինակի հետաքրքրությունների ոլորտում են պղնձագործության, արծաթագործության, ոսկերչության, Կուտինայի ճենապակու մասին ուսումնասիրությունները: Այս և նախկին բոլոր գործերում ուսումնասիրությունների մեխը՝ հայ ժողովրդի ներդրումն ու նրա ներկայացումն է, ուսումնասիրությունն ու բազմաթիվ համապատասխան փաստերի վերհանումը, ապացուցումը: Այսինքն, Օսմանյան կայսրության տարածքում վերոհիշյալ բնագավառներում հայ ժողովրդի ունեցած դերի ուսումնասիրությունն է նաև: Այս աշխատություններն իրենց տեսակի մեջ առաջին կոթողային գործերն են: Դրանք ամբողջական նյութ են պարունակում ուսումնասիրության առարկաների շուրջ, գիտական հայտնագործությունների, վերծանությունների, փաստական առատ նյութի, դրանց հիման վրա գրված արժեքավոր ուսումնասիրություններ են, շքեղ հրատարակված, բազմաթիվ լուսանկարներով հագեցված:

«Հայ նկարիչները Օսմանյան կայսրությունում 1800-1923թթ.» երկհատորյակում ներկայացված նկարիչների թիվը 455 է, նկարների թիվը 934:

1800-1923թթ. (մինչհանրապետական) շրջանի նկարիչների մասին գիրքը սկսվում է հեղինակի նրանց իսկ ուղղված երախտագիտության խոսքերով:

Հրատարակության իրականացման գործում իրենց օգնությունը ցուցաբերած անձանց ուղղված շնորհակալական խոսքը ոչ միայն ցուցակն է երախտավորների: Նրանց անվանը կից տարբեր երկրների նշումը թույլ է տալիս մոտավոր պատկերացում ունենալ այն հսկայական պրպտումների շուրջ, որ կատարել է հեղինակը աշխարհի բոլոր կողմերում, թանգարաններում ու գրադարաններում, մատենադարաններում ու մասնավոր հավաքածուներում: Գրքում ներկայացված նկարների հիմնական մասը գտնվում է Ստամբուլի ազգային թանգարանում, Օսմանյան արխիվների նախարարությունում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության թանգարաններում, Բեշիկթաշի ծովային թանգարանում, Թոփ Գափուի և Դոլմաբահչեի պալատ-թանգարաններում, Ստամբուլի իսլամական արվեստի ու մշակույթի հետազոտությունների կենտրոնում, Վիեննայի, Նյու-Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում և Գրիգոր ու Կլարա Զոհրապ ինֆորմացիոն կենտրոնում, Ստամբուլի հայկական պատրիարքարանում, Ստամբուլի Սադրբերք Հանըմ և Սաբանջըի թանգարաններում: Բազմաթիվ նկարներ գտնվում են մասնավոր հավաքածուներում աշխարհի տարբեր քաղաքներում և նույնիսկ՝ Ստամբուլի հնաոճ իրերի վաճառատներում:

Գրքի ներածականներից առաջին խոսքը ստորագրել են Նազան Օլչերը և Ֆիլիզ Չաղմանը: Եվրոպական հասկացությամբ նկարչության մուտքը Օսմանյան կայսրություն կարելի է համարել 19-րդ դարից: Համառոտագույնս անդրադառնալով կերպարվեստի այս բնագավառի հիշարժան հատվածներին, նրանք մեծապես արժևորում են գիրքը, այն համարելով Քյուրքճյանի մեծագույն ծառայությունն ու նվերը արվեստասերներին:

Հեղինակային ներածականում Քյուրքճյանն անդրադարձել է մինչ այդ իր կատարած ուսումնասիրություններին, գրքի կազմության սկզբունքներին:

Նկարիչները ներկայացվում են ըստ այբբենական կարգի: Այս հանգամանքը թվում է, թե թույլ չի տալիս հետևելու ժամանակի գծին, պատմության որոշակի ժամանակահատվածում ստեղծագործած արվեստագետներին ընդհանուր առմամբ, զգալու մթնոլորտը, ժամանակի բնորոշ շունչը, նրանց կապող ու միմյանց տարբերող գծերը, տարբեր դպրոցների պատկանելու հանգամանքը ու տվյալ ժամանակի իրական արտահայտությունը: Մյուս կողմից՝ այբբենական սկզբունքը թույլ է տալիս միավորելու, խմբավորելու նույն ընտանիքի նկարիչներին, վեր հանելով բազմաթիվ կարևոր անուններ, որոնք ժառանգա-

բար անցկացրել են իրենց միջով, արտահայտիչը դառնալով գույների, վրձնի, կերպարվեստի համաշխարհային ու ազգային ավանդույթների: Այս գրքում ի մի են բերված Օսմանյան կայսրությանը պատկանող տարածքում ծնված պրոֆեսիոնալ ու ինքնուսույց նկարիչները, նաև՝ որոշ ժամանակ այնտեղ ստեղծագործած անունները:

88 էջերից կազմված ներածությունը հայ կերպարվեստի պատմության համառոտ շարադրանքի լավագույն օրինակ է: Այն ներառում է հայ մանրանկարչությունն իր փառավոր անուններով ու դպրոցներով, դրանց ամենատարբեր օրինակները ներկայացնելով: Հայկական ձեռագրեր, Ֆլորենցիայի դպրոցի գծանկարներ ու յուղանկարներ, սրբապատկերներ և այլն:

Ներածության կարևոր մաս է կազմում 19-րդ դարում Օսմանյան կայսրությունում գեղարվեստի՝ նկարչական, քանդակագործության դպրոցների մասին պատմող հատվածը, միջազգային՝ Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի, Չիկագոյի, Մյունխենի, Ստամբուլի ցուցահանդեսներում և նկարչական, լուսանկարչական, ճարտարապետական, ծրագի աշխատանքների եվրոպական ու արդեն նաև թուրքական գեղարվեստի սալոններում Օսմանյան կայսրության արվեստագետների մասնակցության, դրանց կատալոգների մասին: Հետաքրքրական են փորագրանկարների (գրավյուրաների), գեղարվեստի իրերի վաճառականների, ձեռագրերի ու մանրանկարչության ստեղծման ողջ շղթայի նկարագրությունները՝ կենդանիների կաշվի մշակումից մինչև ամենատարբեր տեսակի բնական և արհեստական ներկերի ստացման, օգտագործման եղանակների մասին պատմությունները:

Գրքում ներկայացվում են արվեստագետների լուսանկարները, կենսագրական համառոտ տեղեկություններ, նրանց մի քանի գործերը և նկարի վրայի հայատառ, լատինատառ ու արաբատառ ստորագրությունների, թվականների լուսանկարները՝ խոշորացված: Բնականաբար՝ նկարների անունը, նկարչության տեխնիկան և գտնվելու տեղը, չափսերը, երբեմն նաև արվեստագետի այցետոմսը, օսմաներեն ստորագրությունների վերծանումը:

Աբդուլլահ եղբայրների լուսանկարները սկիզբն են Օսմանյան կայսրությունում լուսանկարչական արվեստի: Նրանց հետևել են հայազգի լուսանկարիչների մի փառավոր շարան: Նրանք Օսմանյան կայսրության լուսանկարչությանը նվիրված վերջերս հրատարակված գրքի մի պատկառելի մասն են կազմում: Գրքի նկարազարդման, գովազդների, այցեքարտերի, օսմաներեն տառերի կալիգրաֆիական(գեղագրական) արվեստի մեջ հայազգի նկարիչների ներդրումն անժխտելի է եղել:

Գրքի ամեն մի էջը հայտնագործության է նման՝ Ա-ից մինչև Ֆ: Անուններ, որոնք լսել կամ չենք լսել անգամ: Գործեր, որոնց մասին երազել կարող էինք միայն:

Շեշտը դնելով հատկապես բովանդակային առումով հայկակա-

նից, քրիստոնեականից դուրս ստեղծագործությունների վրա, նշենք օսմանյան գահի տիրակալների մինչև 31 սուլթանների մանրանկարներով (Թոփ-Գափուի թանգարանի առաջին, օսմանյան սուլթանների սրահի զարդերից), նույն այս սուլթանների, փաշաների, տարբեր նախարարների (Մահմուդ II, Սելիմ III, Աբդուլազիզ, Աբդուլմեջիդ, Մեհմեդ V, Մեհմեդ VI, Աբդուլհամիդ II, Մուրադ V, արքայադուստր Ֆաթմա Ալի, Ահմեդ, Մուստաֆա Ռեշիդ, Միդհատ, Ալնի, Մեհմեդ Թևֆիկ, Չերքեզ Աբդի փաշաներ, Շամիլ, և այլն, և այլն) տարբեր ժամանակների նկարները մինչև անգամ դրանցով գոհարազարդ բազմաթիվ զարդեր, կիրառական արվեստի տարբեր գլուխգործոցներ, դրոշմանիշներ, փոստային բացիկներ, դրամներ, մեդալներ, գեղանկարներով ոճավորված զենքեր, մասնավորապես օսմաներենով գրքերի տպագրության համար առատորեն կատարված հրաշալի փորագրանկարներ և այլն: Օսմանյան սուլթանների դիմանկարներից սկսած, պատմական, պատերազմական նշանավոր տարբեր դրվագներից, ծովամարտերի նկարներից մինչև հանրապետական Թուրքիայի ամենանշանավոր ղեկավարների ամենահայտնի նկարների մեծագույն մասը, բնականաբար նաև երկրի տարբեր վայրերի, Ստամբուլի թաղերի ու ծովեզրյա տեսարանների, կղզիների, պատմական հուշարձանների, թող որ պալատական հայ ճարտարապետների կողմից հեղինակված պալատների, մզկիթների նկարները հայ հեղինակների վրձնի արդյունքն են: Նույն սուլթանի տարբեր տարիների նկարների գոյությունը ապացույցն է այն բանի, որ այդ նկարչական գերդաստանները մեծ համարում են ունեցել, պալատական նկարիչների պաշտոն զբաղեցրել ու անմրցելի համարվել իրենց ժամանակին: Արվեստի բացառիկ գործեր, նկարչական տեխնիկայի, տաղանդի, հանճարի արտահայտություններ, որոնց հեղինակները հայեր են եղել: Մի բնագավառ, որ կայսրության կյանքի արտացոլման պատմական կարևոր հատված է, իր ժամանակի յուրատեսակ հայելի: Ոսկերիչների, ժամագործների, բանկիրների, դրամահատարանի և վառոդարանի ղեկավարների, ճարտարապետների և այլոց կողքին սուլթանական պալատներում տարիներ ի վեր ծառայել են նաև հայ նկարիչների գերդաստաններ, որոնցից շատերը ամիրայական կոչման ու սուլթանական այլևայլ շնորհների են արժանացել: Մենք հատկապես նկատի ունենք կեսարացի Մանասների պալատական նկարիչների գերդաստանը և մասնավորապես Ռաֆայել Մանասին(1715-1780), որին ժամանակակիցներն անվանել են իրենց ժամանակի Ռաֆայելը: Կարո Քյուրքճյանը համադրելով տաղանդավոր նկարչի մասին բոլոր մատենագիտական փաստերը՝ ճշտում է նաև նրա ծննդյան ու մահվան թվականները: Հանգամանք, որը գրքի գիտական հերթական արժանիքներից է: Սակայն կարծում ենք, որ Մանասներին վերաբերող ուսումնասիրություններում դեռ շատ քիչ բան է ասվել: Ավելին, դեռ կլինեն նոր հայտնագործություններ չբացահայտված հայազգի տաղանդավոր գեղանկարիչների գերդաստանում, նրանց

արվեստի ուսումնասիրություններում:

Մենք առաջին անգամ ծանոթացանք Մանասների անվանը, տեսանք նրանց գործերը, երբ մոտ 10 տարի առաջ փարիզյան հայտնի աճուրդի տներից մեկում վաճառքի էր հանվել Աբդուլ Համիդի ժառանգներից մեկի սուլթան պալատից ստացած ժառանգության գեղարվեստի նմուշները: Դրանց թվում 3 տարբեր Մանասներ ու հայկական այլ վարպետների նկարներ, գորգեր ու կիրառական արվեստի հիասքանչ գործեր կային:

Հայ նկարիչների փառքն այնքան է տարածված եղել, որ գրքում գտնում ենք նաև օտար պատվիրատուների, շատ հայտնի դեմքերի նկարներ: Անկարելի է չքանչանալ լավագույն Վիկտոր Հյուգոյով, Էդուարդ VII, ամիրաների ու նրանց ընտանիքների անդամների դիմանկարներով, աստվածաշնչային բովանդակության բազմաթիվ ապշեցնող կտավներով:

Կարո Քյուրքճյանը արևմտահայ գրականության ու պարբերական մամուլի գիտակ է, ծանոթ արևելահայ հանրագիտարանային գրականությանը: Նկարիչների կենսագրությունները ներկայացնելիս հեղինակը մեծապես օգտվել է Գառնիկ Ստեփանյանի «Կենսագրական բառարան»-ից: Որոշ նկարիչների, որոշ նկարների ու նրանց ուր գտնվելու մասին աշխատանքները իսկական հետազոտողին վայել հաջողությունների արձանագրումներ են: Գրքի վերջում կան նկարների բովանդակային ցանկեր, նկարիչների ցանկ, անվանացանկ, օգտագործված հարուստ գրականության ցանկ, նկարների վերնագրերի ցանկ: Գիրքը բաղկացած է 988 մեծադիր էջերից: Այն թերթելիս չես դադարում հիանալ ու զարմանալ: Ինչպիսի անուններ, ինչպիսի նկարներ, որոնց մասին մենք պատկերացում անգամ չունեինք, մինչդեռ դրանցից շատերը անվերապահորեն լավագույն, հանճարեղ, անկրկնելի մանկիրների արժանի նկարիչների և նույնպիսի հիացմունքի արժանի գործեր են: Կարո Քյուրքճյանը գիտական պատկառելի գործ է կատարել: Այն մեծ ներդրում է հայ մշակույթի, մասնավորապես կերպարվեստի պատմության բնագավառում: Այս պատկառելի աշխատությունների հայերեն թարգմանությունը մեր պատվի, ու նաև անհրաժեշտության գործ է, իսկ նրա հեղինակը, միջազգային ճանաչում վայելող Կարո Քյուրքճյանն արժանի է մեր հայրենիքի Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամի կոչմանը:

Այս գիրքը հարգանքի տուրք ու ոգեկոչում է մեր բոլոր հայտնի ու անհայտ, մոռացված արվեստագետների հիշատակին:

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՎՍ ՄԵԿ ՑՆՑՈՂ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

V.Ianko, The Promise at the Sea, New York, 2004, 281p.

Ինչո՞ւ են ոմանք փրկվում համընդհանուր կոտորածից: Գուցե, կա միայն մեկ պատճառ՝ որպեսզի վկայեն:

Թուրքերի կողմից հայերի ցեղասպանությունը մեծագույն մարտահրավեր էր հայ ժողովրդին նետված ճակատագրի կողմից: Անցած դարերի ընթացքում հայերի ջարդերը՝ կազմակերպված Օսմանյան կայսրության կողմից, չեն կրել այն կործանարար հզոր ուժը, որ բովանդակում էր իր մեջ Հայոց Մեծ եղեռնը:

Առաջին համաշխարհային պատերազմի թոհուբոհից թույլ տվեց իրականացնել մեկ ամբողջ ժողովրդի բնաջնջման փորձ, որը նախապես ծրագրված էր ու կազմակերպվեց պետության կողմից: Այնուամենայնիվ, զանգվածային կոտորածների իրականացումը նաև քեմալական բանակի կողմից վկայում է այն մասին, որ հայերի ցեղասպանությունը ոչ թե միայն երիտթուրքերի պարագլուխների մտահղացումն էր, այլ հասարակական պատվեր, որ իրականացվում էր բոլոր հնարավոր միջոցներով, ամեն պատեհ առիթի դեպքում:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը միշտապես գտնվել է հայ պատմաբանների հետաքրքրության կենտրոնում: Եթե սրան գումարենք նաև այլազգի պատմաբանների հետազոտությունները, ապա թվում է, թե ցեղասպանությունը լիովին ուսումնասիրված է: Իրավամբ, 1915-1923թթ. իրադարձությունները լիարժեքորեն ուսումնասիրված են այն առումով, որ անհերքելիորեն ապացուցված է դրանց՝ ցեղասպանություն լինելու փաստը: Սակայն, սա չի նշանակում, որ ուսումնասիրությունները կանգ են առնում, որովհետև ամեն մի նոր փաստաթուղթ, ամեն մի նոր վկայություն թույլ է տալիս դիտարկել խնդիրը նոր լույսի ներքո:

Այս առումով կարևորագույն սկզբնաղբյուրներից են ականատեսների, ցեղասպանությունը վերապրածների հուշերը: Դրանք թույլ են տալիս մեզ ընկղմվել այն օրերի միջավայր, զգալ մթնոլորտը: Ականատեսների հուշերը լավագույնս թույլ են տալիս մեզ պատկերացնել ցեղասպանության իրականացման մեթոդների ու միջոցների մասին:

Շնորհակալության անվերջ խոսքերի են արժանի նրանք, ովքեր իրենց վրա են վերցնում վերապրածների վկայությունների հավաքման ու լայն հասարակությանը ներկայացման դժվարին ու ծանր գործը: Առավել մեծ երախտիքի են արժանի այն հեղինակները, որոնք դա անում են՝ չլինելով հայազգի:

Վերապրողների վկայություններին վերջերս ավելացել է ևս մե-

կը, և որ շատ կարևոր է՝ այն գրված է անգլերեն լեզվով և հրատարակված է Նյու Յորքում: «The Promise of the Sea» գրքի հեղինակը՝ Վիրջի Իաննյոն, գրի է առել Աբխազիայի Սուխում քաղաքում ապաստանած մի հայուհու՝ Նարգիզ Ժամկոչյանի հուշերը և ներկայացրել դրանք փոքր-ինչ գեղարվեստական երանգավորումով՝ հավաստի պատմածներից հյուսելով սյուժե ու համեմելով իրականին մոտ երևակայություններով, որոնք անշուշտ կարևոր են արևմտյան ընթերցողին հետաքրքրելու տեսանկյունից:

Այս գիրքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում հարցի ուսումնասիրողների համար:

Սա Սև ծովի ափին գտնվող փոքր մի գյուղաքաղաքի պատմություն է: Բնակավայրն անվանվում էր Քոբուլա՝ ոչ հեռու Տրապիզոնից: Թեև հեղինակը չի նշում բնակավայրի այսօրվա անվանումը, սակայն դատելով մեծությունից և Տրապիզոնին ու Գիրեսունին մոտ գտնվելու փաստից՝ կարծում ենք, որ խոսքը գնում է այսօրվա Օրդու քաղաքում բնակվող հայերի ճակատագրի մասին:

Գրքում ներկայացվում է հայերի թշվառ վիճակը նախքան եղեռնը: Սա գալիս է հերքելու թուրք պատմագրության այն սին հայտարարությունները, թե հայերի կացությունը նախքան 1915թ. տանելի էր և հարաբերությունները միանգամից վատացան հենց համաշխարհային պատերազմում հայերի՝ բանակում դավաճանություն անելու պատճառով:

Հուշերում լավագույնս նկարագրվում են իրադարձությունների զարգացումները, ինչը և մեկ անգամ վկայում է 1915թ.-ին սկսված դեպքերի ցեղասպանություն լինելու փաստը: Այսպես, Նարգիզը պատմում է, որ նախ օսմանյան բանակ են զորակոչում համապատասխան տարիքի տղամարդկանց: Վերջիններիս արդեն բանակում զինաթափում են, ուղարկում լեռնային դժվարանցանելի տարածքներում ազգային ճանապարհների շինարարություն, իսկ գործն ավարտելուց հետո կամ նույնիսկ ընթացքում՝ սպանում: Դրանից հետո հերթը հասնում է բնակավայրում մնացած տղամարդկանց, որոնց հավաքում են և կրկին կոտորում: Ուշագրավ է, որ ջարդերի իրականացումը ղեկավարվում էր թուրք զինվորների կողմից, իսկ հիմնական իրականացնողները չերքեզական ու քրդական խմբերն էին: Ընդ որում այդ ցեղախմբերի կողմից սույն կոտորածներին մասնակցությունը համարվում էր հատուկ ձեռնտու գործ, քանի որ կողոպուտի մեծագույն հնարավորություն էր ընձեռնվում: Հուշերում նկարագրվում է բռնագաղթի ճանապարհը՝ սովը, տապը, սպանությունները, բռնաբարությունները: Քանի որ դեպքերը տեղի են ունեցել Սև ծովի ափին, Նարգիզը պատմում է, որ ծնողներից զատված մանուկներին զանգվածաբար լցրել են նավերն ու խեղդել ծովում:

Հայերի շրջապատը, սակայն, միայն չար ու բացասական կերպարներ չեն եղել: Հեռատես հայերից ոմանք իրենց մոտ թաքցրել են

մի քանի ոսկի և գաղթի ճանապարհին կարողացել են իրենց զավակներին ի պահ տալ թուրք և քուրդ գյուղացիների: Սակայն շատ փոքրաթիվ հայ երեխաներ են սրանով փրկվում: Նրանց մեծ մասը մահմեդականացվում են ու կարճ ժամանակի ընթացքում ձուլվում ընդունող ընտանիքի հետ: Օրինակ, թուրքական ընտանիքներ ընկնողները նույնիսկ առանց բռնի մահմեդականացման թուրքանում էին՝ ապրելով բացառապես թուրքական շրջապատում, աստիճանաբար մոռանալով իրենց մայրենի լեզուն, իրենց հայ լինելը: Փրկության հույս ունեին միայն նրանք, ում ծնողները, իրենք վերապրելով ցեղասպանության առաջին ալիքը, հետագայում գտնում էին զավակներին, ինչպես դա տեղի ունեցավ Նարգիզի հետ, որն արդեն դարձել էր Էմինե, մոռացել էր հայերենը, իր ազգականների դեմքերն ու աղոթում էր օտար աստծու, բայց տատիկը նրան դարձի բերեց: Սակայն պարզ է, որ երեխաների շատ մեծ մասի ծնողները անվերադարձ գնում էին ու նրանց զավակները նույնպես, փաստորեն, զոհ էին գնում ցեղասպանության՝ կորցնելով հայությունը:

Վ. Իանկոն իր գրքում լավագույնս ցույց է տալիս հայերի մի մասի անհաղորդ լինելը նույնիսկ կողքի քաղաքի հայրենակիցների ճակատագրին: Հայերը հույս ունեին, որ սա զուտ ժամանակավոր երևույթ էր՝ «տաճիկների պարբերական խենթության» օրինակ և այն կշրջանցի իրենց: Ամեն ընտանիք կարծում էր, որ հենց իրենց թուրքերը ձեռք չեն տա, քանի որ մեկ քաղաքի միակ բժիշկն էր, մյուսը մոտ էր ոստիկանապետի հետ և այլն: Նույնիսկ կոտորածի ճանապարհին հայերի մի մասը դեռ հավատում էր, որ խնդիրը կպարզվի և նրանցից ոմանց ազատ կարձակեն: Եվ սա ճշմարիտ է բոլոր հայերի համար: Պոլսի հայ մտավորականները մինչև վերջին պահը հավատացած են եղել, որ դա ժամանակավոր թյուրիմացություն էր ու գործը չի հասնի մինչև սպանդ:

Հուշերից պարզ է դառնում, որ պոլսահայերի կյանքն ընթանում էր համեմատաբար նախկին հունով, գործում էին հայկական դպրոցները, կային հայեր, որ աշխատում էին բանկերում կամ ընկերություններում: Սրանց համար արևելքից եկած հայ գաղթականները զուտ անհանգստացնող տարր էին՝ իրենց դժվարահավատ պատմություններով: Սակայն, երևում է, որ Պոլսի հայ բնակչության մեջ ճնշող մեծամասնությունն, այնուամենայնիվ, իգական սեռի էր և տղամարդկանց սուր պակաս կար:

Կոտորածից մազապուրծ փրկված փոքրաթիվ հայերը վերադառնում էին իրենց ավերված տունը՝ հարազատներին գտնելու հույսով, գտնելու այլ տեղ չունենալու պատճառով, ինչպես նաև կրկին այն մտածմունքով, որ այս ջարդերը ժամանակավոր են ու թուրքերը կհանդարտանան: Սակայն ամենուր թալանի ու անթաքույց կողոպուտի մթնոլորտ էր: Հայերը գտնում են իրենց տները քանդված, թալանված: Գրքում հեղինակը բերում է մի շատ հիշարժան փաստ: Երբ հայերը վե-

րադառնում են Սև ծովի ափին գտնվող այս քաղաքը, ապա չեն գտնում այնտեղի ստվար հույն ազգաբնակչությանը: Սա հուշում է մեզ, որ հայերից ձերբազատվելուց հետո հերթը հասել է հույներին:

Սակայն թուրքերը բնավ չէին ձգտում հանգիստ թողնել այն հայերին, որոնք հավատափոխ չէին եղել, իսկ վերջիններս, ի դեպ, ստվար զանգված են կազմել: Նարգիզի եղբոր ընկեր Կիլիկիան պատմում է այս անգամ Քեմալ փաշայից փախչելու մասին, երբ ձյան ու մրրիկի պատճառով մահանում էին բազմաթիվ հայեր, իսկ հետ մնացածները՝ սպանվում թուրք զինվորների կողմից:

Վ. Իսանկյի աշխատանքի շնորհիվ մեզ հասած այս հուշերն առանձնանում են նաև նրանով, որ պատմվում է, որ թուրք զինվորներին հայ ընտանիքների վայրը ու նրանց մասին տեղեկատվություն են հաղորդել ոչ թե հարևան հույն, քուրդ, այլ հենց հայ դավաճանները, որոնք ի պատասխան ազատվում էին բռնագաղթից: Այս երևույթը նույնպես խոսում է այդ օրհասական պահին հայերի անմիաբան ու եսակենտրոն վարքի մասին:

Ընդհանուր առմամբ, վերապրողների հուշերը տրամադրում են այնպիսի տեղեկություններ, որոնք անհասու են հետազոտողին, եթե վերջինս բավարարվում է միայն պաշտոնական փաստաթղթերով ու այլ պատմաբանների ուսումնասիրություններով:

Սույն գիրքը, իրենից ներկայացնում է իրականության ու գեղարվեստական երանգավորման լավագույն միահյուսվածք: Սա մի հայ ընտանիքի պատմություն է, որը կրկնում է մեր մեծ մասի ընտանեկան պատմությունները, մի մասունք հայ ժողովրդի պատմության եղերական էջերից:

Հույս ենք հայտնում, որ վերապրող Նարգիզ Ժամկոչյանի հուշերը ևս կօգնեն Հայոց Մեծ եղեռնի մութ կողմերի լուսաբանմանը, և շնորհակալություն հայտնում գրքի հեղինակին, որ նա կատարել է իր խոստումը՝ տրված Սև ծովի ափին ծեր այդ կնոջը, որն այդքան չէր սիրում ծովը, որտեղ ի թիվս այլոց խեղդամահ էր արվել իր մանուկ եղբայրը:

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ

ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆ ԷՐՈՂԼ ԻԼԹԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2001թ. Անկարայում հրատարակվել է դոկտոր Էրողլ Իլթերի «Թուրք - հայկական հարաբերությունների մատենագիտություն» վերտառությամբ աշխատությունը: Հեղինակը մատենագիտության առանձին բաժիններում (հոդվածներ, ամսագրեր, գրքեր, բյուլետեններ, արխիվային նյութեր, զեկուցումներ, ալբոմներ, հանրագիտարաններ) անդրադարձել է գրեթե բոլոր ուսումնասիրողների ու գիտնականների տարբեր լեզուներով և տարբեր երկրներում հրատարակված աշխատություններին: Չկարողանալով պահպանել իր չեզոքությունը աշխատության հեղինակը գրքի առաջաբանը գիտակցաբար սկսում և մինչև վերջ շարունակում է հայերին վարկաբեկող նախադասություններով. «Հայերը ինչպես XIX և XX դարերում, այնպես էլ այսօր աշխարհի հասարակությանը խաբելով վարպետորեն ներկայանում են որպես թուրքերի կողմից բռնությունների, ճնշումների, ցեղասպանության ենթարկված քրիստոնյա մի ազգ՝ շարունակելով այդ ուղղությամբ տարվող պրոպագանդան»: Թուրք պատմաբանը իր աշխատությունը փորձելով գնահատել նշում է հետևյալը. «Թուրք-հայկական հարաբերությունների մատենագիտություն» վերտառությամբ սույն աշխատությունը ստեղծվել է օգնելու բոլոր նրանց, ովքեր ցանկանում են հայ պատմաբանների, հայկական եկեղեցու և կազմակերպությունների կողմից Թուրքիայի վերաբերյալ անհիմն պնդումների դեմ կատարել «ճիշտ և հավասարակշռված ուսումնասիրություն»: Ըստ երևույթին հեղինակը կարծում է, որ միայն թուրք պատմաբանները կարող են Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ բերել համապատասխան փաստարկներ ուղղակի անտեսելով, որ հայ պատմաբանների ներկայացրած փաստարկները ճշգրիտ են և հանրության կողմից ընդունվում են անվերապահորեն: Դեռ ավելին անհրաժեշտ է նշել, որ պատմության էջերի լուսաբանման հարցում թուրք պատմաբանների ծայրահեղ կողմնակալ վերաբերմունքը գիտակցաբար բերել է նրանց կողմից Հայոց ցեղասպանության փաստերի կեղծման: Դոկտոր Էրողլ Իլթերը չի մտածում, որ մատենագիտությունը ստեղծվում է նրա համար, որ այնտեղ ներկայացված հրապարակումները հնարավորության դեպքում ուսումնասիրելու արդյունքում մարդը կարողանա կազմել համապատասխան կարծիք հայ – թուրքական հարաբերությունների վերաբերյալ: Հեղինակը խիստ անհանգստացած խոսում է նաև Ֆրանսիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն առնչվող բանաձևի ընդունման վերաբերյալ:

Միաժամանակ Է.Իլթերը անդրադառնալով 1965թ. Հայոց Ցեղասպանության 50 ամյակի կապակցությամբ Երևանում տեղի ունեցած միտինգներին[1] մոռանում է նշել այն փաստը, որ Թուրքիայի Հան-

րապետությունը 1931թ.-ից կերտելով իր պաշտոնական պատմագրությունը Թուրքական պատմական ընկերության «Belleten» կոչվող ժողովածույում առաջին անգամ Հայկական հարցին, թուրքերի կողմից հայերի բնաջնջումներին և Հայոց ցեղասպանության հարցին լուրջ և անհանգստացած անդրադառնում է միայն 1966թ.-ին[2] Մինչ այդ Թուրքական պաշտոնական պատմագրությունը կերտողները իրենց հրապարակումներում շատ հազվադեպ անդրադարձել են վերոնշյալ հարցերին 1950-ական թվականներին: Այն ժամանակ, երբ 1946թ. դեպի Հայաստան սկսվեց մեծ ներգաղթ, թուրքական իշխանությունները սկսեցին անհանգստանալ և թուրք պատմաբաններին հանձնարարեցին հանդես գալ որոշ հրապարակումներով: Չնայած նրան, որ Հայոց Ցեղասպանության հարցին, հայերին և ընդհանրապես Հայաստանին վերաբերող հրապարակումները թուրք պատմաբանների մոտ գրեթե բացակայում էր, այնուամենայնիվ 1966թ.-ից հետո դրանք ավելի ակտիվացավ: Դա նկատելի դարձավ հատկապես ASALA-ի (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ) դեպքերից հետո, երբ 1973թ. այդ կազմակերպության կողմից սկսվեց թուրք դիվանագետների սպանություններ աշխարհի տարբեր երկրներում[3] Հենց այդ ժամանակաշրջանում էլ թուրք պատմաբանները որոշեցին թուրքական արխիվներում փնտրել և հրատարակել հայերի կողմից թուրքերի կոտորածների մասին նյութեր: Օրինակ Թուրքիայի Հանրապետության կառավարության պատվերով հրատարակված «Արխիվային փաստաթղթերի համաձայն Կովկասում և Անատոլիայում հայկական բռնությունները (1919թ.)» վերտառությամբ աշխատության մեջ որպես արխիվային փաստաթուղթ ներկայացված է, թե ինչպես են Քյոփրուքյոյ գյուղի բնակիչ Արամը և Սարգիսը սպանել ծագումով թուրք Յոլյուքօղլու Մեհմեդին, Մահմուդօղլու Ալիին, Ալիքըզը Ֆաթմային և այլն[4]

Է.Իլբերը լինելով գիտնական խիստ ատելությամբ է արտահայտվում օտարերկրյա այն գիտնականների մասին, որոնց ուսումնասիրությունները Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ չեն արտահայտում Թուրքիայի շահերը: Հեղինակը թուրքերի թշնամի է անվանում ազգությամբ ֆրանսիացի դոկտոր Իվես Տերնոնին, որն իր «Հայկական արգելք» (Ermeni Tabusu) վերտառությամբ աշխատությունը թարգմանել և հրատարակել է թուրքերենով: Է. Իլբերը ավելի մեղմ է արտահայտվում ազգությամբ հայ պրոֆեսոր Վահագն Դադրյանի «Ցեղասպանությունը որպես ազգային և միջազգային իրավական խնդիր» (Ulusal ve Uluslar arası Hukuk Sorunu Olarak Jenosid) վերտառությամբ աշխատության մասին, որը նույնպես հրատարակվել է թուրքերենով[5]

Թուրք պատմաբանն իր իսկ ստեղծած մատենագրության առաջաբանում գրում է. «Հայերը հիմնվելով օտար պետությունների հետ իրենց ունեցած շահերի վրա «այսպես կոչված» Հայկական Հարցը բարձրացրել են այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությանը սպառնում էր կործանման վտանգ: Այդ գործողությունները քարոզչության

միջոցով իրագործում էին հայկական կազմակերպությունները՝ հանրության վրա գործելով հոգեբանական ազդեցություն: Ներկայումս էլ աշխարհի շատ երկրներում, հատկապես Ամերիկայում և Եվրոպայում հայ գիտնականները և հայկական կազմակերպությունները որոշ երկրների ղեկավարների աջակցությամբ այս Հարցը օրակարգ բերելով պնդում են, որ հայերը Օսմանյան կայսրությունում ենթարկվել են անօրինություններին»: Պատմաբանը Ցեղասպանության պատճառներից մեկը համարում է այն, որ 1890թ.-ին հայկական «ահաբեկչական» խմբերը կազմակերպված հարձակումներ են գործել թուրքական բնակավայրերի վրա: Այդ ամենի արդյունքում էլ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918թթ.) հայերը ենթարկվել են անօրինականությունների, որի արդյունքում էլ Օսմանյան կառավարությունը որոշում է կայացնում կազմակերպել Անատոլիայում բնակվող հայերի բռնագաղթը դեպի Սիրիա և Պաղեստին: Պետք է նշել, որ պատմաբանը կեղծելով իրողությունը «մոռացել է», որ հայերը ոչ թե հարձակվել են թուրքական նակավայրերի վրա, այլ ուղղակի կազմակերպել են ինքնապաշտպանություն թուրք հրոսակների հարձակումներից, իսկ ինչ վերաբերում է բռնագաղթերին, ապա դրանց վերաբերյալ փաստերը նույնպես թուրք պատմաբանները գիտակցաբար կեղծում են:

Փաստորեն դոկտոր Էրդալ Իլթերը կազմելով «Թուրք - հայկական հարաբերությունների ժամանակագրությունը» վերտառությամբ աշխատությունը փորձել է ոչ թե ուղղակի ներկայացնել վերոնշյալ հարցի վերաբերյալ իսկական ժամանակագրություն, այլև ինչպես բոլոր թուրք պատմաբանները առիթը օգտագործելով մեկ անգամ ևս հանդես գալ կեղծարարությամբ, վարկաբեկել և առանց հիմնավորումների վիրավորել բոլոր այն օտարերկրյա և հայ գիտնականներին, որոնց ուսումնասիրությունները չեն բխում Թուրքիայի շահերից:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220092315